ԴՍԱԿ

891.99(089) 11856
Գ-94 Գաբր.
Հայրենական Մեծ պատերազ-
մում զոհված հայ գրողները

ԴԱՏԱԿ

891.99-82
Դ-90
Ստուգված է 1981 թ.

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ԶՈՀՎԱԾ ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Ա 30880
4185
ՀԱՅԿ. ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ

ԵՐԵՎԱՆ «ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ 1947

Կազմեց և կենսագրականները գրեց՝ ԵՐԱՄ ԹԱՄԱԶՅԱՆ

Խմբագրությամբ Ն. ԶԱՐՅԱՆԻ
ՀՄ. ՍԻՐԱՍԻ
ԱՐՏ. ՈՍԿԵՐՉՅԱՆԻ

ВЕНОК

СБОРНИК ПРОИЗВЕДЕНИЙ АРМЯНСКИХ ПИСАТЕЛЕЙ ПОГИБШИХ В ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЕ

(На армянском языке)

Издательство «Советский писатель» Армении, Ереван, 1947 г.

ԶՈՀՎԱԾՆԵՐԻ ԽՈՍՔԸ

Սովետահայ գրականությունը Հայրենական Մեծ Պատերազմին մասնակցեց իր բոլոր ուժերով: Ծերունազարդ Իսահակյանից մինչև ամենաթարմ սկսնակը իրենց գրիչն ու խոսքը դրին հաղթանակին ի սպաս: Մոտ քառասուն երիտասարդ ու միջին տարիքի սովետահայ գրող մտավ Սովետական Բանակի շարքերը և մասնակցեց զանազան ճակատներում բորբոքված հերոսամարտերին՝ իբրև ռազմաճակատային մամուլի թղթակից, իբրև ստորաբաժանման հրամանատար, իբրև տանկիստ կամ շարքային մարտիկ:

Սովետահայ գրողներից շատերը վերադարձան ռազմաճակատներից՝ բերելով իրենց հետ մեծ հաղթության ոգին և մարտական տարիների հարուստ կենսափորձը, որ մեր գրականության ներկա և գալ տարիների ծաղկման գրավականներից մեկն է: Բայց նրանցից ոմանք հերոսաբար ընկան կռվի դաշտերում, իրենց Սովետական Հայրենիքի պաշտպանության դիրքերի վրա՝ թողնելով մեզ ի ժառանգություն իրենց հայրենասիրության անմահ օրինակը և իրենց խոսքը, սովետահայ գրականության զոհված հերոսների խոսքը:

Ահա նրանց նվիրական անունները.

Թաթուլ Հուրյան, Գրիգոր Կուլօղլյան, Գառնիկ Ոսկանյան, Ավետիս Դերենց, Դերենիկ Չարխչյան, Արտաշես Բորենց, Հմայակ Նալբանդյան, Արսեն Հովհաննիսյան, Գրիգոր Արտոնի, Մեսրոպ Մերուժան, Նվիրեմ Լոռենց, Գրիգոր Գարունց, Թևան Խաչյան, Մուշեղ Բալասանյան, Ջավեն Մարգարյան:

Նրանք մեզ թողել են բանաստեղծություններ, պատմվածքներ, քննադատական հոդվածներ, մեծ մասամբ գրված մեծ Հայրենական Պատերազմի տարիներին, մարտական դիրքերում, կրակի

առաջին գծի վրա: Գրական տարբեր արժեք են ներկայացնում այդ գրվածքները: Գեղարվեստական հաջողված նմուշների կողքին կան նաև հում և անվարժ տողեր: Բայց բոլորի մեջ էլ բաբախում է սովետական հայրենասերների հուզաթաթավ սիրտը: Ընթերցողը համակվում է նրանց ազնիվ զգացմունքներով և հավատում է նրանց խոսքին: Չէ՞ որ դա նրանց արյամբ է նվիրագործված: Դա՝ իրենց հայրենիքի և ամբողջ մարդկության երջանկության համար կռվի ելած և այդ կռվում զոհված բանաստեղծների խոսքն է՝ լեցուն աննախընթաց հումանիզմով, որ հմայիչ մի պարզությամբ խտացել է Դերենիկ Չարխչյանի հետևյալ տողերի մեջ՝ նվիրված բանաստեղծի կնոջը.

«Թե մարտում ընկնեմ, տխուր մի՛ մնա,
Անսեր մի՛ մնա, սիրի՛ր դու մեկին:
Թո՛ղ ջահել սիրտդ սիրով արփենա.
Ափսոս է՝ վարդը թոշնի գարունքին:
Ես հող կդառնամ դաշտում սիզավետ,
Կդառնամ ծաղիկ, անուշ կբուրեմ,
Դու ե՛կ ինձ այցի նոր սիրածիդ հետ,
Քաղի՛ր ինձ, որ քո ձեռքը համբուրեմ»:

Այսպես կարող էր զգալ և արտահայտվել միմիայն կոմունիստական մարդասիրությամբ դաստիարակված բանաստեղծը: Այսպիսի էջեր շատ կան ընթերցողների ուշադրությանն առաջարկվող այս ժողովածուի մեջ, որի բովանդակությունը կազմող հեղինակներից մի քանիսը կարող էին աճել ու զարդարել սովետահայ գրականությունը իսկական գոհարներով:

Կարդալով այս ժողովածուն՝ ընթերցողը իսկույն կնկատի, թե ինչպես անձնազոհությունը, հայրենիքի համար մեռնելու պատրաստակամությունը շիկացած թելի պես անցնում է նրանց բոլոր գրվածքների միջով: Ռազմաճակատային մահաբեր բախումների մեջ նրանք ոչ մի րոպե չէին մոռանում իրենց հարազատներին: Գրիգոր Կոլոզյանը, որ իր քննադատական կրակոտ հոդվածներով դեռ պատերազմից առաջ արդեն ծանոթ էր սովետահայ ընթերցողներին, Սմոլենսկի ճակատից գրում էր իր բանաստեղծ ընկերոջը.

«Նոր տարվա գիշերն է: Պայուսակիս մեջ ունեի մեկ շիշ Արտաշատի գինի: Կավից առաջ խմում եմ քո կենացը, հայ պոեզիայի կենացը...»:

Եվ նա ընկավ կռվում: 1942 թվի նոր տարվա առավոտյան: Ընկավ սովետական խիզախ գրականագետը, որ ապրի իր սիրած պոեզիան: Մի՞թե նույնը չարին Գառնիկ Ոսկանյանն ու Մուշեղ Բալասանյանը: Եվ Ավետիս Գեբենյը, «Երկրի գույներ» ակնարկային գրքի խանդավառ հեղինակը: Մի՞թե նա իր երիտասարդ-գունագեղ կյանքը չզոհաբերեց նրա համար, որ անվերջ մնան և ավելի զորեղ դյութանքով շողան հայրենական երկրի գույները:

Ռազմաճակատներում զոհված սովետահայ բանաստեղծներից մի քանիսը, ինչպես օրինակ Թաթուլ Հուրյանը, Դերենիկ Ջարխչյանը և մյուսները, արժանի են առանձին գրքերով հրատարակվելու: Իսկ այս ժողովածուն, որի մեջ որոշ ընտրությամբ ամփոփված են մեր զոհված գրողների գործերը, թո՛ղ լինի մի ծաղկեպսակ նրանց նվիրական շիրիմների վրա:

Հավերժ փա՛ռք մեր հայրենիքի ազատության և անկախության համար ընկած հերոսներին:

ԱՅՍ ՍՐԲԱԶԱՆ ԺԱՄԻՆ ՀՈԳ ՉԷ ՄԱՀԸ ԱՅՆՔԱՆ,
ԹՈՂ ԳԱԼԻՔԻ ԵՐԳԸ ՄԵԶ ՀՈՒՇԱՐՁԱՆ ԼԻՆԻ,
ԵՎ ՍԵՐՈՒՆԴՆԵՐՆ ԱՍԵՆ՝ ՀԵՐՈՍԱԲԱՐ ԸՆԿԱՆ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅՐԵՆԻՔԻ, ՀԱՆՈՒՆ ՍՏԱԼԻՆԻ...

ԹԱԹՈՒԼ ՀՈՒՐՅԱՆ

Սևաստոպոլի պաշտպանության
18.6.42



ԹԱԹՈՒԼ ՀՈՒՐՅԱՆ





ԹԱԹՈՒԼ ՀՈՒՐՅԱՆ

(1912—1942)

Հայ տաղանդավոր պոետ Թաթուլ Սամսոնի Հուրյանը, որպես Հայրենիքի անվեհեր զինվոր, մասնակցել Սևծովյան ամրոց Սևաստոպոլի լեգենդար պաշտպանությանը և 1942 թվի հունիսի 21-ին քաջի մահով ընկավ հերոս քաղաքի պաշտպանության դիրքերում։

Թ. Հուրյանը ծնվել է 1912 թվին Թուրքահայաստանում, չքավոր գյուղացու ընտանիքում։ Դեռ պատանի հասակում նա զրկվում է և՛ հորից, և՛ մորից։ Սակայն աչքաբաց պատանին չի կորչում կյանքում։ Բախտ որոնելու համար նա գնում է Բաքու. այնտեղ ապաստան է գտնում մի բարեկամի մոտ. իր գոյությունը պահպանում է սեփական աշխատանքով, միաժամանակ սովորելով միջնակարգ դպրոցում։ Թաթուլը միջնակարգ դպրոցն ավարտում է 1931 թվին։ Հետագայում սովորում է նաև Մոսկվայի Խմբագրական-Հրատարակչական Ինստիտուտի Գրական ֆակուլտետում։ Մոսկվայից վերադառնալով Բաքու, սկսվում է նրա գրական բեղմնավոր աշխատանքի շրջանը։

Երբ բռնկվում է Հայրենական Մեծ Պատերազմը, հայրենասեր բանաստեղծը շտապում է մեկնել Կարմիր բանակ։ Ռազմաճակատում, թեժ մարտերի գագաթի պահերին էլ, զինվորի շինել հագած պոետ-մարտիկը ժամանակ է գտնում ջերմաշունչ բանաստեղծություններ հորինել, որոնք ոգեշնչումով արտասանելով մարտի են գնում բանաստեղծի զենքի ընկերները։ Պատերազմական տարիներին այդ բանաստեղծությունները տպագրվում են ռազմաճակատային և Բաքվի թերթերում։

Թ. Հովյանի գրվածքների մեջ առավել ուշադրության արժանի գործերից են՝ «Երկրի ձայնը», «Մեքենավարը» պոեմները, պատերազմական տարիներին հրանոթների բոցերի ու գնդակների տակ գրված Սևաստոպոլյան բանաստեղծությունները:

Մեր գրականության մեջ ուշագրավ երևույթ են «Ցոլք» չափածո դրաման և «Սայաթ-Նովա» պոեմը: Թարմ պատկերներով ու հարուստ համեմատություններով գրված այս պոեմը մեր չափածոյի նվաճումներից է, որում ռեալիզմն ու ռևոլյուցիոն ռոմանտիզմը հանդես են գալիս միասնաբար: Այդ երկու գործերն էլ թեև գրված են տարբեր ժանրով, բայց մեկ են իրենց ներքին բովանդակությամբ: Հեղինակին հաջողվել է տալ մեկ կողմից՝ այդ երկու մեծ հայ բանաստեղծների կերպարները, իսկ մյուս կողմից մեր ժողովրդի ազատասեր, ըմբոստ ոգու ցասումը ընդդեմ օտարերկրյա նվաճողների:

Թ. Հովյանի գործերից թարգմանված են՝ ռուսերենի, ադրբեջաներենի: Ինքը հայերենի է թարգմանել Պուշկինից, Լերմոնտովից, Մայակովսկուց, Եսենինից և ժամանակակից մի շարք բանաստեղծներից: Ընկերակցությամբ թարգմանել է Նիզամիի «Յոթ գեղեցկուհիներ» պոեմը, Սամեդ Վուրղունի «Վագիֆ» չափածո պոեմը, որ երկար ժամանակ հաջողությամբ բեմադրվել է Բաքվի Հայկական թատրոնում: Ռազմաճակատ մեկնելուց առաջ տպագրության էր պատրաստել «Գիշեր» պոեմը, որի թեման վերցված է քաղաքացիական կռիվներից:

Թ. Հովյանի ստեղծագործությունները խիստ ինքնատիպ են, գրված ամենաջերմ հայրենասիրությամբ: Լինելով անհանգիստ ու որոնող հեղինակ, նրա երկերում առատորեն շաղ են տրված բանաստեղծական ինքնատիպ մտածողության, թարմ պատկերների ու համեմատությունների անհամար նմուշներ:

Պոետը մեծ շնորհք է ցույց տալիս տաղաչափական, լեզվական նորամուծությունների ասպարեզում: Նրա վրա որոշակի ըզգացվում է ռուսական պոեզիայի բարերար ազդեցությունը:

Գտնվելով Սևաստոպոլյան ծանր մարտերի կենտրոնում, ապրելով շատ դառն փորձություններ ու հուսահատության պահեր, այնուամենայնիվ, բանաստեղծը մշտապես մնում է համակված սովետական մեծ ու միասնական ժողովրդի հաղթանակի գաղափարով:

Բաքվի «Կոմունիստ» թերթին վերջին անգամ նրա ուղարկած բանաստեղծություններն են՝ «Երկու նամակ» և «Մեկենզիկյան լեռները»: Ընկերներից մեկին վերջին նամակում գրում է.

«Ուղարկում եմ Սևաստոպոլի համար մղվող մարտերի այս ահեղ և փառավոր օրերին գրված երկու բանաստեղծություն: Այժմ նորից շարքերումն եմ: Մեզ մոտ, Սևաստոպոլի պարիսպների տակ դաժան մարտեր են գնում, որ ոչ գրել կարելի է, ոչ պատկերացնել, տեսնել միայն պետք է և ապրել...Այս բանաստեղծությունները գրվում են մեծ ջանքով, մահվան թևի տակ, ամենադաժան բախումներում»:

Եվ իրոք, Սևաստոպոլյան շարքի բանաստեղծությունների տողերից կրակ ու բոց են շնչում. նրանք գրված են արյունով, գրված են կյանքի ու մահվան գոտեմարտում ապրած մարդու ծանր ապրումների ու խոհերի տակ:

Հայրենասեր բանաստեղծը իր ժողովրդի ցասման ու վրեժի մասին է երգեր հյուսել: Որպես մեր ասածի ապացույց, հիշենք «Երկու մանուկ» բանաստեղծությունը:

Այո, ապագա սերունդները չեն մոռանա Թաթուլ Հուրյանին: Այժմ էլ, երբ դեռ թարմ է նրա շիրմաթումբը, շատ երգեր են նվիրվել նրա պայծառ հիշատակին: Այդ երգերը հորինել են Երևանում ու Բաքվում ապրող նրա գրչակից ավագ ու կրտսեր ընկերները. սրտից բխած, հուզաթաթավ երգեր են նվիրել Ղարաբաղի երիտասարդ գրողները վաղամեռ, իրենց սիրելի գանգրահեր պոետին: Նրան իր մի արձակ գործում մարգարտաշար խոսքերով փառաբանում է պանդխտությունից հայրենիք վերադարձած արձակագրուհի Շ. Վարսյանը:

Թ. Հուրյանի կորստով հայ ընթերցողը և ժամանակակից պոեզիան զրկվեցին երիտասարդ, արդեն որոշ կուլտուրայի հասած, իր տաղանդն օրեցօր նոր գոհարներով հարստացնող, արվեստի բարձրություններին ձգտող մի կենսունակ բանաստեղծից, որի գեղեցիկ կյանքի թելը կտրվեց իր ամենավառ, ամենահախուռն ծաղկման շրջանում:

Թ. Հուրյանը իր որոշակի, պատվավոր տեղն ունի սովետահայ առաջավոր բանաստեղծների շարքում: Նրա գեղեցիկ գրվածքների վրա շատ բանով կդաստիարակվեն ներկա և ապագա սերունդները:

Թ. Հուրյանը նոմահու պարգևատրված է Կարմիր Դրոշի շքանշանով։

Թ. Հուրյանի ստեղծագործություններից մինչև այժմ առանձին գրքերով լույս են տեսել.

Հողի արյունը—*(Բանաստեղծություններ և պոեմներ)։ Երևան, Պետհրատ, 1931 թիվ, էջ 76։*

Դնեպր—*(Պոեմ կոմենտարիաներով)։ Պոեմը նվիրված է Դնեպրոսի հանրաշիններին։ Բաքու, Ազերնեշր, 1933 թիվ, էջ 56։*

Հասակ—*(Բանաստեղծություններ)։ Հեղինակի նկարով. Բաքու, Ազերնեշր 1934 թ., էջ 134։*

Պոեմներ—*(Երկրի ձայնը, Հայր, Հերոսության երգերից՝ Ջոնը, Սաշինների պարակում, Մեքենավարը, Սայաթ-Նովա)։ Բաքու, Ազերնեշր, 1941 թիվ, էջ 96։*

Բանաստեղծի մահվանից հետո լույս են տեսել՝

Աստղ—*(Բանաստեղծություններ և պոեմներ)։ Հեղինակի լուսանկարով. կազմեց, խմբագրեց և առաջաբանը գրեց Աշոտ Գրաշին. Բաքու, Ազերնեշր, 1943 թիվ, էջ 192։*

Ցրիկ—*(Պատմական դրամա, 5 գործողությամբ, 11 պատկերով)։ Երևան, Պետհրատ, 1945 թիվ, էջ 104։*

ԱՍՏՂԸ

1

Գիշեր. ահա աստղերն են
Երկնակամարում:
Գիշեր. ահա աստղերն են
Վառվում ու մարում:

Երկինքը ջինջ է, կապույտ,
Փռված գորգի պես,
Հովը տալիս է համբույր,
Ում որ հանդիպես:

Ես նայում եմ երկինքին,
Երկնակամարին.
— Ո՞ւր ես, աստղի՛կ իմ անգին,
Իմ հե՛զ, իմ բարի՛…

Երբ ծնվեցի մեր գյուղում,
Մեր հին խրճիթում,
Տատս ալյուր էր մաղում
Ու մեղմ աղոթում:

Երկինքն ամպոտ էր ու թաց
Եվ շունն էր հաչում…
Երբ ծնվեցի, նա ասաց
Ձայնով դողդոջում…

— Ոչ մի աստղ չի շողում,
Երկինքը մութ է,
Աստղ չունես, իմ գառնո՛ւկ,
Աստված անգութ է...

Այսպես եկա ես աշխարհ
Մեր հին տնակում,
Ու մեծացա ինչպես ծառ
Երկնքի տակ լուռ...

Հորս հետ հանդ գնացի
Մերկ ու ոտաբաց,
Երկնքի տակ քնեցի,
Աստղերով հարբած:

Ինչպես քամուց քշված ամպ
Տարիներն անցան,
Ու ես հասա խնդությամբ
Օրերին պայծառ...

2

Գիշեր. ահա աստղերն են
Երկնակամարում.
Գիշեր. ահա աստղերն են
Վառվում ու մարում:

Երկինքը ջինջ է, կապույտ,
Փռված գորգի պես,
Հովը տալիս է համբույր,
Ում որ հանդիպե:

Ես նայում եմ երկնքին,
Երկնակամարին,
Եվ ասում եմ,—իմ անգի՛ն,
Տատի՛կ իմ բարի,—

Իմ աստղը ամենից
Պայծառ է շողում,
Ողջ աշխարհն է իր անբիծ
Լույսով ողողում։

Իմ աստղը Կրեմլի
Աստղն է անմար,
Որ շողում է, լույս տալիս
Ամոքիչ ու վառ։

Իմ աստղը նա է, նա
Վառվող սուտակի,
Որ շողում է Կրեմլյան
Մեծ աշտարակից։

Միլիոնների ա՛ստղ, դո՛ւ,
Վառվի՛ր, հուրհրա՛,
Երջանկություն դու մարդու,
Դու ցնծության ջահ։

———

ՍԵՎԱՍՏՈՊՈԼ

Ով ծովի եզերքին նազող գեղեցկուհի՛,
Սևծովայինների հպարտ մայրաքաղա՛ք,
Ռուսական զենքի ամրոց անպարտ ու հին,
Վրդովեցին կյանքդ շինարար ու խաղաղ:

Ես քայլում եմ ահա քո դոռ փողոցներով,
Ամենուր զենքերի շառաչյունն եմ լսում,
Սիրտս փոթորկում է սրբազան մի հրով,
Երգերս դառնում են լոկ վրեժ ու ցասում:

Քաղա՛ք փառքի, սիրո, քաղա՛ք հեքիաթական,
Բախումների հանդեպ անպարտ ու անզիջում,
Քո փեշերին ահա հազարները ընկան,
Թշնամին է խեղդվում իր իսկ արյան լճում:

Բայց սողում է նորից նա դեպի քեզ, քաղա՛ք,
Վիրավոր հրեշի ցնորքով խելագար,
Ուզում է քո փառքի, քո պատվի հետ խաղալ,
Քեզ ուզում է դարձնել ստրուկ ու գանահար:

Բայց հպարտ է եղել քո գլուխը միշտ էլ,
Քո անխորտակ մեջքը դեռ չի տեսել գետին,
Պարտությունը երբեք քո կրծքին չի նստել,
Ամոթանքի ստվեր չի իջել քո ճակատին:

Ինձ հետ զրուցում են փառքիդ արձանները,
Բաստիոններդ լռին, ամրոցներդ անառ,
Նախիմովն է կանգնած նայում հեռուները
Ծովակալի աչքով հպարտ ու վեհափառ:

Կոռնիլովն է նայում առյուծներին իր քաջ,
Բարի երթ է մաղթում ու վերադարձ խնդուն,
Եվ գնում են անկանգ ծովայիններն առաջ,
Հողն է նրանց հզոր ոտքերի տակ դողում:

Ես հիշում եմ, քաղա՛ք, դեկտեմբերդ մռայլ,
Հորիզոնդ ծխի սև ամպերով պատած,
Ֆաշիստական հորդան հանց իժերի վտառ
Պարզում է դեպի քեզ ճանկերն իր արնոտած:

Բայց ետ ես շպրտում հրեշին խելագար,
Թաղում բաստիոններից կրակով մահացու,
Քո պատմության գրքում հին ու
սխրանքավառ
Մի նոր, հերոսական փառքի գլուխ բացում:

Սև ծովի եզերքին նազող գեղեցկուհի՛,
Սևծովայինների մայրաքաղա՛ք հպարտ,
Ռուսական զենքի բաստիոն անպարտ ու հին,
Միշտ անպարտ ես եղել ու կմնաս անպարտ:

Սևաստոպոլ

Н II 30880
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖՈՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԵՐԿՈՒ ՄԱՆՈՒԿ

Գարնանային երկնի տակ երկու մանուկ են խաղում,
Երկու արդար էակներ երգում են ու ծիծաղում:
Գարնան զովն է սվսվում նրանց ոսկյա մազերին,
Կապույտ երկինք է թափվել կարծես նրանց ուսերին:
Մանկան անզուսպ հրճվանքով գարնան երկինք են նայում,
Ամեն անցնող դարձողի գրավում են, հմայում:
Ռազմի ծխով պարուրված ու պաշարված այս բերդում
Մանուկներն այս գեղաշյա մարդու հույզերն են թերթում,
Ես անցնում եմ համրաքայլ նրանց խաղով հմայված,
Ծով կարոտից իմ սիրտը դառնում է խենթ ու արբած:
Ես հիշում եմ իմ մանկանց՝ գանգրագիսակ, ծիծաղաչ,
Հրաշքի պես ելնում են կարծես նրանք իմ առաջ:
Սիրտս է ծփում անհանգիստ, լցված սիրով հայրական,
Ես բռնում եմ, համբուրում թաթիկները մանկական,
Գանգուրներն եմ փայփայում մանուկների այդ սիրուն,
Մտքիս թևով թռչում եմ, սավառնում եմ դեպի տուն...
Սակայն ռազմի բոցերում երազանքն է լինում կարճ...
Թողած մանկանց այդ սիրուն ես քայլում եմ դեպ առաջ,—
Հանկարծ գարնան երկինքն է շառագունում կրակից,
Թշնամական ուրուրն է ճախրում ամպի արանքից,
Զարագուշակ կռինչով նա ռումբեր է ցած նետում,
Մխի սև ամպն է ելնում, արևի դեմքը պատում...
Ես նետվում եմ խենթի պես մանուկների հետևից,
Մահվան վտանգ մոռացած և մոռացած անգամ ինձ...
Սակայն ուշ է... Ահավոր մի եղեռն է կատարվել,—
Մանկան մեռած դեմքերին անմեղ ժպիտ է սառել։

Գարնան զովի կանչերը էլ չեն լսում, չեն լսում,
Շրթունքները պապանձվել, չեն ծիծաղում, չեն խոսում։
Ես կանգնած եմ գլխահակ այս ահավոր երազում,
Աչքերիցս վրեժի այրող արցունքն է հոսում։
Ողբերգության այս գիրքը գարնան երկինքը կարդաց,
Եվ մեծ սիրտը երկնքի կարեկցակոծ թպրտաց։

*

Նորից գարնան երկինքն է կապույտ ցոլքերն իր մաղում,
Մեր փողոցում այս պահին կատարում են մի թաղում։
Նորից գարնան երկինքն է անհոգորեն վար նայում,
Երկու մանուկ հանգչում են մի անպաճույճ դագաղում։
— Ո՞վ դուք, մայրե՛ր սիրասուն, և դուք, հայրե՛ր աշխարհի,
Եկեք թաղման այս ծեսին, թող ձեր սիրտը բարբառի։
Դուք արցունքի փոխարեն վրեժի խոսք կարդացե՛ք,
Այրող վրեժ ձեր սրտում դեպի ճակատ խոյացե՛ք,—
Հանուն մանկանց ձեր սիրուն, հանուն հացի ձեր արդար,
Բոլոր հայրե՛ր աշխարհի, բոլոր մայրե՛ր վշտահար։

Սեվաստոպոլ

ՄԵԿԵՆԶԵՎՅԱՆ ԼԵՌՆԵՐՈՒՄ

Լեռնե՛ր Մեկենզևյան, ծառե՛ր թևահատված
Եվ թփուտնե՛ր դալար, արյունոտված, անկյանք,
Բանաստեղծն է ահա ձեր փեշերին կանգնած,
Ձեռքին նռնակներ ու սրտի մեջ կրակ:

Նա թողել է տունն իր և իր մանկանց սիրած,
Նա երգեր է թողել անավարտ ու անտիպ,
Ձեր փեշերին, լեռներ, անվախ ու կրծքաբաց
Մարտ է մղում բոլոր ոսոխների հանդեպ:

Ձեզ հետ, իմ ընկերնե՛ր, թող մարտը բորբոքվի,
Կռվենք աննահանջ արդարության համար,
Ձեզ հետ է, ընկերնե՛ր, հանքափորը Բաքվի,
Ձեզ հետ է Սևանի ձկնորսը խանդավառ:

Ձեզ հետ Վրաստանի կիտրոնի դաշտերից
Կռվում է վրացին Տարիելի քաջ սրտով,
Որպես կայծակ իջած փոթորկոտ ամպերից
Շանթում է թշնամուն ծովային վրդով:

Ես ձեզ կոչ եմ նետում, ընկերներ մարտական,
Քայլում եմ կողք-կողքի պատերազմի բոցում,
Ովքեր սրով եկան՝ սրերից էլ ընկան,—
Պատմությունն է այսպես շուրթերով զրուցում։

Մեկենզևյան լեռնե՛ր, դուք վկա եք եղել,
Բազում բախումների՝ մեծ ու անհավասար,

Մեր շարքերն են տեսել խիզախ ու անվեհեր
Եվ մեր դրոշներն են տեսել արյունավառ։

Պատերազմի ծուխն է ձեր ճակատը փակել,
Բայց կժպտան նորից կատարները ձեր վեհ,—
Դու հավատով լեցուն, մարտնչիր, իմ ընկե՛ր,
Վաղը կպարուրի հաղթության լույսը քեզ։

Հաղթանակի արևը կվառվի հրով,
Ազատության անխառն ու սուրբ լուսաբացին,
Եվ լեռներն ու ձորը միշտ կհիշեն սիրով
Գանգրագիսակ ու քաջ այն հայ բանաստեղծին։

Գործող բանակ

ՎԵՐԱԴԱՐՁ

Թողած հիվանդանոց և անկողին ճերմակ
Եվ հրաժեշտ տալով գթության քույրերին,
Նորից ձեզ հետ եմ ես, բախումներում այս տաք,
Ուր արյունն է հոսում իմ քաջ եղբայրների։

Թշնամական գնդակն ինձ կյանքից չզրկեց,
Նա չի կարող հատել կյանքը բանաստեղծի,
Ապրելու, հաղթելու ծարավն էր իմ մեջ մեծ,
Ես այդ անհուն տենչով մահվանը հաղթեցի։

Վերադարձա ձեզ մոտ. կռվենք, իմ ընկերնե՛ր,
Կրծքներս դեմ տված չարիքին աշխարհի,—
Լավ է երգը շուրթին, ոտքի վրա մեռնել,
Քան ապրել շղթայված, որպես ճորտ ու գերի։

Ահա ինչպես լավա, ֆաշիստական հորդան
Խոյանում է մեր դեմ իր արյունով հարբած,
Արհամարհենք մահը, դիմադրենք նրան,
Բնաջնջենք նրա ոհմակները քաղցած։

Ով առյուծնե՛ր, եկե՛ք, եկե՛ք իմ հետևից,
Ես, հայ բանաստեղծս ձեզ տանում եմ մարտի,—
Թող մեր պատվին չիջնի ամոթի ոչ մի բիծ,
Թող մեր հողում մեռնի թշնամին ամարդի։

Ծխում են, հրդեհվում բլուրները վիրձիգ,
Մալախովյան կուրգանն է խոսում անդադար,

Մառախի մեջ են նետվում ինչպես հպարտ արծիվ
Սավառնորդները մեր՝ երկնքի տիրակալ։

Բաստիոնները խոժոռ հևում են կրակից,
Մահ, մահ են տեղում ոսոխների համար
Եվ գծանավերը ծանր՝ ու անհանգիստ
Կարդում են թշնամուն դատավճիռ ու մահ։

Ահեղ են գնդերը ընկերների իմ քաջ,—
Ընկնում են, բայց ելնում արնաթաթախ նորից,
Եվ գնում են նորից թշնամու դեմ, առա՛ջ,—
Սրբազան վրեժով կախարդված ու անբիծ։

Առա՛ջ, միայն առա՛ջ, կրծքներս բաց, երգով,
Սևաստոպոլ հերո՛ս, մեզ հետ ես ընթանում,
Արյունն է հորդանում քո փեշերի ներքո,
Թշնամու դիերից լեռներ են բարձրանում։

Այս սրբազան ժամին հոգ չէ՛ մահը այնքան,
Թող գալիքի երգը մեզ հուշարձան լինի,
Եվ սերունդներն ասեն՝ հերոսաբար ընկան
Հանուն Հայրենիքի, հանուն Ստալինի։

Սևաստոպոլի ռազմաճակատ
18-ին հունիսի 1942 թ.

ԳՈՐԻՈՒՄ

Գորի՛, Գորի՛, քաղա՛ք հնադարյան ու հին,
Դու կրել ես մեջքիդ լուծը մոնղոլական,
Օ՜, դու վրացական չքնաղ գեղեցկուհի,
Քեզ ավրել են, գերել, քանդել հազար անգամ,
Ավերել, ավերել, տվել հրին, մահին:

Բայց հուրը քո սրտում դու պահել ես անմար,
Մոխիրների միջին բորբոք ես մնացել,
Գալիք լավ դարերի, սերունդների համար,
Խնամել քո կաթով մանկանն առյուծաձև,
Գուրգուրել, թև տվել, նետել կյանքի պայքար:

Եվ քեզ, քեզ վիճակվեց նվիրել աշխարհին
Տառապող մարդկության ցավերը ամոքող,
Խիզախամիտ, անկոր ու մեծ այն հանճարին,
Որ ձուլված էր քո մեջ իր հանճարի ոգով,
Որ ահերի դեմ քեզ դուրս հանեց պայքարի:

Դու նրան մայր եղար քնքշանքներով առատ,
Գգվանքներով առատ ու բարեսիրտ այնքան,
Քաղցի, հոգսի պահին քո գրկի մեջ առար,
Սփոփեցիր նրան, գուրգուրեցիր նրան,
Ոգի, ավյուն տվիր և մղեցիր առաջ:

Ահա ես կարոտիս ճանապարհը բռնած,
Ու գլխաբաց ահա, հոգիս բլուր խակի,

Գանգուրներիս վրա աշնան եղյամը թաց,
Մտածում եմ անշուք հողե այն տնակին,
Ուր ձմռան մի գիշեր նա աշխարհին խնդաց։

Ուր ձմռան մի գիշեր, երբ աշխարհն էր խաղում,
Երբ տերևը քեզնից քամում էին արցունք,
Երբ քո շուրջը մութ էր, երբ անձրևն էր թափում,
Այստեղ երկունք եղավ, մի հաղթական երկունք
Եվ Արևը ծնվեց փոքրիկ այս տնակում:

«ՎԵՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ»

Քանաքեռի բարձունքներում
Ես փնտրում եմ քո տունը հին,—
Երևանն է ներքև խորհում,
Ինչպես նիրհած գեղեցկուհին։

Արարատյան աստղերի տակ
Քո հայրենի գյուղն է քնած,
Ճակտին առած լուսեղեն թագ
Եվ այտերը խնդուն ու բաց։

Ահա այստեղ, այս տնակում,
Սարդարական բռնության մեջ,
Հանճարովը քո կրակուն
Դու երկնել ես քո «Վերքը» մեծ։

Իսկ քո շուրջը հողն է հեծել,
Հրկեզ սիրտը Հայաստանի
Իր վերքերն է քո դեմ բացել,
Քեզնից հայցել սպեղանի։

Իսկ քո շուրջը հնչել է լոկ
Հորովելը հայ գյուղացու,
Որպես բռունցք, որպես բողոք
Սարդարի դեմ ու ատրծու։

Քո դարավոր ժողովրդի
Ըմբոստ ոգին էր քո մեջ վառ,

Որ օրերում այն խիստ մթին,
Որ օրերում այն դժնատար

Դու կարդացիր լեզվով անմեռ
Հայաստանի սիրտը ցավոտ,—
Քո դեմ հուզվեց սարդարը նեռ
Ու բանակը Փարաչավոր:

Քո՛ դեմ հուզվեց... իսկ դու հպարտ,
Ճակատիդ փշյա պսակ դրած,
Ալագյազի պես ձյունապատ,
Ինչպես Մասիսը վեհապանծ,

Արգելքներով այնքան խրթին,
Սակայն փառքով ուղիղ անցար,
Եվ քո պայծառ ժողովրդի
Շրթունքներին անմահացար:

*

Արդ հայացքով իմ սևեռուն
Ես փնտրում եմ քեզ անդադար,
Ախ, ո՞ր ձորում, ո՞ր անտառում,
Ո՞ր գետի մեջ հանգիստ դադար:

Ի՞նչ է ծաղկում շիրմիդ հիմա,
Ո՞ր քամին է օրոր ասում,
Մի տարագիր եղբոր նման
Ո՞վ է հիմա սիրտդ հուզում:

Ես տխրությամբ մի անսահման
Քո կորստյան երգն եմ գրում,
Աստղերի տակ Արարատյան,
Հայաստանի բարձունքներում:

ՄԱՅՐ ԱՐԱՔՍԻ ԱՓԵՐԻՆ

Մայր Արաքսի ափերին
Ուռիներն են կացել,
Ուռիները օրօրուն,
Մայր Արաքսի ափերին
Շատ եմ նստել ու թախծել—
Իմ մանկության օրերում։

Իմ վաղամեռ մանկության
Խոր կարոտն եմ ես թախծել
Իրիկունից մինչ արփին,
Իմ վաղամեռ մանկության
Անհետ կարոտն են լացել
Ուռիները գետափի։

Պսակել եմ ճակատս
Արարատյան ծաղկունքով
Հազարաշիվ ու փարթամ,
Պսակել եմ ճակատս
Արարատյան գարունքով
Ու բուրունքով ջինջ, արդար։

Նվիրական Արաքսի
Ջրերում եմ լողացել,
Օծվել նրա ցնցուղով,
Նվիրական Արաքսի
Պարզությունն եմ զգացել
Մի մանկական երկյուղով։

Արդ մի գետ է բաժանում
Ինձ մանկության օրերից,
Իմ հեռավոր մանկության,
Արդ մի գետ է բաժանում
Ինձ մանկության օրերից,
Որ թախծոտ էր անսահման:

Եվ ես հայացքն իմ հառած
Քո սրբազան ջրերին,
Խորհում եմ լուռ, աներեր,
Եվ ես հայացքն իմ հառած
Իմ մանկության օրերին,—
Ձեզ եմ փնտրում, ընկերներ:

Ձեզ եմ փնտրում, որ չկաք,
Խաղընկերներ իմ անգին,
Մտերիմներ իմ տխուր,
Ձեզ եմ փնտրում, որ չկաք,
Որ մեռաք սև զրկանքից,—
Եվ չգիտեմ, ա՜խ, ե՞րբ, ո՞ւր:

Գուցե ընկաք դուք անօգ
Գաղթի երկար ճամփերին,
Մտերիմներ իմ այնքան,
Գուցե ընկաք դուք անօգ
Ցրտի ձեռքից անմեկին,
Կամ ձեզ ճանկեց սով արքան:

Ա՜խ, քչերին վիճակվեց
Տեսնել արփին փրկության,
Հասնել բախտի կատարին,
Ա՜խ, քչերին վիճակվեց
Հաղթել սովին, պանդխտության,
Կարել ճամփան դժվարին:

Այդ քչերից եմ ես էլ,
Որ կանգնած եմ աներեր

Նոր աշխարհի նոր շեմքին,
Այդ քչերից եմ ես էլ,
Իմ լավ, կորած ընկերնե՛ր,—
Զայնում եմ ձեզ տխրագին։

Լսեք ձայնն իմ, ով որ կաք,
Եկեք տունն իմ, հյուր ինձ մոտ,
Ձեզ կընդունեմ գրկաբաց,
Լսեք ձայնն իմ, ով որ կաք,
Այս շողշողուն առավոտ
Խնդությունով շաղաթաց։

Մայր Արաքսի ափերին
Կանգնած այսպես գլխաբաց,
Երգս ձեղնով է տարվում,
Մայր Արաքսի ափերին
Զրարբունքից լուռ ու թաց
Ուռիներն են օրորվում...

ԴԵՐԵՆԻԿ ՉԱՐԽՉՅԱՆ



. . . .

ԴԵՐԵՆԻԿ ԶԱՐԽՉՅԱՆ

(1916—1943)

Նոր էր ոտք դրել նա բանաստեղծական աշխարհը, նոր էր ընթերցող մասսաներին հայտնի դառնում իր առաջին լիրիկական երգերով, երբ ծագեց պատերազմը:

Դեռևս 1938 թվին, ուսանող Դերենիկ Զարխչյանի երկու բանաստեղծությունը («Կոմերիտ աղա» և «Եկար ուրախ խաղերով») երկրորդ կարգի մրցանակի են արժանանում կոմերիտական երգի տեքստերի կոնկուրսում:

Զարխչյանը ուշադրության արժանի ընդունակություն է ցույց տալիս նաև գեղանկարչության և երաժշտության ասպարեզում:

1940 թվականին ինքնուս նկարիչների և քանդակագործների ռեսպուբլիկական ցուցահանդեսում պարգևատրվում է երկրորդ կարգի Պատվոգրով և դրամական պարգևով:

Նրա ստեղծագործությունները, որոնցից շատերը տպագրված են մեր պարբերականներում, ինքնաբուխ են ու անկեղծ և լի մեծ հավատով՝ դեպի հայրենիքի վաղվա օրը, դեպի նրա վերջնական հաղթանակը:

Դերենիկ Սերգոյի Զարխչյանը ծնվել է 1916 թվին, Վրաստանի Ախալցխեի քաղաքում:

Տեղում միջնակարգ կրթությունն ստանալուց հետո, նույն շրջանի Օռալ գյուղում մեկ ուսումնական տարի աշխատում է որպես ոչ-լրիվ միջնակարգ դպրոցի դիրեկտոր: Այնուհետև երկու տարի աշխատում է շրջանային թերթի խմբագրությունում, որպես պատ. քարտուղար:

1936 թվին ընդունվում է Երևանի Մոլոտովի անվան Պետհա-

Կոստան Զարյան

. . . .

. . . .

ԳԵՐԵՆԻԿ ԶԱՐԽՉՅԱՆ

(1916—1943)

Նոր էր ոտք դրել նա բանաստեղծական աշխարհը, նոր էր ընթերցող մասսաներին հայտնի դառնում իր առաջին լիրիկական երգերով, երբ ծագեց պատերազմը։

Դեռևս 1938 թվին, ուսանող Գերենիկ Զարխչյանի *երկու բանաստեղծությունը («Կոմերիտ տղա» և «Եկար ուրախ խաղերով») երկրորդ կարգի մրցանակի են արժանանում կոմերիտական երգի տեքստերի կոնկուրսում։*

Զարխչյանը ուշադրության արժանի ընդունակություն է ցույց տալիս նաև գեղանկարչության և երաժշտության ասպարեզում։

1940 թվականին ինքնուս նկարիչների և քանդակագործների ռեսպուբլիկական ցուցահանդեսում պարգևատրվում է երկրորդ կարգի Պատվոգրով և դրամական պարգևով։

Նրա ստեղծագործությունները, որոնցից շատերը տպագրված են մեր պարբերականներում, ինքնաբուխ են ու անկեղծ և լի մեծ հավատով՝ դեպի հայրենիքի վաղվա օրը, դեպի նրա վերջնական հաղթանակը։

Գերենիկ Սերգոյի Զարխչյանը ծնվել է 1916 թվին, Վրաստանի Ախալցխե քաղաքում։

Տեղում միջնակարգ կրթությունն ստանալուց հետո, նույն շրջանի Օռալ գյուղում մեկ ուսումնական տարի աշխատում է որպես ոչ-լրիվ միջնակարգ դպրոցի դիրեկտոր։ Այնուհետև երկու տարի աշխատում է շրջանային թերթի խմբագրությունում, որպես պատ. քարտուղար։

1936 թվին ընդունվում է Երևանի Մոլոտովի անվան Պետհա-

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԵՐՈՍՆԵՐԻՆ

Գնացքն է թռչում հայրենի երկրի
Ադամանդաշող անծայր դաշտերով.
Մեր տղաներն են՝ սրտոտ, քաջարի,
Գնում են կռվի անսահման սիրով:

Ուրախ նայում են լուսամուտներից
Ծանոթ դաշտերին, լեռներին հսկա.
Նրանց ժպտում է՝ արևը վերից,
Կարծես ասում է՝ թե ձեզ մահ չկա:

Նայում են ծանոթ ծառին, պարտեզին,
Օ՜, ինչքան թարմ է հուշը երեկվա.
Հրաժեշտ տվին սեր ու երազին,
Պայուսակը թողին որպես մի վկա:

Գնում են կռվի, անմահանալու,
Ոչ թե մեռնելու, հաղթելու համար.
Պատրաստ են ջահել կյանքերը տալու,
Որ հավերժ ծաղկես, հայրենի աշխարհ:

Որ սև օձերը սև մոխիր դառնան,
Էլ թույն չթափեն մեր ծաղկանց վրա.
Որ հաղթանակը հուր սրի նման
Արեգակի տակ հավերժ հուրհրա:

Գնացքն է թռչում դաշտերի միջով,
— Հե՜յ ջա՛ն ընկերներ, բարի
ճանապա՜րհ։

Վաղը ես կգամ հաղթական կանչով,
Հավերժ փառք բերած մեր երկրի
համար։

Մարտ, 1942 թ.
Բասարգեչար

ՀՐԱԺԵՇՏԻ ԵՐԳ

Իմ բարեկամնե՛ր, ընկերնե՛ր անգին,
Ես Ձեզ եմ թողնում այս գարունը վառ,
Որ այնպես թովեց իմ ջահել հոգին
Հուր ծաղիկներով, արևով պայծառ։

Ես Ձեզ եմ թողնում մեր կանաչ այգին,
Որի խնկաբույր ծառ ու ծաղկի հետ
Ծաղկեց իմ սերը, ծաղկեց իմ հոգին,
Ու սիրտս էլ դարձավ դալար ծաղկավետ։

Ես Ձեզ եմ թողնում այն անուշ առուն,
Որ մեր փողոցից անցնում է կայտառ,
Որ մանկությունս տարել է հեռուն,
Տարել է ջահել պատկերս պայծառ։

Ես Ձեզ եմ թողնում անուշիկ յարիս,
Որ միշտ կարոտով ինձ է սպասել.
Թողնում եմ բուրյան կանաչ վարդենիս,
Որի ստվերում շատ եմ երազել։

Գնում եմ կռիվ, կռիվն է վերջին,
Գնում եմ երկրիս իմ պարտքը տալու,
Հերոսի փառքով հուր կռվի միջին՝
Հերոսների հետ անմահանալու։

ԹՈՂԻ ՄԵՆԱԿ

Իմ հայրենի արևի հետ, արև յարիս թողի մենակ,
Ինքը երազ, երազ յարիս, ա՜խ, անմուրազ թողի մենակ։
Իմ փոխարեն իմ վարդ յարին հիմա արևն է համբուրում,
Դաշտի միջին հողմերի դեմ իմ վարդ յարին թողի մենակ։

Սիրուններից սիրուն է նա, ոնց լուսնյակը աստղերի մեջ,
Ես արեգակ, ինքը՝ լուսին, մենակ թողի աստղերի մեջ,
Լաց մի՛ լինի ու մի՛ ծածկիր դեմքդ սև ամպ թաշկինակով,
Թե չէ քեզ չեմ կարող գտնել հազար ոսկի աստղերի մեջ։

ԳՆՈՒՄ ԵՄ ԿՌՎԻ

Իմ ժողովրդի հաղթության համար գնում եմ կռվի ու թեկուզ մեռնեմ,
Թող ինձ մոռանան, թող ինձ չհիշեն, թող վարդս բացվի ուրիշի համար,
Կմեռնեմ, սակայն հազար ծաղկանց մեջ, մանկանց սրտերում նորից կյանք կառնեմ,
Մի հաղթությունը միլիոն կյանք կտա և անանց գարուն չքնաղ, ծաղկավառ։

Եվ նրանք, որոնք մի օր պիտի գան, թո՛ղ անվիշտ լինեն ու թող չիմանան,
Որ իրենց պայծառ գալիքի համար ընկել է կռվում մի ողջ ջահել,
Որի հոգու մեջ ցոլքն էր աստղերի, որը սիրում էր ծաղկունքը գարնան
Եվ իր հայրենի հողը սրբազան, սիրում էր պաշտում, իր կյանքից ավել։

Սիրում էր ծաղկանց ցողի մեջ փայլող, խնդուն պատկերը լույս արեգակի,
Ծառերից կախվող աստղերը ոսկի և աստղանկար ջրի հայելին։
Սիրում էր սրտով իր սիրած յարի դեմքին շողացող շողքը լուսնյակի

Եվ միշտ գերի էր ծաղկաբույր սիրո և գարնան պայծառ
երկնքի փայլին։

Թո՛ղ ինձ չհիշեն, թո՛ղ ինձ մոռանան, թող ջահել յարս էլ նոր
սիրով բացվի,
Միայն, ի՛մ երկիր, դու ծաղկա՛ծ մնաս, նոր վարդե՛ր բացվեն
գարունքիդ շնչով,
Անթիվ ծաղկունքով, աստղերով պայծառ թող հրաշուշան
աշխարհը լցվի,
Սիրտս ծաղկի հետ հողից դուրս կգա քո հաղթանակիդ
խնդության կանչով։

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

Թողած տուն ու տեղ և՛ սեր ու մուրազ՝
Ընկել են ճամփա, կերթան, հա կերթա՜ն...
Գերում է նրանց մի ուրիշ երազ,
Վառվում են տենչով կամքով հաղթության։

Այդ մեր տղերքն են, կռիվ են գնում
Հայրենի երկրի ծանոթ ճամփեքով,
Ձեր ճամփին, տղե՛րք, ձեր յարն է մնում,
Տղե՛րք, շո՛ւտ եկեք հաղթական փառքով։

Ստրկության մեջ չի ծաղկում ոչինչ,
Առանց հայրենիք սեր ու կյանք չկա։
Ազատ աշխարհում գարունն է թավիշ,
Արև է տեսքը ձեր յար աղջկա։

Մահն էլ է դողում ձեր հաղթանակից,
Հաղթանակն է մեր սրերին պատյան։
Ի՞նչ կա գեղեցիկ, քան գերությունից
Մեր եղբայրներին փրկել հավիտյան։

Վահագնի նման բոցերի ծալից
Կծնվի արև հաղթանակը մեր
Եվ արև մարդը գոհար Կրեմլից
Աշխարհն կգրկի լույսով խնկաբեր։

ԲԱԺԱՆՄԱՆ ԺԱՄԻՆ

Ահա և հասավ ժամը բաժանման, իմ հարազատնե՜ր,
Պետք է շտապեմ, թե չէ ես կայրվեմ վրեժի հրից։
Հե՜յ, մնա՛ք բարով, ոսկի՛ ծաղիկներ, հոգո՛ւս կրակներ,
Պիտի բաժանվեմ իմ սիրած, իմ սեգ, ծաղկուն սարերից։

Անո՛ւշ սիրեկան, իմ կյանքի՛ ընկեր, իմ հոգո՛ւ լուսնյակ,
Էլ չեմ լսելու երգերդ սիրո, խոսքերդ անուշ,
Էլ չենք նստելու, իրարով տարված, կանաչ ծառի տակ,
Էլ չի արբելու հոգիս ջերմ սիրող խոսքերով քնքուշ։

Գնում եմ ես էլ սև արտ հնձելու վրեժի շանթով,
Մեր սրի ծայրից սկիզբ է առնում մահը թշնամու,
Երազների տեղ սիրտս լցվել է ահեղ զայրույթով,
Ու ողջ էությամբ դարձել եմ վրեժ, կրակ ու սաստում։

Դե՛, մնա՜ս բարով, անգի՛ն սիրեկան, ինձ չմոռանա՛ս,
Գուցե ես չգամ, բայց կապրեմ երգում մեր հաղթանակի։
Ուրա՛խ կաց, անգի՛ն, բացվի՛ր վարդի պես, դե՛, բարո՛վ
մնաս։
Ժամն է, որ քո տեղ իմ դեմը շողա ցոլքը կրակի...

ԱԽԱԼՑԻԽԵ

Իմ Ախալցխա՛, իմ ծննդավա՛յր,
Հարազա՛տ քաղաք, իմ կանա՛չ օրրան.
Գուրգուրել ես ինձ ինչպես բարի մայր,
Դու կանաչ դրախտ, ծով երջանկության։

Հարազատ են ինձ քո ծառերն ամեն,
Ամեն թփի հետ մի հուշ է կապված,
Վարդերդ այնպես փարթամ կծաղկեն,
Ինչպես հայրենի երկիրն իմ, ծաղկած։

Երբ մտն եմ գալիս Փոցխովի ափին,
Անցած օրերն եմ ես հիշում նորից,
Զարթնում են մեկ մեկ հուշերս կրկին,
Քաղցր հուշերս ոսկե մշուշից։

Թողել եմ թավիշ ծոցիդ մեջ ծաղիկ,
Ծաղիկ հույզերն իմ ու սերն իմ գարուն,
Ապրել եմ ուրախ, քեզ պես երջանիկ,
Ի՛մ ծննդավայր, դու իմ ոսկեղե՛ն։

Ինձ հետ բոյ առած ամեն ծառ դալար,
Վկա է անմեղ քաղցր պատմության,
Ամեն հիշատակ սուրբ է ինձ համար,
Նրանք սերմերն են ներկա խնդության։

Իմ բարի՛ օրրան, քո ջուրն են խմում
Իմ ընկերները, քեզ պես հարազատ,
Քո ծաղկանց անուշ նեկտարն են շնչում
Ու քեզ հետ ծաղկում երջանիկ, ազատ։

Գիտեմ, դու կապրես երկար ու երկար,
Եվ հար կծաղկես, իմ անուշ քաղաք,
Ես էլ թող ապրեմ քեզ հետ դարեդար
Ու միշտ ընթանում երթից հավասար։

ԿԱՐՈՏ

Կարոտով մեր հին գյուղը մտա,
Եվ ինձ իմ ուռին հազիվ ճանաչեց,
Նորից մեր զանգը անուշ ղողանջեց...
Ա՜խ, ընկերներիս այնտեղ չգտա։

Աղջիկ ու տղա երգելով եկան
Գարնան պես առույգ անցան իմ մոտից,
Չգիտեմ ինչո՞ւ՝ լացի կարոտից...
Ա՜խ, ընկերներս, ա՜խ, նրանք չկան։

Իմ գյուղական անո՛ւշ տարիներ...
Չեմ կարող երբեք, երբեք մոռանալ,
Կուզեի նորից պատանեկանալ,
Եկե՛ք, ե՛տ եկեք, իմ անհո՛գ օրեր։

Խաղում են ահա ուրախ, բախտավոր,
Ասես մեր երգն է հնչում դուրեկան,
Ամեն ինչ նույնն է, բայց նրանք չկան,
Իմ ընկերները՝ հեռո՜ւ հեռավոր։

ՕԳԱՁՈՒԻ ԵՐԳԸ

Սուսան սարից
Զարդեր բերի,
Վարդեր բերի
Քեզ համար,
Կանաչ մարգից
Նշան բերի,
Շուշան բերի
Քեզ համար։
Թռա երկինք
Աստղեր բերի,
Արև բերի
Քեզ համար,
Արև մարդուց
Արև համբույր,
Բարև բերի
Քեզ համար։

1939 թ.

ԲԱԼԼԱԴ ՊԱՐՏԻԶԱՆԻ ԵՎ ՆՐԱ ԿՆՈՋ ՄԱՍԻՆ

Ծանր է վայրկյանը գերության դրկում,
Խավար է թվում արևը զվարթ,
Եվ հոգին արծվի փակված վանդակում,
Սերն է թառամում ինչպես պոկված վարդ։

***

Իրիկուն իջավ խրճիթի վրա,
Այնտեղ մի ծծկեր մանուկ է լալիս։
Ախ, ո՞ւր է կորել անուշ մայրն իրա,
Ո՞ւր է գնացել, ու տուն չի գալիս։

Բայց հայրն է իջնում սարից մոտակա,
Պարտիզան հայրը հրացանն ուսին...
Նա տուն է մտնում 'ոնց որ մի հսկա,
Ու գիրկն է առնում մանկանը լուսին։

Հոր հուր աչքերում զայրույթ կա ահեղ,
Եվ կրակ, և շանթ, և հայրական սեր։
Մանուկն է ժպտում անուշ ու անմեղ
Աշխարհի անց ու դարձին անտարբեր։

Բայց ո՞ւր է կորել իր կինը. սիրուն,
Խլե՞լ է նրան մահը տանջալից,

Թե՞ կին է դարձել անարգ թշնամուն
Կամքով սեփական կամ դուցե ահից:

Մանկանն համբուրում և դուրս է գալիս
Պարտիզան հայրը թալանված տանից,
Նրան պահակն է վախով ձայն տալիս
Երկյուղ կրելով պարտիզաններից:

Եվ պարտիզանը թեքում է ճամփան,
Կորչում է գյուղի մութ փողոցներում,
Ապա գնում է մոտենում մի տան,
Ներսը ճրագներ, առատ կերուխում:

Օ՜, ի՞նչ է տեսնում,—իր կինը այնտեղ...
Իր սիրած կինը սպայի գրկում,
Ոնց օձի կրծքին վարդը փառահեղ:
Հե՜յ, էլ ինչո՞ւ է ապրում աշխարհում:

Եվ պարտիզանը նայում է շվար
Եվ շշնջում է.—դավաճա՜ն դու կին...
Տանից դուրս եկան երկու «սիրահար»
Եվ պարտիզանը ճանաչեց մեկին:

Նստած ծառի տակ իր կինն ու սպան
Զրույց են անում և ի՞նչ... համբուրվում...
Ո՞ր ամուսինը կզսպի իրան,
Որի՞ն իր կինը սև օձ չի թվում:

Եվ հրացանն է ուսից ցած առնում,
Բայց չկրակած՝ սպան գլորվեց,
Վազում է մոտիկ ու պարզ է դառնում,
Իր կինը օձին գետին տապալեց:

Կինը կարոտով գրկեց սիրածին,
Ինչպես վարդենին կաղնուն երկնահաս,
Ու նույն գիշերը անտառ գնացին,
Տարան իրենց հետ մանկանը երազ:

ԳԱԼԻՔԻ ԲԱՐԵԿԱՄԻՍ

Հեռո՜ւ հեռավոր գալիք օրերի իմ ջահել ընկեր,
Գիտեմ, դու կգաս ու ինձ պես պիտի գարունը սիրես,
Յարիդ հետ մեկտեղ պիտի այս դաշտում փնջես ծաղիկներ,
Ու յարիդ սիրով ու ծաղիկներով արբենաս ինձ պես։

Գիտեմ, յարիդ հետ պիտի հանդիպես այս վարդենու մոտ,
Ուր ես իմ յարին հրաժեշտ տվի կռվի գնալիս,
Հրաժեշտ տվի ամռան ոսկեշող մի լույս առավոտ,
Ու վերջին անգամ ես տեսա նրան անուշ ժպտալիս։

Եվ չես գիտենա, որ քո խնդության լույս կյանքի համար
Կռվել եմ, կոփվել ու մարտում ընկել կյանքիս գարունքին։
Իմ անուշ երկրի հեռավոր ընկեր, հարազատ եղբայր,
Դո՛ւ էլ ինձ նման միշտ պաշտպան եղիր իմ հայրենիքին։

ԱՆՄԱՀՈՒԹՅՈ՛ՒՆ

Անմահություն է մահը հերոսի.
Ի՞նչ մահ, երբ նրա քաջազոր հոգին
Վառվում է, ինչպես լույսը փարոսի,
Եվ ուժ է տալիս նորից ամենքին:

Ի՞նչ մահ, երբ նրա թափած արյունով
Հազարան կարմիր վարդեր են բացվում,
Եվ ազատ կյանքն է զնգում հոգեթով
Եվ մարդկանց սիրտն է խնդությամբ լցվում:

Փա՜ռք քեզ, ով հերոս, դու ընկար կռվում,
Սուրբ հողի համար տվիր կյանքը քո.
Դու անմահացար, քո սիրտն է վառվում,
Որպես անթառամ հրեղեն կոկոն:

ԵՐԱ՛ՆԻ ՆՐԱ՛Ն

Մի վարդն էլ բույրով, վառվռուն գույնով,
Գարունքին իր վառ հմայքն է տալիս.
Ամոթ էն մարդին, որ աշխարհ գալիս
Ու հեռանում է ոչինչ չտալով:

Մեկը լույս կտա նման երկնքի,
Մյուսն իր գանձի կորուստն է լալիս.
Երանի նրան, ով կյանքն է տալիս
Հանուն հարազատ իր հայրենիքի:

ԻՄ ԵՐԵՎԱՆ

Չքնա՛ղ Երևան, իմ սիրո՛ւն քաղաք,
Թո՛ղ անցնեմ նորից բաղերիդ միջով,
Ուր ոսկեշողշող խաղողների տակ
Ջրերդ են երգում անուշ կարկաչով։

Ուր որ երկնքի դուստր ոսկեհեր,
Արևը՝ ամեն կանաչ տերևից
Կախում է ոսկի շողուն ծաղիկներ
Ու ինքն էլ կախվում ծառերի թելից։

Չքնա՛ղ Երևան, վարդագո՛ւյն քաղաք,
Ծառերիդ ներքո ոսկի մայթերով
Քայլերս են անցնում, հրեղե՛ն կրակ,
Արբած գարունքից ծառաբույր սիրով։

Կանցնեն Նախիջան կույսերը սևաչ
Կարմիր շոր հագած, որ խելք կտանի,
Ասես թե լինեն մի մի վառ կակաչ
Ծաղկած ծաղկավառ դաշտում գեղանի։

Յարս էլ է ծաղկել ծաղիկներիդ հետ,
Ջրերիդ միջին դեմքն է շողացել,
Ջա՜ն, իմ Երևան, քաղաք ծաղկավետ,
Նորից գարուն ես իմ սրտում բացել։

Նորից քեզ թողնում, գնում եմ կովի,
Դու հավերժ մնա, հայրենի՛ քաղաք,
Երկրիս փառքը թող ամենուր փովի,
Եվ դու միշտ շողա քո արևի տակ։

***

Իմ յար գարունն է նորից կանաչել,
Սարերը գնամ սիրտս հովանա,
Թող սիրտս ալվան ծաղկանց մեջ մնա,
Իմ յար գարունն է նորից կանաչել։

Կուզեմ համբուրել վարդը խնկաբույր,
Որ ծաղկանց միջին անուշ է բուրում,
Իմ սիրած յարի կուրծքն է զարդարում,
Կուզեմ համբուրել վարդը խնկաբույր։

Միշտ էլ գարուն է իմ ջահել սրտում
Սրտիս մեջ ունեմ ծաղիկներ բուրյան,
Թող պոկեն տանեն, անուշ արբենան,
Միշտ էլ գարուն է իմ ջահել սրտում։

1941 թ.

ԵՍ ՄԻ՛Ն ԵԿԱ

Ես մահ եկա իմ հայրենի աշխարհում։
Հայրենիքս լայնարձակ է ծովից ծով,
Ես մահ եկա սեր ու կարոտ իմ սրտում,
Անցա կանաչ, ծաղկածիծաղ դաշտերով։

Ինչքան մարդիկ լեզուներով անծանոթ՝
Սակայն նրանք ինձ այնպես են հարազատ,
Եղբոր նման, քրոջ նման այնպես մոտ,
Ու նրանց հետ երգում էի ես ազատ։

Երգում էի ուրախ երգեր խնդության,
Ու նրանց հետ քեֆի նստում սրտաբաց,
Խմում էինք անուշ գինին հուրհրան
ՍՏԱԼԻՆԻ, մեր հարազատ հոր կենաց։

Հայրենիքիս աղջիկները ամենուր
Զքնաղ էին, արևի պես լուսածին,
Տերերը վառ կարմիր երազ, իրենք՝ հուր,
Իրենց անուշ հրով սիրտս այրեցին։

Նրանց լուսե տեսքը մնաց սրտիս մեջ,
Ոնց ծովի մեջ ջինջ պատկերը երկինքի
Ու իմ անափ հիացմունքիս չկա վերջ,
Նրանք շունչն են ու դարունը իմ երգի։

Ջան հայրենիք, թո՛ղ ես անցնեմ ջրի պես
Քո խնկաբույր շուշանների դաշտերով,
Ծարավներին, ծաղիկներին ջուր տամ ես,
Թեկուզ ցամքեմ ու չհասնեմ մինչև ծով։

***

Յար, նորից սիրով քեզ այցի կգամ,
Դաշտերը գնանք վառ ծաղկանց միջով,
Անցնենք մարգերը զմրուխտ կանաչով,
Յար, նորից սիրով քեզ այցի կգամ։

Մանուշակների կապույտ մահճի մեջ
Իրարու գրկած մրափենք անուշ,
Գարնան զեփյուռը երգ ասի քնքուշ,
Մեր սիրտն արբենա երգով սիրատենչ։

Վարդերի գրկում իմ բոց համբույրով
Կուզեի դեմքիդ վարդերը քաղել
Ու աստվածային սրբազան սիրով
Կուզեի մահվան դեմքին ծիծաղել։

1941 թ.
Վաղյան

***

Իմ ազի՛զ ընկեր, սիրող սիրտ ունես,
Սիրտդ երկինք է անհուն ու պայծառ,
Սիրտդ վառել ես ու Դանկոյի պես
Հրեղեն լույսով մտել ես անտառ։

Ու լույս ես տալիս և հույս ես տալիս
Մարդկանց մոլորված՝ քո լույսով բարի.
Ու նրանց վիշտը դու ինքդ ես լալիս,
Քո սրտի մեջ է սիրտը աշխարհի։

1941 թ.

⁂

Երազ տեսա, հարսանիքիս երգն էր զնգում աստղերի մեջ,
Լուսնի արծաթ թասը ձեռին իմ արեգակ յարն երևաց.
Արևիս հետ, իմ յարիս հետ ես քեֆ արի աստղերի մեջ,
Երազիս մեջ հարսանիքս էլ մի դյութական երազ թվաց։

ԿՈՄԵՐԻՏ ՍԱՀՄԱՆԱՊԱՀԸ

Լույս աստղերով գիշերն իջնում,
Ծվարում է անտառում.
Դունատ բոցով, կապույտ մուժում
Լուսնաթագն է վառվում։

Սահմանի մոտ, ջահել, ջիվան
Մի կոմերիտ կրակոտ,
Հայրենիքի սերը սրտում՝
Հոգում սիրո ծով կարոտ։

Հպարտ կանգնած հսկում է նա
Մեր սահմանը սրբազան։
Մտքերի հետ ընկեր դառած
Եվ զենքի հետ անբաժան։

Միտք է անում, ուրախանում,
Սրտում խինդ է ու բերկրանք։
Նա սուրբ հողն է մեր պաշտպանում,
Ի՞նչ կա ավելի մեծ հրճվանք։

Խաղաղ քնով ու անվրդով
Ննջեց անտառ ու արտ.
Ջահել պահակն հպարտ ոգով
Պիտ հսկի մինչ առավոտ։
Ծով երազով գիշերն անցավ
Հայրենիքիս դաշտերով,
Ջահել տղի սիրտը լցվեց
Ոսկեհատիկ աստղերով։

1939 թ.

ՍԱՀՄԱՆԻ ՄՈՏ

Լուսնյակ գիշեր, զո՛վ գիշեր...
Սահմանի մոտ մի պահակ
Քաջ հսկում է հողը մեր
Կանգնած բարդի ծառի տակ։

Եվ նա մի պահ իր մտքով
Սլանում է դեպի տուն...
Ահա եկան նրա մոտ
Հարազատներն իր խնդուն։

Ահա հայրը իր բարի
Բան է պատմում իր որդուն,
Թե ինչ ինքը էս տարի
Առատ բերք է բերել տուն։

Եվ տանն իրենց խնդություն,—
Կյանքն է զնգում երջանիկ,
Քեֆ են անում ու երգում,
Ասես լինի հարսանիք։

Շշնջում է մեր ուրախ
Քաջ մարտիկը խնդաբեր—
— Ջան, ապրեցե՛ք դուք խաղաղ,
Ձեր հանգիստը կհսկեմ։

Լուսնյակ գիշեր, զո՛վ գիշեր...
Սահմանի մոտ մի պահակ
Քաջ հսկում է հողը մեր
Կանգնած բարդի ծառի տակ։

ԱՐՏԱՇԵՍ ԲՈՐԵՆՑ

ԱՐՏԱՇԵՍ ԲՈՐԵՆՑ

(1914—1945)

Արտաշես Գրիգորի Բայանդուրյանը (Բորենց) ծնվել է 1914 թվականին, եղբայրական Ադրբեջանի Խանլարի շրջանի Գետաշեն գյուղում, ծայրահեղ աղքատ ընտանիքում։

Դեռևս 13 տարեկան հասակում Արտաշեսը զրկվում է հորից։ Տան հոգսն ընկնում է աշխատասեր մոր ուսերին, որը լվացք անելով պահում, պահպանում է իր զավակներին։

Արտաշեսը միջնակարգ կրթությունը՝ մինչև 8-րդ դասարանը՝ ստանում է գյուղում, իսկ շարունակում և ավարտում է Բաքվում, 1936 թվ.։

Մեկ տարի գյուղում ուսուցչություն անելուց հետո աշխատում է Բաքվի «Կոմունիստ» և Կիրովաբադի «Բանվորական Կիրովաբադ» թերթերի խմբագրություններում։ Հեռակայում է Բաքվի Մանկավարժական Ինստիտուտին և ավարտում նրա լեզվի ու գրականության ֆակուլտետը։

Բորենցն սկսել է տպագրվել 1935 թվականից՝ դպրոցական նստարանից, սկզբում Խանլարի շրջանի «Ազնիվ աշխատանք» թերթում, իսկ հետագայում՝ «Սովետական գրող» ամսագրում և «Կոմունիստ» թերթերում։ Թարգմանած ունի վրաց ականավոր բանաստեղծների գործերից։

Բորենցի բանաստեղծությունները, չնայած որոշ թերություններին, գրված են բարձր շնչով, համակված են պայծառ լավատեսությամբ ու բուռն հայրենասիրությամբ և միաժամանակ այրող ատելությամբ՝ դեպի գերմանա-ֆաշիստական հորդաները։ Նախապատերազմյան նրա՝ գործերում վառ գույներով ու հարազատորեն է պատկերած Բաքվի նավթաշխարհը։

1942 թ. երիտասարդ բանաստեղծը մեկնելով կռվի դաշտ, մասնակցում է Մալգոբեկի, Գրոզնու, Թերեքի, Թամանի և Ղրիմի համար մղվող մարտերին։

Ուկրաինական 2-րդ ռազմաճակատում, 1943 թ., հրամանատարության մարտական առաջադրանքները գերազանց կատարելու համար պարգևատրվում է «Խիզախության համար» մեդալով, ստանում կրտսեր սերժանտի կոչում։ Մի քանի անգամ, իր զորամասի հետ միասին, արժանանում է Գերագույն Գլխավոր Հրամանատարի շնորհակալագրին։

Բաքվի «Կոմունիստ»-ում տպագրվում են ռազմաճակատից ուղարկած նրա մի շարք բանաստեղծությունները, որոնք լավագույնն են նրա ստեղծած գործերի մեջ։

Արտաշես Բոբենցը հաղթանակող Սովետական Բանակի հետ հասնում է Բուդապեշտ և խիզախի մահով ընկնում 1945 թվականի մարտի 31-ին Գյորկ (Հունգարիա) գյուղի մոտ, ուր և թաղվում է զինվորականին արժանավայել պատվով։

ՀԱՅՐԵ՛ՆԻ ԽՐՃԻԹ

Ես քեզ չեմ հանձնի թշնամու ձեռքը,
Քեզ, երազանուշ խրճի՛թ հայրենի,
Թույլ չեմ տա, որ նա իր արնոտ ոտքը
Քո նվիրական, սուրբ շեմքին դնի։

Քաջ պապերիս պես իմ հզոր կուրծքը
Դեմ կտամ հազար նիզակի, սրի.
Լավ է տաք արնով ներկել քո շեմքը,
Քան հարկից ներքո ապրել միշտ գերի։

***

Կա՛նգ առ, սև՛ հրեշ, կա՛նգ առ, մարդակե՛ր,
Փակ են քո առաջ ճամփեքը բոլոր,
Ելել եմ քո դեմ խրոխտ, աներեր,
Ու պիտի պոկեմ լեղուդ թունավոր։

Պիտի գլխատեմ, խոցեմ աններում
Արնով հղփացած քո դաժան ոգին.
Թույլ չեմ տա, որ քո պիղծ ճիրաններում
խեղդես, խոշտանգես մորս թանկագին։

17. 10. 43 թ.
(Փեմռուկ)

ԱՐՅԱՆ ՀԵՏՔԸ

Կանգնած ձյունածածկ վրանի առաջ,
Մտորում էր մեր լեյտենանտը քաջ։
— Ինչո՞ւ ետ չեկավ հետախույզն, ինչո՞ւ։
Գազանի նման բուքն էր մռնչում։

Գուցե թշնամին օղակեց նրան
Ու խոցեց նրա սիրտը հուրհրան,
Կամ գուցե բուքը պաղ ու շառաչուն,
Թաղեց նրա դին կապույտ լճում։
Ահա մտքերն այս ոնց սրեր շողուն,
Խրվեցին նրա սրտում, ուղեղում։
— Պետք է գտնել քաջ հետախույզին,—
Որոտաց նրա հրամանը զիլ։

Աչքերում վառած կայծակներ ու հուր
Իրար նայեցին մարտիկները լուռ,
Ապա հետևից լեյտենանտի քաջ
Զգույշ ու խոհեմ քայլեցին առաջ,
Քայլեցին առաջ, քայլեցին նորից
Ու ձգվեց նրանց դեմ արյան մի գիծ.
Ալ արյան մի գիծ, հետքեր արյունոտ
Անտառի եզրով սառած ու ձյունոտ։

Նրանք բռնեցին հետքերն այդ արյան,
Զգույշ քայլերով մի թումբ բարձրացան.

Թումբը բարձրացան և ի՞նչ… դեմ առ դեմ,
Ահա տնակը կանգնեց ձյունադեմ:
— Պառկե՛լ, ընկերնե՛ր, հետքերն այս արնոտ
Ուղիղ տանում են տնակը ձյունոտ,
Թշնամին խաղ է սարքել ամարդի,—
Հնչեց մեղմ ձայնը մեր լեյտենանտի:

Մարդ կա տնակում, մենակ է սակայն,
Զննում է դուռը նա լուռ ու անձայն,
Տեսնում է ահա տղերն են օղակում
Երկու կողմերից:—Ու սիրտն է զարկում
Ահե՛ղ տագնապով օտար հարկի տակ:
Բայց մոտենում են ֆիններն սպիտակ:
Իսկ ինքը մենակ—խորհում է ահա.
— Մեկ է, տնակը թշնամուն չեմ տա:

Սակայն տեսնում է մոտիկ այն թմբում
Ահա տնակին նշան են բռնում.
Իսկ մեկը, մեկը ուշիմ, սրատես,
Սողում է դեպ ցած, ծանոթ է ասես:
— Ովքե՞ր եք, էհե՜յ,—նա զիլ ձայն տվեց:
Ու լեյտենանտը մեր ոտքի կանգնեց:
— Ովքե՞ր եք, ասե՛ք,—ձայնը դղրդաց,
Մի ռումբ էր ասես տնակում թնդաց:
— Ընկե՛ր լեյտենանտ, գնա՛նք դեպ տնակ.
Դա մեր հետախույզ Անարն է մենակ:

Եվ նրանք եկան: Հոգով անանցի,
Վազեցին դեպի տունը դիմացի,
Քարե տնակի դռները սառած
Բացվեցին թափով մեր հոգի առաջ:—
Ու շեմի վրա, ոնց եղբայր անգին
Մեր լեյտենանտը սիրով սրտագին
Փարվեց Անարին, որ մեն ու մենակ
Տնակն էր առել թշնամուց անարգ:

ԹԱՄԱՆԻ ԱՂՋԻԿ

Բա՛ց աչերդ, արևներդ,
Սիրո՛ւն աղջիկ Թամանի,
Բա՛ց արցունքոտ թերթունքներդ,
Թավ հոնքերդ սիրունի...
Բա՛ց թրթռուն շրթունքներդ
Կարոտ անուշ համբույրի,
Բա՛ց արտամաշուք ժպիտներդ;
Վառ վարդերդ գեղանի։

Տե՛ս, շաղում է ձեր լեռներում
Նորեն լույսը մեր կյանքի,
Տե՛ս, չի ծխում ձեր սարերում
Մուժը էլ մութ ավերքի...
Տե՛ս, զնգում է ծով շարքերում
Գունդը ազատ խնդումի,
Բա՛ց աչերդ գեղասիրուն,
Գարո՛ւն աղջիկ Թամանի,
Բա՛ց արցունքոտ թերթունքներդ,
Թավ հոնքերդ սիրունի։

Ահա հնչում, կարկաչում է
Նորեն երգը մեր ազատ,
Ահա նորեն կանաչում է
Անթոշ սերը անարատ,
Ահա զանգակ աղբյուրներդ
Նորեն ջինջ են, անգերի,

Բա՛ց թրթռուն շրթունքներդ
Կարոտ ազատ երգերի,
Բա՛ց անուշիկ, զառ զարդերդ
Կարոտ անուշ համբույրի:

Ես կռվել եմ, մարտնչել եմ,
Հաղթել եմ ու ճշնաժամն,
Ես քեզ համար տե՛ս բերել եմ
Ոսկեպուրպուր, մի՛ աշուն:
Ես եկել եմ, համբույրներդ
Առնեմ, աղջիկ Թամանի,
Բաց արտամաշուք արևներդ,
Շրթունքներդ գեղանի:

16 նոյեմբերի
1943 թ.

ԹԵ...

Թե շառաչուն մարտերից մեր
Չդարձա տուն հայրենի,
Մայր, իմացիր կռվում եմ դեռ
Ոսոխի դեմ վայրենի...

Թե չտեսնես էլ ինձ կյանքում
Երգիս պահին լաոգին,
Համարիր ինձ արհավիրքում
Ձեռքիս մեր Թուր-կայծակին...

Թե չտեսնես իմ շուքը վառ
Մեր հովասուն սարերում,
Գիտցի՛ր, որ ես ապրում եմ հար
Սովետական աշխարհում...

Թե որ ասեն, թշնամու սև
Սուրը խոցեց սիրտս հուր,
Համարի՛ր ինձ, մա՛յր իմ լուսե,
Միշտ կենդանի, սիրալուր...

Ու թե վախից սարսափահար
Դարձա տուն ոնց դավաճան,
Համարի՛ր ինձ, անողո՛ք մայր,
Մեռած, մեռած հավիտյան...։

30 հուլիս, 1943 թ.
Կուբան

***

Արդարամարտ մեր մեծ կռվից
Թե ողջ դարձա տունն հայրենի,
Մայր, կրկին ես հուզումնալից,
Ջերմ գգվանքով հեկեկանքի
Պիտի փարվեմ քո թևերին
Մանկան նման քնքշագին:

Ծով կարոտի սիրով հստակ,
Մի քնքշությամբ զինվորական,
Մեր հնամյա թթենու տակ,
Մեր Բուրաստի դեմ-հանդիման,
Պիտի ննջեմ քո ծնկներին՝
Համբույրներդ իմ շրթերին:

Մոզդոկ

ՊՐՈԼՈԳ

Մորս՝ Անիկա Բայանդուրյանին

Այն ո՞վ է ասում, թե մարտի պահին
Ոչինչ չի հիշում զինվորը արի.
Անգամ չի հիշում նա իր մայրիկին,
Անուշ մայրիկին քնքուշ ու բարի։

Այն ո՞վ է ասում... Ես չեմ հավատում
Այդ երգին անհույզ, խոսքերին այդ մութ.
Դա վախկոտ հոգու հույզ է անպատում,
Ահաբած սրտի նվվոց մի անփույթ։

Ես չեմ հավատում, մարտի թեժ պահին
Ելնում է իմ դեմ մայրիկն իմ լուսե.
Ու ահեղ վրեժի երգ մի հրածին,—
Մղում է նա ինձ պայքարի վսեմ։

1943 թ.
Թեհրան

ԱՐԻՈՒԹՅՈՒՆ

Ամպերի վրա ձմեռվա ցրտին
Ջանքով եմ անխոնջ առկայծող կամքի,
Արկեր եմ կրել գիծը կրակի
Թամանի վրդով լեռներում մթին:

Վագրի պես հողմն է գետն ծառացել,
Ծեծել է կուրծքս ձյունախառն քամին,
Սահել եմ հաճախ, ընկել սառ ճամփին,
Բայց հոգնածություն ես չեմ զգացել:

Ելել եմ կրկին ու քայլել առաջ
Ամպերի վրա՝ բեռը թանկագին,
Պայթել են շուրջս արկեր խոլագին՝
Շարժելով հիմքից անտառը սառած:

Երգել են շուրջս բեկորները թեժ,
Սակայն ճեղքել եմ շերտերը ձյունի,
Շտապել դեպի գիծը կրակի,
Դեպի շառաչուն մարտադաշտը կեզ:

26. 6. 43 թ.

ՏՐՏՈՒՆՋ

Ես քեզ խոստացա սեր նվիրական,
Սիրո հավատի հուր մշտաբորբոք...
Ավա՜ղ, սիրացյալը քո սիրտը հանգավ
Զարկված թշնամու սրից անողոք:

Ես քեզ խոստացա, խոլ կայծից հեռու
Առնել ու տանել հարավն իմ ջերմին,
Որտեղ մայրիկս անհուն կարոտով
Ճամփես կսպասի արցունքն աչքերին:

Ես քեզ խոստացա: Ափսոս, մուրազն իմ
Մնաց անկատար իմ հոգու խորքում,
Դու քաջ, որպես մի ամազոնուհի,
Ընկար աննահանջ, ընկար քո դիրքում:

Ընկար... Եվ եթե մնամ կենդանի,
Չընկնեմ քեզ նման դիրքում արնաներկ,—
Շրթերիս անմար անունըդ քաջի
Հպարտ կքայլի դեպի արևելք:

ՄՈՍԿՎԱ

Ոչ սառնամը խոլ, մահաբեր,
Ոչ հարվածը չար շանթի
Չեն սասանի քո աներեր
Դարբասները երկաթի:
Կփշրվեն հողմ ու մրրիկ
Պողպատապատ քո կրծքին,
Դու կմնաս միշտ անառիկ,
Դու, ի՛մ Մոսկվա, իմ անգի՛ն:
Տե՛ս, ինչպես մի սիրտ ու հոգի,
Այս օրերում հողմահար,
Ազգ ու ցեղեր՝ հաղթանակի
Փառք են կռում քեզ համար:
Որ դու լինես անառ ու սեգ
Հրեշների հանդիման,
Մոսկվա՛, Մոսկվա՛, իմ մա՛յր, իմ սե՛ր,
Դու ա՛կն աղբյուր խնդության:
Հոգին ես դու երկրի իմ պերճ,
Փառքը կյանքի կենսաբեր,
Կհուրհուրա քո սրտի մեջ
Երջանկության լույսը մեր:
Քո մեջ անշեջ կբոցկլտա
Ժողովրդիս բախտը նոր,
Մոսկվա՛, Մոսկվա՛, չքնա՛ղ Մոսկվա.
Նա քեզ հետ է ամեն օր:
Դու, որ շունչ ես տվել նրան,

Փրկել անել աղետից,
Հենց իր կյանքը նա հուրհրան
Առել է քո ծով սրտից։
Եվ ես սրտին նրա արի
Վառված սիրով քո հրկեզ,
Ընդվզումից դառն օրերին
Սիրտս եմ բերում ողջակեզ։
Մոսկվա՛, Մոսկվա՛, ոսկե՛ երազ.
Իմ լույս կյանքի հո՛րդ աղբյուր,
Դու միշտ պիտի հպարտ ժպտաս
Մեր լանջերին ծաղկաբույր։

24 հուլս. 1941 թ., Բաքու

ԱՆՄԱՀՈՒԹՅՈՒՆ

Ոչ մի հիշատակ, հուշ նվիրական,
Եվ ոչ մի պայծառ, մեծ զոհաբերում
Իմ ժողովուրդը հին, քաջազնական,
Դեռ չի մոռացել իրա երգերում:
Հիշում է նա միշտ և կհիշի հար
Նրան, ով սիրով իր կյանքն է տալիս
Հայրենի երկրի վես փառքի համար,
Գալիքի համար՝ ծաղկաբույր մայիս:
Նրա հավերժող սրտում ալեկոծ,
Ոչ մի մահաբեր ու մութ մղձավանջ
Չի կարող մարել անունները բոց
Մարտիրոսաբար մարտնչող քաջանց:
Նրանք միշտ խրոխտ ճակատով աստղամերձ,
Քայլում են հպարտ սերունդների հետ,
Ուսած՝ դարերի ծանրությունը մեծ,
Սրտերում հույսը կյանքի լուսավետ:
Ահա, ասես թե նորից շունչ առած,
Հեծած իրենց սեգ ձիանքն ամեհի,
Դավիթ ու Մհեր սուրում են առաջ
Ոլոր ճամփեքով հնոց աշխարհի:
Ասես թե կրկին Վարդան զորավար
Կրակ է թափում թշնամու գլխին.
Այսպես է հիշում ժողովուրդը մայր
Իր որդոց՝ զոհված հայրենի հողին:
Անմահ գովերգներ հյուսում կաթոգին,
Որ սերունդները լսեն ու փառք տան

Ասված քաջերին, անմահ քաջերին,
Դյուցազուններին՝ իմ հայրենի տան։
Եվ ո՞ր ազնիվ սիրտ չի տենչա հավետ
Այդ անմահության փառքը ոսկեհյուս,
Օ՛, իմ հայրենի դաշտե՛ր ծաղկավետ,
Ջրե՛ր զմրուխտյա, լեռնե՛ր երկնասույզ։
Լավ է զոհ բերել կյանքը վառ սիրով
Հանուն սուրբ պատվի ու գործի շիտակ,
Քան ապրել երկար, բայց մեռնել խռով,
Թողած ոչ անուն, ոչ էլ հիշատակ...
Ահա ամպերը անողոք մահվան
Ճաչում, ճայթում են քո գլխին խռով,
Հրդեհում ծաղկուն և՛ գյուղ, և՛ ավան,
Երկինքը խանձում իրենց բոցերով։
Մահը դարչնագույն իր հրեշավոր
Ժանտախտն է ուզում աշխարհում փռել.
Ու գազանի պես նենգ ու վիրավոր
Դալար ծաղկունքին սև աչք է հառել։
Բայց պետք է հաղթել,—վրեժը միայն
Կհաղթի մահին, դժնատես մահին,
Վրեժը, որ չի վառվում ընդունայն,
Այլ թև է տալիս ազնիվ սրտերին։
Փառքը ինքն իրեն երբեք չի գալիս,
Այն վաստակում են արյունով, ջանքով,
Կռվում՝ հերոսը իր կյանքն է տալիս,
Գիտե, որ կապրի աստղերի ներքո։

25 դեկտեմբերի, 1941 թ., Բաքու

ԳԱԶԵԼ ՀԱՂԹԱՆԱԿԻ

Հե՜յ, ու՛շ դրեք իմ այս երգին, էլի խնդում, սեր կլինի,
Չի՛ մարի մեր պայծառ ոգին, էլի խնդում, սեր կլինի։
Նեռ հիտլերյան մութը խավար կցնդի ոնց մթին գիշեր
Ու կժպտա լույսը կրկին, էլի խնդում, սեր կլինի։

Ծաղկածիծաղ իմ աշխարհի արծիվները տուն կդառնան,
Նեռը հանձնած հուր կրակին, էլի խնդում, սեր կլինի։
Խաղաղ կյանքի այգը շողուն նորից երկրում իմ կցոլա,
Ու կխնդա մայրն իմ անգին, էլի խնդում, սեր կլինի։

Սրտից վանած վիշտը նա իր, հաղթանակի երգը շրթին,
Կըողջունե ինձ սիրագին, էլի խնդում, սեր կլինի։
Կռվից դարձած ինձ՝ զինվորիս նա կարոտով գիրկը կառնի
Ու կփարվենք մենք քնքշագին, էլի խնդում, սեր կլինի։

Անապական արցունքով թաց, աչքերը բաց իմ սիրուհին
Կգա՝ մանուկըս իր գրկին, էլի խնդում, սեր կլինի։
Ու կժպտա մանուկն իմ բոյր, հանց վաղորդյան լույսը
քնքույշ,
Գլուխն հենած իր հոր կրծքին, էլի խնդում սեր կլինի։

Կշնչան սրտերն այն ժամ—Ստալինի արևն անմար
Ճառագայթեց ողջ աշխարհքին,—էլի խնդում, սեր կլինի։

ԳԱՐՆԱՆ ԵՐԳԵՐ

Վ ա ր դ ը

Ինչպես կարմրավառ գարնան լուսաբաց,
Պարտեզիս զվարթ ծաղիկների հետ,
Մայիսյան գոհար ծաղիկներով թաց,
Բացվում ես, ժպտում, վա՛րդ իմ բուրավետ։

Բացվում ես, ժպտում, բույրեր տարածում
Իմ հայրենական լայներով անափ,
Քո եդեմական բուրմունքն եմ ծծում,
Եվ հարբում եմ ծով քո գեղեցկությամբ։

Քո հուրհրատող թերթիկների մեջ
Տեսնում եմ երկրիս մայիսը չքնաղ,
Որ իր բոցկլտուն արևով անշեջ,
Բացել է քեզ իմ պարտեզում կանաչ։

Քո մեջ վառվում է գարունն իմ երկրի,
Իմ մայր աշխարհի բույրերն են քո մեջ,
Դրանից է որ, վա՛րդ իմ սիրելի,
Այդքան պայծառ ես ու գեղեցկատես։

Գ ա ր ն ա ն   ա ռ ա վ ո տ

Գծվում են իմ դեմ թարմ, բուրումնավետ
Ծաղկունքով լցված դաշտեր ու արոտ,
Շողա՛, հուրհուրա՛, իմ երանավետ
Հայրենի երկրի գարնան առավոտ։

Բացվի՛ր դու, փռվի՛ր իմ ճանապարհին;
Հրդեհիր սիրտս քո ժպիտներով;
Կարոտ է հոգիս քո գգվանքներին,
Լի՛ց այն քո պայծառ արևի հրով։

Փայփայի՛ր դու ինձ, փարվի՛ր իմ հոգուն,
Օրորի՛ր ինձ քո օրորով անուշ,
Քո խանդաղանքով իմ սիրտն է ծաղկում,
Շուշանի նման մաքուր ու քնքուշ։

Քեզնից եմ առնում ես պայծառություն,
Իմ խնդությունը քեզնից եմ առնում,
Քեզ նման գեղող, քեզ պես հմայուն
Ոչ մի առավոտ չկա աշխարհում։

Շողա՛, հուրհրա՛, իմ խաղաղածուփ
Հայրենի երկրի գարնա՛ն առավոտ,
Դու վեհ զարթոնքի առաջի՛ն ցնցող,
Իմ ջահել հոգու ոսկեվա՛ռ կարոտ։

ՍԱՄՈՒՐ ԴԻՎԻՉԻ

Իմ Սամուր-չա՛յ, իմ Սամուր-չա՛յ, ես քո պարզ ակունքին
մատաղ,
Մեր չոլերին քեզ հյուր բերող մեր խալխի կուռ ձեռքին մատաղ,
Քո ափերի քաղցրաբարբառ թռչունների թևքին մատաղ,
Սեգ սարերից ցած կարկաչող քո գլգլան երգին մատաղ։

Ահա հոգուս խաս մարգի մեջ լսում եմ քո ղողանջն անուշ,
Յարիս զվարթ ձենի նման քո սիրահույզ կանչըն անուշ,
Կչկչում է իմ տողերում քո ջրերի կարկաչն անուշ,
Սամուր-Դիվիչ, Սամուր-Դիվիչ, քո զմրուխտյա ճամփին մատաղ։

Հոգիս սիմուրղ հավքի նման կարոտանքով քեզ է թռչում,
Չերգած, չասած երգ ու տաղի խոր հույզերով քեզ է թռչում,
Ադրբեջանն իմ գեղազարդ նոր բաղերով քեզ է կանչում,
Ե՛կ, իմ ազի՛զ, ե՛կ, քեզ գրկեմ, քո կանաչ զույգ ափին մատաղ։

Պապակ սիրտս, փափագ սիրտս քեզնից զուլալ ջուր կուզենա,
Քո թարմ ուժով հասակ առած ալ վարդերի բույր կուզենա,
Իմ մանուշակ յարի համար անուշ նարինջ, նուռ կուզենա,
Ա՜խ, դու յար ես, յարի տեսքով, քո լուսավոր տեսքին մատաղ։

Ես էս գարնան Սիրուհուս հետ ուրախ սրտով քեզ հյուր կգամ,
Իմ վարդագույն շրթունքներով ալիքներիդ համբույր կտամ,
Էն սիրահար Մեջնունի պես քո եզերքով ես շուռ կգամ,
Քեզ նոր ընթացք ու հուն տվող ծով, գովական խելքին մատաղ։

ԱՊՐԻԼՅԱՆ ԾԱՂԻԿՆԵՐ

Ծաղիկնե՛ր իմ ապրիլյան, ծաղիկնե՛ր իմ քաղցրանույշ,
Ահա պառկած այս հովտում խմում եմ ձեր բույրն անուշ։

Շնչում եմ ձեր շունչը զով, բույրը և թարմ, և թովիչ,
Իմ ճակատը զարդարած գարնան զվարթ արևով։

Դուք նայում եք, ժպտում ինձ աչիկներով ձեր ծավի,
Հույզեր շաղում իմ հոգում գարնան հովի թևերով։

Ծաղիկնե՛ր իմ ապրիլյան, ծաղիկնե՛ր իմ նուրբ, քնքույշ,
Հարբած, տարված ձեր սիրով երգում եմ ձեր սերն անուշ։

Ինչպես զույգեր սիրահար, սիրակարոտ, սիրագին,
Համբուրում եք դուք իրար ցողաթաթախ շրթերով։

Նախանձում եմ ձեր սիրուն, նախանձում եմ ձեր երգին,
Համբույրներին ձեր անկեղծ, որ ծորում են թերթերով։

Ծաղիկնե՛ր իմ, ծաղիկնե՛ր, նրբաբաժակ և քնքույշ,
Ձեր թերթերում կա պահված հազար ու մի ոսկե հուշ։

Ահա կարմիր կակաչի ու մեխակի թերթերից
Ժպտում են ինձ բյուր աչքեր փակված անմար հրերով։

Այդ աչքերն են, աչքերը հերոսների մեր արի,
Որոնք կռվել, ընկել են ու ձեզ ներկել արյունով։

Ծաղիկնե՛ր իմ, ծաղիկնե՛ր, բուրանավետ, քաղցրանուշ,
Լսում եմ ես սրտահույզ շշուկները ձեր քնքուշ։

Ահա շուրջն իմ շողշողում, խշխշում եք ու խոսում,
Ծովի թևով տարածում հոտ ու բուրմունք դաշտերով։

Այդպես մանուկներն են մեր պարտեզներում փափսում,
Վառված երկրիս կենսահորդ արեգակի շողերով։

Ծաղիկնե՛ր իմ, ծաղիկնե՛ր, արնավառ ու արնահուշ,
Ինձ պես, ձեզ էլ գուրգուրում, փայփայում է մեր կյանքն անուշ։

Դուք բացում եք անթախիծ ձեր թերթերը գեղանի,
Երկնքի տակ մեր ազատ, փռվում անհուն լայներով։

Ջինջ Գյոլ-Գյոլի ափերով ու երկայնքով Սևանի,
Նույն արևով, նույն շնչով, նույն անձրևի ցողերով։

Ծաղիկնե՛ր իմ, ծաղիկնե՛ր, դուք իմ սերեր քաղցրանուշ,
Բացվե՛ք, փռվե՛ք լայներով մեր երկնքի տակ անուշ։

ՀՄԱՅԱԿ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ





ՀՄԱՅԱԿ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

(1914—1944)

Նոր էր գրական ասպարեզ իջնում խանդավառ կոմերիտական Հմայակ Նալբանդյանը, երբ բռնկեց Հայրենական Մեծ Պատերազմը։

Մայրենի երկրին վրա հասած ծանր փորձությունը ատելության հրով է օծում երիտասարդ բանաստեղծի գրիչը։ Իր հոգու թեժ հնոցում ցասման ու վրեժի երգեր կռելով, սրեր կռելով հրեղեն խոսքերից, բանաստեղծն ամենալայն մասսաներին կոչ է նետում արդար կռվի։

Պատերազմական լարված շրջանում Նալբանդյանի՝ այսօր գրված բանաստեղծությունը երեկվա գրածից ավելի շիկացած է ու նպատակասլաց, հնչում է ավելի առնական։ Բանաստեղծը նահանջի ծանր, հեղձուցիչ օրերին էլ նախագուշակում է թշնամու կործանումը, մեր հաղթանակի լուսաշող առավոտը։ Նրա հոգին շա՜տ ու շատ է լցված հույսով ու հավատով դեպի սովետական ժողովրդի արդար գործը։ Ահա՛ թե ինչու նրա պոեզիան այնքան առույգ է, օպտիմիստական և յուրաքանչյուր երկ հնչում է հորդաբուխ ու սրընթաց։

Հմ. Նալբանդյանը հայ պոեզիայի հարուստ գանձարանից—հատկապես հայրենաշունչ մոտիվներից, նրանց ձևերից,—շատ բան է յուրացրել և դրանով հարստացրել իր ստեղծագործությունը։ Նրա գրվածքների վրա կա նաև Ն. Զարյանի կայծակնաշունչ պոեզիայի խոր ազդեցությունը...

Իր ինքնակենսագրականում նա գրում է. «Մանկությունից առանձին սեր եմ ունեցել դեպի գրականությունը. Թումանյանի և

Աղայանի, հետագայում մյուս անվանի բանաստեղծների ընթերցանությունները լցրին իմ հոգին բանաստեղծ դառնալու իղձերով...»:

Հմ. Նալբանդյանը երկու ոտքով հաստատ կանգնած էր իր այդ իղձերի կատարման ճանապարհին:

Սովետահայ երիտասարդական բազմահնչյուն պոեզիայի համերգում որոշակի առանձնանում է նրա մերթ մեղմիկ, զգլան, մերթ որոտաշունչ ու շառաչող, իսկ ընդհանուր առմամբ՝ խոհական երգի պղնձահնչյուն ձայնը:

Հմայակ Գրիգորի Նալբանդյանը ծնվել է 1914 թվին, Սպիտակի շրջանի Նալբանդ գյուղում:

Նախնական կրթությունն ստանում է հայրենի գյուղում, միջնակարգը՝ Համամլիում:

Փոխադրվելով Երևան, մտնում է Մանկավարժական Տեխնիկումի քաղլուսավարական ցիկլը, որը և ավարտելուց հետո 1934 թվին լուսավորության գծով աշխատանքի է ուղարկվում Միկոյանի շրջանը: Կարճ ժամանակ անց, այստեղ նշանակվում է շրջանային թերթի պատ. քարտուղար:

Նորից վերադառնալով Երևան, սովորելու է մտնում Պետհամալսարան, որն ավարտում է 1941 թվին և հենց նույն աշնան, սեպտեմբերին, Հայրենիքի կանչով մեկնում է Կարմիր Բանակ:

Այստեղ նա զինվում է անհրաժեշտ գիտելիքներով և ռազմաճակատ մեկնում որպես տանկային միավորման լեյտենանտ: Անչափ հարգվում և սիրվում է ռազմիկների շրջանում. բազմիցս նրանց վճռական գրոհի տանում: Ամեն անգամ տանկիստ բանաստեղծը մարտից դուրս է գալիս պատվով, բազմապատկելով հայ ժողովրդի զենքի դարավոր փառքը:

Թշնամու դեմ մղած մարտերում ցուցաբերած սխրագործությունների համար Հմ. Նալբանդյանը պարգևատրվել է Հայրենական Պատերազմի առաջին աստիճանի, երկրորդ աստիճանի և Կարմիր Աստղի շքանշաններով:

Վիսլայի Սրեմտյան ափին անցնելիս, կատաղի մարտում տանկիստ-բանաստեղծն ընկնում է հերոսի մահով՝ իր տանկի ղեկի մոտ, իր միավորման առաջին շարքում:

Կանցնեն տարիներ, տասնամյակներ, սերունդները Հայրենական Պատերազմին վերաբերող գրքեր կարդալիս կհանդիպեն արյունով գրված բոցաշունչ երգերի մի երիտասարդ հեղինակի՝ Հմ. Նալբանդյանի անվան, որն իր հայրենիքի ազատության ու անկախության համար չխնայեց սեփական կյանքը։

ՀԱՆԴԵՍ

(Նվեր հայ գրականության տասնօրյակին)

Տարան սի՛րտը հայկական գանձերի մի շտե՜մ հանք,
Հավերժության հետ խոսող մեր հին ոգին՝ աննաչան,
Խո՛սքը տարան մեր դյութող, մտքի թռիչքն ու խոյանք,
Որ երկնել ենք մե՛ծ ճամփին անսկիզբ ու անվախճան...
Հայրենի լե՛ռը տարան—Պառնասը մեր քերթության,
Որ պսակել է իրեն երգիչներով լուսանուն,
Տարան երկի՛նքը հայոց խորախո՛ր ու կապուտա՛ն
Հազարամյա՛ երկունքի ալարաններով իր անհուն...
Ապա խոսքը տարան նո՛ր՝ վերածնված իմ երկրի,
Հաղթանակի երգերով լեցուն մի գիրք ոսկեէջ,
Ու խոստումը տարան մե՛ծ, թե դեռ ինչեր կը գրվի
Դեպ ապագան ճամփորդող հավերժական գրքի մեջ...
Հիմի արվեստն հայրենի բացել է մի ճոխ հանդես՝
Իր հի՛ն երգերի թևերո՛վ ու նո՛ր բերքի լավերո՛վ,
Հիմի հնչում են նրանք Կոմիտասի երգի պես՝
Մեր դարավո՛ր քնարի հազար ու մի լարերով...

ՄԱՅՐԱԿԱՆ

«Հայրենիքի լույս ափերից ես գալիս,
Ո՞վ իմ հոգու անմար հուր,—
անգին հյուր։
Ներե՛ք հպարտ կրծքիս սեղմեմ իմ բալիս
Ու պարգևեմ մայրաբույր
ջերմ համբույր։
Վազե՛ք, թևերն ընկեք քաջի թանկագին,
Վա՛րդ աղջիկներ իմ խնդուն,
զվարթուն,
Տարե՛ք ճամփին փռեցեք իմ հոգին
Ու իմ սաղմիկ քաջորդուն
բերեք տուն...
Պարտեզի մոտ զիլ խրխնջաց կարմիր ձին—
Դուրս թռա ես միր-թեթև
առած թև
Հե՛յ ջա՛ն, եկավ իմ քաջ Դավիթ Սասունցին.—
Քեզնով, սաղմիկ իմ պարթև,
հպարտ եմ...
Կրծքիդ նշան եմ ես տեսնում արևկեզ,—
Ախ, մայրակա՛ն իմ հույզեր
փիրուզե,
Հայրենիքի հպա՛րտ հերոս,
Ես որքան եմ երազել,
քեզ տեսնել։
Քաջ էր հայրդ էլ... նա ցույց տվեց սուրբ մարտում
Անօրինակ ու անհուն
քաջություն,

Ընկավ սակայն... լույս երազը իր սրտում՝
Վրեժն հանձնեց իր որդուն,
չեկավ տուն...
Այդ վրեժով եմ քեզ սնել, քա՛ջ բալա,
Իմ կաթի հետ ջերմորեն—
մայրորեն,
Որ հաղթությամբ ազատության կռվից գաս—
Մտնես երկիրըդ նորեն
վեհորեն։
Երկրի վրա դադար առավ հաղթությամբ
Հայրենական զենքի շաչ
ու շառաչ.
Եվ դու եկա՛ր... նստած ձիուդ ոսկեթամբ,
Բա՛ց է դուռս քո առաջ,
ո՛վ իմ քաջ։
Ե՛կ նստեցնեմ քեզ արևի նվիրած
Բարիքով լի գեղանի
սեղանին,
Դեմդ դնեմ լիությունից փրփրած
Արարատյան անվանի
վառ գինին։
Հոգիս կտամ՝ դարձրո՛ւ քեզ թաս, լի՛ց գինին—
Պարզիր բաժակըդ անդող
Խմի՛ր, մաղթի՛ր անմահություն Ստալինին
Եվ քեզ անո՛ւշ լինի թող...»։

***

Գրկեց մայրը, սեղմեց կրծքին իր որդուն—
Տարավ տուն
Ապա բացվեց լուսե խնջույք մի հորդո՛ւն,
Զվարթուն։

ՏՎԵՔ ԻՆՁ ՍՈՒՐ, ԱՇԽԵՏ ՄԻ ՁԻ...

Իմ հայրենի լուսե ափերից ռազմի երգերն ինձ հասան,
Հոգուս բաժակը լիք լցվեց խոկումներով սրբազան.

Սրբազա՜ն ժամ... լռություն է: Կանգնել է թարթն իմ աչքի,
Ես ձեզ հետ եմ, իմ հո՛րդ հույզեր, ես քեզ հետ եմ, ի՛մ հոգի...
Արդ՝ ականջս քո լուռ դռան լսում եմ ես անձկությամբ,
Խրխնջում են այնտեղ հպարտ նժույգ-ձիեր ոսկեթամբ,
Ծառանում են կատաղորեն, փնչում ահեղ ու դոփում,
Սրե՜ր, սրերն են շառաչում, լեզուներից կայծ թափում:
Ես նայում եմ հոգուս դռնից, ո՞ւմն է արդյոք էն հուր ձին,
Քուռկիկ Ջալալն է փրփրաբաշ՝ մեջքին էն սեգ սասունցին,
Որ քաջերի խուռ-խուռ խմբով շանթում է թուրն հավլունի,
Առա՛ջ, առա՛ջ են թռցնում ռազմի դրոշն հայրենի:

Սրբազա՜ն ժամ... լռություն է: Կանգնել է թարթն իմ աչքի,
Ես ձեզ հետ եմ, իմ հո՛րդ հույզեր, ես քեզ հետ եմ, ի՛մ հոգի...
Սիրտըս՝ մագնիս—ձգում է արդ ջահել քնարն իմ առաջ.
Ես խփում եմ ռազմի լարին, որ որոտա շաչ-շառաչ,
Սակայն ջահել իմ քնարը, որ ապրել է չորս դարուն,
Ավա՜ղ, իր մեջ տեղ չի անում իմ հույզերին վարարուն,
Բարակ-բարակ առուները չեն կլանի մեծ գետեր՝
Ու շաչում է գետն իմ սրտի՝ նեղ ափերից ելնում վեր...
— «Կարի՛ր թույլ ձայնդ, ո՜վ քնար»,—գոչում եմ ես ահարկու,
«Հեռու ինձնից թանաք ու թուղթ՝ դուք չեք թարգմանն իմ հոգու»:
Տվեք ինձ թուր, աշխետ մի ձի,—թռնեմ նրա սեգ լանջին,
Հայրենիքին իմ սիրասուն հատուցեմ պարտքս առաջին:

Տվե՛ք թուրն իմ, որ կռած է Ստալինյան մեծ հրում,
Որի սուր-սուր երկու սայրից ազատությունն է ծորում,
Տվե՛ք թռնեմ Ուկրաինա՝ որպես արծիվ սրաթև,
Պիտի շանթեմ թուրն իմ կայծակ, պիտի դառնամ Չապաև.
Թո՛ղ իմ ձիու սմբակի տակ փոշի դառնան ժայռ ու քար,
Թո՛ղ շողշողա թուրն իմ ձեռքին, կտրի քառասուն ջաղացքար...
Այն ժամ երկրիս փառքի համար,—կրծքիս ծաղկած յոթը վերք,—
Ազատության սուրբ մարտերում կհյուսեմ ես ռազմի երգ...

ՀԱՂԹԱՆԱԿՈՎ ԴԱՌՆԱՍ ՏՈ՛ՒՆ...

Նա խնդությամբ թևաբաց երեկոյան եկավ տուն,
Ասաց.—«Բանակ եմ գնում, մա՛յր, համբուրի՛ր քո որդուն։
Տե՛ս, ափերից հայրենի ռազմի շեփորն է հնչում,
Մա՛յր, լսո՞ւմ ես՝ ով է դա,—հայրենիքն է ինձ կանչում։
Դու մի կյանք ես տվել ինձ, նրան պարտք եմ յոթ կյանքով,
Թո՛ղ որ ինձ էլ տեսնես, մա՛յր, երեք կտրիճ որդուդ քով...
Ի՞նչ. արցունքնե՞ր քո աչքին, բայց շա՛ղ լինի թող գարնան,
Թե ցնծության ցող է, մա՛յր,—մարգարիտներ թող դառնան...»։
Ա՜խ, մայրական փափուկ սիրտ՝ սիրով լեցուն մի հնձա՜ն...
Գրկեց որդուն, համբուրեց ու շշնջաց կիսաձայն.
— Եղիր հպա՛րտ, որ երկրին տալիս ես դու մի նոր սուր,
Դե՛, համբուրի՛ր, համբույրդ դառնա թևիս մեկ փետուր...
Գնա՛, շուրթիդ թող ծաղկի անունը մեծ Ստալինի,
Ա՜խ, թե դառնաս հաղթությամբ՝ կրծքիդ նշան թող լինի...»։

Ապա գնաց նա հոր մոտ.—«Հա՜յր, գնում եմ կամավոր,
Գիտեմ մենակ չես թողնի մորս համբույրը թևավոր»։
Գրկեց հայրը քաջ որդուն, ինչ Մհերին՝ Սանասար.
— «Երեկ,—ասաց—մի մանուկ, այժմ ինձ ես հավասար։
Ո՞նց ես աճել օր-ավուր, բոյ ես քաշել դու արագ,
(Գիտեմ էդ ձեր շնորհն է, հայրենի մե՛ղր ու կարագ),
Գնա՛, թամբի՛ր ու հեծի՛ր իմ խնամած նժույգ ձին,
Թռի՛ր ճակատ, թո՛ղ ասեն գնաց Դավիթ Սասունցին։
Բայց չէ, կանգնի՛ր, դեռ ունեմ հայրական խոսք մի պատգամ,
Չորս եղբայր եք, թե պարտվեք, ամո՜թ, այնժամ ես կգամ...»։
Ապա գնաց պապի մոտ.—«Պապի,—ասաց,—ա՛յ պապի,

Փոքրուց ասիր՝ քա՛ջ եղիր, ե՛կ քաջի պե՛ս ինձ ճամփի»։
Ձենափայտը նետեց դեն, շփեց միրուքն ալեղարդ,
— «Որդիս,— ասաց,— թեկուզ կույր, միայն թե քաջ լինի մարդ։
Գնա՛, չորս թոռ կունենամ, մեկդ մեկեն փահլևան,
Էսպես կասես տղոցը.— էլ իմ աչքին չերևան,
Քանի դեռ մի թշնամու ոտ կմնա մեր հողին,
Երբ հաղթեցիք, բարով գաք, հազար պատիվ հաղթողին։
— Դե մնացե՛ք դուք բարով, դուք էլ, փոքրիկ լավիկնե՜ր,—
Դուք իմ անուշ քույրիկներ, հայրենիքի բալիկներ...

Նորից համբույր ու մոր գիրկ... ապա թամբեց նժույգ ձին,
Թռավ հեծավ քաջի պես, ոնց Վահագնը՝ առյուծին,
Ասաց. «Չա՜տ եմ ես ձիով արել խնջույք, հարսանիք,
Հիմի դառած սրած սուր՝ քեզ եմ գալիս, հայրենիք...»։
Եվ սուրում է ձին տակին արագավազ ու թեթև,
Շուրջը դաշտն է ծավալվում, կանաչ սարերը պարթև,
Ալիքվում են, օրորվում արտում հասկերը հասած,
Հովն է շնչում, անուշ բույր... հուզվեց սիրտը ու ասաց.
— Դալա՛ր մնաք ծիլ ու ծառ, կարմի՛ր լալա, կարմի՛ր վարդ,
Առատ բերքով օրորվես հայրենական ոսկե՛ արտ,
Նախիրներով, հոտերով լեցո՛ւն մնաք, սար ու ձո՜ր,
Հավե՛րժ հնչեք ու կանչեք, սա՛ռն աղբյուրներ ու ծործո՛ր։
Սարեր, ձորեր, ծաղիկ, ծառ ձայն տվեցին զվարթուն.
— «Սուրդ կտրո՛ւկ թող լինի, հաղթանակո՛վ դառնաս տուն...»։

ԿԱՊԻՏԱՆ ԳԱՍՏԵԼԼՈ

«... մահ իմացեալ անմահութիւն է»
ԵՂԻՇԷ

1.

Մոլեգնում է պատերազմի դաշտն ահեղ,—
Դժոխային դժխեմ տեսիլ, մա՛հ, արյո՛ւն,
Մռնչում են կարծես զարհուր, խելահեղ
Յո՛թն հարյուր հազար առյուծ ու կորյուն...
Սողում է տանկն ինչպես հրեշ մարդախանձ
Եվ ռունգներից ժայթքում հրե մի սամում,
Մեր հայրենի հրանոթը փառապանծ
Երախն առած նրան փշրում է, ծամում...
Պայթեց ռումբը—թշնամու դիրքը լռեց,
Գերման գայլը զայրույթից միսն է կրծում,
Խո՛րն է խոցում ռուս սվինը, որ կռեց
Հոկտեմբերն իր հեփեստոսյան դարբնոցում:
Չապաևյան սուրն է շաչում և հնձում,—
Ազատության շողեր շաչում իր չորս դին,
Եվ խուսախաբ ֆաշիստ զինվորն է հեծում՝
Բռնակալին ուղղած նզովքը շուրթին:
Ռուս ոգին է ժայթքում ռազմի զո՛ռ վուլկան,
Խոլաթռիչ բազեներն են թևածում,
Ծո՛վ հուզմունքից լեռնանում է մայր Վոլգան,
Հռենոսն է հեռվում ողբում, հեծեծում...
Խառնվում են իրար և՛ զեն, և՛ զինվո՛ր,
Մոլեգնում է պատերազմի դաշտն ահեղ,—
Կարծես ոռնում են ամպերը ահավոր,
Երկնադղորդ մռնչյունով խելահեղ...

2.

Եվ նայում է գյուղացուն մի կապիտան,
Գաստելո՛ն է,—բազեների քաջ ցեղից.
Մռայլվում է մեր երկինքը կապուտան.—
Նա տենչում է թևը պոկել մայր հողից:
Ներքևն ահա խռնվում են զորք ու զեն,
Հաղթակա՛ն կա՛նչ, ահեղ որոտ ու շառաչ,
Եվ տենչում է բրոնզաթև այդ բազեն
Վե՜ր սավառնել օդաթռիչ խումբն առած:
Հռնդացին մոտորները հաղթական
Եվ վերընթաց երկնի ծալքերը մտան:
Ծավալվում է տակին դաշտը գունագեղ,
Բլուրները շուրջը կամար են կապում,
Գյուղերը շե՜ն, արտերն հուռթի ու շքեղ,
Եվ գետերն են հուների մեջ մրափում...
Սակայն հեռվում ահա փոշի մի պղտոր,—
Մռայլ շունչն է պատերազմի մահահոտ,
Ա՜խ, եղծվել են արիարչագործ մեր անդորր,
Արնոտվել եք հայրենի հանդ ու արոտ:
Եվ պոռթկում է Գաստելոյի սիրտը ծով,—
— Գերմանական գայլի հետքե՞ր քո վրան,—
Ա՜խ, վառվում եմ քո վրեժով, քո խոցով,—
Հայրենի՜ք իմ, ազատությա՛ն օրրան:

3.

Եվ հալվում է անդունդն ահա նրանց տակ,
Գետնախույզ են բազեները թևածում,
Թշնամական զորքը կուտակ առ կուտակ,
Դիաթավալ, երկրի խորքն է թափանցում:
Եվ սողում են տանկերն իբրև վիշապ օձ՝
Մռլալով երգը արյան ու մահի,
Խցկվում են մեքենաներ բազմահոծ
Եվ առնում են հրանոթներն ամեհի:
Մոլեգնում է, բորբոքվում է մարտը թեժ,—

Արկի սուլոց, ռազմիկի գո՛ռ մռնչյուն,
Հանկարծ ժայռերից ամպի կրծքից երկնավեժ
Գաստելոյի էսկադրիլիան շառաչուն։
Եվ խոյընթաց շաչեց գլխին ոսոխի՝
Որպես ահեղ գյուղացիական կայծակ սուր,
Եվ թշնամին վերածվեց խուռն ամբոխի,—
Մարտի դաշտին իջավ սարսափ ու սարսուռ...
Եվ գլխիվայր մոտորներն են շառաչում,
Ծա՜խր են առնում բազեները թև-թևի.
— Շտուրմաննե՜ր,—Գաստելոն է մռնչում՝
Հանուն պայծառ Հայրենիքի ու պատվի։
Եվ շողում են ռումբերն ինչպես մետեոր՝
Շանթասլաց նպատակին են բախվում,
Օդն են թռնում կործան թրթուրն ու մոտոր
Եվ թշնամին ընկրկո՛ւմ է, ամբոխվում...
Օդն է ճեղքում վիրավորի կանչն ու ճիչ,
Ռազմի դաշտն է սպաս տալիս հաղթողին,
Ընկնում է և կարմիր զինվորը կարիճ՝
Վերջին համբույրը դրոշմած սուրբ հողին։
Եվ հուզվում է հայրենի հողն, արտասվում,
Արյան շիթը՝ ինչ արցունքի մի հատիկ,
Կարծես բացում է շուրթերը և ասում՝
— «Ձեր արյունից վարդե՛ր կելնեն, ի՛մ որդի՜ք...»։

4.

Դեռ ճախրում է էսկադրիլիան հաղթական,
Մրրկահավը ինչ փոթորկի վեհ ժամին,
Երբ «յունկերսները» մազապուրծ դուրս եկան,—
Մոլեգնել էր, կատաղել էր թշնամին։
Եվ խոյացավ կործանիչը հերոսի,
Շառաչաձայն գնդացիրը ժայթքեց հուր,
— Հրաձիգնե՛ր, սկսենք որսը յունկերսի...
Եվ բռնկվեց օդային մարտ մի զարհուր։
Եվ փախչում են թևերն արնոտ ցանուցիր,
Կարկտահար դեպի թիկունքն են չվում,
Նրանց հետքից սուրում է մի ինքնաթիռ,—

Գաստե՛լլոն է, Գաստե՛լլոն է արշավում:
Սակայն գետնից բացեց երախն ահավոր
Գոռ շառաչեց զենիթային մի մարտկոց,
Եվ երերաց օդում բազեն վիրավոր.
Ցավագնահար ճախրեց թեք խորախոց:
Ծավալվում է երկնի ծովը առաջին,
Բայց թևերը շարժում են գեթ մի մկան,
Վեհապա՛նծ է բազեի ճախրը վերջին
Եվ հաղթության գուշակ կանչը խոլական:
Ժայթքում է հուրն օրհասական մոտորից,
Դեմքն այրվում է, գանգուրները դառնում բոց,
Բայց խոսում է հերոսն անմահ ու բարից,
Հայրենիքի սերն է թնդում թևաբաց՝
— «Մա՜յր հայրենիք, ավելի քեզ ամեն բան,
Ինչ որ թանկ էր, նվիրական աշխարհում.
Որ խութերից ազատ լինի քո ճամփան,
Որ աշխարհն էլ օծվի անշեջ քո հրում.
Ընդունի՛ր այն, ինչ տվել ես մորս պես,
Քե՛զ եմ հանձնում մի սրտառուն խնամունք.
Օ՜, չեմ տենչում անմահության փառքը ես,
Միայն թե դու լինես հավերժ, հայրենի՛ք,
Մի ցանկություն, ա՜խ թե միայն կատարես,—
Գեթ մի շիրիմ հայրենի սուրբ հողի մեջ,
Իմ բալիկիս թաթիկներով կգրես
Միայն չորս բառ՝ «Նա կատարեց պարտքը մեծ»:

. . . .

Օ՜, սրբազան պատերազմի նահատակ,
Բորբոքում է կենաց մահու մի կռիվ.
Ահա փակած իր վիրավոր թևի տակ
Թշնամական գնդերը խառն ու ցրիվ:
— Ե՛ս, Գաստելլո՛ս, գերի՞ ընկնեմ նրանց մոտ,
Ո՛չ, չես տեսնի, հորդաների սև բանակ,
Ես դեռ կա՛մ... պայթեցե՛ք շանթ ու որոտ,
Կեցցե՛ մահը, թող նա լինի հաղթանակ...
Ասաց և ղեկն ուղղեց վերջին իր ուժով
Տանկերին նման հրե մի բազե.

Երկուհարյուր միլիոն սրտի վրեժով
Որոտաձայն պայթեց գլխին թշնամու...
Ծանր էր—ընկավ շամիների անտառում,—
Հրդե՜հ, հրդե՜հ մի վիթխարի, երկնալեզ
Եվ կործանված տանկը երկինք է թռնում,
Ծավալվում է դժոխային մի հանդես.
Տրաքվում են ցիստերները բենզինի,
Ծուխն ու բոցը երկնի երեսն են լիզում,
Ֆաշիստ զինվորն աղաղակով վայրենի
Սարսափահար դեպի թիկունք է վազում...

. . . .

Դյուցազն ընկավ պատերազմի գոռ պահին՝
Հաղթանակի ահեղ կանչը իր շուրթին։
Հերոսն է այն, ով որ հաղթում է մահին
Եվ հավերժի նիշը կրում ճակատին։
Հերոս—դա նույն Գաստելո՛ն է, որն ահա
Մահվամբ հառնեց նորից մի նոր երկունքով.
Ժողովուրդն է բաշխում միայն կյանք ու մահ,
Արդ՝ ընտրյալին հավերժեց իր կնիքով։

***

... Կվերջանա պատերազմը հաղթությամբ,
Կխորտակվեն ոսոխները ցիր ու ցան,
Եվ հայրենի անուշ հողին հարությամբ
Կբարձրանա մարմարե մի հուշարձան։
Հուշարձանի վրա լինի թող բազե,
Հաղթանակի դափնե պսակ կտուցին,
Թևերի տակ զրահ ու զենք բրոնզե,
Մագիլներում փետրախռիվ մի սև ցին.
Կենտրոնում թող արև լինի, այգածա՜գ,
Դյուցազնական հզոր մի դեմք շողի մեջ,
Եվ կրտուցով բազեի մի հպարտ ձագ.
Տակին գրի.—«Նա կատարեց պարտքը մեծ»։
Ապա լինի ժողովրդի ոգին վառ

Մարմարիոնե հուշարձանը իր ուսին,—
Ձեռքին պսակ՝ վրան երեք ոսկե բառ՝
«Երախտապարտ հայրենիքից—հերոսին»:

. . . . . .

Եվ այնուհետ դարե՜ր, դարե՜ր կհոսեն,
Հայրենիքն է՛լ չի ունենա չորս ափեր,
Նոր սերունդներ աշխարհ կգան ու կասեն՝
— Ի՜նչ պապեր ենք մենք ունեցել. ի՜նչ պապեր...

ԽՈՍՔ ՑԱՍՄԱՆ ՈՒ ՎՐԵԺԻ

Օ, Մա՜րքս, Էնգե՛լս, Հայնրիխ Հայնե՜—դու քերթության մարտի՛կ,
Օ, դո՛ւք, գերման ժողովրդի արժանավա՛ռ որդիք,
Տեսե՛ք, տեսե՛ք, ուր հասցրին հայրենիքը ձեր հին,
Տեսե՛ք, ո՛վ է նստել հիմի փլատակույց գահին,—
Երախն արնոտ հրեշ է նա՝ շուրջը դիեր, լեշեր,
Օ, Գերմանիան նա դարձրեց Բարդուղիմյան գիշեր...
Հաեննան է արյան շիթով հեծում նրա տակին,
Յոթ շղթայում մռնչում է ազատության ոգին...
Նա հրկիզեց խարույկներում մտքի գոհար ու գանձ,
Փշրեց խոփը՝ սուր դարձրեց, շինեց շղթա ու սանձ...
Որոգայթներ, սպանդներ է սարքում գիշեր ու զոր,
Նա մի ճիվաղ՝ ոռնում է, մարել արևն հզոր...

. . . .

Օ, Մա՜րքս, Էնգե՛լս, Հայնրիխ Հայնե՜—հալածական պոե՜տ,
Անմահությա՛ն բնակիչներ, արևողնե՛ր հավետ,
Ելե՛ք, տեսեք, ուր հասցրին հայրենիքը ձեր հին,
Տեսե՛ք, ով է բազմել հիմի դիակառույց գահին,
Նա մի գայլ է քառաժանիք, երախարաց, արնոտ,
Աշխարհ ընկած որոնում է անօգնական մի հոտ,
Գլխապատույտ՝ թաթն է մեկնել սովետական հողին,
Տեսեք, դեռնել կուզե գայլը առյուծների ցեղին...

Դե՛, շառաչի՛ր, հայրենի՛ զենք, գոռ ու որոտընդոստ,
Մռնչացե՛ք, մեր առյուծներ և կորյունե՛ր ըմբոստ,
Թո՛ղ փշրվեն հողագնդի շղթաները ձեր տակ,

Թո՛ղ խորտակվեն աշխարհով մեկ ամեն ձող ու վանդակ։
— «Ի զե՜ն...»—Ահա որոտում է ռազմի շեփորը դառ,
Ուրեմն՝ ի զե՛ն, հին-հին քաջեր, դո՛ւք, Մուրոմե՛ց, Իգո՛ր,
Փայլատակիր Թուրն Հավլոմի, ով Սասունցի դու սեգ,
Հեյ, Քյոռօղլի, Տարիել հզոր և դու, Մանա՛ս, հասե՛ք,
Ելե՛ք տասնվեց դյուցազուններ՝ կապեք զենք ու զրահ,
Դևեր, դևեր են արշավում հայրենիքի վրա։
Ու սլացան բանակ—բանակ արդար պատերազմի,
Ի՛մ հայրենիք, ի՛մ մեծամայր, քոնն է փառքը ռազմի...
Ո՞վ է փորձում ասպատակել քո սուրբ հողն ու ջուրը,
Ո՞վ չգիտե քո ռուս ոգին, քո ռուսական սուրը...
Լենկ Թեմուրը եկավ մի օր, եկավ Չինգիզն ահեղ,
Բայց խաժամուժ հորդաներով դարձան արյան հեղեղ,
Բոնապարտը հոխորտալով անցավ Նեման գետով,
Բայց թող պատմի Բորոդինոն, թե ինչ եղավ հետո...
Ռուսական սուրը աշխարհը փրկեց նրա ձեռից,
Երկրորդ անգամ նա կփրկի հիտլերական Նեռից,
Չուդ լճի մոտ—սառույցներին, դեռ կան արյան բծեր,—
Գերմանական շո՛ւն ասպետներ, կեղտոտ արյունն է ձեր...

. . . .

Օ, Մա՜րքս, Էնգե՛լս, Հայնրիխ Հայնե՜—դու քերթության
մարտի՛կ,
Օ, դո՛ւք, գերման ժողովրդի արժանավո՛ր որդիք,
Ժամն հասել է ազատության Ձեր հին հայրենիքի,—
Ձեր արևը Ռուսիայից պիտ Բեռլինում ծագի։

ՌԱԶՄԻ ԵՐԳ

...Մենք, ջահելներ, հպարտ ու վես՝
Լենինյան վեհ ցեղից.
Ծնվել ենք մենք Անթեյի պես՝
Ուժ ենք առել հողից։
Մաքառումներ, գոտեմարտեր
Տվել են մեզ ծնունդ,
Մեզ Հոկտեմբերն է մկրտել՝
Հաղթողների սերունդ։
Մենք, հայրենի քաջորդիներ,—
Ունենք քաջի արյուն,
Առյուծ էին պապերը մեր,
Իսկ մենք ահա՝ կորյուն։
Սրբազան է մեր մեծ տունը,—
Գանձերի ծով անափ,
Օտար է մեզ բռնությունը,
Օտար՝ շղթա ու կապ։
Բայց հայրենի տունը նորից
Սողում է նոր վտանգ,
Մենք արյուն ենք առել երկրից,
Այժմ արյուն կտանք...
Դե՛, արշավե՛նք հողից, օդից
Թշնամու դեմ անարգ,
Որց հայրենի հրանոթից
Թռչող հզոր մի արկ։
Հայրենի՛ք, քո պայծառ սերը
Մեզ զրահ է, և զեն,

Թող դան գերման բանդաները,
Թող գա՛ն, որքան կուզեն։
Մեր հողն անգամ, ջուրը, օդը
Մահ և թույն կկաթեն,
Դաշույն պիտի դառնա խոտը,
Քարերը պիտ պայթեն։
Գալիս ենք մենք, լույս ափերի
Նվիրական հո՛ղ, ջո՛ւր,
Դե՛, շտապի՛ր, Հոկտեմբերի
Գվարդիական մեր սուր։
Մենք ջահելներ, հպարտ ու վես՝
Լենինյան վեհ ցեղից.
Ծնվել ենք մենք Անթեյի պես՝
Ուժ ենք առել հողից։

ԵՐԳՈՒՄ

Իմ հայրենի՛ք, լուսե՛ այգի,
Ես քո շիվն եմ դալար,
Դու իմ մայրն ես մեծ ու անգին,
Ես քո աղիզ բալան...

Զվարթ հոգուս արև անմար,
Դու ես հուր ավողը,
Կպաշտպանեմ դրա համար
Քո սրբազան հողը...

Քո նեղ ժամին արհավիրքի
Կառնեմ զինյալ թևը,
Կասեմ.—Հանուն քո մեծ փառքի,
Ա՛ռ արյունս նվեր...

Երբ ղողանջի երկրով անծիր
Պաշտպանության փողը,
Երբ վրնջա Բուդյոննու ձին
Ու փորփրի հողը,

Այնժամ իբրև հերոս որդի
Կառնեմ զենքերս և
Կսլանամ ահեղ մարտի,
Որպես նոր Չապաև,

Չի գալարվի քաջի հոգին,
Երբ ցավեն վերքերը,
Ու կհնչեն սիրով անգին
Հաղթության երգերը։

***

Մեր մեծ երկրի անբիծ հողում սրբազան
Շնչում է մեր հայրենիքը մայրագութ,
Նրա սահմանն այնքա՜ն է լայն ու ազատ,
Որ արևն է հոգնում մինչև մայրամուտ...

Ու փռվել է Հայրենիքը վեհությամբ,
Նրա հողը մի մեծ կուրծք է անպարփակ,
Ուր քառասուն արևների զորությամբ
Ժողովրդի սիրտն է խփում նրա տակ:

Ու ճախրում են Հայրենիքի մեծ ափում
Սովետական բազեները լուսեղեն,
Դյուցազնորեն մռնչում են ու դոփում
Ամեն մի թիզ հողում՝ մի ձի հրեղեն:

Եվ չի կարող կարել սահմանն հայրենի
Հավքն իր թևով, օձն իր պորտով թունաբեր,
Քանզի շաչում է մեր թուրը Հավլունի,
Քանզի ճախրում են բազեներն անվեհեր:

ԴԱՇՏԱՅԻՆ ՓՈՍՏ

(Ն ե ր բ ո ղ)

Նվեր Օրիորդ Ա.Ա.-ին

Դաշտային փո՛ստ, ցնծության մեր անաղարտ եղևնի,
Հայրենական լույս հողից Թռչող դու սուրբ աղավնի...
    Եղևնի ես՝ կախել ես թալիսմաններ քո ճյուղին,
    Աղավնի ես՝ թևերիդ եռանկյուններ լուսեղեն,
    Ծով էր կարոտն հայրենյաց հեռու, օտար այս ափում,
    Դու հայրական շրթունքից մեզ համբույրներ ես ճամփում,
    Բերում ես մեզ օրհնանքներ, մանկանց թոթով քաղցրահունչ,
    Եվ ծնող-մոր անուշ խոսք, սիրած կույսի սուրբ մրմունջ։
    Ռազմի ոգի ես բերում՝ շնչելու օդ քաջերի,
    Վրե՛ժը սուրբ, վրե՛ժը հայրենի հող ու ջրի։
    Եվ զորությու՛ն ենք առնում Անթեյն ինչպես Մայր-հողից,
    Հայոց Դավիթը որպես կաթնաղբյուրի սուրբ ջրից...
Դաշտային փո՛ստ, անաղարտ, մեր սուրբ-սաղարթ եղևնի,
Հայրենական լույս հողից Թռչող բանբե՛ր աղավնի։
    Ահա գալիս ես նորից, նոր ծնվեցի ես մորից,
    Վազեմ՝ մի կում ջո՛ւր խմեմ այդ սրբազան սափորից,
    Բացվեց տոպրակը ծանոթ, ա՜խ, ոսկեղեն դու անոթ,
    Դե՛, պարգևի՛ր մեզ, բուրի՛ր հայրենիքի համ ու հոտ։
    Բացվեց տոպրակը անգին, թևեր առավ մեր հոգին՝
    Բարո՛վ առնենք ձեր գիրը սրտով, սիրով սիրա՛ծ կին,
    Սիրա՛ծ աղջիկ, սիրած կո՛ւյս, քույրիկներ մեր նորաբույս,
    Մանուկներ մեր՝ հավերժ հույս, ախ, մայրիկներ՝ արևլույս...

Դաշտային փո՜ստ, ցնծության նվիրակա՛ն եղնի,
Հայրենական լույս հողից թռչող պայծառ աղավնի…
Վազեմ, հասնե՛մ ես նորից էդ աղավնու հետևից,
Ծունկի գամ ու աղաչեմ.—տո՛ւր մի փետուր քո թևից։
Ես վազեցի ու հետո, ասի՛ թռչնա՛կդ իմ, ասա՛,
Հեռու հայոց աշխարհում ունեմ մի կույս, մի մուսա,
Քնարս՝ արև է անլույս, նա է ճամփում ինձ մի շող,
Ու բերում ես մի երկտող, հավե՛րժ լինի կյանքդ թող…
— Քեզ ի՜նչ նամակ եմ բերում,—ասաց թռչնակը բանբեր,—
Ծրարն հայոց մետաքսից, թուղթը կարմիր վարդի թերթ,
Տառը մեղու է ոսկի, վաղորդյան ցող է շաղում,
Նստած վարդի թերթերին՝ ասես նեկտար է քաղում,
Օ՜, պետք է որ լինի նա հայոց մեղրից էլ անուշ,
Քանզի նա ինքն է գրում, քո սիրածը Հայկանուշ…։
Դաշտային փո՜ստ, ցնծության մեր անաղարտ եղնի,
Հայրենական լույս հողից թռչող ծանոթ աղավնի…
Ես բաց արի նամակը, օ՜, սիրտըս ոնց էր հորդում,
Ես բաց արի, լսեցե՛ք, տեսե՛ք, թե ինչ եմ կարդում.
— Որքան կուզես, ուշացիր հողի համար հայրենի,
Թո՛ղ մազերդ ճերմակեն, թո՛ղ որ դառնաս ծերունի,
Դարձիր, թեկուզ ոտքիդ տեղ լինի միայն հենափայտ,—
Ճամփիդ կելնի մի աղջիկ, իմացի՛ր, որ ես եմ այդ։
Բայց մի խնդիր ունեմ ես, խնդիրս մի մոռացի,—
Ըսպանիր իմ փոխարեն գոնե երկու թշնամի։
Ու ծառս եղավ իմ հոգին, ուրարտական նժույգ ձի,
— Է՛յ, տվեցե՛ք զենքերն իմ,—ես բարձրաձայն գոչեցի,—
Ի զե՛ն, պայծա՛ռ իմ քաջեր, իջնե՛նք դաշտը մենք մարտի,
Դուք ձեր վրեժը լուծեք, իսկ ես՝ իմ հայ օրիորդի…
Դաշտային փո՛ստ, ո՛վ բանբեր, ո՛վ թևավոր նվիրակ,
Հայրենական սուրբ հողից թռչող վրեժ ու կրակ…

1944 թ. 12. 9
Վիսլայի արևմտյան ափում

ԿԱՐՈՏ

Նվեր Հայկազին

... Ա՜խ, հեռու ես, Հայրենիք, հավերժական հոգուս բուն,
Գուրգուրիր ինձ կարոտի, ո՜վ սրբազան տխրություն...

Ես՝ յոթը ծով ու ցամաք ափից հեռու ծիծեռնակ՝
Հեռվան բունս եմ երազում՝ կտուցս առած թևիս տակ,
Վերհիշում եմ ամեն բան, ամեն մանրուք, ամեն շյուղ,
Մեր կտուրը հյուրընկալ, թոնիրներից ելնող մուխ,
Ամռան գիշերը պայծառ և լուսինը բոլորակ,
Երկնի կապույտ ջրերում ճողփող ամպերն սպիտակ,
Եվ սարը սեգ, ջուրը պաղ, ցոլացող հանդն ու արտը,
Ու կախարդում է հոգիս նվիրական մի կարոտ...

Ա՜խ, հեռու ես, Հայրենիք, հավերժական հոգուս բուն,
Օրօրի՛ր ինձ կարոտի, ո՛վ սրբազան տխրություն...

Հայրենի՛ք, մա՛յր իմ անուշ, իմ մշտավա՛ռ ատրուշան,
Եվ ես քնարս լարած, որպես հայրն Ալիշան՝
Երգեմ սարերն հավերժող իմ հինավուրց հայոց տան,
Քեզ, հայրենի աչքի՛ ցող, իմ պաղպաջո՛ւն Հրազդան,
Քե՛զ, կուսական մշուշ, մեգ, Գեղարքունյաց սարեր սե՛գ։
Քեզ, Նիրվանա փիրուզե, քեզ, ով լճակ իմ լուսե,
Մասի՛ս, հայո՛ց նահապետ, որ վիճում է երկնի հետ,
Սուրբ ոլորտը Արագի, իմ Արագա՛ծ երկնավետ...

Ախ, հեռու ես, Հայրենիք, հավերժական հոգուս բուն,
Օրօրի՛ր ինձ կարոտի, ո՛վ սրբազան տխրություն....

1944 թ. 8 նոյեմբերի
Վիզոյի աւեմեյան ափ.

ԱՐՍԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱՐՍԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

(1908—1945)

Երիտասարդ բանաստեղծ Արսեն Աբրահամի Հովհաննիսյանը ծնվել է Քանաքեռում, 1908 թվի դեկտեմբերի 20-ին, բատրակի ընտանիքում:

1927 թվին նա մեկնում է Ռոստով և մտնում Մանկավարժական Ինստիտուտ, որն ավարտելուց հետո դասավանդում է Հյուսիսային Կովկասի հայկական դպրոցներում:

«Մուրճ-Մանգաղ» թերթում տպագրվում են Ա. Հովհաննիսյանի առաջին շրջանի բանաստեղծությունները: Ռոստովում, տարբեր ժամանակներ, լույս են տեսնում նրա բանաստեղծությունների երկու գրքույկները՝ «Լուսաբացի լիրիկա» ու «Մանկություն» խորագրով և ակնարկների մի գրքույկ:

1938 թվին, կոմերիտմիության կոչով աշխատանքի է մեկնում Հյուսիս, Կրասնոյարսկի մարզ, որպես լրիվ միջնակարգ դպրոցի դիրեկտոր, այնուհետև՝ ռայոնական գործադիր կոմիտեի նախագահ:

Պատերազմն սկսելուն պես Արսեն Հովհաննիսյանը գործուղվում է Ռազմաքաղաքական դպրոցը սովորելու: Ուսումը հաջող ավարտելուց հետո աշխատանքի է նշանակվում Հարավային ճակատային «Հայրենիքի փառքի համար» հայերեն կարմիրբանակային թերթում:

Որպես ճակատային թղթակից, Ա. Հովհաննիսյանը հաճախակի է լինում առաջավոր գծում՝ զինվորների մոտ ու ստորաբաժանումներում, նրանց հետ միասին ապրում և՛ պատերազմական դառն փորձությունները, և՛ հաղթանակի հրճվանքը:

Նրա չափածո գործերից տպագրվում են ռուսական թերթերում՝ ճակատային բանաստեղծ Իլյա Սելվինսկու թարգմանությամբ։

Հայրենիքի ճակատագրի համար շատ ծանր, բախտորոշ օրերին կապիտան Հովհաննիսյանը նշանակվում է Թամանյան դիվիզիայի գումարտակներից մեկի հրամանատարի քաղաքական գծով տեղակալ։

Մարտի ահեղ օրերին զինվորական գորշ շինելը հագին, զինված ավտոմատով ու նռնակով, կաշվե պայուսակում թարմ թերթեր, անվախ ու աներկյուղ կապիտան Հովհաննիսյանը շտապում է խրամատից-խրամատ, հյուղակից-հյուղակ։ Նա բոլշևիկյան ճշմարտացի խոսքը հասցնում է կռվող մարտիկներին, բազմապատկում նրանց ոգևորությունը։ Նրանց համար կարդում է գրոհի ընդմիջումներին էքսպրոմտ գրած իր պարզ ու հուզիչ բանաստեղծությունները, և ջերմացնում մարտիկների սրտերը, ամրապնդում նրանց մեջ հավատը մեր հայրենիքի անպարտելիության նկատմամբ։

Օրեց-օր արժանանալով իր զինվորների սիրուն ու վստահությանը, կապիտան Հովհաննիսյանը ոտքի է հանում նրանց և նրանց հետ միասին, նրանց գլուխն անցած, գրոհի գնում թշնամու վրա։ Եվ նա մարտերով գնում է Կովկասյան լեռներից մինչև Կուբան, Թաման ու Սևաստոպոլ, մինչև Վիսլա և Օդեր...

Պատմական օր էր 1945 թվի ապրիլի 16-ը. կապիտան Հովհաննիսյանի գումարտակը ևս ամուր պաշտպանություն է ստեղծում, ապա գետանց կատարում և գրոհում, մրրկային կրակով հողմացրիվ անում հակառակորդի պաշտպանությունը ու հաղթական ուղով մտնում Ֆրանկֆուրտ։ Սակայն գրոհի ամենաթեժ պահին, հրետանու արկի բեկորից ծանրապես ընկնում է նա՝ թշնամու գնդակից երբեք ահ ու երկյուղ չունեցող սովետական սպան, խոսքը սվինին հավասարեցրած ճակատային թղթակից-բանաստեղծը։

Արսեն Հովհաննիսյանի ստեղծագործությունը, որ առաջներում բավական ընդհանուր էր ու անդեմ, Հայրենիքի գոյությունը վտանգի տակ դրվելու հենց առաջին օրերից լցվում, առնականանում է ստեղծագործական հորդաբուխ, անսպառելի ուժերով....

Մեծ առաջնորդը մեր փորձված, մեզ կյանք տվեց արևաշող,
Զորավարում է նա այսօր բանակները մեր բազմահոծ.
Ստալինյան հանճարն է, մեծ մեզ մարտ տանում հաղթ ու հզոր,
Զա՛րկ, Հայրենիք Սովետական, հաղթանակի օրն է այսօր:

Բանաստեղծի յուրաքանչյուր նոր մարտական երգի տողերի տակից լսվում է մարտիկ-պոետի հայրենասեր սրտի բաբախյունը, զգացվում վառոդի բուրմունքը, արկերի շառաչն ու դղրդը:

Ա. Հովհաննիսյանը իր մարտական կյանքի փայլուն օրինակով ցույց տվեց, թե Հայրենիքի վտանգի օրերին ինչպիսին կարող է լինել ճակատային լրագրային աշխատողը, բոլշևիկ-բանաստեղծը:

Այժմ Քանաքեռում, նրա տանը, պատից կախված է մի գորշ շինել, որի կուրծքը զարդարում են Հայրենական Պատերազմի 1-ին և 2-րդ աստիճանի ու Կարմիր Աստղի շքանշաններ և մարտական 4 մեդալ, որոնք վկայում են այն մասին, թե բանաստեղծը կռիվների չար տարիներում ինչպիսի՜ հերոսական ուղի է անցել, որ ներկել է նա իր արյունով, և ծածկել իր փառքով:

ՆԵՐԲՈՂ ՄԵՐ ԿԱՆԱՆՑ

Մեր վեհ կանանց, մեր քույրերին զինակից,
Մարտի դաշտում, հանդում, հանքում, ամենուր,
Մեր դուստրերին, մեր մայրերին սրտակից,—
Ես հղում եմ իմ մարտական խոսքը հուր։

— Դաժան մարտի ելած այսօր՝ ընդդեմ նենգ
Ու ոխերիմ մեր բարբարոս թշնամու,
Դուք ձեր փափուկ, բարի ձեռքին առած զենք՝
Մարտի դաշտ եք իջել պատվով կռվելու։

Ձեր այն քնքուշ, փափուկ, բարի ձեռքերում,
Սուրն է ճոճվում օրորոցի փոխարեն,
Ձեր քաղցրաշունչ, սրտամորմոք երգերում
Հայրենի՛քն է մարտի կանչում մեզ նորեն։

Ձեր շանթահար ու անվրեպ գնդակից
Իժի նման գալարվում է թշնամին,
Ձեր մայրական զուրգուրանքն է, որ նորից
Պայքարի շունչ, կյանք է տալիս զինվորին։

Դուք մեզ հե՛տ եք, դուք մեզ հե՛տ եք ամեն պահ,
Ամպերի մեջ, կապույտ ծովում, մայր հողում,
Դուք մեզ հե՛տ եք թշնամու դեմ որպես մահ,
Ձեր պատիվը, ձեր սերն է մեզ մարտ մղում։

Ուր էլ լինեք, ուր էլ լինեք դուք հիմա,
Ձեր առօրյան, գիտեմ, պայքարն է այս մեր,
Այս պայքարն է, որ կյանք կտա ձեզ անմահ,
Դուք, մեր չքնաղ բուրաստանի ծաղիկներ։

ԶԱՐԿ, ՀԱՅՐԵՆԻՔ

Մեր ցասումը ամպրոպածին թող որոտա՝ որպես սամում,
Ընթացքը մեր հեղեղաշունչ խորտակելու է թշնամուն,
Օրերը մեր թո՛ղ շառաչեն հուր շանթերի նման հզոր,
Զա՛րկ, Հայրենի՛ք Սովետական, հաղթանակի օրն է այսօր։

Մայր Վոլգայի լայնատարած ափերը թո՛ղ ժայթքեն կրակ,
Գերեզման են փորում նրանք հորդաներին գերման վայրագ,
Խաղաղ Դոնի ջրերը բիլ, արնաշաղախ վառվե՛ն բոսոր,
Զա՛րկ, Հայրենի՛ք Սովետական, հաղթանակի օրն է այսօր։

Տափաստաննե՜ր անծայրածիր, ամեն մի թուփ ու ամեն քա՜ր,
Դուք դարձրել եք, գիտեմ, այսօր մի գերեզման նենգի համար,
Մենք ծով դարձած վրեժ ունենք, որ փոթորկում է ահավոր,
Զա՛րկ, Հայրենի՛ք Սովետական, հաղթանակի օրն է այսօր։

Մենք տեսել ենք դժնի-դաժան դարը վշտի օրեր անմոռ,
Մեր մայրերի սուրբ արյունն է անհագ ծծել ոսոխը բոռ,
Մեծ ժողովուրդը մեր անպարտ, տոկացել է գիշեր ու զոր,
Զա՛րկ, Հայրենի՛ք Սովետական, հաղթանակի օրն է այսօր։

Արիակա՛մ իմ ընկերներ, իմ եղբայրնե՛ր, քույրե՛ր բազում,
Հողմաշառաչ դրու թափը մեր միլիոնների սիրտն է հուզում,
Բարբարոսները դիշատիչ թո՛ղ մոնչան զարկից հզոր,
Զա՛րկ, Հայրենի՛ք Սովետական, հաղթանակի օրն է այսօր։

Մեծ առաջնորդը մեր փորձված, մեզ կյանք տվեց արևաբոց,
Զորավարում է նա այսօր բանակները մեր բազմահոծ,

Ստալինյան հանճարն է մեծ մեզ մարտ տանում հաղթ ու հզոր,
Զա՛րկ, Հայրենի՛ք Սովետական, հաղթանակի օրն է այսօր։

Մանկուց գիտեմ, որ քո զարկին չի դիմացել և ոչ մի ուժ,
Զա՛րկ, Հայրենի՛ք, զարկ թշնամուն, նենգ թշնամուն ոխատագրուն։
Զա՛րկ այնպե՛ս, որ մեր ոսոխի արյունը սև կորչի ճահճի,
Զա՛րկ, Հայրենի՛ք Սովետական, որ ջախջախվի գեր դահիճ։

Զա՛րկ, թող ոչ մի գերմանացի ողջ չգնա մեր սուրբ հողից,
Զա՛րկ, թող էլ ոչ մի թշնամի կռվի չգա մեր դեմ նորից.
Զա՛րկ այնպես, որ քո սրից շանթ ու խավարը դառնա կեսօր,
Զա՛րկ Հայրենի՛ք Սովետական, հաղթանակի օրն է այսօր։

Հունվարի 4, 1943 թ.
Հյուսիսային Կովկասյան ռազմաճակատ

ԿՈՒԲԱՆԻՆ

> Եղի՛ր Կուբան, եղի՛ր փառք կազակային
> Ճախրի՛ր, կանչի՛ր քո դյուցազուններին
>
> Ի. ՍԵԼՎԻՆՍԿԻ

Անհողդողդ ձեռքին սուրը հաղթական,
Սրտում՝ բոցավառ կարոտ ու վրեժ,
Իր խոլ նժույգով թռչում է Կուբան
Էն կազակ ալեն հուր աչքերով թեժ:

Այնտեղ հայրենի տունն է վշտահար,
Ծերացած ծեր մայր, առևանգված քույր,
Այն ազատության երգն է, որ հզոր
Կուբան է տանում դրոշը պուր-պուր:

Բամահար այն սև յափնջին ուսին,
Կարմիր բաշլըղը լայն թիկունքից կախ,
Այն կազակ տղի կողքից միասին
Անհաղթ Կովկասի քաջերն են անվախ:

Վրե՛ժ, վրե՜ժն է շառաչում հիմա
Շանթի պես շաչող ամեն մի սրից,
Եվ ավետալիք Կուբանը ահա
Ազատություն է ստանում նորից:

Եվ ողջունում են ու ժպտում նրան,
Թամանի ընկած հերոսներն անմահ.
Իմ չքնա՛ղ Կուբան, երգ ու օրրա՛ն,
Քո ազատ հողն եմ համբուրում հիմա:

Փետրվարի 7, 1943 թ.
Հյուսիսային Կովկասյան ռազմաճակատ

ՀՐԱՑԱՆԻ ԵՐԳ

Իմ սիրելի՛, իմ թանկագի՛ն,
Իմ մարտական ահե՛ղ ընկեր,
Գնա՛նք մարտի, կռվենք կրկին
Եվ ազատենք սուրբ հողը մեր:

Դեռ օրեր կան մեր դեմ դաժան,
Արյունալի, ցասկոտ մարտեր,
Հայրենիքը մեր սրբազան
Տվել է մեզ հատու պատվեր.

— Մի՛ խնայիր կյանքդ անգին,
Զարկի՛ր դժնի մեր թշնամուն,
Պաշտպանի՛ր տունդ՝ մայր ու կին,
Երկիրը մեր արևազուն:

Զարկդ է դիպուկ ու մահաբեր,
Կրակացան իմ հրացան.
Թռչում են ձիգ ու աներեր
Գնդակներդ ահեղաձայն:

Ես մաքրում եմ քեզ միշտ այնպես,
Որ դու փայլես, իմ աչքի լո՛ւյս,
Որ դու կրակ ու մահ սփռես
Թշնամու դեմ, իմ սրտի հույս:

Իմ սիրելի՛, իմ թանկագի՛ն,
Իմ մարտական ահե՛ղ ընկեր,
Գնա՛նք մարտի, կռվենք կրկին
Եվ ազատենք սուրբ հողը մեր:

Սեպտեմբեր 10, 1942 թ.
Կովկասյան նախալեռներ

ՀԵՐՈՍԱԿԱՆ

Մալգոբեկից ու Թերեքից
Նովոռոսիյսկ, ծովն անսահման,
Անցանք հազար կռվի բովից
Ու հաղթությամբ ելանք Թաման:

Նայում էին արնոտ աչքով
Ծովն ու Կերչը հողմաշառաչ.
Լցված ոխի կիզող տենչով,
Մենք նետվեցինք դեպի առաջ:

Ու մարտերի դաժան ճամփով,
Փշրելով բերդերն հրախոս,
Դրոշները ազատության
Մենք բերեցինք քաղաքն հերոս:

Ու դրոշներին մեր պուր-պուր
Հերոսներն են սովետական,
Իմ ժողովուրդ, քո փառքն է հուր
Եվ առաջնորդն արեգական:

ՌՈՍՏՈՎԻՆ

Կրկին կապույտ քո երկնքում պայծառ արևը շողշողաց,
Կրկին բարձր տանիքներին կարմիր դրոշը շողշողաց։

Կրկին փողոցներով քո լայն մենք քայլեցինք արիակամ,
Կրկին թնդաց աշխարհով մեկ փառքը քո սեգ հերոսական։

Կրկին կայծակներ ահղային գլխի վրա մեր թշնամու,
Կրկին մեր բանակն ընթացավ դեպի առաջ և արևմուտք։

Կրկին ջախջախված թշնամին մռնչում է արնաշաղախ,
Կրկին անծիր մարտի դաշտում հազար-հազար դիակ անթաղ։

Կրկին թռան երամ-երամ բազեները մեր կարմրաթև,
Կրկին իջավ մեր դաշտերին խաղաղության ոգին պարթև։

Կրկին վարդերը կբացվեն պարտեզներում շքեղ ու պերճ,
Կրկին ազատությունը քո կապրի հպարտ, կապրի անվերջ։

Կրկին Դոնի զարդ ափերին զնգուն քո երգը կհնչի,
Կրկին Սևմաշը հրաշունչ մեծ աշխատանքի կկանչի։

Գիտեմ չարագործ թշնամին թողել է շատ ավերակներ,
Գիտեմ վերքերդ կբուժեն զավակները քո անվեհեր։

Հավատա ինձ, իմ ընկեր, հավատա ինձ, իմ Թանկագին,
Հավատա, որ որպես գերի քեզ մոտ կգա նոր կրկին։

Կրկին բարձր տանիքներին կարմիր դրոշն է փողփողում։
Կրկին կապույտ քո երկնքում պայծառ արևն է շողշողում,

1943 թ.
Ռոստովի ազատագրման օրերին

ՏԱՐԵԿԻՑՆԵՐ

Երկու ընկեր, երկու ազնիվ, երկու խիզախ գնդացրորդ
Դիրքում պառկած կրակ էին մաղում ինչպես կարկուտ մի հորդ:
Մեկը հեռու անծայրածիր ռուսական ծով տափաստանից,
Մեկն էլ բարձր ու երկնաձիգ մեր Կովկասի սեգ լեռներից:

Արդեն երրորդ տարին էր, նրանք գոռ մարտում են միշտ միասին.
Մեկը մյուսին մեջքը տալով՝ հարվածում են նենգ ոսոխին:
Մեկի թիկունքը լայն ինչպես թիկունք իրենց տափաստանի,
Մյուսի ուսերը ամրանիստ, ինչ Ալագյազն Հայաստանի:

Այն բլուրը, ուր դիրք բռնած համառ կռվում էին նրանք,
Դղրդում էր բյուր արկերից—ծուխ էր շնչում, բոց ու կրակ:
Գնդացրին հպված ամուր՝ նրանք կռվում էին համառ
Երկու դյուցազն, երկու հերոս, հայրենիքի փառքի համար:

ՄԻ ՍՐՏԻ ՊԵՍ ԱՆԲԱԺԱՆ

Մեր գնացքը սուրելով մտավ լեռները Լոռու,
Եվ աչքիս դեմ փայլեցին մեր ճրագները անմար,
Այն ո՛ր զինվորն է արդյոք, որ պատրաստ չէ մեռնելու,
Հայրենական քաղցրաթով վառվող արևի համար։

Հայրենական լեռներում միշտ խաղաղ ու բարձրանիստ,
Քաղաքներում, գյուղերում, այգիներում ոսկեվառ,
Ոնց քյամանչի լարը թավ, մրմնջում է մի գու վիշտ,
Նորից վրեժ է երգում ամեն սիրտ ու ամեն սազ։

Իմ երգասան ու խաղաղ ժողովրդի սուրբ հողում,
Ուռճանում է որպես ծով ատելությունն անսասան,
Վրիժառու, հաղթական վերջին հարվածն է կոփում
Ժողովուրդն իմ աշխարհի, մի սրտի պես անբաժան։

Դո՛ւ, սարսափի՛ր, սարսափի՛ր, արյունախու՛մ թշնամի,
Մեր լեռների պես զորեղ գյուղացիները մեր ցասկոտ,
Քինախնդիր, անսարսափ, ահա պատրաստ են հիմի
Հողմացրիվ անելու գնդերը քո գարշահոտ։

ՄՆԱՔ ԲԱՐԵՎ

Ձենք ու զրահ կապել՝ ճամփա եմ ընկնում,
Մնաք բարև հայրենի—հարազատ լեռներ.
Ձենք ու զրահս կապած, թողած տեղ ու տուն,
Կռվի դաշտ եմ գնում ես՝ հաղթել կամ մեռնել։

Մնաս բարև բարձրանիստ, ով հպարտ Մասիս,
Իմ գեղանի լայնանիստ Արարատյան դաշտ,
Հաղթանակ է տենչում լոկ քեզ պես հզոր հոգիս,
Որ լցված է վրեժի ցասումներով անհաշտ։

Ազամանդե թագը քո միշտ կըժպտա արևին,
Ու անառիկ կմնա իմ երկիրը քեզ նման.
Երբ մենք կրկին հանդիպենք, ես արժան քո բարևին,
Արծաթ շողեր կթափես դու իմ ճամփեքի վրան։

Մնաս բարև, երկնագույն իմ սիրելի Ալագյազ,
Խաղաղությամբ թող ծորան ջրերը քո կաթնաղբյուր,
Երբ շողն իջնի Երևան, փչիր հովերդ հեզանազ,
Ես մարտումն էլ կզգամ քեզ, թեկուզ ընկած լինեմ լուռ։

ՍԱՆԻՏԱՐՈՒՀՈՒՆ

Այն փոքրիկ վրանում՝ շուրջը անափ անտառ,
Շուրջը կանաչ գարուն, կանաչ ու բուրավետ...
Իմ սրտում շատ հուշեր մնացին անբարբառ,
Իմ հոգում՝ քո սիրտը տանող մի արահետ:

Ես զինվոր վիրավոր, դու իմ քույրը քնքուշ,
Վերքերիս բալասան դրեցիր քո ձեռքով,
Ու միշտ քեզ հիշելիս՝ ինչպես աստղերն անուշ,
Քո կապույտ աչքերն են ժպտում ինձ անխռով:

Կա՞, արդյոք քո հոգին, թե ընկավ քաջաբար
Մարտերում այն ցասկոտ, արնահոս ու դաժան.
Արդյոք հանգե՞լ ես դու, թե կռվում ես դեռ,
Բայց ապրում ես դու միշտ, միշտ ինձ հետ անբաժան:

Կանցնեն ու կանցնեն այս օրերն արնախում,
Կմնան սպիները վերքերի անհամար,
Կմնան միշտ պայծառ ու կապույտ աշխարհում
Անունը քո բարի, աչքերը քո անմար:

ՔՈ ԼՈՒՍԱՆԿԱՐԸ

(Փոխադրություն ռուսերենից)

Հաճախ հանում եմ մարտի դադարին
Փոքրիկ նկարդ ու անթարթ նայում.
Ոնց հոգնած ճամփորդ հասած կատարին,
Երկինք եմ տեսնում քո ծով աչքերում:

Նայում եմ. աչքիս բացվում է գարուն...
Հոգիս է լցվում քաղցր հուշերով—
Կապույտ մանուշակ ու երգող առուն,
Ու առվի ափին ստվերները զով:

Ես կարողացա խինդը մեր հոգու
Տանել մարտերով ու պահել անմեռ.
Երկնի մովի պես քո ծով աչքերում
Կարծես թե պայծառ արևն է բացվել:

Ջերմ կհամբուրեմ նկարդ լուռ,
Եթե վիրավոր հանկարծ ընկնեմ ես.
Որ քույրն էլ քնքուշ վերքերս բուժե,
Նայելով նրան, ես կհիշեմ քեզ:

Քո սուրբ տիպարը պահած իմ հոգում,
Անցնում եմ մահվան, կրակի միջով.
Ինձնից անբաժան՝ բոլոր մարտերում
Քո նկարն է միշտ ու աչքերդ ծով:

Փետրվարի 15. 1944 թ.
Առանձին մերձծովյան բանակ

ԴՈՒ ԻՆՁ ՀԵՏ ԵՍ

Իմ Տատյանային

Ամեն վայրկյան, ամեն ժամ դու ինձ հետ ես, դու ինձ հետ,
Միշտ իմ սրտից անբաժան դու ինձ հետ ես, դու ինձ հետ.
Ճամփաներում, մարտերում, ՝երբ արևն է մթագին,
Երբ անձրև է, ցուրտ է, թաց, դու ես գրկում իմ հոգին.
Ո՞ւր ես արդյոք դու հիմա, ո՞ր աշխարհի լեռներում,
Դու ինձ հետ ես, դու ինձ հետ, իմ հոգում, իմ երգերում։

ԳՐԻԳՈՐ ԱՐՏՈՒ՛ՆԻ

ԳՐԻԳՈՐ ԱՐՏՈՒՆԻ

(1915—1944)

1944 թվականի օգոստոսի 1-ին հիտլերյան զավթիչների դեմ մղած մարտերում հայրենիքի հանդեպ իր պարտքը կատարելիս ընկավ տանկային միավորման հրամանատար-բանաստեղծ Գրիգոր Արտունին:

Գր. Արտունին (Մուրվալյան) ծնվել է 1915 թվականի մարտի 18-ին, Վրաստանի Սղնախի շրջանի Նուկրիանի գյուղում:

Միջնակարգ կրթությունն ստանում է Թբիլիսիում: 1939 թվ. ավարտում է Երևանի Մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետը, և նույն թվականին էլ ծառայության է կանչվում Կարմիր Բանակի շարքերը:

1933 թվականից Գր. Արտունու գրվածքները տպագրվում են Թբիլիսիի և Երևանի պարբերականներում, իսկ 1939 թվ. Հայպետհրատը լույս է ընծայում նրա բանաստեղծությունների ժողովածուն: Հաջողված թարգմանություններ ունի վրաց գրողներից ու ֆոլկլորից: Ռուսերեն լեզվով թարգմանված են նրա մի քանի բանաստեղծությունները:

Նախքան Հայրենական Պատերազմի սկսվելը, Արտունին հըմտանում է տանկային գործում: Պատերազմն սկսվելուն պես նա կռվի մեջ է մտնում որպես տանկային միավորման հրամանատար: Մասնակցելով Մոսկվայի մոտ թշնամու ջախջախմանը, Արտունին մարտերով հասնում է մինչև Սլուցկ քաղաքը: Այդ քաղաքից երկու կիլոմետր դեպի արևմուտք Արտունու տանկային միավորումը մնում է թշնամու օղակով շրջապատված: Սովետական հրամանատարին թշնամին առաջարկում է անձնատուր լինել, սակայն նա մնում է անդրդվելի և Ստալինյան ոգով դաստիարակված իր

մարտիկների հետ միասին կուրծք-կրծքի տված կռվում են մինչև վերջին փամփուշտը...

Զորամասը հրանոթների որոտների տակ կարճատև կանգ է առնում և քաջի մահով ընկած իր սիրելի հրամանատարի դին հողին հանձնում արժանավայել պատվով։ Անմիջապես ծաղկեփնջերով ծածկվում է թարմ շիրիմը, վրան դրվում հուշատախտակ։

Արտունու միավորումը Բելոռուսիայի ազատագրման համար մղվող մարտերում ոչնչացնում է հարյուրավոր հիտլերականների, վերցնում շատ գերիներ ու ռազմամթերք, իսկ լեհական հողն ազատագրելիս՝ հետապնդելով հյուծում, արյունաքամ անում թշնամու ուժերը, վերցնում շատ ավար։

Տանկային դիվիզիայի հրամանատարը Արտունու ընտանիքին է ուղարկում նրա շքանշանները, իսկ ցավակցական նամակում գրում է, որ «Հայ ժողովուրդը կարող է պարծենալ Գրիգոր Արտունու նման հերոս զավակով»:

Արտունու բանաստեղծությունները թեև հաճախ շատախոսականության կնիք են կրում, ձևի տեսակետից ոչ միշտ կատարյալ, բայց ունեն վարակիչ հույզ և ինքնաբուխ մտահղացում, կենդանի լեզու և հագեցված են անհուն նվիրվածությամբ դեպի Լենին—Ստալինի անմահ գործը։

Բանաստեղծը երգում է նաև բնությունը, մայրական սերը, գովերգում հողն ու հողի մշակողին։

Հայրենական Պատերազմի օրերին, նախքան իր տանկային միավորումով հերթական գրոհի անցնելը, Արտունին ասես գրիչը սրտում թաթախելուց հետո է գրում այս հուզաթաթավ տողերը.

Ու նորից տանկս գնում է առաջ
Զարկերի տակ դող ու հրակեզ,
Շուրջը անզիջում զենք ու շառաչ,
Հողի վրա մեր պայծառատես...
... Եվ մեր պայքարի գրկում արդար,
Մրրիկների մեջ այս հրակեզ,
Կրկին ու կրկին հերոսաբար
Գոչում եմ, երկի՛ր, սիրո՜ւմ եմ քեզ...

ՄՈՐ ԽՐԱՏԸ

Մայրը որդուն ճամփա դրեց
Ու համբուրեց խանդաղատ,
Կրծքին սեղմեց, սիրով շոյեց,
Տվեց անուշ մի խրատ.
— Գազազել է չար թշնամին,
Ոռնում է մեր դռան մոտ.
Գնա՛, որդի՛ս, մարտի պահին
Եղիր վեհ ու կրակոտ:
Քո հայրը քեզ թողեց, գնաց,
18 թիվ... Մարտ մի մեծ...
Ընկավ... Բայց նոր արև շողաց,
Կյանքը փառքով պսակվեց:
Դու է՛լ գնա, անո՛ւշ բալա,
Հոր պես արի ու արթուն,
Որ հաղթական արև դառնաս
Հայրենական ճակատում:
Սե՛ր տուր քո վեհ Հայրենիքին,
Վառվի՛ր նրա ավյունով,
Գետնով չտաս դրոշն անգին՝
Ներկված հորդ արյունով:
Հայրենական մարտում մեռնել
Փառք է, պատիվ, գործ անմար,
Հիշի՛ր, որդի՛, «Մահը մերն է,
Մարդու գործն է միշտ անմահ»:
Ինձ չեմ տալու չար մտքերին,

Ես վախկոտին չեմ ծնել,
Իմ քաջային՝ իմ քաջերին
Ես եմ շոյել ու սնել:
Կրակների միջո՛վ անցիր,
Ու մարտերից մոլեգին,
Հաղթանակո՛վ վերադարձիր,
Որդի՛ս, սե՛ր իմ թանկագին:

ՀԱՅՐԵՆԻՔ ԻՄ ԼՈՒՍԵՐԵՍ

Թեկուզ մնամ յոթ լեռան կատարներից հեռու ես,
Քո կարոտից սիրտը իմ վառվում է ոնց մի քուրա,
Չեմ մոռանա երբեք քեզ, Հայրենի՛ք իմ լուսերես,
Թեկուզ մնամ յոթ լեռան կատարներից հեռու ես։
Քո սերը իմ սրտին վարդի պես կըհուրհրա,
Ուր էլ գնամ, քո սերն է շողում իմ կյանքի վրա,
Չեմ մոռանա երբեք քեզ, Հայրենիք իմ լուսերես,
Թեկուզ մնամ յոթ լեռան կատարներից հեռու ես։

1941
Թեհրան

ՍԻՐՈՒՄ ԵՄ ՔԵԶ

... Ու նորից տանկն է գնում առաջ
Զարկերի տակ դոռ ու հրակեզ,
Շուրջը անդրիջում զենքի շառաչ՝
Հողի վրա մեր պայծառատես։
Երկի՛ր իմ, ե՛րգ իմ, կյա՛նք իմ վառաչ,
Այս աղմկի տակ ահեղ ու վես,
Սիրտս հաղթական թևեր առած,
Գոչում եմ հպարտ՝ սիրում եմ քեզ։

Սիրում եմ ես քո արոտն ու արտ,
Խնդությունը վառ ու ոսկեզօծ,
Ու գետերը... նրանց քրքիջն ազատ,
Լազուր ծովերի երգն ալեկոծ։
Ու արևները քո հարազատ,
Քո երգի անմար կրակն ու բոց,
Եվ կուրծքդ պալար, արևազարդ,—
Դարձած անառիկ բերդ ու ամրոց։

Ու զավակներից, կյանք իմ անշեջ,
Քո որդիները պայծառանում,
Որոնց ամեն մի երակի մեջ
Քո սերն է ծաղկում, որպես գարուն։

Սիրում եմ նրանց գործերը մեծ,
Երթի եռանդը, թափը վարարուն,
Որ օրերում այս մրրկածեծ
Հաղթանակի նոր խինդն են վառում։
Ու պայքարների գործում արդար,
Մրրիկների մեջ այս հրակեզ,
Կրկին ու կրկին հերոսաբար
Գոչում եմ՝ երկի՛ր, սիրում եմ քեզ։

ՀԵՐՈՍԸ

Գեներալ-մայոր Գալստյանի հիշատակին

Ահա այստեղ, այս հողում կբարձրանա սիրով
Հուշարձանը հրափայլ՝ հերոսական սիրտ,
Շուրջը արտեր կծփան ոսկեհատիկ վառման
Եվ աղջիկներ խնդությամբ կելնեն անուշ գարնան
Ու կաղմկեն... կթնդա նորից ծիծաղ ու խաղ,—
Ահա այստեղ, այս հողում, այս բլրի մոտ չքնաղ
Նա կպատմի անձայն, լուռ, կպատմի բոլորին,
Ու նա կասի խոր սիրով ուրախ մանուկներին
Այն հերոսի մասին, որ ընկավ արիաբար
Հայրենիքի և սիրո, ժողովրդի համար։

***

— Առա՛ջ, առա՛ջ, ընկերներ,—ղնդաց ձայնը անգին,
Զորամասը շրջանցեց հենց այս բլրակը հին,
Վառվեց ահեղ մի պայքար... Թշնամու նետ ու նենգ
Գնդացիրը նրանց դեմ երգեց մահվան մի երգ...
Ու ընկերներ ընկան վար, ընկան կարոտագին՝
Հաղթանակի երգը նոր ամեն մեկի շուրթին։
Զորամասի պետն ահա, հերոսի պես արի,
Կրակի տակ ահարկու եկած նոր պայքարի,
Գոչեց՝ զարկե՛ք, ընկերնե՛ր... Առաջ եկավ կրկին.
Նա պայքարեց եռանդուն, հաղթանակով անգին։
Գիտեր հերոսն աներկյուղ, որ սրտի դեմ իր վառ՝
Շրջում է մահն անմիտ, պարում խենթավարար։

Բայց դիմում է նա առաջ ու չփած դողալ,
Որ հաղթանակը պայծառ արևի պես շողա…
Ու թշնամու մի գնդակ ծակեց կուրծքը նրա,
Հաղթանակի երգը վառ մնաց շուրթի վրա…
Զորամասը թև առած՝ թափով առաջ անցավ,
Շողաց բազում սրտերին հաղթանակը պայծառ։

***

Ահա այնտեղ, ուր ընկավ հերոսը այն անպարտ,
Հուշարձանը կելնի վեր սիրով ու խանդաղատ.
Միշտ աղջիկներ կայցելեն, և ծաղիկներ վառման
Կերգեն նրան խոր սիրով ծաղկող ամեն գարնան։

***

Երբ մարտերն են մի պահ լռում,
Գիշերն իր թևն է փռում,
Հազար տանկեր ու ինքնաթիռ
Դադարում են ու լռում,—
Ես լսում եմ դարձյալ ազատ
Կյանքի թրթիռ հարազատ,
Այդ վեհ՜ սիրտն է հայրենիքիս
Որ զարկում է անդադար։

ԻՄ ՍԻՐԵԿԱՆ

Դեմս կրկին, կրկին
Նլնում է վառ
Երևանի այգին՝
Ծաղիկ ու ծառ,

Եվ այգու մեջ անմար
Ու գուրեկան
Դու ես շողում վառման,
Իմ սիրեկան։

Դու ես շողում գյուլթին
Ու շողազարդ,
Որպես այգու միջին
Ծաղկող մի վարդ։

Հիմա հեռու եմ այդ
Այգուց կանաչ,
Շուրջը ահեղ մի մարտ,
Զենք ու շառաչ։

Ու թշնամին մեր դեմ,
Նենգ ու դաժան,
Դեռ ոռնում է, որպես
Խփված գազան։

Պահած նա իր աչքում
Մահվան երկյուղ,

Ոտնակոխ է անում
Քաղաք ու գյուղ:

Քանդում է ու փախչում,
Փախչում է նա
Մեր զարկերից ամուր
Ու անխնա:

Շուտով սոսխը չար
Կընկնի անզոր,
Ինչպես փտած մի ծառ,
Տերև մի չոր:

Եվ իմ դիմաց կրկին
Կշողա վառ
Երևանի այգին՝
Ծաղիկ ու ծառ:

Եվ կարոտ մի լուռ
Ու դուրեկան,
Նոր հիացմունք ու սեր,
Իմ սիրեկա՜ն:

ԵՐԳ ՄԱՐՏԻ ՈՒ ՍԻՐՈ

Ահա դեմս թնդաց էլի
Թնդանոթ մի, պայթեց ռումբ.
Մարտ է... մարտում քեզ մտերիմ
Անգամ ծառն է, կամ մի թումբ։

Մենք պառկեցինք... ու երեք ժամ
Պառկած պահեց մեզ անքուն
Թնդանոթի զարկը դաժան,
Հրանոթը հնդուն։

Ու երբ լռեց զարկը նրանց,
Ելանք ահեղ պայքարի,
Արշավի վեհ երգը զնգաց
Սրտերում բարկ ու արի։

Անցանք առաջ... ճանապարհին
Ընկավ մեր գնդապետը.
— Առա՛ջ,—գոչեց նա այդ պահին,—
Անգամ մի քայլ չանեք ետ։

Ու նահանջեց չար թշնամին
Մեր զարկերից անխնա...
Մենք մոտեցանք գնդապետին՝
Վիրավոր էր ընկած նա։

Վերքը դաժան... Ձախ գրպանից
Լուսանկար նա հանեց,

— Մարգարիտն է,—ասաց նա ինձ,—
Գրի՛ր, որ ես... ու լռեց։

Մենք թաղեցինք մի ծաղի քով
Գնդապետին մեր արի.
Ո՛չ մի արցունք... նորից երգով
Ծլանք ահեղ պայքարի։

Այս ահռելի մարտի պահին,
Արշավներում հաղթական,
Մերթ նայում եմ Մարգարիտին
Ու հիշում քեզ, սիրելա՛ն։

Եվ սիրտս վառ սեր կզնգա,
Պայքարներում հրակեզ՝
Սերդ ինձ հետ... Եթե ընկա,
Հիշեմ պիտի նորից քեզ։

ԲԱԼԼԱԴԱ ՄԻ ԸՆԿԵՐՈՋ ՄԱՍԻՆ

Շուրջը պայքար մի, շխինդ ու շառաչ,
Մեր գունդը ահա դիմում է առաջ։

Դիմում է առաջ... Զնգում է մի երգ,
Ընդունեց մարտը զարհուրելի դեմք։
Ընկավ ընկեր մի, ու այդ պահին նա
Գոչե՛ց. «Ընկերնե՛ր, զարկե՛ք անխնա.

Հիտլերին միայն երկաթն է ժանգոտ,
Չունի ռուսական կամքը կրակոտ»։

Օ՜, այդ ընկերը հպարտ ու անգին,
Ամենքի սերն էր, ամենքի հոգին։
Երեկ չէ՞ր միթե, թնդանոթ ու տանկ
Ելան նրա դեմ կատաղի ու բարկ,

Եվ ի՞նչ, երեք տանկ ահռելի ու մեծ
Հերոսի նման նա շարքից հանեց։
Նա շարքից հանեց ու դիմեց առաջ,
Չգիտեր՝ ինչ է սարսափ ու նահանջ։

Երբ գըրոհ տվեց, մարտի որոտում
Ընկավ նա, ինչպես հերոսն է ընկնում։
Օ՜, ննջի՛ր, հերո՛ս, ննջի՛ր, ընկե՛ր իմ,
Դու հավերժ կապրես մեզ հետ մտերիմ։

Դու արև ու սեր… Մենք կամք առնացի,
Հիտլերն ի՞նչ ունի երկաթից բացի։
Քո կյանքի համար՝ մենք վառված հրով
Վրեժ կը լուծենք նրանց կյանքերով։

Ծուխը կատաղի պայքար ու շառաչ,
Մեր գունդը անվերջ դիմում է առաջ։

ՕՐՈՐՈՑԻ ԵՐԳԸ

Ո՛չ, ամպ չէ, կամ քամին,
Որ գոռում է դաժան,
Մեր դեմ նենգ թշնամին,
Որպես մի խենթ գազան,
Ելավ, որ մեզ մարի
Հողում մեր սրբազան...
Քնի՛ր, քնի՛ր, բալա՛ս,
Որ մեծանաս։

Քո հայրը քեզ թողեց,
Համբուրեց ու գնաց,
Մարտ է, մի հողմածեծ,
Ոչ թե արցունք ու լաց։
Պայքարներում այս մեծ
Նա քեզ կարոտ մնաց...
Քնի՛ր, քնի՛ր, բալա՛ս,
Որ մեծանաս։

Ունես ազատ մի տուն,
Պայծառ մի հայրենիք,
Նրա անմար գրկում
Դու մի ծաղկող ծաղիկ,
Արևն է քեզ խնդում,
Աճի՛ր կրկնապատիկ...
Քնի՛ր, քնի՛ր, բալա՛ս,
Որ մեծանաս։

Ինչո՞ւ գողացիր գու,
Վախենո՞ւմ ես, ինչի՞ց...
Գո՞ւցե մի մոր գրկից
Քեզ պես մանուկ մի չինչ,
Հենց այս պահին ընկավ
Կռիվների միջին...
Քնի՛ր, քնի՛ր, բալա՛ս,
Որ մեծանաս։

Մեր թշնամին դաժան՝
Չգիտի մարդ ու սեր,
Կոտորում է հազար
Անմեղ մանուկ ու ծեր
Ու ոտքի տակ առած
Ծաղկանց արևաբեր...
Քնի՛ր, քնի՛ր, բալա՛ս,
Որ մեծանաս։

Քնի՛ր, հայրդ անպարտ,
Ելած արևծագին,
Հուր կվառի մի բարկ
Նենգ թշնամու գլխին,
Ու մոխիրը կտա
Քամիներին, հողմին...
Քնի՛ր, քնի՛ր, բալա՛ս,
Որ մեծանաս։

Եթե հերոսաբար
Ընկնի հայրիկը քո,
Հուր կվառեմ անմար,
Կելնեմ մարտի երգով,
Որ հսկեմ քո պայծառ
Քունդ արդար ձեռքով...
Քնի՛ր, քնի՛ր, բալա՛ս,
Որ մեծանաս։

Երբ որ կմեծանաս,
Որպես ծաղիկ հանդում,
Նենգ թշնամին, բալաս,
Էլ չի լինի կյանքում,
Կվառվես, կշողաս
Արևի պես մաքուր...
Քնի՛ր, քնի՛ր, բալա՛ս,
Որ մեծանաս։

ԱՅՍ ՏՂԱՆ

Տեսա մի փոքրիկ երեխա,
Մոտեցա սիրով ու խնդուն։
Շուրջը գարուն է... Ահա նա
Պառկած է, ծաղկանց մեջ զվարթուն։

Մոտեցա... տեղից չշարժվեց,
Չխոսեց ժիր ու կենսալից...
Միայն մի ծաղիկ օրորվեց,
Շշնջաց, կարծես, ասաց ինձ.—

Մեզ հետ այս փոքրիկ երեխան
Խաղում էր, ինչպես մի թիթեռ
Ու հանկարծ երբ մեր դեմ ելավ
Թշնամին նենգ ու մարդակեր,—

Զարկեցին... Ահա ընկավ նա,
Թոշնեցին աչերն ինչպես նուշ,
Այս տղան... վառ սիրտը նրա
Թող ննջի մեր գրկում անուշ։

— Ննջի՛ր դու խաղաղ ու անգին,—
Մանկան ես սիրով ասացի,
Քո կյանքի համար թշնամին
Իր ողջ կյանքով կհատուցի։

***

Գիշերվա կեսն է, բայց ինձ նորից
Ինձ գերել են գրքերն այս արթուն,
Եվ ամեն-ամեն պայծառ էջից
Խմում եմ լույս ու իմաստություն։

Ինձ հետ են Գյոթեն, Հենրիխ Հայնեն,
Մեծ Հովհաննեսը, Ավոն անմար,
Ամեն մեկն ասես գիրկն է առել
Մի դարաշրջան ու մի աշխարհ։

Արբել եմ, արբել նրանց երգից,
Գրկելով նրանց, թվում է ինձ,—
Նրանք մեկտեղ են նստել քեֆի
Ու խմել գինի մի կարասից։

ՄԵՆՔ ՔԵԶ ՀԵՏ

(Վրաց. ֆոլկլորից)

Սա՛ր իմ, երգի՛ր, թե ոնց անցանք
Կրեմլի շքեղ կամարով,
Ում որ երկար տենչում էինք,
Տեսանք նրան մենք բարով։

Առաջնորդը մոտեցավ ինձ,
Ուսիս դրավ ձեռքն իրա.
«Տղա՛ս,—ասաց,—երգի՛ր նորից»...
Ծանոթ թվաց ձայնն իրավ։

Ու նայեցի որդիաբար,
Իմ ախպերն էր, արնակից,
Ասի նրան. «Ախպե՛ր Կոբա,
Չե՞ս ճանաչում արդյոք ինձ»։

«Ո՞նց չէ,—ասաց,—թուրը ձեռքին՝
Կռվում օգնում էիր ինձ.
Մեկն ես դու էլ, այստեղ եկած՝
Ժողովրդի անունից»։

Լավ պատասխան տվեց նա ինձ,
Այսպես՝ վայել մեծ մարդուն.
Ես ձայն տվի անուշ սազիս,
Սիրտս տողեր է կարդում։

— Ապրի՛ր երկար, մե՛ծ առաջնորդ,
Եվ փորձության տաք ժամին
Մենք քեզ հետ ենք, միշտ կըրակոտ,
Թո՛ղ դողդողա թշնամին։

1939.

ԵՐԿՈՒ ԱՐԵՎ

(Վրաց. ֆոլկլորից)

Արև, երեսդ շրջելիս,
Ասում ենք քեզ՝ մայր մտավ,
Իսկ Լենինին՝ խոր քնելիս՝
Լուռ ու խաղաղ քուն գտավ...

Շողքդ լավ է, բայց ի՛նչ արած,
Չի թափանցում մեր հոգում,
Տալիս ես լոկ արտաքին փայլ,
Կարիքը մեծ չես հոգում։

Լենինի շողքն ամեն սրտում,
Հոգու խորքում ժպտալիս՝
Բարեկամին՝ սեր ու խնդում,
Թշնամուն մահ է տալիս։

Երկուսդ էլ վառ արև եք նուշ,
Կյանք գուրգուրող, խնամող,
Եվ աշխարհում չկա մի ուժ,
Որ ձեզ տանի դեպի հող։

Երկուսդ էլ վառ արև եք հար,
Արև ամբողջ աշխարհի.
Ես չեմ կարող գտնել սահման,
Դուք անշեջ եք, չեք մարի։

1939.

ՍԻՐԱԾ ՔԱՂԱՔ ԲՈԼՈՐԻ

Կանաչների մեջ թաղված,
Ծաղիկներով զարդարված՝
Կրծքիդ հազար տեսակ ծառ
Արևի տակ մեր պայծառ՝
Թև ես առել ու ժպտում
Վրաստանի լայն սրտում,
Սեր ու պարծանք բոլորի,
Գողտրիկ քաղա՛ք իմ Գորի։

Ճոխ բնության պերճանքով,
Ներքին կայտառ թովչանքով,
Կարոտանքով անմեկին
Կանչում ես դու ամենքին...
Ծոցիդ մեջ կա մի տնակ .
(Վաղուց ի վեր անբնակ),
Գարնան պայծառ արփու պես՝
Ճակատը պարզ, լուսերես...

Ներսը՝ անշուք, աղքատիկ,
Ողջ աշխարհում մի հատիկ,
Քանզի այդ խեղճ տնակում
Մի մանուկ էր բնակում,
Մանուկը հուր-հրածին,
Սրտում դրած սեր անծիր—
Սերը՝ ամբողջ մարդկության
Ազատ կյանքի, փրկանքի...

Անո՛ւշ օրրան, ծաղկավա՛յր,
Երկրում անափ ու անծայր՝
Դու փայլում ես թովչանքով,
Ծով բնության պերճանքով,
Քո ծոցի մեջ օրօրվեց
Օրորոցը վեհ ու մեծ...
Սիրած քաղաք բոլորի,
Պայծառատե՛ս իմ Գորի։

1939

ՄԵՍՐՈՊ ՄԵՐՈՒԺԱՆ

[illegible]

ՄԵՍՐՈՊ ՄԵՐՈՒԺԱՆ
(1917—1942)

Մեսրոպ Կարապետի Ջառայանը (Մեսրոպ Մերուժան) Հոկտեմբերյան Ռևոլուցիայի հասակակից է. ծնվել է նա 1917 թվականի նոյեմբեր ամսին, Վաղարշապատում։

Միջնակարգ կրթությունն ստանում է Երևանի Մռավյանի անվան դպրոցում։ Հենց դպրոցական նստարանից էլ նրա մեջ մեծ սեր ու ձգտում է առաջանում դեպի գեղեցիկ գրականությունը։ Նա հաճախում է այդ ժամանակ Երևանում գործող երկամյա Գրական ստուդիան։ Աշխատում է «Պիոներ կանչ»-ի և ապա «Ավանգարդ»-ի խմբագրություններում. այդ թերթերում էլ տպագրվում են նրա առաջին ստեղծագործությունները։

Մերուժանի գրվածքները կենսաթրթիռ են, լի մեծ հավատով դեպի լայնածավալ Միության ու Սովետական Հայաստանի այսօրն ու է՛լ ավելի գեղեցիկ ապագան։

1939 թվ. Մեսրոպ Մերուժանը կանչվում է Կարմիր Բանակ, որտեղից էլ պատերազմ ծագելուն պես մեկնում է ռազմաճակատ՝ կրակի առաջավոր գիծը։

Որպես շարքային անվախ զինվոր, իր գովերգած նախնիների՝ հայ դյուցազունների օրինակով նա կյանքի ու մահու արդար կռվի մեջ է մտնում Կերչի, Սևաստոպոլի համար մղած մարտերում։

Մերուժանը Կարմիր Բանակի շարքերում կոմերիտմիությունից անցնում է Լենինի—Ստալինի պարտիայի շարքերը, որի մեծ գաղափարների համար էլ նա զոհաբերեց իր երիտասարդ վառվռուն կյանքը։

Շնորհալի երիտասարդ բանաստեղծն իր անցած գրական կարճ ճանապարհի համեստությամբ թողել է պատկառելի քա-

նակությամբ գործեր՝ մոտ չորս հազար տող բանաստեղծություններ ու պոեմներ։ Դրանցից շատերը, անկասկած, ունեն գրական արժեք։ Լիրիկական ոտանավորներում երիտասարդ հեղինակին գերազանցապես նյութ են ծառայում Հայաստանի հարուստ բնությունը, երիտասարդ մարդն ու սերը, մարդկային հոգու ապրումները։ Ունի մի ընդարձակ պոեմ «Տիգրան մեծ» խորագրով և փոքրածավալ պոեմներ՝ սովետական ժողովուրդների մեծ զավակներ Չկալովի, Շևչենկոյի, Ռուսթավելու մասին։ Այս կամ այն չափով հաջողված թարգմանական փորձեր ունի՝ Հայնեից, Նեկրասովից, Ճավճավաձեից և ուրիշ հեղինակներից։

Մեռուժանը սրտաբուխ, երախտագիտության ջերմաշունչ բանաստեղծություններ ունի նվիրած ժողովուրդների մեծ առաջնորդ Ստալինին, որը, ինչպես ինքն է վկայում, «հանեց իրեն կյանքի ընդերքից և դարձրեց սովետական առաջավոր քաղաքացի»։

ՇՆՈՐՀԱՎՈՐ ՔՈ ՆՈՐ ՏԱՐԻՆ, ԱՌԱՋՆՈՐԴ

Լույսեր վառած, դրախտ դառած ծաղկաբույր մեր աշխարհում,
Պայծառ սիրով, ջերմ հույզերով իր լույս սերն է քեզ բերում,
Եվ ասում է ժողովուրդը և արևը լուսահորդ,—
— Շնորհավոր քո նոր տարին, Առաջնորդ:

Գործարանից արևալից՝ բանվորները հաղթական,
Կյանքով հավետ, երջանկավետ, լցված և՛ ուժ, և՛ մկան,
Ասում են քեզ, սիրով հրկեզ, կամքով հաստատ, անհողդողդ,—
— Շնորհավոր քո նոր տարին, Առաջնորդ:

Եվ կապուտակ, երկնից հստակ բազեները սրատես,
Արևից վառ, հավետ անմար իրենց սերն են բերում քեզ,
Սիրով առատ և անսպառ՝ ասում ամեն սավառնորդ,—
— Շնորհավոր քո նոր տարին, Առաջնորդ:

Մեր ցնծալից, ջինջ ծովերից, նվիրական կարոտով,
Քեզ են թռչում ու կարկաչում ծովերից էլ խոր հոգով,
Ասում տաղով, լույս ծիծաղով, հնացավառ և նավորդ.—
— Շնորհավոր քո նոր տարին, Առաջնորդ:

Եվ ծփացող, մաքուր ոնց ցող կապուտաչյա լճերից,
Վեհ լեռների, անհասանելի կարկաչահոս գետերից,
Անդուլ խինդով, երգի թնդով, ասում ձկնորսը լողորդ,—
— Շնորհավոր քո նոր տարին, Առաջնորդ:

Միշտ գարնան հետ, զով ծաղկավետ ճամբարներից գյուղական,
Սիրով լեցուն, խոսքեր ցնծուն, երամներով քեզ կգան,
— Դու մեր ճամփի պայծառ արփի,—ասում ամեն մի ճամփորդ,—
— Շնորհավոր քո՛ նոր տարին, Առաջնորդ։

Սերունդը մեր, քաջ, անվեհեր, երազներով խնդագին,
Հրով վառած, բաժակն առած, երգում է քեզ, ո՛վ անգին,
Խմում է նա, սիրով անմահ, ասում ձայնով անհողդողդ.
— Շնորհավոր քո նոր տարին, Առաջնորդ։

ԵՐՋԱՆԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՎՈՏ

Առավոտը մանկան հուր աչիկների պես բացվեց
Ու մշուշը փախավ մի գողի նման վեհերոտ,
Լուսապայծառ խնդությամբ հոգուս գավաթը լցվեց,
—Ողջույն քեզ, կյանք նորաստեղծ և քեզ, պայծառ առավոտ։

Երբ զարթնում եմ խոր քնից, հնչում է առօրյան
Ու ցոլում են աչքերս որպես անգին զույգ բյուրեղ.
Շչակներով քաղցրալուր ամեն հանք ու գործարան
Բարի լույս են ասում քեզ, մեր ԱՌԱՋՆՈՐԴ ՀԱՆՃԱՐԵՂ։

Ես նայում եմ սիրահույզ քո նկարին ժպտացող,
Բանվորի դեմք ունես դու, իմաստունի վեհ գլուխ,
Ու աչքերում քո անհուն, ինչպես գարնան գոհար ցող
Երևում է սերը հորդ ժողովրդի լուսաբուխ։

Դու տվեցիր մեր սրտի բյուր վշտերին ամոքում,
Ծաղիկները թառամող քո զով շնչից կյանք առան,
Մեր աշխարհի բազմացեղ ժողովրդի ջերմ հոգում
Հիմա վառվում ես ինչպես պայծառ արևը գարնան։

Ես գցում եմ առաջին իմ ծրարն արկղի մեջ
Ու ցոլում են աչքերիս արևները լուսազին.
Արևային լույս ակունք, ո՛վ առաջնորդ մեր անշեջ,
Շնորհակալ եմ քեզանից, որ հասցրիր այս կյանքին։

Այս առավոտ արևի խնդությունն է անսպառ,
Այս առավոտ հնչում են նվագները քաղցրագին,
Այս առավոտ երկնքից արևն ասես իջավ վար
Նախանձելով լուսահորդ ու երջանիկ մեր կյանքին։

12 դեկտեմբերի, 1937 թ.

ԴԵՊՈՒՏԱՏՆԵՐԸ

Մեր ոսկեորիկ արեգակի տակ
Սրտերում կյանքի բերկրանքն ու սերը
Ապրում են երգով, կյանքով բովանդակ
Դեպուտատները:

Սիրում են նրանց բոցավառ սիրով,
Երջանիկ կյանքի մանուկն ու ծերը,
Եվ աշխատում են պայծառ հույզերով
Դեպուտատները:

Ժպտում է նրանց արևը բոսոր,
Խնդությամբ բացված կարմիր վարդերը.
Ժողովրդի հետ երգում են այսօր
Դեպուտատները:

Մեր Առաջնորդը՝ ակունքը կյանքի,
Բացեց երջանիկ լույսի դռները,
Որ գործեն որպես մի սիրտ, մի ոգի—
Դեպուտատները:

Ընտրել է նրանց ժողովուրդը մեր,
Բարձրացրել բոլոր շլուտ ձեռները,
Որ աշխատանքում լինեն անվեհեր
Դեպուտատները:

Հանքերն են մտնում սիրով անհատակ,
Եվ նորակառույց գործարանները,
Ստուգում ամեն գործիք, պտուտակ—
Դեպուտատները:

Եվ մայիսաբույր մեր կյանքի սրտում
Ժողովուրդն ինքն է խնդության տերը,
Աշխատում են միշտ հանքում և արտում
Դեպուտատները։

Անզոր են մրցել մեր նոր կյանքի հետ
Լույսերի հնոց վառ արևները,
Քանզի քայլում են խնդությամբ հավետ
Դեպուտատները։

ՇՈԹԱ ՌՈՒՍԹԱՎԵԼԻ

(Հատված համանուն պոեմից)

Վերջալույսը ողողել էր իր շողերով բերդ ու տուն,
Ցոլում էին ձյունապայծառ կատարները լեռների,
Վրացական ժողովրդի բանաստեղծը իմաստուն
Աչքերն հառած լուռ դիտում էր մայրամուտը արևի։

Հրդեհավառ երկնքի տակ մի արծիվ էր սավառնում,
Ոչխարների հոտը կայտառ լուռ իջնում էր բլրից ցած,
Բանաստեղծի հոգին ասես արծիվից թևեր էր առնում,
Վերջալույսի ծիրանավառ կախարդանքով հիացած։

Դեմ հանդիման բարձրանում են երկու լեռներ ձյունափառ.
Անդնդախոր ձորերի մեջ գիժ Արագվան է վշշում,
Սարի վրա երևում է դալարագեղ մի անտառ
Եվ Թամարի բերդը շքեղ վերջալույսի մշուշում։

Եվ հնչում են վին ու տավիղ նվագներով քաղցրագին,
Խրախճանք է զվարճալի ամրոցի մեջ հոյակապ
Ու ցոլում է ծով լույսերում ականակուռ թագն անգին
Եվ Թամարի չքնաղագեղ պարանոցը լույս-կարապ։

Հոգում վառած վերջալույսի երազները անհամար
Բերդ է մտնում բանաստեղծը հագին մի վառ ծիրանի.
Դադարում է ամրոցի մեջ զվարճալի երգ ու պար
Ու ցոլում են պերճ թագուհու զույգ աչքերը գեղանի։

— Կարդա՛ գիրքդ դյուցազնական,—բանաստեղծին
դիմեց նա,—
Որ տարածվի համբավը քո Վրաստանում ծայրից ծայր,
Ժողովուրդը քո հանճարի պայծառությամբ հիանա,
Ու միշտ ցոլա նրա հոգում ինչպես արևը պայծառ։

Ու ամբոխը պալատական սպասում էր անհամբեր,
Սպասում էր սիրակարոտ Թամար չքնաղ թագուհին,
Գորգի վրա կանգնած էր լուռ բանաստեղծը անվեհեր,
Բարձր ու վսեմ ու անառիկ ինչպես նրա բերդը հին։

Նա հայացքը հառեց մի պահ կամարներին պալատի
Եվ թագուհու պայծառ դեմքին, որ նայում էր սիրաթով,
Հետո ծոցից գիրքը հանեց որ կարոտով այն թերթի
Ու ամբոխն սքանչանա դյուցազնական հեքիաթով։

Ձեռքը տարավ շոյեց լռիկ ճակատը իր հանճարեղ
Ու ցոլացին նրա հոգում արևները իր երգի.
Սպասում էր ամբոխը մունջ և թագուհին աչագեղ,
Պալատն ամբողջ ու անհամբեր դարձած մի շունչ, մի հոգի։

Կարդաց մատյանն իր ոսկեբառ մինչև մթին ուշ գիշեր,
Եվ լսում էր պալատը ողջ հանդիսատ ու քուն մոռացած,
Պալատ մտան Տարիելը քաջ, Դարեջանը սիրաշեր,
Ավթանդիլը, Թինաթինան, Փրիդոնը սիրտը բաց։

Հին դարերի հեքիաթային դյուցազները իրար հետ
Այցի եկան պալատը պերճ առած տեգեր ու վահան,
Կարծես շքեղ հորիզոնից արեգակը կենսավետ
Սեգ Թամարի թուխ աչքերում սփռեց շողեր ոսկեման։

Երբ վերջացավ, պալատն ասես դառավ մի ծով բերկրանքի,
Հմայվել էր հանճարով մեծ Թամար չքնաղ թագուհին,
Նրա հանդեպ կանգնած էր լուռ բանաստեղծը իր կյանքի,
Բարձր ու վսեմ ու անառիկ ինչպես նրա բերդը հին։

25 դեկտեմբերի, 1937 թ.

ԱԲԽԱԶԻԱ

Սիրով՝ աբխազական աշխատավոր ժողովրդին

Մեծ է ու լայն ծովիդ նման քո մեջ ապրող մարդու հոգին,
Բյուր շրթերի ծիծաղի հետ Ստալինյան խոսքն է հնչում,
Ժողովրդի կյանքն այստեղ արեգակից պես ջերմագին,
Լեռներից պես կամքը նրա և անառիկ և անզիջում։

Բացվել ես դու իմ հանդիման հազարաթերթ մի վարդի պես,
Կախարդանքով քո երջանիկ այս անաղարտ կյանքի բացում.
Իսկ Սուխումին, լեռների մեջ մի գեղեցիկ աղջիկ ասես,
Երազում է պառկած ահա արեգակի շողքը ծոցում։

Ինձ համբուրեց ծովիդ քամին գթառատ մի քրոջ նման
Եվ արևդ ինձ ողջունեց ոսկիներով իր լուսային.
Հիմա ինչպես կապույտ նավակ ջրերի մեջ քո անսահման
Լողում է հուր կարոտներով իմ սիրառատ ջահել հոգին։

Դու և երկիրն իմ Հայաստան եղբայրներ եք մի հարազատ,
Ընթանում եք դեպի առաջ, դեպի չքնաղ մի արշալույս.
Թևածում է քո լեռներում արծվի պես կյանքը ազատ,
Կանաչ աշխարհ դու լուսաշող, իմ ներշնչման ծիծաղ ու հույզ։

Սիրում եմ ես երկինքդ ջինջ և քո ծովի ջրերը լուրթ,
Միջօրեին քո կապուտաչյա և գիշերդ աստղավառ.
Երգում եմ քեզ զվարթաձայն ահա սիրով մի անհագուրդ,
Չքնա՛ղ երկիր դու լուսակիր, դու, շողշողուն անգին գոհար։

Մութն է եղել անցյալը քո մի սևակնած ամպի նման,
Շերվաշիձեն իշխանը բիրտ կեղեքել է բազմած գահին.

Դաքի նրան զավակներըդ խիզախաբար և անվարան
Ու միացյալ բանակներով աշխարհացունց Հսկաներին։

Կապույտ ծովի ափերին քո մահ է եղել և արհավիրք
Ալիքներըդ սրտակեղեք հեռուներից մահն են լացել,
Ծառացել է ազատության արեգակը ոսկեորիկ
Եվ շողերով իր կենսածիր քո փրկության դուռը բացել։

Ճայերն աշխույժ, ճերմակաթև թռչում են ժիր՝ ծովի վրա,
Հորիզոնում վարդի նման շիկնում է հուրն արեգակի.
Սիրտըս լցված վառ խնդությամբ, ես ծովափին կանգնած
ահա՝
Հիանո՜ւմ եմ ծիծաղաթիվ գեղեցկությամբ քո այս կյանքի։

Տ. ՇԵՎՉԵՆԿՈՅԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Սոնետ

Հնչում են իմ ականջին նվագները քո երգի,
Դու մերթ լալիս ես մռայլ ու մերթ ժպտում խնդադեմ,
«Կոբզարը» քո նման է աստղաշար երկնքի,
Որ ցոլում է աչքերիս և խանդավառ սրտիս դեմ։

Օ՜, հանճարեղ ճորտ գուսան, Դնեպրի ջրերը խաղաղ
Շունչ տվեցին երգերիդ և քո սրտին իմաստուն,
Աչքերիդ մեջ աստղերը, իսկ շուրթերիդ՝ երգ ու տաղ,
Եղբայրների հետ ըմբոստ ամեն գիշեր մտար տուն։

Եվ ցոլում էր հոգուդ մեջ ազատության արփին վառ,
Անհորիզոն հույսերի պայծառությամբ առհավետ
Բռնության մեջ երգեցիր ազատությունը պայծառ։

Խոսում էր քո սիրտը ջերմ ժողովրդի սրտի հետ
Ու երգերիդ վարդերին, սրտիդ վրա իմաստուն
Ժողովրդիդ զարթոնքի կենարար ցողն էր նստում։

ԴԱՎԻԹ ՍԱՍՈՒՆՑԻՆ

Ահա Դավիթն է գալիս՝ հեծած նժույգ սպիտակ,
Արևների բռնկում պահած ջահել կրծքի տակ,
Խոյացել է հաղթական նա դարերից հնասույզ՝
Աչքերը զույգ արշալույս։

Դավիթ, քանի՜ բանաստեղծ, քանի՜ պայծառ հայ գուսան
Ներբողեցին փառքը քո ու մնացին անսասան,
Հուշարձանիդ պես անմահ վերասլաց ու կանգուն,
Հողմերի դեմ հանդուգն։

Քեզ երգեցին սիրահույզ աղջիկները սասունցի,
Կյանք ուզեցին ու արև, ջահելություն անանցի,
Կայծակ եղավ սուրը քո, սերդ՝ ցոլուն արեգակ
Քո զրահե կրծքի տակ։

Բարձր պահած հրեղեն ձեռիդ սուրը հոլանի՝
Ամպրոպի պես ճայթեցիր, մտար բանակը կռվի,
Ազատության սուրը քո շողաց որպես հուր կայծակ
Դաշտերի մեջ լայնարձակ։

Եվ Մելիքը արնախում ընկավ ահեղ քո զարկից
Ինչպես վիշապն էր ընկնում ամպրոպագոչ կայծակից,
Սասնա վրա վերստին բացվեց հայոց պայծառ օր,
Փա՛ռք քեզ, Դավի՛թ զորավոր։

Գութան լծեց սասունցին, ճեղքեց սուրբ կուրծքը հողի,
Արտը ծլեց հրճվանքից, ծաղկեց այգին խաղողի,

Խաղաղության ծուխ ելավ, խնոցիները հարեցին,
Թոնիրները վառեցին։

Գա՜րուն բացվեց լեռներում, աղբյուրները լուսավետ
Կարկաչեցին, կանչեցին մրցման մտած իրար հետ,
Սարերն ելան խնդությամբ հազար ռանչպար ու հոտաղ,
Հնչեց նորից երգ ու տաղ։

***

Ահա Դավիթն է գալիս՝ հեծած նժույգն սպիտակ՝
Անմահությամբ—պսակված արև շահել կրծքի տակ,
Խոյացել է հաղթական նա դարերից հնասույզ,
Աչքերը զույգ արշալույս։



ԵՓՐԵՄ ԼՈՌԵ՛ՆՑ

ԵՓՐԵՄ ԼՈՌԵՆՑ

(1915—1941)

Եփրեմ Լոռենցը (Բալասանյան) ծնվել է Բաքվում 1915 թվ., արհեստավորի ընտանիքում։

1931 թվականին Բաքվում ավարտում է միջնակարգ կրթությունը։ Ուսման հետ զուգընթաց, ինչպես և դպրոցն ավարտելուց հետո, պատանի Եփրեմն աշխատում է Լեյտենանտ Շմիդտի անվան գործարանում, սկզբում որպես խառատի օգնական, իսկ հետագայում՝ խառատ։

Մեծ սեր ունենալով դեպի գիրն ու գրականությունը, Լոռենցը գործարանի պարտիական ու կոմերիտական կազմակերպությունների աջակցությամբ գործուղվում է Երևան՝ սովորելու նոր բացված երկամյա Գրական ստուդիայում։

Հետագա տարիներին Լոռենցը, որպես մայրենի լեզվի ու գրականության դասատու է աշխատում Խանլարի շրջանի Բանանց գյուղի դպրոցում և Ստեփանավանի Անասնաբուժական տեխնիկումում։

Պատերազմից առաջ Լոռենցն աշխատում էր Բաքվի «Կոմունիստ» թերթի խմբագրությունում, որպես բաժնի վարիչ։ Այստեղ կարճ ժամանակում նա աճում, ձևավորվում է որպես լավագույն ժուռնալիստ։

1932 թվականից Լոռենցի բանաստեղծությունները տպագրվում են Բաքվի և Երևանի թերթերում ու ամսագրերում։ Այժմ ձեռագիր վիճակում են մի քանի պոեմ, լեգենդ, էլեգիա, որոնցից շատերը զուրկ չեն գեղարվեստական արժեքից։ Դրանցից արժե հիշատակել քրդական կյանքից վերցված «Հասոն ու Ջախլեն»

պոեմը, որ գրված է ջերմ շնչով ու քրդական ժողովրդական կոլորիտով:

Լոռենցը 40 թվականին պարտիայի թեկնածու է ընդունվում և հենց այդ նույն տարում էլ ծառայության է մեկնում Կարմիր Բանակ, իսկ մի տարի անց, երբ բռնկվում է պատերազմը, նա արդեն որպես մարտիկ քաջաբար կռվում է մեր հողը ներխուժած հրոսակների դեմ:

Լոռենցն իր ստեղծագործություններում անհուն սեր ու նվիրվածություն է տածում դեպի մեր սոցիալիստական հզոր հայրենիքը, դեպի Լենինի—Ստալինի պարտիայի մեծ գործը:

Երիտասարդ բանաստեղծը չտեսավ մեր Հաղթանակի մեծ օրը, որի անխուսափելի գալուստը երգում էր նա այնքա՜ն խորագին հավատով:

Եփրեմ Լոռենցը քաջի մահով զոհվում է պատերազմի հենց առաջին տարում՝ 1941 թվականի հոկտեմբերի 1-ին, Դնեպրոպետրովսկի մարզի Միխայլովկա գյուղի համար մղվող մարտերում:

ՄՈՐ ՆԱՄԱԿԸ

Քաջի համբավ ունես, որդի,
Թերթն է գրել այդ մասին,
Մեռնե՛մ որդուս բոյ-բուսաթին,—
Հպարտությամբ ես ասի։

Ասա՛, բալա՛, էն ո՛ր մերը
Քեզ պես որդով չի խնդա,
Դու իմ կյանքն ես, դու իմ սերը,
Վառ ճրագն ես դու մեր տան։

Անսասան ես ինչպես սարը,
Եվ ամուր ես բերդի պես,
Քեզ պես ազիզ որդու մերը
Միշտ կլինի պարզերես։

Ու խնդությամբ կասի նրան
Էն մեծ մարդուն իմաստուն,
Չի տա երբեք իմ քաջ տղան
Մի թիզ հող էլ թշնամուն։

Կուռդ դալա՛ր մնա, բալա՛,
Լանջդ բարձր սարի պես,
Միշտ թշնամուն մոխի՛ր արա,
Չար թշնամուն սևերես։

Որ երդիկից էս մեր շեն տան
Ծուխը միշտ վեր բարձրանա,

Որ աշխարհը սովետական
Շեն ու պայծառ միշտ մնա։

Շքանշան ունես, որդի՛,
Մեռնեմ դրա տվողին,
Էնպե՛ս արա, որ ամարդի
Ոտ չկպչի մեր հողին։

Եղիր իգի՛թ Չապայի պես,
Մի՛ խնայիր ուժ ու կամք,
Որ լինես դու միշտ պարզերես,
Լինես քո մորը պարծանք։

Ախր էն որ, էն որ մերը
Չի պարծենա իր քաջով,
Քեզ պես ազիզ որդու տերը
Սիրտը կանի սիրո ծով։

Ու խնդությամբ կասի նրան,
Էն մեծ մարդուն իմաստուն.
Չի տա երբեք իր քաջ տղան
Մի թիզ հող էլ թշնամուն։

1940 թ. սեպտեմբեր
Բաքու

ԿԱՐՈՏ

Եկե՛ք, հավքե՛ր իմ սիրուն,
Եկե՛ք այգին այս դալար,
Գիտե՞ք, որքան եմ սիրում
Ձեզ հետ խնդալ, ձեզ հետ լալ։

Ա՜խ, իմ յարն էլ մի հավք էր,
Սրտիս էն լեն վանդակում,
Ջմրուխտաթև իմ հավքեր,
Ո՞ւմ սրտումն է, յարս ո՞ւմ։

Ոչի՛նչ, գարուն է այսօր,
Նորեն բլբուլն է երգում,
Քանի սրտոտ, քանի լոր
Բույն են դրել իմ հոգում։

Տեսե՛ք, վարդերն են բացվել
Ու ջրերն են կարկաչում,
Եկեք, չքնաղ իմ հավքեր,
Ձեր ձենին եմ ականջում։

Եկե՛ք, հավքե՛ր իմ սիրուն,
Եկե՛ք այգին այս դալար,
Գիտե՞ք, որքան եմ սիրում
Ձեզ հետ խնդալ, ձեզ հետ լալ։

ԵՐԲ ՊԱՏԵՐԱԶՄ ԼԻՆԻ…

Երբ որ հնչեն շեփորները
Եվ թմբուկները թնդան,
Մենք կնստենք մեր ձիերը
Քաջ Դավթի պես հաղթական։

Ու կարշավենք դեպ թշնամին
Մարտիկներով մեր անահ
Ու չենք թողնի մեր սահմանին
Ոչ մի ոսոխ մոտենա։

Ու չենք թողնի… երկիր իմ վառ,
Սրբազան է ամեն ինչ—
Եվ ջուրը քո, և հողն անծայր.
Եվ երկինքը մեր այս ջինջ։

Երբ որ հնչեն շեփորները
Եվ թմբուկները թնդան,
Ճեղքելով ծով ալիքներդ,
Մեր նավերը կսուրան…։

Ու կճռճեն սուր սրերը
Հեծյալները մեր արի,
Իսկ վերևից հուր կթափեն
Բազեները պանծալի։

Ու կթռչեն մարտիկները,
Պողպատակուռ դնդերը,

Կորատան մեր տանկերը,
Նռնակները, արկերը:

Երբ որ հնչեն շեփորները
Եվ կոչեն մեզ պայքարի,
Հայրենիքի անշեջ սերը
Մեր սրտերը կվառի:

Ու կվառենք նոր մի արև,
Սրտում ամբողջ աշխարհի,
Կրեմլի աստղի պես հղպամին,
Որ հավիտյան չմարի:

ԵՐԳ ԼԵ՛ՆԻ՛ՆԻ ՄԱՍԻ՛Ն

Ու եղավ որ Թախիծն իջավ
Հանց ամպած մի գորշ օր,
Շշնջացին՝ մեռա՜վ, մեռա՜վ,
Վարդն ու ծաղկունքը բոլոր։
Իջավ սև քող տիեզերքին
Ու արևը չշողաց,
Ծիլ ու ծաղկունք այդ օր լացին
Առավոտյան շաղով Թաց։

Ու տարածվեց բոթը երկրով.
Մեռավ Լենինը՝ ասին,
Չշողացին իրենց լույսով
Աստղ ու լուսին միասին,
Բաբախելուց դադար առավ
Կարծես սիրտը իմ երկրի,
Ձյան պես սառ Թախիծն իջավ
Միլիոնավոր սրտերին։

Ողջ երկիրն է սգում ահա,
Ողջ երկիրն է քարացել,
Ողջ երկիրն է կանգնել պահակ
Ու աչքերը իր Թացել,
Հառաչում են, լացում կարծես
Սուլիչները երկնասույզ,
Ժողովուրդն է լուռ քարի պես
Արձանացել մտահույզ։

Ու Մոսկվան սիրտն իմ երկրի,
Հինգ օր ու գիշեր չքնեց,
Առաջնորդի դամբարանին
Իր գլուխը խոնարհեց,
Ու դագաղի մոտով անցավ
Ժողովուրդը գետի պես,
Ու ժողովուրդը մարմնացած
Վիշտ ու մորմոք էր կարծես։

Արև՛, արև՛, դու շո՛ղ արա,
Պայծառացի՛ր, բնությո՛ւն,
Ո՞վ ասաց թե Լենինը մեռավ,
Ո՞վ ասաց թե մտավ քուն...
Նա ապրում է, նա մեզ հետ է,
Մեր պատմությունն է կերտում,
Նա հորդառատ լուսագետ է,
Նա խոյանք է խոյանքում։
Դե՛, շողացե՛ք, աստղե՛ր սիրուն,
Վարդե՛ր, անուշ բուրեցեք,
Համայնական այգիներում
Թող սոխակնե՛ր դայլայլեն.
Նա մեզ հետ է—Լենինը մեծ,
Օ՛, չի մեռնի երբեք նա,
Քանի դեռ կա արևը պերճ
Ու աստղերը կցոլան։

Նա՛, հանճարը մեր մեծ դարի
Անսահման ու իմաստուն,
Տանում է մեր բանակներին
Դեպ վերջնական հաղթություն.
Նա Լենինն է մեր այսօրվա,
Լենինի պես հանճարեղ,
Դու, մեծ Ստալին, լույսերով քո
Ողողել ես ամեն տեղ։

Ու երկիրն ես դարձրել չքնաղ,
Շեն ու դալար այգեստան,
Ուր հնչում են և երգ, և տաղ,
Երգում բլբուլն հազարան...
Արև՛, արև՛, դու շո՛ղ արա,
Պայծառացի՛ր, բնություն,
Ո՞վ ասաց թե Լենինը մեռավ,
Ո՞վ ասաց թե մտավ քուն։

1939 թ. հունվար
Բաքու

ԳԱՐՆԱՆԱՄՈՒՏ

Մանուշա՛կ, կծաղկես շուտով,
Արտույտն էլ դաշտում կերգի,
Ու կգաս դու գարնան շնչով,
Արագի՛լ, սիրո՛ւն արագիլ։

Կանաչը կփռվի դաշտում,
Ու զարթնող կապրեն ծառ ու հող,
Ամենուր դու կյանք ես փռում,
Արևի հրավառ, ոսկի շո՛ղ։

Եվ քանի ու քանի սիրուն
Կբացվեն ծաղկունքի նման.
— Դու կյանք ես, դու սեր ես,
գարո՛ւն,
Դու հույզի, ապրումի օվկիա՛ն։

24.2 1941 թ.
գ. Պոդգոյչիկի

ԳՐԻԳՈՐ ԳԱՐՈՒՆՑ

ԳՐԻԳՈՐ ԳԱՐՈՒՆՑ

(1914—1942)

Գրիգոր Գարեգինի Հակոբյանը (Գարունց) ծնվել է 1914 թվականին, Հոկտեմբերյանի շրջանի Դեչլու գյուղում։

Դեռ 12 տարեկան հասակից տեղափոխվում է Երևան և միջնակարգ կրթությունն ստանում Խ. Աբովյանի անվան դպրոցում։ Միաժամանակ հաճախում է Պրոլետարական գրողների ասոցիացիային կից գործող երկամյա Գրական ստուդիան։

Սկսած 1930 թվականից, մեր երիտասարդական մամուլում և ռեսպուբլիկական այլ թերթերում ու ամսագրերում լույս են տեսնում նրա բանաստեղծությունները։

Գարունցը երկու տարի աշխատում է Թալինի և Արտաշատի շրջանային թերթերի խմբագրություններում որպես հրահանգիչ, իսկ վերջին 5 տարին—1936-ից մինչև 1941-ը, ընդհուպ մինչև Հայրենական պատերազմը՝ Ս. Մ. Կիրովի անվան կոմբինատի բազմատիրաժ թերթում, վայելելով բանվորական ամենալայն մասսաների սերն ու համակրանքը։

32 թվականին, «Երիտ-գրողների սերիա»-ով լույս է տեսնում Գարունցի «Օրերի սիմֆոնիան» բանաստեղծությունների գիրքը, ինչպես և «Հանքերում» ու «Նվերը» մանկական գունազարդ գրքույկները։ Հեղինակի գործերում մնացել են բանաստեղծությունների ձեռագիր մեկ ժողովածու, մեկ պոեմ և մեկ կինո-սցենարիա։

Գարունցն իր բանաստեղծություններում երգում է սոցիալիզմ կառուցող մարդկանց, մեր մեծագործ պարտիային, նրա մեծ առաջնորդ Ստալինին։

Գր. Գարունցը զոհվում է 1942 թվ. մայիսի 15-ին Կերչում, հիտլերյան հորդաների դեմ մղվող բուռն և կատաղի մարտերում։

ՀԱՅՐԵ՛ՆԻՔ

Երկրէ-երկիր՝ քո քաղցրահունչ,
Փողի նման փող չտեսա,
Իմ մայր երկիր, քո հարազատ
Հողի նման հող չտեսա։

Ջա՛ն, առաջնորդ, Արև անմար,
Երջանկության օվկիանոս,
Քո մաքի բաց շողի նման,
Ոչ մի պայծառ շող չտեսա։

ԵՐՋԱՆԿՈՒԹՅԱՆ ԱՐԾԻՎԸ
(Չուվաշական հեքիաթ)

Ա.

Չուվաշական մի գյուղ կար—
Մռայլ ու անհույս,
Մարդը խեղճ էր ու աղքատ,
Խրճիթը՝ անլույս։

Ապրում էին այդ գյուղում
Տարիներ ի վեր,
Հայրը, մայրը ու նրանց
Երեք որդիներ։

Ո՞վ էր տվողն աղքատին
Կուշտ ու լի օրեր,
Ե՞րբ էր կերել նա կարգին,
Հացիկ տաք շորեր։

Միտք են անում ծնողներն
Գիշեր ու ցերեկ,—
Միտք են անում որդիներն՝
Քաջերը երեք։

Բ.

Մի հեքիաթ էր լսել նա՝
Հայրը ծերունի,

Հեքիաթն այդ հնօրյա
Հիշվում է հիմի։

Ամեն անգամ լսելիս,
Հեքիաթն այդ շքեղ,—
Երջանկություն է ասես,
Տիրել ամեն տեղ։

Հավաքվել են երեք թե
Հարուստներն ագահ,
Երջանկությունն են տարել
Լոկ իրենց համար։

Զավաշը քանի որ
Տրեխ էր հագնում,
Կյանքի բարիքից
Բաժին չէր առնում։

— Ուշացել ես,— ասում են,—
Դռները փակում,
Զավաշը տխրադեմ
Ետ է դառնում տուն։

Գ.

Երբ հիշում է հեքիաթն այդ
Հայրը ծերունի,—
Կանչում է իրեն մոտ
Իր որդիներին։

— Ճամփա կընկնեք, ասում է,—
Ու չեք դառնա ետ,
Երջանկությունը
Մինչև չբերեք։

Ու ճանապարհ են ընկնում
Տղաներն երեք,
Երջանկությունը գտնեն,
Իրենց տուն բերեն։

Դ.

— Էնդրին,—փոքրը ամենից,
Շատ գնաց թե քիչ,—
Երկու ճամփի հանդիպեց,
Ասես իրար կից։

Քայլեց Էնդրին և քիչ անց,
Երբ նայեց նա աջ,
Տեսավ այնտեղ նկարված
Մի՛ արծիվ, մի՛ արջ։

— Դեպի արծի՛վը,—ասաց
Տղան ու քայլեց,—
Ասես կրակ մի անսանձ
Նրա սիրտն այրեց։

Ե.

Գնաց, գնա՜ց մեր Էնդրին,
Հասավ մի անտառ,
Արևով էր ողողվել
Անտառն այն անծայր։

— Ո՞ւր ես գնում, ո՛վ Էնդրի,
Դեպի ո՞ւր այդպես,—
Հարցրեց արծիվը՝ արի
Հարազատի պես։

— Երջանկության եմ եկել,
Արծի՛վ փրկարար,
Կյանքը դժվար է դարձել
Ջուվաշի համար։

Մեր հայր ու մայր ունեմ ես
Մեր գյուղում թողած,
Աշխատում են օրն ի բուն,—
Բայց մնում սոված։

— Երջանկությունը, էնգրի,
Ճամփին չի ընկած,
Չես հանդիպի դու նրան,
Թե էգպես ման գաս։

Այս մահակը վերցրու քեզ,
Ետ դառ քո ճամփով,
Ճամփին դու արջ կտեսնես,
Ջարկի՛ր մահակով։

Ասավ, ավեց արծիվը
Նրան մի մահակ,
Ու խոսքերով հարազատ,
Դրեց ճանապարհ։

Զ.

Ճանապարհին հանդիպեց
Արջը սևամորթ,
Մրթմրթալով գնում էր
Նա ճանապարհով։

Արջ չէր... արքա իր փառքով
Գոռոզ ու վստահ,
Խփեց էնգրին մահակով
Արջին այդ հսկա։

Է.

Ապրեց էնգրին իր գյուղում,
Մեկ-երկու տարի,

Զգաց, որ դեռ հեռու է
Կյանքը երջանիկ:

Ու մի առավոտ
Նորից թողեց տուն,
Ասաց,—մեր կյանք փրկողն է՝
Արծիվն իմաստուն:

Ը.

— Էհ ո՞ւր, Էնդրի, բարեկամ,
Արծիվն հարցրեց,—
Ու ժպիտով հայրական
Ջերմություն փռեց:

Պատմեց Էնդրին ամեն ինչ
Գյուղից ու կյանքից.
Ինչո՞ւ է նա դժգոհ միշտ
Իր դառն վիճակից:

— Ե՛տ դառ նորից ու քայլիր,
Գնա դեպի տուն,
Կհանդիպես դու ծեր գայլին՝
Ծեր ու արնախում:

Լսեց Էնդրին ու առած
Արծվից նոր ուժ ու պատվեր՝
Շտապ դեպի տուն դառավ,
Դեպի գայլը ծեր:

Թ.

Հայացքն արնակալ
Կանգնել էր գայլը,
Զուգեց իմանալ
Էնդրիի գալը:

Սակայն ծանր մահակի
Հարվածը ուժգին՝
Գայլին արնախում
Տապալեց գետին։

Սիրեց էնգրին արծվին այն,
Սրատես, գիտուն,—
Ու հրճվելով՝ ճանապարհ
Ընկավ դեպի տուն։

Ժ.

Դեռ չէին հասել
Կյանքի բերկրանքին,
Չէին վերացել
Վամպիրները գյուղի։

Վեր կացավ էնգրին
Արծվի մոտ գնաց,
Տեսավ,—Արծվին,
Ու սիրտը խնդաց։

ԺԱ.

Լսեց Արծիվը այն սեգ,
Արծիվն լեռների,
Տվեց նրան մի մահակ
Ու ասաց էլի.

— Վերադարձիր, դու հանդամ,
Երբ աղվես տեսնես՝
Ոչնչացրու նրան դու,
Արջ ու գայլի պես։

ԺԲ.

Իր գյուղի մոտ հանդիպեց
Խորամանկ աղվեսը,

Էնդրին էլ Համբերեց,
Նրան սպանեց։

Փշրեց նրա կողերը,
Արեց ցիր ու ցան,
Փառք տալով սեգ Արծվին,
Դեպի տուն դարձավ։

Իսկ գյուղի մի լավ շենքի
Ճակատին հրե,
Արևածույլ տառերով
«Կոլխոզ» են գրել։

Աշխատում են համատեղ,
Հոգով մի, ուրախ,
Երջանկությամբ է ցողել
Կյանքը կենսուրախ։

ԺԳ.

Այսպես Էնդրին չլափինգ,
Չքավոր Զուլաշն,—
Իր բազուկով նվաճեց
Կյանքը կենսուրախ։

Սպանեց նա արջ-ցարին,
Որ կյանքն էր քանդել,
Վերջ տվեց նա բիրտ գայլին,
Կարատեց Թել-Թել...

Սպանեց նա աղվեսին
Կուլակին գյուղի,
Որը բանի խորամանկ՝
Քամում էր գյուղը.—

Ու խլելով նրանցից
Հողն ու աշխատանք,

Երջանկություն նա գտավ
Ու բախտավոր կյանք։

ԺԴ.

Իսկ չքավոր Չուվաշի
Առաջնորդողն դեպ գալիք.
Այդ Արծիվն էր լեռների,
Մեծ Արծիվը—Ստալին։

1937 թ.

ՀԱՂԹԱՆԱԿԻ ԱՇՈՒՆ

Աշունն իր գունեղ շիթն է փռել,
Ամենուր զրոհն է մեր բանակի,—
Այդ մեր ընթացքն է որպես հեղեղ
Բերել աշունն այս հաղթանակի։

Արտերին ձյուն է ասես իջել,
Որպես գարնանը ձնծաղիկներ,—
Այստեղ բամբակն է սնվել, աճել
Ձեռքերով, հոգով ու կամքով մեր։

Ու պսպղում է ահա ձյան պես,
Բամբակի արտը, անծիր, անափ,—
Այստեղ գործում են ձեռքերը մեր,
Այստեղ եռանդ է, զրոհ ու թափ։

Դարձյալ զրոհն է մեր բանակի,
Եվ ստեղծագործ ձեռքերը կան,—
Իսկ այս աշունը հաղթանակի
Մեզ բերել է նոր եռանդ ու կյանք։

ԲՈՑԱՇՈՒՆՉ ՏՐԻԲՈՒՆԸ

Սուլում է քամին, սուլում է, սուլում...
Սուրում բքաձայն, արշավում նորից,—
Քամին սևալուր, խաբեր է բերում՝
Հեռու, Հյուսիսի կայարաններից...

Հնչում է ռադիոն, հնչում բառ առ բառ
Այնքան պարզորոշ և այնքան հատու,—
Իսկ նրա շուրջը քարացած մարդիկ
Քարացել կարծես ու չեն հավատում...

Խեղդվում է ռադիոն հուզմունքից կարծես,
—Է՜խ, ծանր են շնչում ռադիո հանգույցից,
Բայց ի՞նչ...լսեցի՞ր...հայտնում են դարձյալ՝
Կիրովն է ընկել թշնամու ձեռքից:

Կիրովն է ընկել... Լսո՞ւմ եք այդ դուք,—
Դուք՝ բանվոր, զինվոր, հերոսներ երկրի...
Եվ հաղորդումը գիշերի պես մութ
Փոխվում է ահա՝ թաղման քայլերգի:

Ընկել է Կիրովը, ղեկավարն այն մեծ
Լենինգրադյան բոլշևիկների,—
Որն օրերին այս բորբ ու հողմածեծ
Իր կյանքը զո՜հեց իր ընկերներին...

Բայց կապրի դեռ նա քո երակներում,
Մեր դասակարգի սրտի մեջ, արյան,—

Նրա մահն այսօր ընդեր է հանում,
Գրոհի մղում թշնամու վրա։

Թեկուզ ապրում է, թշնամին, դեռ կա,—
Եվ արգելքներ է նետում մեր առաջ,
Բայց նրա դիմաց՝ հաղթ ու առնական՝
Մեր կամքն է ելնում հրերով վառված...

Սասնա Մհերը օ՜, դեռ դարերով,
Որպես միշտ խիզախ ու անպարտ բանակ,
Որ լարի մարտերն լենինյան հրով՝
Ու մղի նրան դեպի հաղթանակ...

Ու նորից ռադիո, ու նորից բառեր,
Հաղորդում նորից ոճիրի մասին,—
Դեմքերի վրա արցունք է սառել,
Սրտերն էլ ասես մի պահ լռեցին...

Սուլո՜ւմ է քամին, սուլո՜ւմ է... սուլո՜ւմ...
Ողբում կորուստը մեր անդառնալի,—
Քամին արցունքի խոսքերն է բերում
Հեռու հյուսիսյան կայարաններից...

ՀԱՍԿԵՐԸ

Արտերում ոսկի
Կռիվ կա բազկի,
Արտերը փռվել են անափ։
Հասկերը հասուն են,
Հունձը սկսվում է,
Արտերում պայքար է ու թափ։

Արտերում այսօր
Մեքենան հզոր
Կտրատում է ցողունը հասկի։
Նա իր ձիգ արշավով
Այնքան է արշավել
Ու առաջ անցել բազկից։

Կուրծքը բաց թողել,
Գըցել է շողերն
Հրկիզող արևն ամառվա։
Ծծում է հողը
Արևի շողը,
Որ ինքն էլ վառվի, ամրանա։

Հերկի՛ր, տրակտո՛ր,
Դաշտը ամեն օր,
Մեր հողերը լայն ու անծիր։
Ամեն մի ակոսդ
Թշնամուն մի փոս է.
Ակոսի՛ր, արշավի՛ր, անցի՛ր...

ԵՐԳ ԿԵՍՕՐԻ

Արևը ոսկի է մաղում
Արտերի, դաշտերի վրա,
Հնձանում, արտերում ու բաղում
Շողում է բերքը հուրհրան։

Արևը շարում է ասեղ,
Հասել է բերքը ամռան,
Արտերում կռիվ է ասես,
Կռիվ, բայց հողերի վրա։

Թընդում են արտերը հիմի,
Արտերը ժպտում են բերքից,
Արևը՝ հուր մի սինի՝
Կախվել է կապույտ երկնքից...

Ամենուր արև ու կեսօրն է,
Թնդում են արտերը, եռում,—
Ու նրանք ծալում են էս օրն էլ
Հաղթությամբ ու բերքով բեղուն...

ԹԵՎԱՆ ԽԱՉՅԱՆ

ԹևԱՆ ԽԱՉՅԱՆ

(1911—1945)

Խոստմնալի, երիտասարդ բանաստեղծ Թևան Կարապետի Խաչյանը ծնվել է Նախիջևանի շրջանի Ջնաբերդ գյուղում, 1911 թվին։

1944 թվականին, 33 տարեկան հասակում Հայրենական Պատերազմի դաշտում նա կյանքը զոհաբերում է Ուկրաինական Ռեսպուբլիկայի հողը գերմանական հորդաներից ազատագրելու ժամանակ։

Դեռևս պատանեկան տարիներին վաղաժամ զրկվելով հորից, Թևանը իր գոյությունը պահպանելու համար մերթ մտնում է բարեկամների խնամքի տակ, մերթ էլ բատրակություն է անում։

Զրկված ծնողական խնամքից, մեծ դժվարություններով է նա միջնակարգ կրթությունն ստանում հայրենի գյուղում։

Բախտ որոնելու համար 1932 թվականին Թևանը Բաքու է գնում. այստեղ նա մեկ տարի սևագործ բանվորություն է անում Նավթարդյունաբերության Գաղային կոմբինատում։

Բարձրագույն կրթություն ստանալու մեծ սերը սրտում, Խաչյանը գալիս է Երևան և մտնում Պետական Համալսարանի բանասիրական ֆակուլտետը, որը նա ավարտում է 1938 թվականին։ Այդ նույն տարին էլ ընդունվում է համալսարանի ասպիրանտուրան հայ գրականության գծով. միաժամանակ աշխատում է «Ավանգարդ» թերթի խմբագրությունում, որպես պատ. քարտուղար։

Հաճախում է նաև այդ տարիներին Երևանում գործող երկամյա Գրական ստուդիան։

Թ. Խաչյանը գրել սկսել է, երբ ինքը դեռևս բատրակ էր ու

շարունակել է և՛ աշակերտական, և՛ ուսանողական տարիներին։

Նա ամբողջովին սովետական կարգերի ծնունդ է, մեր պարտիայի աճեցրած սանը։ Նա իր գրվածքների համար նյութ է վերցնում մեր գյուղի ու քաղաքի մարդկանց, սոցիալիզմ կառուցող մարդկանց կյանքը։

Թ. Խաչյանը գրական աշխատանքում դեռևս ամրացած չէր, սակայն նա շատ համեստ էր, և ձգտում էր առաջադիմել, կատարելագործել իր գրիչը։ Դրա ապացույց կարող են ծառայել 39—40 թվերին տպագրված նրա մի քանի գործերը, որոնք արդեն գրված են ջերմ շնչով և համակում են ընթերցողին։

Հայպետհրատը պատանիների համար 1940 թվին լույս է ընծայել նրա «Առօրյան» գրքույկը։

Թ. Խաչյանը անդամ էր բոլշևիկների պարտիայի։

ԳՈՒԿԱՍ ԳՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Որպես հերոս մի վիթխարի, գրանիտե պատվանդանին
Նա կանգնած է արիագին, մեր պայքարի դրոշն առած,
Լուրթ աչքերը հանդիման հառած՝ նայում է նոր Երևանին,
Ուր շենքերը ճերմակափայլ, խոյանո՜ւմ են թևատարած։

Նրա դիմաց քաղաքն է նոր—Նորքից ձգված մինչև Զանգու,
Փողոցները հարթ ու ուղիղ, էլեկտրական լույսով պայծառ
Ողողվել են ուրախությամբ, ուր եռում է կյանքը արթուն,
Ուր մուրճերի զարկերը նուրբ նվագում են ու երգում հար։

Բարձրանում է արևը միշտ ու հրդեհում քաղաքը գորշ,
Որի ներքո մրգերն առատ, ուռճանում են, հասունանում,
Ու նրա հորդ ճաճանչներում բազմանում են այնքան որոշ
Աշխատանքի հույզերը հորդ ու հերոսներ պայծառանում։

Ուր շարերը ճերմակազգեստ, շրջում են լույս փողոցներում,
Սրտում պահած աշխատանքի ու նոր սիրո կիզիչ կրակ,
Նրանց սրտում իմաստության մշտաբորբոք հուրն է վառվում,
Ու գիտության գետերը հորդ հոսում են ու խնդում անհագ։

Նայում է հին բոլշևիկը, սիրտը թնդում է խնդությամբ,
Մի պահ չափում անցած ճամփան բոլշևիկյան Երևանի.
Որը կռվով նվաճեցին, հերոսական արիությամբ,
Ուր խնդությամբ փողփողում է արեգակի հուրը ոսկի։

Օ՜, Երևա՛ն բոլշևիկյան, բոլշևիկը քո պայքարի՝
Կանգնած քարե պատվանդանին հսկում է քեզ վեհ ու արթուն.
Նրա դեմքին փողփողում են ճաճանչները քո արևի,
Քո վազքի հետ նա քայլում է, քո հաղթությամբ սիրտը թնդում։

ՄԱՐՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՋԻՆ

Նատա Սեգինային

Հրացանը ուսից կախած,
Եվ ցնծությամբ արտասովոր,
Շեկ վարսերը ուսին թափած՝
Նա մեր գունդը եկավ մի օր։

Ժպիտով ջերմ ու կանացի
Նա բարևեց վաշտապետին,
Նման չքնաղ այգաբացի
Բերկրանք ու խինդ փռեց չորսդին։

Աչքերն էին վառվող աստղեր,
Ունքերը ոնց լուսնի մահիկ...
Ի՞նչն էր արդյոք այստեղ բերել
Այդ դիցուհուն չնաշխարհիկ։

«Շա՜տ է քնքուշ, շատ կհալչի,—
Ասացինք մենք իրար կամաց,—
Երբ գնդակը դեմից թռչի՝
Նա կփախչի զենքը թողած»։

Բայց մենք, ավա՜ղ, սխալվեցինք,
Չհասկացանք հոգին նրա,
Աչքերի մեջ աստղածին
Հայրենիքի կամքն էր անահ...

… Եվ մի գիշեր կռվի ելանք.
Մթնեց մեկեն երկինքը լուրթ,
Լուսնի դեմքը արծաթերանգ
Պատեց ծխով խավարամութ։

Գնդակները ճարճատեցին,
Կռվի ելան տանկերը մեր,
Սավառնակներ հռնդացին,
Դղրդացին թնդանոթներ։—

Եվ մենք անվախ, առյուծի պես
Արշավեցինք դեպի առաջ,
Ֆաշիստներին արյունակեզ
Տալով մահվան զարկ ու շառաչ։

Մեզ հետ էր այն աղջիկն արի՝
Գնդացրորդն հերոսական,
Առանց ահի ու դադարի
Կրակում էր դյուցազնակամ։

Երկնակապույտ իր աչքերից
Կայծեր էին ասես ցայտում,
Նա կռվում էր ցասմնալից,
Հայրենիքի սերը սրտում։

Մենք ասացինք ուրախ ձայնով.—
«Ա՛յ, իսկակա՛ն հերոսուհի,
Անպարտ է այն երկիրը մեծ,
Որ այսպիսի դուստրեր ունի»։

Ու ամեն օր զինավառված
Երբ գնում ենք մենք գրոհի,
Միշտ մեզ հետ է զրահ հագած
Այն կապուտաչ հերոսուհին։

Գործող Բանակ

ՄԱՐՏԻԿԻ ՕՐԱԳՐԻՑ

Փ Ա Փ Ա Գ

Բացվե՛ք, իմ հոգու ոսկեձո՛ւյլ դռներ,
Ու ճամփա տվեք իմ բոց խղճերին,
Շանթն էլ չի կարող թռիչքըս բռնել,
Թողե՛ք հողմերը խաղան իմ թևին։

Ես ուզում եմ բիլ երկինք խոյանալ,
Նայել իմ երկրին աստղերի գահից,
Երկնքի անհայտ դռները բանալ,
Որ առաջնորդը սիրով գրկի ինձ։

Ես ուզում եմ վեհ օդաչու դառնալ,
Մրրիկներն անհետ փախչեն իմ ահից,
Որ ոսոխները մեր դարանակալ,
Դողան շանթաշող իմ կուռ զրահից։

Որ ոսոխներին՝ իմ անծայր երկրի,
Ջարդ ու մահ բերեմ երկնքի ծոցից,
Կուռ սավառնակըս ամպերը ճեղքի
Ու շանթեր թափեն սրտիս հնոցից։

ԵՐԴՈՒՄ

Այսօր պատվով ընդունեցի իմ երդումը վրիժառական,
Ու տվեցի մի կուռ խոստում անծայրածիր հայրենիքիս,
Լինել դիրքում Դավթի նման՝ առյուծասիրտ ու հաղթական
Ու մահաբեր մրրիկներում կռվել կայծակ թուրը ձեռքիս։

Լինել խիզախ, հպարտ, արի, լինել զգոն ու գաղտնապահ,
Որ ոչ մի սուր իմ բոց սրտից գաղտնիքները դուրս չհանի,
Հայրենիքիս սիրո համար արհամարհել տանջանք ու մահ
Ու մշտարթուն ընկեր դառնալ մարտիկներին մեր անվանի։

Բեյրութ, 1940 թիվ

ՄՈՍԿՎԱ

Ահա կանգնած իմ հույզերի մարմարակերտ սեգ կատարին,
Սրտով զվարթ, հոգով պայծառ ու աչքերով արեգական,
Նայում եմ ես քո վարդաբեր խինդ օվկիանի խոյանքներին
Եվ իմ հոգին ձգտում է քեզ՝ դեպի քո գիրկը մայրական։

Որքա՜ն շքեղ է քո հրապույր այգաբացը ու միջօրեն,
Երկինքն ասես վարդ է թափում, արեգակը հուր ու բերկրանք.
Կարծես արծաթ վտակներով կյանքի բուրմունքը ոսկեղեն,
Տարածվում է երկրե-երկիր ու ավետում նոր սեր ու կյանք։

Հրավառ է քո երեսը, ինչպես մարդու սիրտը պայծառ,
Կարծես երկնից իջել են վար հավերժավառ աստղերը հուր,
Շողշողում են հազար գույնով քո շենքերը լեռնակատար,
Քո աչքերի, ծով աստղերի օվկիանի մեջ լուսափրփուր։

Քո գետնի տակ, երկրի սրտում, մարմարակերտ քաղաքն է նոր,
Ուր անցնում են ահեղ թափով գնացքները արծաթերիզ,
Այդ մեր կյանքի միտքն է պայծառ, առաջնորդի ձեռքը հզոր,
Որ ամեն թիզ քար ու հողի նոր տեսք ու նոր կյանք է տալիս։

Շողշողում է հոյապարիսպ ու հոյաշեն Կրեմլն իմ դեմ,
Հույզ ու երգի քաղաքը պերճ, խինդ ու բերքի օվկիանն անտակ,
Այնտեղ խրոխտ բաբախում է Ստալինի սիրտը վսեմ,
Որի մտքի ամեն շողը և լույսն է և արեգակ։

Օ՜, Մոսկվա՛, իմ մայրաքաղա՛ք, արևաբեր լույսի ակունք,
Իմ հայրենի ծով հույզերի դու անսպառ զուլալ աղբյուր,
Դու, իմ երա՛զ, դու, իմ կարո՛տ, դու, իմ բաղձա՛նք մարմարաշուք.
Ահա ես քո գիրկն եմ ընկել՝ տենչանքներով հազարաբյուր։

1938 թ. Մոսկվա

ՍԱՀՄԱՆԻ ՎՐԱ

1.

Իջավ մութը ու երկնքի աչիկները վառվեցին,
Լուսնի մահիկն հանդարտ ելավ, ժպտաց վառվող աստղերին,
Անտառ ու սար լուսնի լույսով, ծով կարոտով մտան քուն,
Ու աստղերի համբույրն իջավ իմ մեծ երկրի վարդ հոգուն։

Լույսը շողաց, քնքուշ դողաց մեր սահմանում հայրենի,
Ինչպես ծովի լազուր դեմքին արծաթ շողերն արևի,—
Ուրախ կյանքի ցողով պատած աչիկներով խինդահագ՝
Վարդն աստղերից համբույր առավ ու քուն մտավ երկնի տակ։

Նստած է նա՝ պահակ մարտիկն նևջարանում լուսավէտ,
Խորհում է լուռ, որ նամակով խոսի սիրած յարի հետ,
Բարև հղի իր Նատային՝ մեր սահմանից հեռավոր,
Եվ նա նստած Դոնի ափին սպասում է ամեն օր։

Հուր կարոտով ու վառ տենչով՝ առավ գրիչ ու թանաք
Եվ ձյունաշող ճերմակ թղթին ցողեց հույզերն անապակ,
Սրտում նորից պոռթկաց սիրո շատրվանը լուսակաթ,
Սիրած յարի սերը սրտում գրեց ուշիմ ու զվարթ։

«Բարև՛, Նատա, սիրած աղջիկ, մեր սահմանից ջինջ ու վես,
Բարև երկրիս արծիվներից՝ հաղթական ու արատես,
Ես տեղ հասա ու սահմանի լույսը շողաց իմ սրտին
Եվ այս հեռու անտառներում հիշեցի քեզ վերստին։

Ջինջ է մեր կյանքն, ինչպես պայծառ արեգակը երկնքում,
Դու լույս կյանքի մի նուր վարդ ես, որ բուրում ես իմ սրտում,
Քո թփերը չեն տարել ոչ մի խորշակ ու քամի,
Դու աճել ես երկրի ծոցում, որպես քնքուշ վարդենի։

Անուշ բույրով սնել են քեզ հասմիկ, վարդ ու մանուշակ,
Դու անարգել, արևասիրտ, բարձրացել ես երկնի տակ,
Հին աշխարհի դաժան մահի բորենիներն արնադեմ
Իրենց արնոտ ժանիքներն են սրել մեր լույս երկրի դեմ։

Դու սովորի՛ր, առո՛ւյգ եղիր, իսկ ես սահմանը հսկեմ,
Չէ՞ որ քեզ պես անթիվ լալա աճում են ջերմ ու վսեմ,
Բայց երբ հնչի ստալինյան ահեղ կոչը մեծ կռվի,
Դու էլ մի կուռ զրա՛հ հագիր, արի անդուլ գրոհի։

Բարի՛ գիշեր, սիրուն Նատա, ես գնում եմ պոստը իմ,
Քո և իմ լույս հայրենիքի սերն է ծորում իմ սրտին,
Ես իմ արյան վերջին շիթը այս ափերին կթափեմ,
Բայց չեմ թողնի ոչ մի սողուն՝ մեր սահմանը վարդադեմ։

2.

Բորիսն առավ հրացանը, ուսից կախեց ու գնաց,
Նրա առաջ տարածվում էր մեր սահմանը անդորրած,
Մտավ անտառ, թփերը մեղմ, հողմի ուժով խշշացին,
Ծաղիկների անուշ բույրով լցվեց սիրտը լուսածին։

Լուսինն արդեն բարձրացել էր, կանգնել երկնի զենիթում,
Նա էլ իր վառ աչիկներով մեր ջինջ սահմանն էր հսկում,
Աստղերն անշեջ լամպերի պես կախվել էին երկնքից,
Որ ոչ մի շունչ, ոչ մի սողուն չանցնի մեր լույս սահմանից։

Լռել էր խոր անտառը ծեր, միայն ձայնն էր զեփյուռի
Քաղցր հնչում թփերի մեջ, հանց լարերը գիթառի,
Ու սահմանին ընկեր դարձած խոր գիշերը լուսածոր՝
Գարնանային լուսնի թևով տարածվել էր սար ու ձոր։

Բորիսը լուռ նստեց կանաչ մի ծառի տակ ճյուղակոր,
Նայեց շուրջը ուշիմ ու սուր, ոչինչ չկար, ու անդորր

Ելավ տեղից, ուսին առավ հրացանը իր սիրած,
Մտավ խորքը անտառի, ուր խավար էր թանձրամած։

Հանկարծ լսեց շարժման խուլ ձայն ու ծառերի խշխշոց,
Աչքերը հուր կրակ առան, ալեկոծվեց սիրտը բոց,
Դանդաղ սողաց թփերի մեջ, դեպի ձայնը այն հատու,
Մի հաստաբուն ծառի վրա նա նշմարեց մի մարդու։

Լրտեսը տեսավ ու թռավ ծառից,
Արյուն էր կաթում նրա աչքերից,
Սողալով մտավ թփուտն անտառի,
Ուր չէին հասել շողերը լուսնի։

Ազդը մեղմ սուլեց ու անհայտացավ,
Նրա շավիղով երեք մարդ անցավ,
Բորիսը տեսավ, սիրտը փոթորկվեց;
Ու գնդակի պես շավիղը նետվեց։

Սուլելով կանչեց դասակի մարդկանց,
Իսկ ինքը մտավ թփուտը անանց։

«Կորան... ցնդեցին... չքացան մթնում»
Մտածեց նա լուռ, լարված ու տրտում
Եվ հրով լցված նռնակը ձեռքին,
Աչքերը հառեց զիգզագ կածանին
Եվ լուռ ունկնդրեց նրանց խուլ ձայնին։

«Անցեք հետևը, բռնեցեք նրան,
Ձեռքերը խլեք ու խեղդեք անձայն»—
Ասաց նեռ պետը նենգ լրտեսների
Ու լույսը դողաց արնոտ աչքերի։

Բորիսը լսեց, սիրտը բոց դարձավ,
Դանդաղ սողալով՝ թփուտը անցավ,
Մտավ արանքը երկու ծառերի
Եվ լսեց շունչը ոտնաձայների...

Երկու լրտեսներ՝ դանդաղ ու անձայն,
Թփուտի զիգզագ կածանով անցան։
Բորիսը ձեռքի նռնակը նետեց
Եվ թանձր ծուխը անտառը պատեց։

Մեկը անմռունչ ընկավ կածանում,
Մյուսն օձի պես վազում էր, սողում։
Բայց պայթեց հուժկու նռնակը կրկին,
Փախչող լրտեսը տապալվեց գետին։

Բորիսը թռավ, վազեց դեպի նա,
Տեսավ դիմացից գալիս են անահ
Հրացանները ձեռներին բռնած,
Պահակները լուռ, կիսով կորացած։

Բորիսն ուրախ, խորունկ ժպտաց, նայեց պետին դասակի,
Պետը նրա ձեռքը սեղմեց, ասաց. «Կեցցե՛ս, քաջարի,
Դու խփել ես երկու լրտես մեր սահմանի եզերքին,
Իսկ երկուսն էլ ահա անզեն՝ թպրտում են մեր ձեռքին»։

1938 թ.

ՆԻԿՈԼԱՅ ՕՍՏՐՈՎՍԿՈՒՆ

(«Ինչպես էր կոփվում պողպատը» կարդալուց հետո)

Ես կարդացի քո պայծառ երկը այրող հույզերով,
Սիրտս թնդում է ուժգին ապրումներից ծավալուն,
Այնտեղ քայլում է անպարտ մեր բանակը մշտարթուն,
Արյան, կռվի ու սիրո, հաղթանակի երգերով։

Այնտեղ կռիվ է մղում Կորչագինը հաղթական,
Զապալևի պես անհաղթ, մրրկածուփ մարտերում,
Այնտեղ, այն սև աշխարհի մահվան երգն է հառաչում,
Ու մեր բանակն է անցնում գրոհներով մարտական։

Հետո բացվում է լուսե հորիզոնը ոսկեգույն,
Շողշողում է բորբակեզ արեգակը երկնքից,
Ես զգում եմ նրա ջերմ խնդությունը քո երկից,
Եվ քո անունն է զնգում մեր աշխարհում լայնահուն։

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

Քո երգերում աղքատ մարդու սրտակեղեք մրմունջ տեսա,
Ուրախ կյանքի, սեր ու փառքի գարնանաբեր անուրջ տեսա,
Կյանքի բովում՝ վշտի ծովում դյուցազնաբար լող տվեցիր,
Վշտի ծովից դարձյալ տանող բրոնզափայլ կամուրջ տեսա։

Այնքան պայծառ, այնքան քնքուշ, այնքան վառ են երգերը քո,
Մտքի, սիրո, անուրջների ոսկե թառ են երգերը քո,
Եղևնու պես երկնասլաց, շուշանի պես անուշահոտ,
Ամառ-ձմեռ բուրումնալից ու պայծառ են երգերը քո։

Քո երգերը մեր հանդերում փոթորկալից ծափ են տալիս,
Մեր կապուտաչ Սևանի պես երգիդ ծովն է լափին տալիս,
Մեր հույզերը, անմար սերը, երազները կանչում են քեզ,
Ու մեր կյանքը քեզ բերելու ոսկե նավը ափ է տալիս։

Ամեն վայրկյան դու մեզ հետ ես ու անհետ ես՝ երգի վարպետ,
Մեր օրերի ծով հույզերի վարար գետ ես՝ խելքի վարպետ,
Երջանկաբեր դարերի հետ դու կքայլես սեգ ու հպարտ,
Մարգարտաշար ջինջ երգերի ու երկերի՝ բերքի վարպետ։

ԱՎԵՏԻՍ ԴԵՐԵՆՑ





ԱՎԵՏԻՍ ԴԵՐԵՆՑ

(1913—1942)

Ավետիս Սիմեոնի Իսրայելյանը (Դերենց) *ծնվել է 1913 թվականին, Լոռու գավառի Հախպատ գյուղում, չքավոր գյուղացու ընտանիքում։*

Երկու տարի սովորելով գյուղում, այնուհետև ուսումը շարունակում է Երևանի Կրուպսկայայի անվան կենտրոնական ցուցադրական դպրոցում, որն ավարտում է 1931 թվականին։

Դպրոցն ավարտելուց հետո նա երիտասարդական եռանդով աշխատում է մամուլի բնագավառում։ Տարբեր ժամանակներ պատասխանատու պաշտոններ է վարում՝ «Պիոներ կանչ», «Ավանգարդ», «Գրական թերթ», «Խորհրդային Հայաստան» թերթերի խմբագրություններում։

Իր ժուռնալիստական-գրական աշխատանքն սկսելով մեր առօրյայի առանձին գծերը պարզ պատկերելուց, Դերենցը քայլ առ քայլ հասունանալով՝ վեր է բարձրանում մինչև փորձված ակնարկագրի պատվավոր աստիճանին։

Ընթերցող լայն շրջանները պատերազմից առաջ մեր պարբերականներում հաճույքով կարդացել են նրա ակնարկները՝ հին ու նոր Երևանի, մեր նորակառույցների, ծաղկող երիտասարդության, պատանեկության և այլ թեմաների շուրջ։

Դերենցի ակնարկների թեման՝ դա առաջին հերթին մեր Ռեսպուբլիկայի հարստություններն ու ստորերկրյա գանձերն են, հնգամյակների նորակառույցներն ու երկրի անվանի մարդիկ՝ իրենց նոր կենցաղով, նոր հոգեբանությամբ, նոր գործերով։

Մայրենի երկրի ծաղկումն ու բարգավաճումը խինդով են

լցնում հեղինակի հոգին, այստեղից էլ՝ ավելի անմիջական ու հուզական են դառնում նրա ստեղծագործությունները։

Ինչպես ցույց է տալիս նաև սույն ժողովածվում զետեղված նրա ակնարկը, Դեբենցն ունի դիտող, սուր աչք։ Կարողանում է նկատել բնորոշը, նորը, առաջատարը։ Նկարագրությունները տեղ-տեղ համեմված են թեթև, հաճելի հումորով։ Լեզուն կիրթ է, անպաճույճ, զուսպ։

Դեբենցը եղել է մեր մամուլի բնագավառի եռանդուն, անձնվեր ու նախաձեռնող աշխատողներից։ Նա կարողանում է հմտորեն զուգակցել ժուռնալիստի առօրյա և ակնարկագրի ստեղծագործ աշխատանքը։ Ահա թե ինչու նա այնքան սիրվում և գնահատվում էր իր շրջապատում։

Հայպետհրատը, Սովետական Հայաստանի 20-ամյակի առթիվ, պատանիների համար 1940 թ. լույս է ընծայում նրա «Երկրի գույները» ակնարկաշարքը։ Աշխույժ, բարձր շնչով գրված այս գրքույկը պատանի ընթերցողին ծանոթացնում է Հայաստանի բնության ու բնական հարստությունների, նրա մարդկանց հետ։

Երիտասարդ ակնարկագիրը, որպես քաղ.աշխատող ռազմաճակատ է մեկնում Հայկական հեռագրական գործակալությունից, ուր աշխատում էր նա որպես Կառավարչի տեղակալ։

Ավետիս Դեբենցը զոհվում է 1942 թվականին Կերչում, մարտական առաջադրանքը հաջողությամբ կատարելուց հետո վերադարձի ճանապարհին՝ թշնամու ուժերի դեմ մղած անհավասար թեժ մարտում։

ԵՐԿՐԻ ԴՈՒՑՆԵՐԸ

Ակնարկ

(Հատվածներ՝ 1940 թ. Հայաստանի սովետականացման 20-ամյակի առթիվ հրատարակված համանուն գրքույկից)

ՍԱՎԱՌՆՈՒՄ ԵՆՔ...

Ներքևում երկիրը խանձում է օգոստոսյան արևը. տաք, հրաշեկ կեսօր է։ Մինչդեռ այստեղ՝ ինքնաթիռի կաբինում՝ մարդիկ նույնիսկ մրսում են։ Մի ուղևոր կիսամուշտակը գցել է ծնկներին։ Մի այլ ուղևոր վերարկուն քաշած ուսերին, գլուխը հանել է կաբինից և հրաժեշտ է տալիս հարազատ քաղաքին։ Ներքևում, փեշերը բլուրների վրա փռած, տարածվել է Երևանը։ Մենք նրան նայում ենք երեք հազար մետր բարձրությունից։ Տներն այլևս չեն զանազանվում։ Ողջ քաղաքը նմանվում է կանոնավոր քառակուսիներով մի ահագին գունավոր հատակագծի, որ բոլորվել է այգիների կանաչ պսակով։ Արևմուտքից կիսաշրջան է կատարում Զանգվի արծաթագույն ժապավենը։ Միայն հեռվում, քաղաքի ծայրին, փոքր-ինչ զատվում է արդյունաբերական արվարձանը՝ ծածկված ծխի թեթև ամպով։

Ի՜նչ գեղեցիկ է Արարատյան դաշտը։

Ես նայում եմ դեպի հեռուները։ Դիմը բացվել է մի վիթխարի համայնապատկեր՝ հսկայական դաշտը՝ Արաքսի արծաթազօծ գոտին կապած. հեռվում շողում են Մասիսների ձյունափառ գագաթները. ապա՝ քառագմբեթ Արագածը. այստեղ-այնտեղ երևում են Հայաստանի գյուղերն ու քաղաքները՝ բոլորված կանաչ մրգաստաններով, դեղնին տվող արտերով, բամբակի դաշտերով...

Դեպի Սևա՜ն։ Ժամը հարյուր քառասուն կիլոմետր արագությամբ ճախրում է ինքնաթիռը։ Ահա մենք անցնում ենք գեղատեսիլ Աղմաղանի լեռնապարը և շուտով մեր առջև բացվում է բնության մի նոր հրաշալիք—հեքիաթային Սևանը։ Վերևից նա նման է կապտագույն, ողորկ ապակու, ջինջ՝ ինչպես ամառնային երկինքը։ Այս ու այն կողմից շարժվում են նավերը՝ ակոսելով ջրերի կապույտ հայելին։

Ճախրելով ափի երկայնությամբ՝ մեր ինքնաթիռը հետզհետե մոտենում է երկրին։ Այժմ պարզ երևում են առափնյա գյուղերի տներն ու փողոցները, դաշտերում աշխատող հնձվորները, ձկնորսները, որոնք ուռկանը հանում են լճից. նույնիսկ կարելի է տեսնել ջրի տակ, ափին մոտ բուսած մաքուր կանաչը։ Մեղմ զեփյուռը խաղում է ջրերի հետ, և ալիքները մերթ վազում են առաջ, մերթ փշրվում՝ սպիտակին տալով, ասես անհամար կարապներ են լողում։

Հաճելի է այսպես երկա՜ր-երկա՜ր նայել։ Բայց ինքնաթիռի մոտորը փոխում է հունը. այդ վայրէջքի նախանշանն է։ Մի քանի րոպե ևս, նորից մի պտույտ, և ինքնաթիռն իջնում է հողին։

Մենք հրաժեշտ ենք տալիս օդաչուին և ուղևորվում դեպի ափը։

ԼԵՌՆԱՅԻՆ ԳԵՂԵՑԿՈՒՀԻՆ

Ես շատ եմ կարդացել Սևանի մասին, լսել՝ ավելի շատ։ Բայց նրա հմայքը միայն տեսնելով կարելի է զգալ։ Ասում են, թե Սևանն ամենաբարձրն է մեծ լճերի մեջ և ամենամեծը՝ բարձրերի։ Սևանը գեղեցկուհի է, կապուտաչյա լեռնային գեղեցկուհի։

Գեղամա լեռների ստորոտում, ծովի մակերևույթից 1916 մետր բարձր, փռվել է նա հսկայական տարածությամբ։ 1416 քառակուսի կիլոմետր. դա այնպիսի տարածություն է, որի մի ծայրից մինչև մյուսը մարդու աչքը հազիվ է կտրում։ Որտեղից էլ որ նայես՝ կղզուց, թե ափից, նայես արևածագին, երբ ոսկեգույն շողերը խաղում են ալիքների հետ, թե գիշերը, երբ կիսալուսինը կատրտվում է ջրերի մեջ,—Սևանն ամեն ժամանակ գեղեցիկ է։

Մի ամբողջ օր մնալով առափնյա վայրերում, մենք վայելեցինք լճի այդ գեղեցկությունները։ Այժմ ինձ ավելի հետաքրքրում

Ճր կղզին, որ բարձրանում է ջրերի մութ-կապտավուն ապակու վրա, ափից ոչ այնքան հեռու։ Բայց այնտեղ գնալու էինք առավոտյան։ Իսկ մինչ այդ, նստած մեր հյուրընկալի՝ իմ հին ծանոթ էլեկտրիկ-ինժեների բնակարանում, մենք զրուցում էինք լճի մասին։

Ես վերհիշում էի այն, ինչ երբևէ Սևանի մասին կարդացել եմ։

... Այդ մեզանից շատ դարեր առաջ էր։ Հագարացիք, հայոց հին թշնամիները, նորից հարձակվել էին մեր երկրի վրա։ Այս անգամ նրանց առաջնորդում էր Մահմեդ Երկրորդ ոստիկանը։ Ամենուրեք մահ ու ավերածություն սփռելով՝ բռնակալը հասել էր Սևան, որտեղ կղզում պահված էին հայոց գանձերը։ Այստեղ էին ապաստանել և՛ հայ իշխանուհիները։

Երեք տարի շարունակ նա պաշարեց կղզին, բայց գրավել չկարողացավ։ Քա՜նի-քա՜նի անգամ լաստեր շինեց և մեծաքանակ զորքով շրջապատեց կղզին։ Բայց հայերը քար նետող մեքենաներով ժայռեր էին գլորում լաստերի վրա և ջրասույզ անում հագարացիներին։ Շատ անգամ էլ երկաթե կարթերով քաշում էին լաստերը կղզու մոտ, նավթ ածում նրանց վրա ու վառում։ Ոստիկանը փորձեց երկարամյա պաշարումով սովամահ անել կղզու բնակիչներին.—այդ էլ չհաջողվեց։ Հույսը կտրած՝ նա ուզում էր հեռանալ, երբ արաբացի մի գիտնական, որ գտնվում էր նրա բանակում, խորհուրդ տվեց ծովակն արձակել։

— Ի՞նչպես թե ծովակն արձակել,—զարմացավ ոստիկանը։

— Սևանը գտնվում է բարձր լեռների վրա,—ասաց արաբը։— Նրանից ելնում է Հրազդան կամ Զանգու գետը։ Այդ հանգամանքը ցույց է տալիս, որ հնարավոր է Սևանը պատող ափերից մինը փլցնել և դեպի շրջակա ձորերն անցք բանալով՝ ծովակի ջուրը դատարկել։

Այդպես էլ արին։ Մի քանի շաբաթվա մեջ զինվորները փորեցին մի հսկայական ջրանցք և ծովակի ջուրը հոսեց շրջակա ձորերը։ Կղզին ափից բաժանող տարածությունը շուտով ցամաքեց։ Եվ Մահմեդի զորքն առանց դժվարության մտավ կղզի։

Երբ ես պատմեցի այս հին դեպքը, ինժեներն ասաց.

— Խելոք է եղել արաբ գիտնականը։ Սևանից դուրս եկող ջրի քանակն իրոք կարելի է ավելացնել։ Այժմ մենք հենց այդպես էլ

անում ենք։ Բայց ոչ թե լիճը ցամաքեցնելու, այլ նրա համար, որ Զանգվի վրա ավելի շատ և ավելի հզոր էլեկտրակայաններ աշխատեն։

Ինժեները հետզհետե ավելի ոգևորվում էր։ Նա խոսում էր Զանգվի վրա կառուցված էլեկտրական կայանների մասին, որոնք մտնում են, այսպես կոչված, Սևանի Կասկադի մեջ։ Նա խոսում էր Հայաստանի էլեկտրաարդյունաբերության ապագայի մասին։

Ա Ր Կ Ա Ծ

Վաղուց ես կարդացել եմ մի պատմություն, որին հաճախ է դառնում իմ միտքը։ Այսօր էլ, այցելելով Կիրովի անվան կաուչուկի գործարանը՝ Երևանում, ես նորից վերհիշեցի այն։

Ամեն ինչ սկսվեց նրանից, որ երիտասարդ մարդն ուզեց գրել։ Հանկարծ ինքնահոս գրիչը հալվեց—անհետացավ նրա ձեռքում և թանաքը լճացավ սեղանին։ Այս ի՞նչ էր, ո՞ւր գնաց գրիչը։ Երիտասարդ մարդը ոչինչ չհասկացավ։ Նա զարմացած ոտքի կանգնեց, բայց ավելի զարմացավ և սարսափեց, երբ կայծակի պես մի բան շողաց իր աչքերին, մարեց լույսը և վարկենապես անհետացան էլեկտրահաղորդ լարերը։

Նա վազեց դեպի դուռը։ Ուզեց բացել։ Բայց անհետացել էր և դռան բռնակը։ Հենց այդ միջոցին զգաց, թե ինչպես հալվում են ակնոցների շրջանակները. ապակիներն ընկան հատակին և փշրվեցին։ Նախասենյակում փնտրեց պլաշը։ Չկար։ Փնտրեց կրկնակոշիկները։ Չգտավ։ Նրանք նույնպես անհետացել էին, ինչպես ինքնահոս գրիչը, ինչպես դռան բռնակն ու ակնոցների շրջանակները։ Զարմանալի՜ արկած։ Գուցե գողացե՞լ են։ Նա վազեց դեպի հեռախոսը, որ զանգահարի։ Բայց հեռախոսը նույնպես վերացել էր։

Խարխափելով՝ դուրս եկավ փողոց։ Չկային էլեկտրահաղորդ գծերը։ Լուռ էր ռադիոն։ Սեղմված միմյանց, մթության մեջ շարվել էին էլեկտրաքարշի վագոնները։ Ոչ մի շարժում։ Նա տեսավ, թե ինչպես չքացել էին ավտոմոբիլների շիները։ Այլևս չէր լսվում գործարանների առօրյա հունդը։

Ահեղ կատաստրոֆան համակում էր ամբողջ երկիրը...

Բայց ես դեռ չեմ բացատրել, թե ինչ կատաստրոֆա էր այդ

Այդպիսի իրարանցում տեղի կունենար կյանքում, եթե մի րոպե, ասենք՝ որևէ կախարդական գավազանի ուժով, աշխարհից վերանար կաուչուկը:

Այն ամենը, ինչ ձեր աչքի առջև հենց նոր անհետացավ, պատրաստված են կամ կաուչուկից, կամ իրենց մեջ կաուչուկ են պարունակում: Ե՛վ ինքնահոս գրիչը, և՛ պլաշչը, և՛ ավտոմոբիլի շինը, և՛ էլեկտրահաղորդ լարը:

Կաուչուկը հաստատապես մտել է կենցաղի մեջ: Նա հարկավոր է արդյունաբերության շատ ճյուղերում: Նա գործադրվում է երկրի պաշտպանության համար:

Ֆրանսիացի աշխարհագիր Շարլ Լա-Կոնդամինը, որ մեզանից երկու հարյուր տարի առաջ, իր ամերիկյան ուղևորությունների ժամանակ, գտավ կաուչուկը, այդ բոլորի մասին չէր էլ մտածում: Նա միայն պատահականորեն կտրեց ծառի ճյուղը և տեսավ, թե ինչպես կտրվածքից մածուցիկ հեղուկ է թափվում: «Կաօչո՜ւ,—բացականչեց հնդիկը, որին նա հանդիպել էր ջունգլիներում՝ Ամերիկայի ճահճուտ անտառներում: Նա հասկանում էր հնդիկի լեզուն: «Կա-օչու» ասել է՝ ծառի արցունք: Ի՜նչ գեղեցիկ անուն: Հետո ֆրանսիացին փորձեց այդ «արցունքի» հատկությունները: Դա հենց առաջին կաուչուկն էր: Եվ նա հայտնի դարձավ աշխարհին:

Բայց երկար ժամանակ նրա մշակույթը չէր զարգանում: Պատմում են, որ հարյուր տարի առաջ Ռուսաստանում միայն մի զույգ կրկնակոշիկ կար՝ մի պրոֆեսորի մոտ: Եվ այնքան անմշակ կաուչուկից, որ ձմեռը ցրտից կուչ էր գալիս, փոքրանում, և պրոֆեսորը հագնելու համար նախ տաքացնում էր կրակի վրա:

Հիմա դա թվում է նույնիսկ անհավատալի: Սովետական մեր երկրում կաուչուկի արդյունաբերությունը զարգանում է յոթ մղոնանոց քայլերով: Միջին Ասիայի տափաստաններում աճում են կաուչուկատու բույսերը: Երկրի տարբեր մասերում՝ այստեղ ու այնտեղ՝ խոյացել են սինթետիկ կաուչուկի հսկա գործարաններ: Այնտեղ կաուչուկ են ստանում ամենաբազմազան նյութերից:

Երևանի գործարանը մեկն է դրանցից:

Երիտասարդ քիմիկոսը բացում է վարագույրը:

— Ահա՛ նա:

Առանձնասենյակի պատուհանից, որ գտնվում է երրորդ հար-

կում, ես նայում եմ ցած։ Իմ դեմ փռվել է վիթխարի հնոցների, էլեկտրական տրանսֆորմատորների և գործարանային կորպուսների մի բազմություն։ Մի ամբողջ քաղաք։

Դա Կիրովի անվան կաուչուկի կոմբինատն է։

Մի տասը տարի առաջ այստեղ լերկ, ամայի տարածություններ էին։ Հիմա՝ Երևանի արդյունաբերական սիրտը։

— Իջնենք ցած,— ասում է քիմիկոսը։— Գործարանում ավելի երկար կխոսենք։

Եվ մենք ուղևորվում ենք այնտեղ, ուր ծնվում է կաուչուկը։

Բարդ արտադրական պրոցեսների մի հսկա կոնվեյեր է այդ։ Անցնելով այդ կոնվեյերը, մեր լեռների հասարակ կրաքարը, Դոնբասի քարածխի հետ միասին, էլեկտրականության միջոցով վերածնվում, ստանում է բոլորովին նոր որակ՝ սովետական սինթետիկ կաուչուկը։

Մենք ուսումնասիրեցինք այդ հետաքրքրական կերպարանափոխությունը և տեսանք աշխատանքն այն մարդկանց, որոնք առաջ են շարժում գործարանի շնչալից առօրյան։

ՔԱՐԵՐԸ

Թիկնած պահավորակին՝ մենք երկար զրուցում էինք— ես և իմ ծանոթ ծերունի երկրաբանը։

— Ձեզ հետաքրքրում են Հայաստանի քարե՞րը,— ասաց նա։— Խնդրե՜մ։

Այս ասելով՝ երկրաբանը մատը մեկնեց սեղանին։ Կարմիր մահուդի վրա, շքեղ ափսեի մեջ ապակե մի սափոր էր դրված։ Մայրամուտի շողերը թափանցելով նրա ձևավոր պատերից՝ ադամանդի փայլ էին տալիս ջրին։ Քառասուն աղբյուրների կենարար ջրին, որ հեռավոր լեռներից գալիս է Երևան։

Ես մի պահ ոչինչ չհասկացա։

— Դուք սափո՞րն եք ասում։

— Այո, սափորը,— պատասխանեց նա։— Ահա ձեզ Հայաստանի ձևափոխված քարը։ Այդ սափորը պատրաստված է մեր պեմզայից։

Որ քարից զանազան պարագաներ են պատրաստում, ես այդ առաջ էլ գիտեի։ Բայց այս շքեղ սափորը մեր պեմզայի՞ց։ Դա

ինձ համար նույնպիսի նորություն էր, ինչպես և այն, որ քարածուխից օծանելիքներ են ստացվում—զանազան դուխիներ և օդեկոլոններ:

Բայց դա միակ հետաքրքրական բանը չէր, որի մասին ասաց երկրաբանն այդ երեկո: Ոգևորված նա պատմում էր Հայաստանի տուֆի և մարմարների մասին:

Վարդագույն գանձ,—այդպես է անվանել մի բանաստեղծ տուֆը: Եվ իրոք՝ տուֆը գանձ է: Նայեցեք ձեր շուրջը և դուք կտեսնեք տուֆակերտ ինչքա՜ն շենքեր: Վարդագույն, կարմիր շենքեր: Շենքեր՝ դեղնավուն, կանաչ ու սև: Տուֆը թեթև է, հեշտ տաշվող, դիմանում է ցրտին ու տաքին, հեշտությամբ չի քայքայվում: Նրա գլխավոր հանքերը գտնվում են Արթիկում: Բայց տուֆ կա Հայաստանի այլ վայրերում ևս—Երևանի մոտ, Վաղարշապատում, Կալինինոյի շրջանում:

— Իսկ դուք գիտե՞ք Իքս քարատեսակի մասին,—հարցրեց երկրաբանը:

— Ի՞քս. դա միթե՞ հանրահաշվական անհայտը չէ,—իմ հերթին հարցրի ես:

— Այո՛: Բայց կա և Իքս քարատեսակ: Նա գտնվում է Թումանյան գյուղի մոտ: Այժմ նրանից զանազան աղյուսներ են պատրաստում: Դա պարզապես տուֆի մի տեսակ է. հողից իր մեջ ընդունել է զանազան լուծույթներ: Երբ հայտնի չէր նրա ինչ լինելը, անվանեցին Իքս: Այդպես էլ մնաց անունը:

Իսկ մեր բազմագույն մարմարնե՞րը: Սաթի պես սև ու փղոսկրի պես ճերմակ մարմարները, որ տեսել եք թանգարանների տակ, մոխրագույն, բծավոր մարմարը, որ տեսել եք լվացարանների վրա, օնիքսները, որ շողում են մեր հոյաշեն տների պատերից, և էլի ու էլի տեսակներ:

Երևանում, ուսանողական արվարձանում, մի փոքրիկ, գեղեցիկ պարտեզի մեջ, պատվանդանի վրա խրոխտ կանգնել է երիտասարդ զինակիրը՝ Ղուկաս Ղուկասյանը: Նա Հայաստանի կոմերիտմիության հիմնադիրն էր: Հիմա Ղուկասը չկա. նա ընկավ մեր կյանքի արևածագին: Բայց ժողովուրդն իր հիշողության մեջ պահում է նրա հիշատակը: Ուսանողական արվարձանում, պատ-

վանդանի վրա կանգնել է նա՝ կերտված Փամբակի գրանիտից։ Դա Հայաստանի ընտիր քարերից է։ Փամբակի գրանիտից է բարձրացել և օպերայի ու բալետի թատրոնի շենքը Երևանում։ Գրանիտը մտնում է շարունակ նոր կառուցումների մեջ։

Մեր երկիրը քարի երկիր է։ Քարի, որ մի ժամանակ անեծք էր։ «Տարար՝ քարին քսեցիր»,—ասում էին, երբ ուզում էին պախարակել մի բան փչացնելու համար։ «Անունդ քարին գրվի»,—ասում էին անեծքի ժամանակ, այսինքն, թե՝ մեռնես։ Էլի անիծում էին. «Քարին պառկես»։ «Գլուխդ քարը»,—ասում էին։ Եվ էլի շատ ուրիշ անեծքներ։

Շինականը նայում էր ամեհի ժայռերին, նայում էր անհավասար ծերպերին և մրմնջում. «Անիծյա՛լ քարաստան»։ Նա տրտնջում էր, որ իր երկիրը հարթ դաշտավայր չէ, ուր արտերն ավելի շատ կլինեին, բերքը՝ շատ։

Բայց հիմա «անիծյալ քարաստանը» նոր նշանակություն է ստացել։ Պղնձաքարը պղինձ է տալիս։ Զանգեզուրում կա մոլիբդեն, որ մայրն է այլ թանկարժեք մետաղների։ Ջաջուռում արդյունահանվում է քարածուխ։ Արթիկում՝ տուֆ։ Անու հանքերը պեմզա են տալիս, որ նույնպես արժեքավոր շինանյութ է։ «Քարաստանը» տալիս է մարմար և օնիքսներ։ Պեմզայից և կվարցիտներից ծնվում է ապակին։ Գրանիտից կերտվում են հոյակապ կոթողներ։

Անդնդախոր ձորերում մռնչում են մեր լեռնային գետերը։ Քարերն ունկնդրում են նրանց և մեղմ արձագանք տալիս։ Ապա որոտում են դինամիտները և պայթում ամեհի ժայռերը։ Հետո գալիս է նոր կյանքի որմնադիրը և ձև ու կերպարանք տալիս քարերին։

ԱՆՏԱՌԻ ԳԻՇԵՐԸ

Երկաթուղու կայարանը կուչ է եկել ահագին ժայռերի տակ։ Թվում է, թե բավական է մի թեթև ցնցում, որ պոկվի այդ գորշ, վիթխարի զանգվածը, ահավոր գլորվի ցած և ոչնչացնի կայարանը։ Բայց ո՛վ գիտե, թե երբվանից նա մնում է այդպես լուռ ու անշարժ, մտախոհ ականջ դնելով գետի փշշոցին։

Այստեղ վերջանում է մեր ուղևորությունը գնացքով։ Մագլցելով ժայռի կողերին և բռնելով մացառներից, որ այնպես առատ-

յին բուսել են այստեղ, մենք բարձրանում ենք վեր։ Եվ որքան բարձրանում ենք, այնքան ահավոր է դառնում ձորը՝ Դեբեդի միալար վշշոցով։ Գետի այն ափին բարձրանում է ժայռերի մի այլ շղթա։

Անկամա միտս են գալիս բանաստեղծի տողերը.

Այն Լոռու ձորն է, ուր հանդիպակաց
Ժայռերը խորունկ ձորերը կիտած,
Դեմ ու դեմ կանգնած համառ ու հանդարտ,
Նայում են իրար հայացքով անբարբ:

Այժմ մենք գնում ենք այդ բանաստեղծի հայրենի գյուղը՝ Թումանյան, իսկ գիշերն այնտեղից կճիավարենք դեպի Մառկոր, որ հեռավոր, հնամենի անտառում ընկած մի գյուղախումբ է։

Երբ ճանապարհը փոքր ինչ հեշտանում է՝ հետզհետե հորիզոնական դիրք ընդունելով, մեր ուղեկիցներից մեկը, մի ծեր թումանյանցի, ասում է.

— Կարդացե՞լ եք Գիքորի պատմությունը. մեր Ուհաննեսի գրածը։ Հրես՝ սա Գիքորի աղբյուրն է։

Մեր դեմ, իրոք, մի լեռնային կարկաչահոս աղբյուր կար։ Այստեղ էր, որ Գիքորն ասավ. «Ապի, ծարավ եմ»։ Եվ վերջին անգամ խմեց հայրենի անտառների սառնորակ ջուրը։ Ահա և այն ծառը, որի մոտ ասավ. «Ապի, բեզարել եմ»։ Ու նստեց հանգստանալու։

Այժմ Թումանյանն իր գեղեցիկ լեռնաշխարհով և այդ լեռնաշխարհի պես գեղեցիկ իր երկերով վերստին հմայել է մեզ։ Հասնելով գյուղ, մենք ամենից առաջ այցի ենք գնում նրա հայրենական տունը։ Ծանոթանում ենք բանաստեղծի հարազատներին, զրուցում երկար։

Բայց հեռավոր ճանապարհը դեռ սպասում է մեզ։ Եվ երբ լիալուսինը հայտնվում է լեռան հետևից, մենք վերսկսում ենք ուղևորությունը։

Երեք հոգի ենք, մի երիտասարդ բանաստեղծ, շրջանային բժշկուհին և ես։ Գնում ենք ամեն մեկս մեր գործով։ Ձիերն ընթանում են հանդարտ, կողք-կողքի։

Բժշկուհին մեղմ երգում է։ Իսկ երբ լռում է՝ բանաստեղծն է

սկսում արտասանել: Ես ունկնդրում եմ նրանց և անտառին, որ սվվում է մեր շուրջը:

Հետզհետե խորանալով անտառի մեջ՝ ճանապարհը նեղանում է: Այժմ մենք գնում ենք ոչ այնքան արահետով, որքան ենթադրությամբ: Եվ հանկարծ այդ արահետն էլ անհետանում է: Այդպիսի դեպքերում ամենավստահելի ուղեցույցը ձիերն են: Մենք թողնում ենք սանձերը: Ազատություն զգալով չոր սաղարթը՝ նրանք ընթանում են հանգիստ: Բայց նրանք էլ մոլորվել են. երբեմն տանում են դեպի անհայտ վիհի եզերքը և հանկարծ նկատելով, ականջները խլշում ու կանգնում. երբեմն հասցնում են որևէ քարաժայռի ստորոտ:

Բժշկուհին անհանգստանում է:

— Ասացի, որ գիշերը չգանք: Դեռ լավ է, որ գայլեր չեն հանդիպում,— մխիթարում է նա ինքն իրեն:

Մանր արկածներով անտառում ետ ու առաջ ենք գնում: Մեկ էլ՝ դեմը փռվում է մի բացատ: Բացատներում ավելի հեշտ է կողմնորոշվել: Նայում ենք շրջապատը. ինչ-որ ձորի մեջ ենք. դեմը բարձրանում է մի ահագին ժայռ: Նայում եմ վերև ու,— ի՜նչ հրաշալիք,— տեսնում ժայռերի կատարին մի քարայծ: Կանգնել է նա՝ լուսնի շողերով ողողված և նայում է ձորին: Ընկերներս հիացել են:

— Բո՜ւմ...

Անեղ մի կրակոց ընդհատում է այդ պատկերը: Այծյամը վեր է թռչում տեղից, մեկ էլ տապալվում, գլորվում ժայռի ստորոտը:

Եւ ենք նայում ու տեսնում մի կարճահասակ հրացանավոր մարդու, որ դուրս գալով թաքստոցից՝ մոտենում է մեզ:

— Բարո՛վ,— ասում է.— ճամփորդ եք երևում, չլինի՞ մոլորվել եք:

Ընդունելով բարևը, հայտնում ենք, որ, իսկապես, մոլորվել ենք: Նա բարությամբ ժպտում է և ավելացնում.

— Բան չկա, էս քշեր ղոնաղ կմնաք ուրկան Շաքարին, առավոտը ճամփեն շանց կտամ:

Մենք համաձայնում ենք:

— Հենց էս ծառի տակն էլ նստեցեք,— ասում է նա ու ինքը հեռանում: Վերադառնում է կես ժամից հետո, ուսած այծյամի ձագ բռնելով: Իսկույն մաշկում է և խորոված սարքում:

Մենք ընդունում ենք որսորդի հյուրասիրությունը և ունկընդրում նրա պատմություններին: Իր ամբողջ կյանքը Շաքարն անց է կացրել անտառում: Խոսում է որսի մասին, անտառի ու նրա հարստությունների մասին:

— Օրհնված ա մեր անտառը,—ասում է նա,—ինչ ուզես՝ մեջն ա: Է՞նքան եղնիկներ ու կխտարներ կան: Իսկ թե քիչ բարձրանաս՝ մայրահավեր՝ ինչքան որ քեֆդ տա:

— Իսկ գազաննե՞ր:

— Ինչքան ուզես. արջ կա, որ սարի չափ. գելն ու աղվեսը լավ մորթի ունեն: Էդ գազաններով հարուստ են մանավանդ Սևանի, Բայազետի ու Ղուկասյանի շրջանները: Հե՜յ գիդի հա՜,—ավելացնում է որսկանը փոքր-ինչ ընդմիջումից հետո,—տեղ չի մնացել, որ ոտք դրած չլինեմ:

Զրույցը դեռ երկար շարունակվում էր: Խոսում էինք առհասարակ անտառի հարստությունների մասին: Փայտի և ատաղձագործական արդյունաբերության մասին:

Ես մտածում էի ծառերի մասին: Ինչո՞ւ մեզ մոտ ծառերը քիչ են: Չէ՞ որ մի ժամանակ նրանք շատ են եղել: Մի անգլիացի ճանապարհորդ, որ 17-րդ դարում այցելել է Հայաստան, գրում է, թե ինքն աշխարհում չի տեսել ավելի գեղեցիկ անտառապատ ճանապարհ, քան այն ճանապարհը, որ Ջաջուռից տանում է Ղարաքիլիսա: Այդ վայրերում այժմ ոչ միայն անտառ չկա, այլև ծառի ոչ մի հետք: Դարերի ընթացքում մարդը ոչնչացրել է այն: Այդպես էլ ուրիշ վայրերում: Բայց մեր գեղեցիկ երկիրն ինչքա՜ն ավելի գեղեցիկ կլիներ, եթե ունենար իր հին անտառները:

Եվ ահա՝ նոր մարդիկ, սովետական մարդիկ վերականգնում են անտառները:

Մտքով ես տեղափոխվում եմ Երևան և նորից տեսնում նրա մերձակա լանջերի մատաղ ծառաստանը: Ես տեսնում եմ ծառազարդվող մեր գյուղերն ու քաղաքները: Նայում եմ դեպի մոտավոր ապագան և հրաշագեղ Սևանի ափերին տեսնում թավուտ անտառը: Ու Սևանը դառնում է ավելի հրաշագեղ: Ես տեղափոխվում եմ Կոմերիտմիության անվան լճակը՝ Երևանում: Կապույտ, գեղեցիկ լճակի եզերքին դեպի հեռավոր հարթավայրերն ու բլուրներն է ձգվում ծառաստանը: Նավակները թեթև սահում են ալիքների վրա: Հարյուրավոր տղաներ ու աղջիկներ լողում, աղմկում են ջրե-

յում, նրանց զվարթ ծիծաղը համակել է օդը։ Մարդիկ ճեմում են մերձակա ծառուղիներում։ Հետո, իջնելով լճափ, հանգստանում են շքեղ պավիլիոններում։ Այժմ դա մասամբ իրականություն է, մասամբ դեռ ծրագիր։ Բայց ծրագիր, որն արդեն իրականություն է դառնում։

Մինչդեռ մենք խոսում, մտածում էինք այդ մասին, անտառի վրա դալկանում էր երկինքը։ Հակինթ աստղերը հալվում, անհետանում էին։

— Դե՜, ժամանակն ա,— ասաց ոսկան Շաքարը ու ինքն էլ ոտքի կանգնեց։— Գնացեք էսպե՛ս, չծռվեք, ճամփեն հեռու չի։

Եվ ինքն անհետացավ անտառում։

Մենք ճանապարհ ընկանք։

Արևածագը մոտ էր։



ԶԱՎԵՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Զավեն Սարգսյան

ՋԱՎԵՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ

(1914—1944)

Երիտասարդ արձակագիր Ջավեն Մեսրոպի Մարգարյանը ծնվել է 1914 թվի նոյեմբերի 2-ին, Արտաշատի շրջանի Այգեստան գյուղում։

1930 թվին նա ավարտում է Երևանի արհեստագործական դպրոցը, այդ թվականից էլ սկսվում են նրա գրական առաջին փորձերը։ Հենց սկզբից տարբեր ժանրերում դրսևորվում են երիտասարդ գրողի ընդունակությունները։ Գրում է բանաստեղծություններ, պատմվածքներ, նովելներ, որոնք տպագրվում են ռեսպուբլիկական թերթերում, ամսագրերում, ժողովածուներում։

Պատերազմից առաջ Ջ. Մարգարյանը երկար տարիներ աշխատում է Ալավերդու շրջանային թերթում։ Այստեղ նա աճում ու կոփվում է որպես բոլշևիկ ժուռնալիստ, գրում մի քանի տասնյակի հասնող պատմվածքներ ու նովելներ, որոնց մի մասը ժամանակին տպագրվում է մեր մամուլում։ Այդ պատմվածքներից առանձնապես աչքի է ընկնում Ալավերդու պղնձաշխարհին և Լոռվա բնությանն ու գյուղին նվիրած ցիկլը։ Ընթերցողի առաջ բացվում է հնոցների մոտ ու երկրի ընդերքում մաքառող, քրտնաջան մարդկանց հետաքրքրական գալերեյ. մարդիկ՝ իրենց ուրույն աշխարհով, առանձնահատուկ նիստ ու կացով. սակայն չնչված այդ անհատականության հետ միասին նրանց բոլորին ընդհանրացնողը, նրանց համար բնորոշը ջերմ ու կրքոտ հայրենասիրությունն է։

Հեղինակից առանձին գրքերով տարբեր ժամանակներ լույս են տեսել՝ «Կոոպերատիվ» և «Խանգարիչներ» պատմվածքները,

«Պղնձի երգը» բանաստեղծությունների գրքույկը և «Արջի հետքերով» ժողովածուն, որում տեղ են գտել Լոռու գյուղերում շրջագայելիս հեղինակի գրի առած ու մշակած հեքիաթները:

Իր արձակում Ջ. Մարգարյանը հասնում է ուշադրության արժանի հաջողությունների, որ բնորոշ է արդեն հասունացման ճանապարհին կանգնած հեղինակի համար: Նա կարողանում է շատ կարճ, հաճախ 2—3 էջանոց նովելում ստեղծել կուռ սյուժե, տալ միջավայրի հարուստ ու հարազատ նկարագիր, մի քանի շտրիխով՝ տիպական բնավորություն, արագորեն զարգացող գործողություններ, երբեմն էլ՝ անսպասելի, շատ հաջող ֆինալ («Հատուցում»):

Նախապատերազմյան շրջանի և մանավանդ ռազմաճակատում գրած նրա նովելները ներծծված են արդարության հաղթանակն ավետող, սովետական առաջավոր գաղափարներով: Ահա թե ինչու հեղինակի յուրաքանչյուր գրվածքի ձևը բխելով բովանդակությունից, օժանդակում է նրա ներքին էության բացահայտմանը, և հնչում է խորապես համոզիչ ու ճշմարտապատում: Այդ տեսակետից, որպես օրինակ հետաքրքրական է «Կախվածը» նովելը, ուր տրված է անձնական վիշտ ապրած, դառնությունների ու տանջանքների գնով թշնամուն հաղթող մարդու՝ լեյտենանտ Սմելովի կերպարը:

Հարձակման օրերին իր զորամասով Սմելովն անցնում է ավերված մեր մի քաղաքի հրապարակով, ուր տեսնում է տանջահար մի կնոջ դիակ կախված:

Սմելովը մոտենում է կախված կնոջը. «... Դողդոջուն ձեռքը մեկնեց, սկսեց շոյել նրա մերկ, կապույտ և ուռած երակներով ցանցավորված ոտքերը:

— Կնոջը հիշեց, ա՜խ, ինչ ցավալի է,—ցավակցանքով շշնջաց մի մարտիկ»:

Սմելովը ճանաչում է կախվածին. դա իր կինն է:

«... Հեռվում հնչեցին կարմիր մարտիկների հզոր ուռաները,—շարունակում է հեղինակը,—թշնամին դուրս էր շպրտվում քաղաքի ծայրամասերից: Սմելովը կարծես քնից արթնացավ:

«Առա՜ջ,—գոռաց նա դիմելով իր մարտիկներին: Սմելովը սլանում էր իր մարտիկների հետ, ռմբակոծում նահանջող թշնամու մարտակարգերը: Սլանում էր՝ աչքերում վրեժի անմար կրակը և լուռ արտասվում էր»:

Սմբուլը՝ դա ինքը սովետական մարդն է, թշնամու դեմ մղած դաժան մարտերի ծանր փորձություններում կոփված, անհողդողդ կամքի ու հոգու տեր մարդը։

Զ. Մարգարյանի նովելներում խտացված է սովետական մարդու բարոյական կերպարը, որի հոգեբանությունը պատերազմական տարիներին հարստացավ որակական շատ նոր հատկանիշներով։

Զ. Մարգարյանը ռազմաճակատ մեկնեց պատերազմի հենց առաջին օրը։ 1941—44 թ. թ. նա զենքով ու գրչով կռվում է Կովկասի, Ուկրաինայի ու Բելոռուսիայի հազարավոր գյուղերի ու քաղաքների ազատագրման համար։ Ճակատային թերթերում իր մարտական ընկերների սխրությունների մասին տպագրում է հարյուրի հասնող նովելներ ու ակնարկներ։ Այդ տարիներին «Սովետական Հայաստան»-ում լույս են տեսնում ճակատից նրա ուղարկած մի շարք թղթակցություններ ու ակնարկներ։

Ավագ քաղղեկ Զ. Մարգարյանը լինում է № Բանակի ռուսական թերթի գրող-ակնարկագիր, հայկական դիվիզիայի թերթի խմբագրի տեղակալ։ Նա պարգևատրվում է Կարմիր Աստղի շքանշանով, հետմահու՝ Հայրենական Պատերազմի առաջին աստիճանի շքանշանով, «Խիզախության համար» և ուրիշ մեդալներով։

Պատերազմի օրերին № Բանակի Քաղբաժնի մի խումբ աշխատողներ՝ գեներալներ, գնդապետներ, մայորներ նամակ են գրում «Սովետական Հայաստան»-ին, որում ասված է.

«Ձեր թերթի աճեցրած գրող Զավեն Մարգարյանը սկզբից ևեթ աչքի ընկավ իր համեստությամբ, ընկերասիրությամբ և անձնուրաց խիզախությամբ։ Նա որպես հրամանատար հերոսաբար մասնակցեց սովետական քաղաքների ու գյուղերի ազատագրման գործին։ Ծանր մարտերում անգամ միշտ խիզախ էր, անվհատ, հաստատակամ ու պայծառատես։ Նա շատ ու շատ անգամ է իր անձնական օրինակով ոգեշնչել մեր մարտիկներին՝ նրանց տանելով վճռական գրոհների։ Դուք կարող եք պարծենալ Զավեն Մարգարյանի անունով, որը միշտ անթառամ կմնա մեր սրտերում»։

Այդպիսին էր Լենինի—Ստալինի պարտիայի, մեր մեծ Հայրենիքի անձնվեր զավակը՝ Զավեն Մարգարյանը, որի անունը

մշտապես սիրով կհիշեն նաև սովետահայ գրականության ֆրոնտի նրա ավագ ու հասակակից ընկերները։

Հանձինս Զավեն Մարգարյանի, սովետահայ գրականությունը կորցրեց մի շնորհալի արձակագրի, որի համեստ ու արդասավոր գրիչը նո՛ր էր սկսել տալ իր առաջին հասուն պտուղները, նո՛ր էր նա սկսում հաստատուն կերպով իր տեղը նվաճել սովետահայ արձակագրության մեջ։

ԿԱԽՎԱԾԸ

Հզոր գրոհով կարմիր զորախումբը գյուղաքաղաք մտավ։ Թշնամին նահանջում էր, ծայրամասային փողոցներում թեժ մարտեր էին մղվում։

Կատաղած ֆաշիստներն իրենց զայրույթը թափել էին անմեղ կանանց, երեխաների, խաղաղ բնակիչների վրա։ Ամեն քայլափոխում երևում էին կախաղաններ, խոշտանգված, ծվատված դիակներ։

Կինո թատրոնի շենքի առաջ ընկած էին կանանց ու երեխաների տանջյալ դիակներ, իսկ քիչ հեռու, ծառից կախված ճոճվում էր շիկահեր մի կին։

Լեյտենանտ Սմելովն իր մարտիկների հետ մոտեցավ դիակներին։ Ցրտաշունչ քամին ծածանում էր շիկահեր կնոջ վարսերը, մեկ բացում նրա ուռած դեմքը, մեկ էլ ծածկում, կարծես ինքը ևս նողկալով մարդակերպ գազանների արարքներից։ Կախվածի դեմքին դրոշմված էր կրած տանջանքների կնիքը։

Լեյտենանտ Սմելովը լուռ տանջանքով դիտում էր կախվածին։ Ու ամեն անգամ, երբ քամին բացում էր նրա դեմքը, Սմելովը սեղմում էր ծնոտները, փղձուկը զսպում։

Մարտիկները տեսան, թե ինչպես նա մի քայլ ևս մոտեցավ կախվածին, դողդոջուն ձեռքը մեկնեց, սկսեց շոյել նրա մերկ, կապույտ և ուռած երակներով ցանցավորված ոտքերը։

— Կնոջը հիշեց։ Ա՜խ, ինչ ցավալի է,—շշնջաց մի մարտիկ։

Մոտեցավ ջրակալած աչքերով մի ծերունի։

— Շատ արյուն թափեցին էդ գազանները,—հառաչեց նա, ապա նայելով կախվածին, ավելացրեց.

— Ուրիշ քաղաքից էր եկել էս կինը, ուզում էր դեպի հարավ

գնալ։ Ինքս տեսա թե ոնց կախեցին խեղճին։ Կախվելուց առաջ թքեց դահիճների դեմքին, գոռաց.

— Իմ արյան համար դուք թանկ կհատուցեք։

— Այո, մենք վրեժ կլուծենք։ Ոչ միայն սրա, այլև շատերի թափած արյան վրեժը,—խուլ ցասումով արտասանեց Սմելովը։

Հեռվից հնչեցին կարմիր մարտիկների հզոր ուռաները։ Թըշնամին դուրս էր շպրտվում քաղաքի ծայրամասերից։ Սմելովը կարծես քնից արթնացավ։

— Առա՛ջ,—գոռաց նա դիմելով իր մարտիկներին։

***

Սմելովը սլանում էր իր մարտիկների հետ, գնդակոծում նահանջող թշնամու մարտակարգերը։

Սլանում էր՝ աչքերում վրեժի անմար կրակը, և լուռ արտասվում էր։ Նրա դեմքը կարծես հենց նոր անձրևից ծեծված լիներ։ Այտերին նշմարվում էին արցունքի կաթիլներ։

— Ընկե՛ր լեյտենանտ, արտասվո՞ւմ եք,—զարմանքով ու փաղաքշանքով դիմեց նրան մարտիկ Զուբովը։

Սմելովը փղձկաց.

— Ախր կախվածն իմ կինն է…

— Բայց իսկույն ևեթ նա խեղդեց իր փղձուկը և վրիժառու որոտացող ձայնով գոռաց.

— Առա՛ջ, իմ քաջե՛ր, առա՛ջ։

Գործող Բանակ

ՀԱՏՈՒՑՈՒՄ

1.

Պարտիզանական ջոկատի պետի առաջ կանգնած էր պարտիզաններից մեկը։ Նա հուզված խոսում էր.

— Ոչ մի անգամ ինձ լուրջ գործի չեք ուղարկում։ Ինչ հանձնարարություններ որ ինձ տալիս եք, երեխան էլ կկատարի։

— Չէ՛, սխալ ես, Եգոր։

Ու ջոկատի պետը հիշեցրեց նրան, թե քանի անգամ նա «լեզուներ» է բերել, հրդեհել է թշնամու մեկ զինապահեստ, կարևոր տվյալներ է հասցրել կարմիր զորամասերից մեկին։

— Է, դրանք մեզնից ո՞ր մեկը չի արել,— ու Եգորը քթի տակ փնթփնթալով քաշվեց հաստաբուն ծառի տակ։ Ապա նա վրդովված շարունակեց.

— Իսկ հիմա էլ պարապ նստիր։

— Քի՛չ խոսիր, այս գիշեր խոշոր գործողություն ունենք կատարելու,— սաստող ձայնով պատասխանեց ջոկատի պետը։

Պարտիզանները զվարթացան այդ լուրը լսելով։

***

Ջոկատի պետը հավաքեց իր խումբը՝ մարտական խնդիրը բացատրելու։ Այդ պահին հայտնվեց խմբի միակ կին անդամը՝ Սոնյան։ Նա ամբողջ երկու օր ապրել էր ֆաշիստների գրաված մի գյուղում և նրան ծանոթ էին պարտիզաններից շատերը։

— Անդրեյին կախեցին— տխուր արտասանեց նա։

Անդրեյն այդ գյուղի կոլխոզի նախագահն է։ Հոգալով, որ

նահանջի ժամանակ ամբողջ անասունները և սննդամթերքը դուրս տարվեն գյուղից, ժամանակ չէր գտել հեռանալու և թշնամին գերել էր նրան: Ֆաշիստները գիտեին, որ իրենց գերած տասնյակ մարդկանցից մեկը կոլխոզի նախագահն է, բայց թե ո՞ր մեկը, պարզել չէին կարողացել:

Ոչ ոք չէր մատնել նրան:

Բայց հարևան գյուղից եկել էր նախկին կուլակ Եփրեմը, մատնացույց արել նրան: Տասնյակ կոլխոզնիկներ թքել էին մատնիչի երեսին, բայց նա հրճվել էր, արժանանալով գերմանական սպայի գովասանքին:

— Ուրեմն Եփրեմն է մատնիչը:

— Ահա քանի անգամ է նա մատնում:

Ու պարտիզանները կրճտացրին ատամները:

Ջոկատի պետը ոլորեց բեղը: Այդ նշան էր, որ իսկույն հրաման է տալու: Չսպասելով այդ բանին, պարտիզան Վասիլը վեր թռավ տեղից, ավտոմատն աջ ձեռքում բռնած:

— Ինձ ուղարկիր, ես գիտեմ ինչ դաս կտամ էդ մատնիչին:

— Գնա. կատարման մասին կզեկուցես:

Վասիլը պոկ եկավ տեղից ու մթության ծոցն ընկավ:

— Կաց, կաց,— խուլ ձայնեց Եգորը նրա հետևից ու դարձավ ջոկատի պետին.

— Ի՞նչ կլիներ, որ ինձ ուղարկեիր: Ինձ միշտ էդպես անտես եք անում, է՜խ...

Ու էլ չխոսեց, դժգոհ առանձնացավ նորից կաղնու ծառի տակ:

Կես գիշերին մոտ ջոկատը շարժվեց դեպի այն խճուղին, որտեղով ըստ տեղեկությունների անցնելու էր օկուպանտների մի սայլաշարք սննդամթերքի ու զինամթերքի բեռներով:

Խնդիրը պարզ էր:

2.

Պարտիզան Վասիլը դուրս եկավ անտառների ծմակներից ու կատվի զգուշությամբ գյուղ մտավ: Սև ու մութ գիշերը շարունակվում էր: Նա առաջ էր սողում, մերթ ընդ մերթ կանգ առնելով, որսում ամեն շշուկ ու ձայն ու համոզվելով, որ դեռ վտանգ չկա, նորից առաջ շարժվում:

— Հենց առաջին փողոցում ոտքերի ձայն լսելով, նա սառեց տեղում: Նրա սրատես աչքերը տեսան պատերի տակով աներևույթացող մեկին:

Վտանգավոր պահ էր:

Ստվերը հենց իր մոտով անցավ: Եվս մի քանի քայլ և Վասիլը նրա ոտքի տակ կընկներ: Այդպիսի պահին միայն օկուպանտների լրտեսը—կամ հենց ինքը Եփրեմը կարող էր երևալ գյուղի փողոցներում, որպեսզի նոր զոհեր տանի ֆաշիստներին հանձնելու:

Ստվերն անհայտացավ: Վասիլն ավելի զգուշությամբ առաջացավ դեպի գյուղի խորքը: Ահա այն փողոցը, ահա և երևաց մատնիչի տան մթին զանգվածը: Խորը մի փոսում երկար հանգիստ տալով իրեն, նա բակի դռանը հասավ:

Ներս մտավ համարձակորեն:

Երեք քայլ էր ներս գնացել, երբ զույգ ոտքերով մի բանի դիպչելով, գետին փռվեց: Հազիվ կարողացավ ավտոմատը վերև պահել, որ ոչ մի բանի չդիպչի, զնգոց չլսվի: Երբ շոշափեց խանգարող անհարթ տեղը, ձեռքն իսկույն ետ քաշեց: Քաջ պարտիզանը սառը քրտինք զգաց իր մարմնի վրա: Անսպասելի էր, շատ անսպասելի:

Նրա ոտքերի տակ ընկած էր մարդկային մի մարմին: Հանկարծակիության առաջին շշմեցնող տպավորությունից ազատված, նա կռացավ, ուղիղ նայեց պառկածի դեմքին: Նայեց ու ճանաչեց:

Նրա առաջ ընկած էր մատնիչ Եփրեմի դեռ տաք դիակը: Նա զգաց նաև, թե ինչպես իր մի ձեռքն ու ծնկները թրջվեցին թանձր հեղուկով, որը լճացել էր պառկածի մոտ:

3.

Պարտիզանական ջոկատը .հաջող հարձակումից հետո երկու գերի բռնած ու մեծ ավարով իր տեղն էր վերադարձել:

Վասիլը հոգնած, քրտնած, յուրայինների մոտ հասավ այն պահին, երբ ջոկատի պետը խիստ ու սաստող դեմքով նայելով Եգորին, կրկնում էր.

— Ասա, ո՞րտեղ էիր անհետացել, ամբողջ գիշերը չերևացիր ջոկատում: Միայն հարձակման կեսին դու հասար:

Լսելով ջոկատի պետի խոսքերը, Վասիլը մեխված մնաց տեղում։ Նա հիշեց իր տեսած ստվերը, հիշեց մատնիչի դեմքը ու հանելուկը լուծված թվաց նրան։

— Այո՛,— մի անգամ էլ խստորեն կրկնեց ջոկատի պետը։

— Ես կասեմ, ընկեր պետ,— ձայնեց Վասիլն այն կողմից,— Եգորը գնացել էր Եփրեմին վերջ տալու և ավելի շուտ, քան ես։ Ճի՞շտ է, Եգոր։

Եգորը մեղավոր ժպտաց։

ՎՐԵԺ

Շուտով թշնամին գրոհի կգա։

Այդպես է լինում միշտ հրետանային տեղատարափ կրակից հետո։

Այդ ժամին է սպասում հենց ավտոմատավոր Տոկարևը։ Զորամասի դասավորման աջակողմյան թևում խնամքով քողարկված նա սպասում է հարբած ֆաշիստների երևալուն։ Առաջին իսկ կարճ հերթով ինքը գետին կտապալի պարծենկոտ սպային, իսկ հետո կհնձի մյուսներին։

— Իմ տղան ձեզանից վրեժ կլուծի,— կարծես հնչում են նրա ականջին խոշտանգված մոր խոսքերը։

Ու նա աչքի է անցկացնում նորից երեկ ստացած նամակը։

Գրել է հարևանի կինը․

— Մեր քաղաքը յոթ օր մնաց անիծյալ ֆաշիստների ձեռքին։ Ալան-թալանին, մարդասպանությանը հաշիվ չկար։ Ձեր տունն էլ ներխուժեցին, ինչ կար-չկար սրբեցին, տարան։ Մի ֆաշիստ նկատեց մորդ վզից կախված մեդալիոնը, ուզեց պոկի, մայրդ ընդդիմացավ, ասաց․

— Աչքածակներ, թողեք էս մեդալիոնն էլ մնա, ամուսնուս հիշատակն է։

Գազան մարոդյորը սվինով խոցեց մորդ, վերցրեց մեդալիոնն ու գնաց։ Տանջված մայրդ մահվան ջղաձգությունների մեջ սպիտակամազ գլուխը վեր բարձրացրեց, ատելությամբ նայեց մարդակերպ գազանի հետևից ու ասաց․

— Իմ տղան ձեզանից վրեժ կլուծի։

Ու շունչը փչեց։

Դե, Պյոտր, կատարիր մորդ պատվերը, մի խնայիր ֆաշիստ օկուպանտներին։

Տոկարևը շշնջաց.

— Խեղճ իմ մամա, որքան սիրում ու փայփայում էիր այդ մեդալիոնը։

Ու Տոկարևը հիշեց արծաթյա ձվաձև մեդալիոնը, վրան փորագրված թռչող մի աղավնի, իսկ աղավնու կտցին մի նամակ։ Ֆաշիստ մարդասպանը կուղարկի այն իր սիրուհուն և ինչպե՞ս կընկարագրի իր քաջագործությունը, որով տիրել է այդ մեդալիոնին։

***

Թշնամու հրետանին լռեց։

Դրան հետևեց հարբած ֆաշիստների պսիխիկ գրոհը։ Տասնյակ վաշտեր առաջ էին գալիս ամբողջ հասակով։

Կալի բազմալեզու որոտին ձայնակցեց և Տոկարևի ավտոմատը։ Նա հզոր հերթերով տապալեց մի քանի տասնյակ օկուպանտների։ Հանկարծ ձախ թևի դաստակում սուր ցավ զգաց։ Նետեց իրեն դեպի փոսի խորքը, սկսեց վերքն արագ կապել։

Այդ պահին ձախ թևում իր առյուծ ընկերներն ահեղ հակագրոհի անցան։ Բայց զիմացից, դարան մտած իրենց կիսակործան տանկի հետևում, կրակ բացեց նրանց վրա ֆաշիստ ավտոմատավորը։

Ու Տոկարևր սրտի կսկիծով տեսավ, թե ինչպես իր ընկերներից երկու-երեքը հողի ընկան։

Էլ վերքը կապելու ժամանակ չկար։

Նա սկսեց առաջ սողալ։

Որոշել էր թևանցել, ֆաշիստին դուրս բերել գրաված հարմար դիրքից։ Սողում, առաջ էր անցնում նա և արյունը ներկում էր նրա անցած ուղին։

Անցավ փոքր մի թումբ։ Այս էր դժվար տեղը, մի փոքր անզգուշություն և ֆաշիստը կարող էր նկատել։ Ուժերն սպառվում են, շնչում է արագ-արագ, բայց առա՜ջ, առա՜ջ։ Ֆաշիստ ավտոմատավորը շարունակում է կրակել կարմիր մարտիկների վրա։

Տոկարևը խորը շունչ քաշեց։

Ցանկացած բնագծին հասել էր արդեն։ Նա տեսնում է արդեն ֆաշիստի կատաղի դեմքը, նրա աչքերի չար փայլը։ Մի երկու վայրկյան և հզոր լեզվով խոսեց Տոկարևի ավտոմատը։

Փաշիստը թպրտաց, հանգավ։

Տոկարևը առաջ սողաց։ Պետք էր ավար վերցնել թշնամու ավտոմատը։

— Արգելքը վերացված է,—ցնծագին ճչաց նա, վերցնելով հակառակորդի զենքը։ Այդ պահին յուրայինները ձախ թևից ուժեղացրին գրոհը և որոտընդոստ կանչերով սկսեցին հետապնդել խուճապով նահանջող թշնամուն։

***

Նա վերջին անգամ նողկանքով նայեց ֆաշիստի դեմքին։

Վերջինիս գրպանից կախ ընկած արտասովոր կերպով առփայլում էր մի առարկա։

Կռացավ, նայեց։

Նա ճանաչեց իր մոր մեդալիոնը, վրան թռչող մի աղավնի փորագրած, իսկ աղավնու կտցին՝ մի նամակ։

— Իմ մորն սպանողն է,—շշնջացին նրա շրթունքները։

Եվ. բազմապատկված վրեժի ցասումը հոգում, Տոկարևն առաջ սլացավ խուճապահար նահանջող թշնամու հետևից։

ՔԱՂԼԵԿԻ ՁԻ՛Ն

(Նովել)

1.

Քաղլեկ Բալայանը մռայլված վեր կացավ անկողնուց։ Երազում մի քանի անգամ իր նժույգին էր տեսել՝ իր սիրելի նժույգին, որին այսօր պիտի տեսներ գուցե վերջին անգամ։

Այսօր պիտի վաճառվի իր ձին։

Ինչո՞ւ։

Նա հիշեց կռվի անմոռանալի օրերը։ Հիշեց այն վճռական ճակատամարտը, երբ լեհական սպիտակ զինվորները ծանր ջարդ կրեցին։ Ինքը, փրփրաբաշ իր նժույգին նստած, վաշտի հրամանատարի հետ միասին առաջ անցավ ու գրոհի տարավ մարտիկներին։ Գիշերվա մթնում որոտացին խանդավառ կանչերը.

— Առա՜ջ, հանուն Ստալինի։

Ու շողացին սրերը։

Գրոհի պահին, երբ ինքն ահագնաթափ մի շարժումով շողացող սուրը վրա էր բերում, իր ձիու հետ գետին տապալվեց։ Չզգաց՝ ի՞նքն էր վիրավորվել, թե՞ ձին։ Շարժեց իր անդամները, վիրավորված չէր, միայն ոտքն էր մնացել ձիու տակ ու սաստիկ ցավում էր։ Իսկ ձին վիրավորված էր մեջքից։ Սուր ցավը տանջում էր խեղճ անասունին, ջղաձգվում էր նա, խղճալի հայացքով տիրոջը նայում։

Ինքը ուրիշ ձիով սլացավ առաջ ու շարունակեց վաշտը գրոհի տանել նահանջող թշնամու վրա։

2.

Լավացավ ձիու վերքը։

Բայց նստելու համար այլևս պետքական չէր։

— Երկար վազքի չի դիմանա,— եզրակացրեց գնդի ձիաբույժը։

Եվ ահա առանձնացված են տասնյակ նման ձիեր։

Եկել են կոլխոզների ներկայացուցիչները գնելու այդ ձիերը՝ դաշտային աշխատանքների համար։

Իր ձին վաճառվեց։

Գնողը՝ կոլխոզից եկած մի աշխույժ ծերուկ, նրա սանձից ձգելով գոհ սրտով սկսեց հեռանալ։

Նայում էր քաղղեկը հեռացող ծերուկին ու ձիուն և հանկարծ թվաց նրան, թե սվինով իր սիրտը խոցեցին։ Նա արագ քայլերով ծերունուն հասավ ու համարյա գոռաց նրա վրա.

— Ո՞ւր ես տանում։

— Կոլխոզ... չէ՞ որ գնեցի։

— Ո՞ր կոլխոզը։

Ծերունին ասեց կոլխոզի անունը, ձգեց սանձից, որ առաջ գնա։ Նժույգն ընդդիմացավ։ Մոտեցավ քաղղեկը, շոյեց նրա բաշը, փղձուկը հազիվ զսպելով՝ արագ քայլերով հեռացավ։

Դրանից հետո ամեն անգամ, երբ ձի էր նստում, երբ ռազմական քայլերի հաղթական հնչյուններն էր լսում, հիշում էր իր նժույգին։ Նժույգ, որ քայլերգը լսելիս հանգիստ կանգնել չէր կարողանում, սմբակներով գետինն էր դոփում, վրնջում։ Նվագի տակ այնպես համաչափ, այնպես գեղեցիկ ու հպարտ էր քայլում։

3.

Երկօրյա զորաշարժից միավորումը կանոնավոր շարքերով իր տեղն էր վերադառնում։ Անցնում էին գեղեցիկ դաշտերի միջով։ Կոլխոզնիկներն սկսել էին խոտհունձը։ Քաղած խոտերի հոտը, ծաղիկների ախորժելի բույրն ու արտերի սոսափյունը հասնում էր մարտիկներին։ Ճանապարհի մոտ, անափ խոտհարքներում աշխատում էին ժրաջան մարդիկ։

Միավորումը, թնդացող քայլերգի հնչյունների տակ, անցնում էր նրանց մոտով։ Մարդիկ մի պահ դադար առնելով, ճերմակ

թաշկինակները շարժելով ողջույններ էին ուղարկում մարտիկներին: Այդ ժամանակ հանկարծ բոլորի ուշադրությունը գրավեց արտասովոր մի տեսարան:

Խոտով բեռնված ձիերից մեկը, որ գլուխը կախ արածում էր, հանկարծ խիստ ուժեղ ու երկար վրնջաց և տեղից պոկ եկավ: Ձին չափ ընկած սլանում էր դեպի հեծելազորը:

— Բռնեցե՛ք, փախա՛վ:

— Չլինի՞ թե կատաղեց,—իրարանցումն ընկավ կոլխոզնիկների մեջ:

Մինչ նրանցից մի քանիսը վազում էին ձիու հետևից, ձին մի անգամ ուժեղ ցնցեց իրեն: Քանդվեցին կապերը, խոտը գետին փռվեց: Ձին թեթևացավ, ավելի արագ սլացավ ու իսկույն հասավ շարժվող զորքին:

Հասավ և սկսեց վրնջալով պտույտներ գործել շարքերի շուրջը, հետո մի շարասյան կողքից սկսեց տակտով առաջ գնալ, գլուխը բարձր պահած, հպարտ ու գեղեցիկ:

Մարտիկներից շատերը տարակուսած մնացին:

— Իմ ձին է, Սևուկը,—լսվեց կարոտալի մի ձայն առաջին շարքերից:

Այդ՝ քաղղեկի ձայնն էր:

ԳՐԻԳՈՐ ԿՈՒԼՕՂԼՅԱՆ



ԳՐԻԳՈՐ ԿՈՒԼՕՂԼՅԱՆ

(1904—1942)

Գրիգոր Հովհաննեսի Կուլօղլյանը ծնվել է Թյուրքիայում, Վան քաղաքում, 1904 թվականին, ուսուցչի ընտանիքում։

1915 թվականին իր ծնողների հետ միասին նա գաղթում է Կովկաս։ Շուտով մահանում է հայրը, իսկ զրկանքներով շրջապատված-մայրը պատանի Գրիգորին հանձնում է ամերիկյան որբանոց։

Գր. Կուլօղլյանը միջնակարգ կրթությունն ստանում է Երևանի Մյասնիկյանի անվան միջնակարգ դպրոցում, իսկ 1931 թվ. ավարտում է Երևանի Պետական Համալսարանի պատմա-տնտեսագիտական ֆակուլտետը։

Երկար տարիներ եղել է կոմերիտմիության շարքերում, իսկ 1937 թվականից՝ ՀամԿ(բ)Պ անդամ էր։

Գր. Կուլօղլյանը գրական-ժուռնալիստական աշխատանքին զուգահեռ երկար տարիներ դասախոսություններ է կարդում Բուհերում, Երևանի Պետական Համալսարանում։ 1938 թվ. նա ստանում է դիալեկտիկական-պատմական մատերիալիզմի ասպիրանտների գծով դոցենտի կոչում։

Կուլօղլյանի հոդվածները հագեցված են պարտիական սկըզբունքայնության ոգով։ Նա ժամանակին թե՛ իր բանավոր ելույթներում ու զեկուցումներում և թե՛ տպագրական խոսքի միջոցով անհաշտ պայքար է մղում սովետահայ գրականությունը սողոսկած ժողովրդի թշնամիների դեմ՝ հանուն գաղափարապես բարձր ու անաղարտ մարքսիստական, բոլշևիկյան գրաքննադատության։

Հայաստանի կենտրոնական թերթերում, գրական օրգաններում, տպագրված են Կուլօղլյանի հոդվածները՝ կուլտուրայի,

մարքսիստական գրաքննադատության և կոնկրետ ստեղծագործությունների շուրջ:

Նրա գրաքննադատական տպագրված հոդվածներից են՝ «Ընդդեմ. բուրժուական կոնտրաբանդի գրականության դասավանդման մեջ», «Պատվի համար»-ը Սունդուկյանի անվան Պետթատրոնում» («Գրական թերթ», 40 թ.), Սիրասի «Զգրված օրենք» վեպի մասին («Սովետական գրականություն», 1940 թ.), Արմ. Թամազյանի «Հայացքները» պատմվածքների գրքույկը («Գր. Դիրքերում», 1933 թիվ) և այլն:

Երևանի Պետական համալսարանը 1939 թվին Գր. Կույօղլյանին երկու տարով գործուղում է Մոսկվա՝ նյութեր հավաքելու և գրելու 60-ական թվականների հայ մեծ դեմոկրատ-ռևոլյուցիոներ Միքայել Նալբանդյանի մասին. դա լինելու էր նրա ֆիլոլոգիական գիտությունների թեկնածուական դիսերտացիան:

Մոտ երկու տարվա համառ ու քրտնաջան աշխատանքից հետո նա կուտակել էր Մ. Նալբանդյանի կյանքին, գործունեությանն ու աշխարհայացքին նվիրված աշխատության հարուստ նյութեր ու փաստաթղթեր: Այդ աշխատությունից նոր էր մի գլուխ տպագրվել «Լիտերատուրնայա գազետա» թերթում, երբ վրա հասավ պատերազմը: Այդպիսով, երիտասարդ քննադատը բախտ չունեցավ հրապարակված տեսնելու իր գրչի ավելի հասուն շրջանի պտուղները: Իսկ Մոսկվայում նրա անցկացրած այդ ժամանակը, այո, խիստ բեղմնավոր է լինում: Գրում է արժեքավոր գրաքննադատական հոդվածների մի ամբողջ շարք. «Միքայել Նալբանդյան» դիսերտացիայից բացի, հիշենք Հովհ. Թումանյանի «Անուշը» (Դերժավինի թարգմանությամբ) քննական հոդվածը: Ամեն կերպ ջատագովելով ռուս բանաստեղծ-թարգմանչի նախաձեռնությունը, քննադատը միաժամանակ մանրակրկիտությամբ և համոզկերությամբ ապացուցում է թույլ տրված առանձին աղավաղումները, սխալները և ոչ հարազատ թարգմանությունները:

Գր. Կույօղլյանը մի առանձին քննադատություն էլ գրում է Ստ. Զորյանի «Մի կյանքի պատմություն» վեպի՝ «Դետիզդատ»-ի 1941 թվի ռուսերեն հրատարակության առթիվ: Առանձին պատկառանքով ու ջերմագին սիրով նա մեկ առ մեկ վեր հանելով մեր անվանի վիպասանի այդ աշխատության արժանիքները, այն ի սրտե հանձնարարում է ռուս ընթերցող հասարակության ուշադրությանը:

Մեր հիշած վերջին երեք աշխատությունները գրվել են ռուսերեն լեզվով, ռուսերեն հրատարակությունների համար: Հեղինակի թողած թղթերի մեջ անտիպ հոդվածներ են գտնվել՝ նվիրված Բելինսկուն, «Հայոց լեզվի մասին» և այլն:

Գր. Կուլօղլյանը պատերազմի հենց սկզբից մեկնում է գործող բանակ: Մասնակցում է Մոսկվայի մատույցներում հիտլերյան բանակի ջախջախմանը: Որպես քաղ-աշխատող, նա բոլշևիկյան ճշմարտացի խոսքով իր զինվորների մեջ ամրապնդում է հավատը սովետական երկրի հաղթանակի նկատմամբ, մերթ էլ զենքը ձեռքին նրանց մարտի տանում հանուն մեր սրբազան Հայրենիքի, մայր Մոսկվայի համար: Այդ են վկայում կենդանի մնացած նրա ճակատային ընկերների պատմածները և ապագայի նկատմամբ վառ հույսերով ու ձգտումներով լի մարտի դաշտից գրած նրա նամակները:

Գր. Կուլօղլյանը զոհվում է 1942 թվին, Տուլայի տակ, գերմանա-ֆաշիստական բանակի դեմ ծավալված կատաղի ճակատամարտերում:

Հանձինս Գր. Կուլօղլյանի, սովետահայ գրականագիտությունը կորցրեց մարքս-լենինյան առաջավոր գաղափարներով զինված, միշտ սկզբունքային ու անզիջում, անսպառ եռանդով ու մեծ հեռանկարներով օժտված մի հասուն քննադատի:

ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

— Ազատությո՞ւն,—գոչեցի,—
Թող որոտա իմ գլխին
Փայլակ, կայծակ, հուր, երկաթ,
Թող դավ դնե թշնամին,
Ես մինչ ի մահ, կախաղան,
Մինչև անարգ մահու սյուն,
Պիտի գոռամ, պիտ կրկնեմ
Անդադար—ազատություն:

Հայ մեծ գրող-ռևոլյուցիոներ Միքայել Նալբանդյանը պատկանում է վաթսունականների նշանավոր կաճառին:

Միքայել Նալբանդյանը ծնվել է 1829 թվականի նոյեմբերի 26-ին Դոնի Նախիջևան քաղաքում, զարբնի ընտանիքում: Մինչև 1846 թվականը Նալբանդյանը սովորում էր հայ նշանավոր բանաստեղծ Ռափայել Պատկանյանի հոր՝ Գաբրիել Պատկանյանի դպրոցում: Փայլուն հիշողությամբ, շնորհալի և աշխատասեր պատանի Միքայելը աչքի էր ընկնում աշակերտների մեջ: Տասնվեց տարեկան հասակում նա արդեն գրաբարի, հայ գրականության և պատմության գիտակ էր:

Գաբրիել Պատկանյանի մոտ նա սովորում էր ոչ միայն հայագիտություն, այլ նաև քննադատական վերաբերմունք ունենալ հանդեպ միջնադարյան կարգերը և հոգևորականությունը:

Պատկանյանը ժողովրդական դպրոցի կողմնակից էր, որի կրքոտ քարոզիչը հայ իրականության մեջ հանդիսանում էր հայ գրականության և գրական լեզվի հիմնադիրը՝ անմահ Խաչատուր Աբովյանը:

Կաթողիկոս Ներսես Աշտարակեցին նկատելով, որ Պատկա-

նյանի և նրա դպրոցի հեղինակությունը (վտանգավոր եկեղեցու իշխանության համար՝ Նախիջևանում) ավելի ու ավելի է աճում, առաջարկեց Պատկանյանին փակել դպրոցը և փոխադրվել Թիֆլիս: Սրանով կաթողիկոսը մտածում էր նաև ապահովել հնարավորություն քաղաքագլուխ Խալիպովի համար՝ հասարակական ու եկեղեցական գործերն ու ֆինանսները անկոնտրոլ կերպով տնօրինելու:

Պատկանյանը հարկադրված էր ենթարկվել: Նա մեկնեց, բայց Նախիջևանում մնաց նրա աշակերտ Նալբանդյանը: 1846 թվականից սկսած, Նալբանդյանը ակտիվ մասնակցում է հայրենի քաղաքի հասարակական գործերին, և հետագայում, ուր էլ որ գտնվելիս լիներ,—Մոսկվայում, արտասահմանում, թե Պետրոպավլովսկի ամրոցում, նա միշտ էլ սերտ կերպով կապված էր իր հարազատ քաղաքի առաջավոր, պրոգրեսիվ մասի հետ:

Պատկանյանի դպրոցը փակվելուց հետո Նալբանդյանը պարտավոր էր հաճախել կաթողիկոսի հովանավորյալ քահանա Եգենյանի դպրոցը: Առաջին իսկ օրերից Միքայելը ատեց տգետ և խավարամիտ Եգենյանին: Իր բարեկամներին գրած նամակներում և զրույցների ժամանակ նա քննադատում և կծու ծաղրի է ենթարկում իր նոր ուսուցչին: Ի վերջո նա իսպառ հրաժարվում է նրա դպրոցը հաճախելուց: Դպրի հոգևոր կոչում ունեցող Նալբանդյանի կողմից դա չլսված հանդգնություն էր կաթողիկոսի նկատմամբ: Սրանից էլ սկսվեց ճորտատիրական ինքնակալության դաշնակից, հայկական հոգևոր բռնապետ Ներսես Աշտարակեցու և ապագա ռևոլյուցիոներ-դեմոկրատ, ամեն տեսակ բռնության ու ճնշման թշնամի Միքայել Նալբանդյանի միջև սուր թշնամանքը:

Դրությունը սրվում և բարդանում էր նաև հետևյալ հանգամանքով: Հազար ութ հարյուր քառասունվեց թվականին Նալբանդյանը ծառայության մտավ Թեմական առաջնորդի գրասենյակը: Ամեն օր նա այստեղ տեսնում էր բազմաթիվ այցելուների, որոնք գրասենյակ էին դիմում զանազան խնդիրներով ու բողոքներով: Նալբանդյանը ակնառու կերպով տեսնում էր, թե ինչպես հայ հարուստները—խոշոր հողատերերը, առևտրականները դաշն կնքած հայ հոգևորականության և տեղական ռուսական իշխանությունների հետ, կեղեքում են քաղաքի և գյուղի հայ աշխատավորներին: Մանավանդ, նա այստեղ ավելի խորը շոշափեց քաղաքա-

գլուխ Խալիպովի և կաթողիկոս Ներսեսի միջև եղած շահադիտական կեղտոտ կապերը։ Նալբանդյանը համոզում է թեմական առաջնորդ եպիսկոպոսին, որ նա ստիպի Խալիպովին հաշվետու լինել քաղաքային հասարակության առաջ։ Սկզբում Խալիպովը կտրականապես հրաժարվում էր, հայտարարելով, որ նա հաշվետու է միայն կաթողիկոսի առաջ։ Բայց Նալբանդյանն այնուհանդերձ հարկադրում է նրան հաշվետվություն տալ։ Պարզվում է, որ երկար ժամանակի ընթացքում ինքնագլուխ կերպով տնօրինելով համայնքական միջոցները, յուրացրել է հարյուր հազարավոր ռուբլի, իսկ այժմ, հենվելով կաթողիկոսի վրա, հրաժարվում է ընդունել և վերադարձնել այդ «պարտքերը»։

Նալբանդյանը խոշոր կամպանիա անցկացրեց ընդդեմ Խալիպովի և նրա պաշտպանների։ Նա վեր հանեց Նախիջևանի հասարակական կյանքի բոլոր ցավոտ հարցերը։ Նալբանդյանի հակառակորդները, ի պատասխան, նրա մասին մատնություններ էին գրում կաթողիկոսին, մեղադրելով նրան իբր թե կատարած հոգևոր-քաղաքական բնույթի զանազան հանցանքների մեջ։

Պայքարը շարունակվում էր երկար տարիներ։ Վտանգավոր մերկացումից ու ժողովրդական դժգոհություն հարուցումից ազատվելու համար Ներսես կաթողիկոսը որոշեց խիստ դատաստան տեսնել Նալբանդյանի հետ։ Շատ մոտ հարաբերությունների մեջ լինելով կովկասյան փոխարքա իշխան Վորոնցովի հետ, Ներսես կաթողիկոսը գրում է վերջինիս, խնդրելով, որ նա կարգադրի ձերբակալել Նալբանդյանին և հսկողության տակ ուղարկել Էջմիածին (կաթողիկոսի աթոռանիստը), նրա նկատմամբ հոգևոր դատ կազմակերպելու համար։ Այսպիսով Նալբանդյանին ակներև կերպով սպառնում էր ինկվիզիցիայի դատաստանը։ Բայց նա մի օր առաջ իմանում է պատրաստվող ձերբակալության մասին և հասցնում է թաքնվել։

Ինտրիգներից ու հալածանքներից ազատվելու և սովորելու իր վաղեմի ցանկությունը կատարելու համար 1853 թվին Նալբանդյանը գալիս է Մոսկվա։ Այստեղ նրա կյանքն ու գործունեությունը մտնում է մի նոր էտապ։ Նա ծանոթանում է Լազարյան ճեմարանի պրոֆեսոր, նշանավոր հայ լուսավորիչ, հայկական նոր գրական լեզվի և նոր գրականության կողմնակից և պաշտպան Ստեփաննոս Նազարյանի հետ։ Պետերբուրգի համալսարանում

քննություն տալով և ստանալով հայոց լեզվի ուսուցչի կոչում, Նալբանդյանը աշխատանքի է մտնում Մոսկվայի Լազարյան ճեմարանում, որպես հայոց լեզվի կրտսեր ուսուցիչ:

Ճեմարանում պայքար է բռնկվում նոր դպրոցի, նոր լեզվի և գրականության կողմնակիցների և հակառակորդների միջև:

Այդ պայքարն արտացոլում էր հայկական ռեակցիոն հոգևորականության շահերի ընդհարումը, հասարակության պրոգրեսիվ ուժերի շահերի, ժողովրդի շահերի հետ: Նալբանդյանը նոր դպրոցի, նոր լեզվի և գրականության կողմնակից էր: Հազիվ էր նա նոր ձևով սկսել դասավանդել, երբ 1854 թվի հունվարին նրան ձերբակալեց մոսկովյան պոլիցիան: Բանից պարզվում է, որ նրա թշնամիները հայտնել էին տեղական իշխանություններին Կովկասի փոխարքա իշխան Վորոնցովի կարգադրությունը Նալբանդյանին ձերբակալելու մասին: Նրան ձերբակալեցին, որպեսզի հսկողության ներքո ուղարկեն Էջմիածին, հոգևոր դատի տալու համար: Կաթողիկոս Ներսես Աշտարակեցու գրագրությունից երևում է, որ նա երկար ժամանակ ձգտում էր ոչնչացնել Նալբանդյանին, նրան Սիբիր՝ երկարատև աքսորի ուղարկելով: Բայց բարեբախտաբար Նալբանդյանն այդ ժամանակ արդեն զրկված էր հոգևոր կոչումից և հետևաբար, ըստ օրենքի, նա կաթողիկոսի և հոգևոր դատի իշխանությունից դուրս էր: Շուտով, Ստեփաննոս Նազարյանի երաշխավորությամբ, Նալբանդյանին ազատում են կալանքից, բայց այլևս թույլ չեն տալիս ճեմարանում դասավանդելու:

Նալբանդյանը ձգտում է սովորելու: Բայց միջնակարգ կրթություն ստանալու մասին առանց պաշտոնական փաստաթղթերի և առանց կենսամիջոցների, նա իհարկե, չէր կարող համալսարան մտնել: Մեծ դժվարությամբ նրան հաջողվում է Մոսկվայի համալսարանի բժշկական ֆակուլտետի ազատ ունկնդիր գրվել: Այստեղ նա շուտով մերձենում է ուսանողության առաջադեմ շրջանների հետ, որը խոշոր ազդեցություն է ունենում նրա հասարակական-քաղաքական համակրությունների և հայացքների վրա: Բացի բնական գիտություններից, Նալբանդյանը ջանասիրաբար ուսումնասիրում է ռուսերենն ու ֆրանսերենը և ռուս գրականությունը — Գրիբոեդովին, Պուշկինին, Գոգոլին, Բելինսկուն, Գերցենին, Չերնիշևսկուն, Դոբրոլյուբովին, նրա բարերար հեղափոխականացնող ազդեցության տակ սկսում է վերանայել հայ ժողովրդի և նրա

գրականության անցյալն ու ներկան։ Նրա եզրակացությունները Հայաստանի անցյալի և ներկայի մասին խիստ և անմխիթարական էին, բայց նա հաստատ հույս էր արտահայտում մոտիկ ապագայի, այն ժամանակի վերաբերյալ, երբ ժողովրդի միջից ելած առաջավոր մարդիկ հողմացրիվ կանեն հոգևորականների միջից հետադեմ խավարամոլներին ու տգետներին և կհասնեն մասսաների լայն լուսավորությանը, կստեղծեն իրենց սեփական իսկական հասարակական կյանքն ու գրականությունը։

Նալբանդյանի կողմից կուլտուրա և գիտելիքներ կուտակելու և նրա աշխարհայացքի ձևավորման ժամանակաշրջանը երջանիկ կերպով համընկավ ողջ Ռուսաստանի կյանքում մի հսկայական բեկման սկզբի հետ, հեղափոխական շարժման աճման հետ, Ղրիմի պատերազմից հետո, որն իրենով որոշեց նրա գործունեության ուղղությունն ու բնույթը։

Նալբանդյանն ու Նազարյանը իրենց մտերմության առաջին իսկ օրերին վճռեցին հրատարակել ժողովրդին հասկանալի գրական լեզվով հանրամատչելի հանդես։ Այդ հանդեսը պետք է դառնար հայ լուսավորչության մարտական օրգան։ Բայց մինչև Ղրիմի պատերազմը ցարական կառավարությունից այդպիսի հանդես հրատարակելու թույլտվություն ստանալը անհնար էր։

Միայն Ղրիմի պատերազմից հետո, ճորտատիրական ինքնակալության ակնհայտ կործանման մթնոլորտում, երբ լիբերալիզմի շունչ փչեց մինչև իսկ կառավարական շրջաններում, բացվեցին որոշ, թեև խիստ սահմանափակ հնարավորություններ ոչ ռուսական մամուլի համար։

Երկար ջանքերից ու գլխացավանքից հետո, վերջապես թույլտվություն ստանալով, 1858 թվի հունվարից Նալբանդյանն ու Նազարյանն սկսում են «Հյուսիսափայլ» հանդեսի հրատարակումը։ Հանդեսի խմբագիրն ու հրատարակիչը Նազարյանն էր։ Լինելով ուսանող, Նալբանդյանը պաշտոնապես իրավունք չուներ հանդես հրատարակելու, նա փաստորեն նրա գլխավոր աշխատակիցն էր։

***

Ինչպես հայտնի է, այն ժամանակները, ճորտատիրական ինքնակալության և ժողովրդի քաղաքական իրավազրկության պայմաններում գրականությունը միակ ասպարեզն էր, որտեղ ա-

առաջավոր մարդիկ կարող էին գործադրել իրենց ուժերը արդյունավետ գործունեության համար։ Ահա թե ինչու, ինչպես ողջ Ռուսաստանում, այնպես էլ հայկական իրականության մեջ, հին հասարակության դեմ պայքարող մարդիկ կենտրոնացան գրականության ասպարեզում։ Նալբանդյանն ու «Հյուսիսափայլը» դարձան այդ պայքարի դրոշակակիրները։

Նոր, ժողովրդին հասկանալի գրական լեզվով, ժողովրդի կյանքն ու ձգտումները արտացոլող նոր գրականության հարցը «Հյուսիսափայլ» հանդեսի առաջին ծրագրային հարցն էր։ Դեռ 1857 թվականին Նալբանդյանը թարգմանեց Էժեն Սյուի «Թափառական հրեան» և հայ ընթերցողի համար հատուկ առաջաբան գրեց, որում, ելնելով հայ ժողովրդի ինքնագիտակցության և լուսավորության շահերից, նա ժխտում էր ժողովրդին միանգամայն անհասկանալի գրաբար լեզուն և այդ լեզվով գրված ժողովրդին խորթ ողջ գրականությունը։

«Հյուսիսափայլի» առաջին համարում զարգացնելով այդ գաղափարը, նա վճռականորեն հայտարարում է՝ «Մենք դեռևս գրականություն չունենք... Այն գրականությունը, որ քարոզում է հոգևորականությունը, դանակով կտրված և բոլորովին անջատված է ժողովրդից։ Նա չի հանդիսանում ազգի հոգևոր արտացոլումը։ Այն գրականությունը, որ կապված չէ ժողովրդի հետ անխզելի կապերով, որում, ինչպես հայելու մեջ չի ցոլանում ազգի կյանքը նորա ամենանուրբ գծերով, դա գրականություն չէ, այլ կեղծիք է և խաբեություն։ Նա նման է ճիզվիթների կրոնասիրության։

Նալբանդյանը ոչ միայն համառորեն ու անդադար իր հրապարակախոսությամբ հիմնավորում էր ժողովրդին մոտիկ, հասկանալի լեզվով նոր գրականության ստեղծման անհրաժեշտությունը և ամուր ձեռքով ճանապարհ էր հարթում դրա համար, նա միաժամանակ այդ գործը ստեղծողներից առաջիններից մեկն էր։ Նա գրում էր բանաստեղծություններ, վեպեր, քննադատական հոդվածներ և հետազոտություններ և միշտ, բոլոր ասպարեզներում և ժանրերում մնում էր հոգևոր և աշխարհիկ խավարամոլներին ատող, միջնադարի մնացորդների նույն անհաշտ հակառակորդը։ Նա միշտ եղել է ճշմարտության և ազատության կրքոտ քարոզիչ, ժողովրդի շահերի անկեղծ և բոցաշունչ պաշտպան։ «Մենք ազատակամ նվիրեցինք մեզ հասարակ ժողովրդի իրավունքը պաշտպանելու»—գրում էր նա հետագայում։

***

Նալբանդյանն սկսել է բանաստեղծություններ գրել պատանի տարիներից: Առաջին անգամ նրանք տպագրվել են 1851 թվականին «Արարատ» հանդեսում (Թիֆլիս): Նրանցից հատուկ ուշադրության է արժանի «Հիմարաց ստման վրա ունեցած կարծիքը» բանաստեղծությունը, որն աչքի է ընկնում իր սատիրական բնույթով և ձևի պարզությամբ: Հիշյալ հատկություններով այդ բանաստեղծությունը հանդիսանում է հայկական նոր ռեալիստական պոեզիայի առաջին նախակարապետը:

«Հյուսիսափայլի» էջերում Նալբանդյանը հանդես է գալիս արդեն որպես միանգամայն հասուն պոետ-նորարար: Նա կարողանում էր գրել հրաշալի լիրիկական բանաստեղծություններ, բայց օրվա պատմական պահանջները նրան այլ բան էին թելադրում: Պոեզիան Նալբանդյանի համար հանդիսանում է պայքարի զենք հանուն ազատության, հանուն ժողովրդի ճշմարտության: Իր պոետական կոնցեպցիան նա այսպես է արտահայտել բանաստեղծությամբ՝.

Լո՛ւռ կաց, դու քնար, այլ մի՛ հնչեր ինձ,
Ապոլլոն, ե՛տ առ դարձյալ դու նորան,
Տո՛ւր մի այլ մարդու, որ ընդունակ է
Ձոն բերել կյանքը սիրած աղջկան:

Ներկա օրերում այլ ի՛նչ սև քնար,
Սուր է հարկավոր կտրճի ձեռքին.
Արյո՛ւն ու կրա՛կ թշնամու վերա,
Այս պիտի լինի խորհուրդ մեր կյանքին:

Նալբանդյանն ստեղծել է ռևոլյուցիոն-դեմոկրատական քաղաքական լիրիկայի դպրոցը: Նրա պոեզիան հսկայական ազդեցություն է ունեցել ինչպես ժամանակակիցների, այնպես էլ հետագա սերունդների վրա: Նրա «Մանկության օրեր», «Ազատություն» և այլ բանաստեղծությունները դարձել են ժողովրդի սիրած երգերը: 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի ականավոր պոետներ Ծատուրյանի և Հակոբ Հակոբյանի քաղաքական լիրի-

կան շարունակում էր Նալբանդյանի պոետական գիծը նոր պայմաններում, տարբեր բնույթով:

Նալբանդյանի պոեզիայի և պրոզայի մյուս բնորոշ գծերն են ռեալիզմը և սատիրան: Որոշ իմաստով Նալբանդյանը հանդիսանում էր «գոգոլյան» ուղղության ներկայացուցիչը հայ գրականության մեջ և ամեն կերպ աշխատում էր տեսականորեն և անձնական օրինակով հիմնավորել և զարգացնել այդ ուղղությունը «Հյուսիսափայլում»:

Նալբանդյանի սատիրան ամբողջովին պայմանավորված էր նրա գործունեության և ստեղծագործության հասարակական-քաղաքական նպատակասլացությամբ: Նա խարազանում և ծաղրում էր տգիտությունը, ստորությունը, գռեհկությունը, մանրությունը, եսասիրությունը, երեսպաշտությունը, ռեակցիոն նացիոնալիստական ռոմանտիզմը, շովինիզմը և ժամանակակից կյանքի այլ արատները:

Սովորաբար Նալբանդյանի սատիրայի հերոսների նախատիպեր հանդիսանում էին նրա հասարակական-քաղաքական հակառակորդները:

«Հյուսիսափայլում» տպվել է նրա «Մեռելահարցուկ» (անավարտ) վեպը, որը հանդիսանում է հայկական առաջին ռեալիստական վեպը: Նրանում արտացոլված է 50-ական թվականների հայ լուսավորչության պայքարը ռեակցիոն կղերականության և նրա արբանյակների դեմ: Այստեղ առաջին անգամ հայկական պրոզան ռեալիստորեն պատկերում է կենդանի գործող ժամանակակիցների, նոր հերոսների բարոյական և կենցաղային կերպարը:

1858 թվի մայիս ամսից, երկու տարվա ընթացքում «Հյուսիսափայլի» էջերում պարբերաբար լույս էր տեսնում Կոմս Էմմանուելի հռչակավոր «Հիշատակարանը»: Կոմս Էմմանուելը Նալբանդյանի գրական կեղծանունն էր: Զարմանալի վիպականացրած այդ հուշերով նա ընթերցողի առաջ հետևողականորեն բաց էր անում հայերի հասարակական կյանքի էական կողմերի վարագույրները: Իր գրչի կենդանի ձևերով նա մերթ ի ցույց էր դնում անհեթեթ անախրոնիզմները և սարկաստիկ ծաղրի ենթարկում դրանք, մերթ հավանություն էր տալիս և խանդավառությամբ ժողովրդականացնում նոր կյանքի նոր, առաջավոր ծիլերը. մե՛րթ կատաղի

բանավեճի էր մտնում նոր գրականության և ժողովրդի լուսավորության հակառակորդների հետ, երկաթե տրամաբանությամբ ջարդ ու փշուր անելով նրանց փաստարկները, մե՛րթ ժամանակակից եվրոպական կյանքի զանազան պրոգրեսիվ կողմերի մասին հանգիստ պատմական էքսկուրսներով ու ակնարկներով նվաճում էր ընթերցողի համակրանքը, գրավում էր նրան իր գաղափարներով ու ձգտումներով: «Կոմս էմմանուելի հուշերը» բացառիկ դիպուկ կրակոցներ էին, մահացու խոցող թշնամիների համար և հափշտակիչ-ուրախ Նալբանդյանի և «Հյուսիսափայլի» բարեկամների համար:

Նալբանդյանը դեմոկրատական հրապարակախոսության դասական ստեղծողն է և 19-րդ դարի հայ հրապարակախոսների մեջ ամենատաղանդավորը. իսկ նրա «Հիշատակարան»-ը, «Երկու տողը», «Երկրագործությունը» և այլն հրապարակախոսության դասական գլուխ-գործոցներ են:

Հայ մեծ բանաստեղծ Հով. Թումանյանը, որը 80-ական թվականներին լույս տեսնելուց 25 տարի անց սիրում էր կարդալ «Հյուսիսափայլի» «երկնագույն ճաճանչափայլ» գրքույկները, շատ բարձր էր գնահատում Նալբանդյանի ժառանգությունը և հետագայում, 1916 թվին գրում էր. «Ես հիացմունքով եմ կարդացել Նալբանդյանի երկերը... Ինձ առանձնապես դուր էին գալիս «Կոմս էմմանուելի հուշերը»:

Նալբանդյանը հսկայական նշանակություն էր տալիս նաև թարգմանական գրականությանը: Նա շատ խստապահանջ էր ինչպես թարգմանության որակի, այնպես էլ թարգմանվող երկի գաղափարական գեղարվեստական որակի նկատմամբ: Այսպես օրինակ, նա բողոքում էր միստիկ տրամադրությամբ գրված երկերի թարգմանության դեմ և ինքը թարգմանում էր Պուշկին, Լերմոնտով, Հայնե, Բերանժե և ուրիշներին: Նալբանդյանի թարգմանությունները աչքի են ընկնում յուրօրինակությամբ, պոետական բարձր որակով և ինքնուրույն ստեղծագործության տպավորություն են թողնում. Հայնեի և Բերանժեի բանաստեղծությունները Նալբանդյանի թարգմանությամբ տպագրվեցին «Հյուսիսափայլի» առաջին համարներում 1858 թվականին և այդ գործի օրինակելի սկիզբը դարձան:

***

1858 թվականը հայ գրականության և հասարակական մտքի զարգացման պատմության մեջ «Հյուսիսափայլ» հանդեսի երևան գալու հետ մեկտեղ նշանավորվում է նաև առաջին հայ վեպի՝ Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի»-ի լույս տեսնելով։ Այդ վեպով Աբովյանը դեռ 18 տարի առաջ (նա գրված է 1840 թվին) գործնականորեն շատ բան էր կռահել Նալբանդյանի և «Հյուսիսափայլ» հանդեսի գրական-լուսավորչական ծրագրից։ Իր՝ Նալբանդյանի խոսքերով, այդ առաջին հայկական ազգային վեպում «դրոշմվել է ազգի ոգին, նորա վիճակը, նորա ձգտումներն ու ակնկալումները»։ Այսպիսով մամուլում Աբովյանի վեպի երևան գալը հանդիսացավ Նալբանդյանի գաղափարների հաստատումը, և ընդհակառակը, Աբովյանի վեպի ներգործության ուժը ընթերցողների վրա; նրա հասարակական նշանակությունը շատ անգամ աճեց, շնորհիվ Նալբանդյանի և «Հյուսիսափայլի» գործունեության։ Այդ բոլորի հետևանքով գրական հորիզոնի վրա շուտով հայտնվեցին նոր անուններ։ 1860 թվին Պերճ Պռոշյանը լույս ընծայեց իր առաջին վեպը՝ «Սոս և Վարդիթեր»-ը, Սարգիս Տեր-Հովհաննիսյանը, որին Նալբանդյանն անվանել է հայկական Գոգոլ, «Հյուսիսափայլում» սկսեց տպագրել «Տեր-Սարգիս» վիպակը, 60-ական թվականների խոշորագույն բանաստեղծ Սմբատ Շահազիզը 1864 թվին լույս է ընծայում բանաստեղծությունների և պոեմների մի ստվար ժողովածու։ Շահազիզի «Լևոնի վիշտը» գլխավոր պոեմի հերոսի նախատիպը հանդիսացել է Նալբանդյանը։ Ղազարոս Աղայանի ինքնատիպ և բազմակողմանի տաղանդն էլ ձևավորվել և հասունացել է հենց վաթսունական թվականների սկզբներին, Նալբանդյանի գաղափարական ուժեղ ազդեցության ներքո։ Աղայանի սեփական խոստովանությամբ, այն ժամանակվա հայ գործիչների մեջ Նալբանդյանին նա ամենից բարձր էր դասում։ 1865 թվին Աղայանը գրեց «Հարություն և Մանվել» իր առաջին վեպը, որտեղ նա կատարելագործում էր նոր գրական լեզուն։

Վաթսունական թվականների սկզբի գրական երևույթների ցուցակը դրանով չի սպառվում, բայց թվածն էլ միանգամայն բավական է։ Նրանք պարզ ցույց են տալիս, թե որքան ժամանակին և ճիշտ էր հանդես գալիս Նալբանդյանը իր հասարակական-

գրական ծրագրով և որքան խոշոր ու արդյունավետ էր նրա գաղափարական ազդեցությունը նորաստեղծ հայ գրականության վրա։

Հասարակական կյանքի հիմնական հարցերում գրաված վճռական դիրքի հետևանքով Նալբանդյանը արագ կերպով դառնում է բորբոքվող պայքարի կենտրոն։ Հայ հասարակության առաջադեմ շերտերը համակրում և աջակցում էին նրան, իսկ ռեակցիոն շրջանները կատաղությամբ ընդունեցին նրա մրցահրավերը։ Նրանք գործի դրին վճռականապես բոլոր միջոցները, որպեսզի խլացնեն «Հայ վերածնության զանգի» ձայնը։ Նալբանդյանի ինչպես հին, այնպես էլ նոր, ամենահայտնի ռեակցիոն թշնամիները—խոշոր հողատերեր Խալիպովը, ցարական գործակալ եպիսկոպոս Այվազյանը, Ջալալյանը և ուրիշները ամեն կերպ ձգտում էին «Հյուսիսափայլի» փակմանը և Նալբանդյանի ձերբակալմանը, որպես քաղաքական հանցագործի։ Իսկ Նալբանդյանը ոգևորվելով առաջավոր շրջանների հավանության և շնորհակալության առաջին արձագանքներից, համարձակորեն և անդառնալիորեն շարունակում էր առաջ մղել իր էպոխայի մեծ գործը.

Թո՛ղ պատգամախոսը, ննջած Դելֆի,
Յուր եռոտանու վերա փրփրի.
Թո՛ղ միջին դարու գաղափարներով
Ամբոխը խաբել եզնի, աշխատի:

Թո՛ղ նա թարգմանե ՋՐՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ,
Թո՛ղ մխիթարվի ծովի ափերում,
Մենք ազատության ենք միայն թարգման,
Միայն այս խոսքս ունինք բերանում:—*գրում էր նա*։

1859 թվականի սկզբին Նալբանդյանը լուրջ հիվանդացավ։ Երկարատև լարված աշխատանքը հիմնովին խախտել էր նրա առողջությունը։ Նա մեկնեց Եվրոպա բուժվելու, միաժամանակ հնարավորություններ նախապատրաստելու «Հյուսիսափայլը» արտասահման փոխադրելու համար։ Նալբանդյանն ու Նազարյանը մտածում էին, գերցենյան «Կոլոկոլի» օրինակով, ստեղծել ցարական գրաքննությունից ազատ հայկական մամուլ։

Նալբանդյանը Մոսկվայից մեկնեց 1859 թվականի մարտի վերջին: Եվրոպայում նա մնաց հինգ ամսից ավելի, շատ ճանապարհորդեց, բայց համեմատաբար քիչ ժամանակ էր հատկացնում բուժմանը: Լինելով դիտող մարդ, նա կարողացավ եվրոպական հասարակական կյանքում շատ բան տեսնել և ուսումնասիրել, համադրելով Ռուսաստանի, հայկական իրականության հետ, իր հետևությունները անել: Դասակարգերի ու պարտիաների բացահայտ պայքարով, դեմոկրատական պայմաններում զարգացող գրական պայքարով եվրոպական երկրների կյանքի առաջավոր կողմերի հետ կոնկրետ կերպով ծանոթանալը, Եվրոպայի առաջավոր մտածողների աշխատությունների ուսումնասիրությունը ավելի ևս ընդարձակեցին Նալբանդյանի մտահորիզոնը, նպաստեցին նրա ռադիկալիզմի և դեմոկրատիզմի խորացմանը: «Մեզ հարկավոր է կյանք և շարժողություն, հարկավոր է հույս ունենալ մեր անձին և մեր ընկերի վրա, և առանց լքանելու և վերացական բաների վերա թողնելու մեր մասին հոգաբարձությունը, մեր ձեռքով վարել մեր հողը»—գրում էր նա այդ ժամանակ իր օրագրում: «Ուր չկա մտքի և բանականության ազատություն, այնտեղ կա հոգու ստրկություն, իսկ ուր ստրկություն, այնտեղ չկա կյանք»:

... Կեցցե՛ ազատություն»—բացականչում է նա, արտասահմանյան նոթերն ավարտելով հուշակավոր «Ազատություն» բանաստեղծությամբ:

Նալբանդյանին չհաջողվեց «Հյուսիսափայլը» Եվրոպա փոխադրելու հնարավորություններ գտնել և նա պետք է հայրենիք վերադառնար շարունակելու պայքարը ձերբակալության, բանտի և աքսորի մշտական սպառնալիքի տակ:

«Հյուսիսափայլի» խմբագիր Ստեփաննոս Նազարյանը չափավոր հայացքների տեր մարդ էր, նա հավանություն չէր տալիս Նալբանդյանի գործունեության մարտական-դեմոկրատական բնույթին, նրա յակոբինությանը: Նազարյանցի լիբերալ սահմանափակությունը արդեն սկսել էր որոշակիորեն նեղել Նալբանդյանին: Այդ կապակցությամբ, արտասահմանից հետո նա որոշ սառնություն էր զգում և դեպի «Հյուսիսափայլը»:

1859 թվականի վերջին, ճանապարհորդությունից հետո Նալբանդյանի նյութական դրությունը զգալի կերպով վատացավ:

Ժամանակներս անցնում են, իսկ գրպանումս և հեռանկարում՝ ոչ մի գրոշ»—գրում էր նա: Բանը նրանումն է, որ Նալբանդյանը առհասարակ հնարավոր չէր տեսնում և կենսամիջոցներ ձեռք բերելու համար պետք է այլ ուղիներ որոներ: Իր բարեկամին ուղղած 1859 թվականի հոկտեմբերի քսանյոթի թվակիր նամակում· նա գրում է. «Մեկնում եմ Պետերբուրգ քննություններ տալու և թեկնածուական կոչում ստանալու, որպեսզի մարդավայել ծառայություն գտնեմ և կյանքի միջոցներ վաստակեմ»: 1860 թվականի սկզբին նա քննություն տվեց և ստացավ արևելյան լեզուների թեկնածուի կոչում, բայց նրան չհաջողվեց ծառայության մտնել: Նա պետք է նոր, և այս անգամ շատ երկարատև արտասահմանյան ճանապարհորդություն կատարեր, որը վճռական ազդեցություն ունեցավ նրա ողջ հետագա կյանքի ու գործունեության վրա: Այդ ուղևորության անմիջական նպատակը ժառանգություն ստանալն էր, որ թողել էին Հնդկաստանում վաղուց մեռած հայ հարուստները Նախիջևանի քաղաքային հասարակությանը, քաղաքի դպրոցական և կուլտուրական կարիքների համար:

Նալբանդյանն ինքը բարձրացրեց այդ հարցը նախիջևանցիների առաջ: Եվ նրանք, հակառակ Խալիպովի և նրա ընկերության համառ դիմադրության և ինտրիգների, այդ ժառանգությունն ստանալու համար Նալբանդյանին ընտրեցին իրենց հավատարմատար: Ուղևորությունը տևեց համարյա երկու տարի: Նալբանդյանը նախ պետք է մեկներ Էջմիածին, որպեսզի կաթողիկոսը հաստատեր համապատասխան փաստաթղթերը: Դա Նալբանդյանին հնարավորություն տվեց լինել Անդրկովկասում և Հայաստանում, անմիջականորեն մոտիկից ծանոթանալու ժողովրդի կյանքին և պահանջներին:

1860 թվականի նոյեմբերի մեկին նա Թիֆլիսից մեկնեց արտասահման և մոտ մեկ ամիս ապրում էր Կոստանդնուպոլսում: Նրա անունը քաջ հայտնի էր Կոստանդնուպոլսի հայերի ինչպես առաջադեմ, այնպես էլ ռեակցիոն շրջաններին: Ժամանելով, Նալբանդյանը սերտորեն կապվում է առաջավոր մարդկանց հետ և ակտիվ մասնակցություն է ցույց տալիս նրանց պայքարին: Նա տեղական հայկական մամուլում փայլուն հոդվածներ է գրում, նրանցում շոշափում է հայկական կյանքի սուր ցավոտ հարցերը, անխնա խարազանելով միջնադարյան բարքերի ու սովորություն-

ների պաշտպաններին։ Նալբանդյանի հոդվածներից հետո պայքարն է՛լ ավելի է սրվում, ռեակցիոն մամուլը ոռնոց է բարձրացնում, հանդես գալով ի պաշտպանություն հայկական եկեղեցու և հողէտրականության իբր անսասան իրավունքների։ Նալբանդյանը նրանց պատասխանում է արդեն Փարիզից իր նշանավոր «Երկրագործություն» բրոշյուրով, որը սկզբից մինչև վերջ համակված է Ռուսաստանում աճող ռևոլյուցիայի ոգով։ Դա արդեն 1861 թվականի ապրիլին էր, «գյուղացիների ազատագրման մասին» ցարական մանիֆեստից հետո։ Նալբանդյանն այդ ժամանակ եղել էր Լոնդոնում և հնարավորություն ուներ «Կոլոկոլի» և եվրոպական առաջավոր մամուլի օգնությամբ լավ հասկանալ ցարական մանիֆեստի ռեակցիոն-անտեսական իմաստը։ Ասես արձագանքելով դրան, «Երկրագործության» մեջ նա գրում է՝ «Մենք ազատակամ նվիրեցինք մեզ հասարակ ժողովրդի իրավունքը պաշտպանելու... Հարստահարված, ողորմելի, աղքատ, մերկ և քաղցած հայը... ամենայն արդարացի իրավունքով գրավում է մեր ուշադրությունը և նորան դարձյալ, առանց և վայրկենական երկմտության, նվիրեցինք մեր բոլոր կարողությունը... Եվ այս նպատակին հասնելու համար չէ պետք ընդրկենք ոչ բանտի և ոչ աքսորի առջև, ոչ միայն բանիվ և գրչով այլ և զենքով և արյունով, եթե մի օր արժանի լինինք զենք առնուլ մեր ձեռքը և մինչև այժմ քարոզած ազատությանը նվիրել և սրբել մեր արյունով»։

1861 թվականի հունիսի տասնմեկին Նալբանդյանը ժամանեց հնդկական Կալկաթա քաղաքը։ Հաջողությամբ կատարելով իր միսիան, նա 1861 թվի սեպտեմբերի վերջին նորից վերադառնում է Կահիրե, Ալեքսանդրիա և Երուսաղեմ և կանգ է առնում Կոնստանդնուպոլսում։ Այստեղ նա տպագրում է նոր հոդվածներ և 1862 թվի հունվարին նորից ուղևորվում է Փարիզ և Լոնդոն, ուր հանդիպում է լոնդոնյան պրոպագանդիստական խմբի հետ, անձամբ Գերցենի, Օգարյովի, Բակունինի և ուրիշների հետ։

Սեռնո-Սոլովյովին հասցեագրված նամակում Օգարևն այսպես է արտահայտվում Նալբանդյանի մասին. «Նալբանդյանը ոսկի հոգի ունի, նվիրված է անշահախնդիր, նվիրված է միամտաբեն՝ սրբության հասնող չափով»։ Նույն նամակում Գերցենն իր կողմից ավելացրել է—«Խոսքը մեր հեռացած արևելյան բարեկամի մասին է, բարևեցեք նրան, նա գերազնվագույն մարդ է; ասացեք նրան, որ մենք հիշում և սիրում ենք իրեն»։

Պրոպագանդիստների Լոնդոնի խմբի հետ այդ ծանոթությամբ և գաղափարական-քաղաքական մերձեցմամբ էլ սկսվում է Նալբանդյանի կյանքի և գործունեության մի նոր և ամենանշանավոր շրջանը:

1862 թվականի հունվարից մինչև մայիս ամսվա ժամանակաշրջանը Նալբանդյանը Փարիզից հաճախ էր գալիս Լոնդոն: Այդ ժամանակ նա ամրապնդեց իր կապերը Կոստանդնուպոլսի հետ և այնտեղ ռևոլյուցիոն-քաղաքական և պրոպագանդիստական գործունեության համար հենակետ ստեղծեց: Նալբանդյանը և նրա բարեկամները առաջին գործիչներն էին, որոնք հայ ժողովրդի ազատագրությունը կապում էին ռուսական ռևոլյուցիայի հետ:

Այդ նույն ժամանակաշրջանում Նալբանդյանը գրեց և Սիմեոն Մանիկյան կեղծանվան տակ Փարիզում հրատարակեց իր՝ «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» գլխավոր աշխատությունը:

Որպես գրքի էպիգրաֆ բերված են փիլիսոփա մատերիալիստ Լյուդվիգ Ֆոյերբախի խոսքերը՝ «Իմ աշխատության գաղափարքը միայն եզրակացությունք են, փաստերի հետևանք, նոքա ըստ ինքյան գաղափարք չեն, այլ կերպարանած, կենդանի կամ պատմական իրողությունք»:

Նալբանդյանն այդ ժամանակ արդեն լավ ծանոթ էր Ֆոյերբախի մատերիալիզմին՝ Գերցենի և Չերնիշևսկու նմանողությամբ:

Ֆոյերբախից բերված վերոհիշյալ խոսքերով Նալբանդյանը նախազգուշացնում է ընթերցողին, որ իր գրքի բովանդակությունը մտացածին չէ, այլ կենդանի պատմական փաստերի շարադրանքն ու այդ փաստերի հետևությունն է:

Նալբանդյանի կողմից բերված կենդանի պատմական փաստերը նրան ասում էին այն մասին, որ ժամանակակից հասարակությունը հիմնված է մարդու կողմից մարդու շահագործման, ստրկության վրա, որ ֆրանսիական բուրժուական ռևոլյուցիայի լոզունգները՝ հավասարությունը, եղբայրությունը և ազատությունը «յուրյանց հետքերը թողեցին մի քանի ոսկեդրամների վերա. իսկ պատերի վերայի կարմիր գրերը դատապարտվեցան մնալ սպիտակ ներկի տակ:

— Կեցցե՛ մահ:

Այս էր վերջին խոսքը, որ լսվեցավ: Եվ խեղճ մարդը վարա-

տակաչ և անհող, հարկադրվեցավ դարձյալ յուր օրական հացը ճարել ստրկանալով ուրիշին։ Թող քաղաքում անգամ փոփոխեն կառավարության ձևը, բայց քանի որ հասարակության մի մասը հանդիսանում է հողի տերը, իսկ մյուս մասը մնում է մուրացիկ, այդ պայմաններում կթագավորի բռնությունը»,—եզրակացնում է «Երկրագործության» հեղինակը:

Շատ հետաքրքիր է, թե նա ինչպես է փիլիսոփայորեն հիմնավորում իր տեսակետը—«Մտահայաց փիլիսոփայությունը արժեք չունի մեր օրերում»,—գրում է նա։—Այն փիլիսոփայությունը, որ անմիջապես չէ բխում մարդկային կյանքից և որ չէ դադարում դարձյալ մարդկային կյանքի վերա... մենք հրատարակում ենք նորան իմաստակություն և խաբեություն։ Մարդն է փիլիսոփայության և՛ հեղինակը, և՛ առարկան—Ֆոյերբախի հետևից հայտարարում է Նալբանդյանը,—անցան այն ժամանակները,—շարունակում է նա,—երբ մի տեսակ երկարաքղանցք, խորամանկությամբ տիրելով մարդկային բանականության, եգիպտական առեղծվածներով պատգամ էին տալիս նորան, անցան այն ժամանակները, երբ մտածում էին պարզամիտ մարդիկ, թե օդի անչափելի բարձրության մեջ դրած է փիլիսոփայության աթոռը։ Սո՛ւտ. փիլիսոփայությունը երկրագնդի վերա է, մարդն է նորա աթոռը, մարդն է նորա և՛ քննողը, և՛ քննելին»:

Այնուհետև, ելնելով բնագիտության տվյալներից, Նալբանդյանը գտնում է, որ «անցան այն ժամանակները, երբ մշուշով պատած մարդկային երևակայությունը ոչնչից տիեզերք էր ստեղծում։ «**Ex nihilo, nihil fit!**» (ոչնչից ոչինչ կստեղծվի)։ Վերջին մանուկը կրկնում է այսօր մեզ հետ»:

«Ոգի, մարմին և ոսկորս ոչ ունի» — ասում է աստվածամարդը, իսկ մարդը մարմին և ոսկերք ունի և այս թանձրությունը վկա է բերում նա (մարդը)։ Առանց մարմնի չկա շոշափելի կենդանություն, իսկ մարմինը նյութ է և մարմնի, մարդու կյանքը նյութերի անդադար փոխանակություն է։ Սրանով չենք ժխտում մարդկային կյանքի բարոյական կողմը, թեև մեր բարոյականությունը մարդկային հասարակությունից կախի և Սինայի*

---

* Սինայն այն սարն է, որտեղ ըստ հրեական պաշտամունքի Մովսես մարգարեն հանդիպեց աստծուն և նրանից ստացավ բարոյականության տախտակը։

հետ վերաբերություն չունի, այլ, կամենում ենք ասել, թե մարդը նախ և առաջ կենդանի է և ապա բարոյական էակ... Պատանու համար մինչև նորա խելահասությունը չկա բարոյական խնդիր։ Բայց մարդը մինչ այդ էլ նյութական պահանջներ ունի»։ Այդ արգումենտացիայից հետո Նալբանդյանը եզրակացնում է՝ «Տնտեսական խնդիրը մահու և կյանքի խնդիր է, կրկնում ենք դարձյալ»։

Չնայած նրան, որ Նալբանդյանը հասկանում էր մարդու և հասարակության կյանքում «տնտեսական հարցի» վճռական նշանակությունը, այնուամենայնիվ նա չկարողացավ բացատրել, թե վերջին հաշվով ինչով է բնորոշվում հասարակության տնտեսական կառուցվածքը, որոնք են տնտեսական ֆորմացիաների փոփոխման վերջին պատճառները, որոնք են ժամանակակից հասարակության զարգացման օրինաչափությունները և ինչպիսի ուղիներով ու միջոցներով պիտի ոչնչանա մարդու շահագործումը մարդու կողմից («Տնտեսական հարց»)։

Նալբանդյանը մարքսիստ չէր, իհարկե։ Համայնական երկրագործություն սահմանելու միջոցով ստրկությունն ու աղքատությունը վերացնելու մասին արած նրա հետևությունները սխալ են, ուտոպիական։ Բայց այդ գրքի («Երկրագործություն») բացառիկ պատմական-ռևոլյուցիոն նշանակությունը կայանում է նրանում, որ նրա մեջ, առաջին անգամ հայ մամուլում անողոք քննադատության է ենթարկվում տնտեսության կապիտալիստական սիստեմը։

Նալբանդյանն այստեղ ցույց է տալիս, որ բուրժուական պետությունների մարդատյաց քաղաքականությունն ամբողջովին բխում է կապիտալիզմի տնտեսական սիստեմից. պատռելով գաղութացնողների կեղծ-քաղաքակրթչական դիմակը, նա անարգանքի սյունին է գամում նրանց իմպերիալիստական քաղաքականությունը։

«— Անգլիան,— գրում է նա,— ամիսը երեք շոգենավ ափիոն բռնությամբ ներս է տանում Չինաստան, թունավորում է մարդկությունը և այդ թույնի փոխարեն ամիսը երեք շոգենավ արծաթ է տանում Չինաստանից։ «Քաղաքակրթություն է տարածում»— իրոնիկ կերպով դիտում է նա։ Այնուհետև, գաղութացնողների արյունալի պրակտիկայից վերցրած, բազմաթիվ տիպական օրինակներ թվելով, նա եզրակացնում է՝ «Սոքա ամենքը,— այսինքն զավթիչները,— իբրև բանի վարժապետ, քաղաքակրթություն

են տարածում, և ոչ ով չէ հարցնում աշակերտի կամքը, կամի արդյոք ուսանել թե ոչ։ Սակայն չէ պետք աչքից հեռացնել նոցա քաղաքակրթության տարբերությունը մեր հասկացած քաղաքակրթությունից։ Բանտերը են նոցա դպրոցները, պոլիցականք և ժանդարմը՝ դաստիարակները, շղթան՝ հրահանգիչ գիրքը, աքսորը՝ բարոյականության առողջացման բարձրագույն դպրոցն է։ Կախաղանը և գլխապարտության խայտառակ սյունը՝ դուռն ճշմարիտ որ տանի ի կեանս հավիտենականս»։

«Կեցցե կատուն, որ իր փորի համար մուկ է բռնում»—բացականչում է Նալբանդյանը, ծաղրելով կապիտալիստական զավթիչների տրամաբանությունը։

Նալբանդյանն այդ գրքի մեջ, առաջին անգամ հայ մամուլում, ցույց է տալիս, որ հարստությունը ժամանակակից կապիտալիստական հասարակության մեջ, օրինակ, Անգլիայում, հիմնված է ժողովրդի աղքատության և պաուպերիզացիայի վրա, որ գործազրկությունը հանդիսանում է այդ հասարակության օրգանական գիծը, որ մի կույտ խոշոր կապիտալիստների և նրանց կողմից նշանակված կառավարությունների շահերը հակադիր են ժողովրդի շահերին։

Այնուհետև Նալբանդյանը ռևոլյուցիոն դեմոկրատի տեսակետից մերկացնում է ռուսական ցարիզմի պետական սիստեմի ռազմա-ֆեոդալական բնույթը։ Նա ցույց է տալիս, որ ցարիզմը հիմնված է բազմամիլիոն ռուս ժողովրդի և ռուսական գաղութների աշխատավորների բարբարոսական ճնշման և շահագործման վրա։ 1861 թվականի ռեֆորմը Նալբանդյանը վճռականապես դատապարտում է որպես կեղծ, պատրանքային ազատություն և պահանջում էր գյուղացիների անվարձ ազատագրումը հողի հետ մեկտեղ։ Մանրամասն կանգ առնելով ռեֆորմից հետո գյուղացիական հուզումների և նրանց վրա թափվող զանազան ճնշումների վրա, Նալբանդյանը ձեռք է մեկնում Չերնիշևսկուն, գյուղացիական ռևոլյուցիայի մասին հետևյալ ահեղ եզրակացությամբ «Բայց այս ջերմախտական և լարյալ վիճակը անհնար է որ լինի երկարատև։ Սոռուկը կացինով կվճռի գործը։

Ժամանակը շատ մոտեցած է, կարծվածից ավելի մոտեցած...»։

Եվ ի վերջո, հայ հասարակական մտքի մեջ առաջին անգամ, Նալբանդյանի այդ նշանավոր աշխատությամբ հայերի և մյուս

ճնշված ժողովուրդների ազատագրման հարցը կապվում է ցարիզմի տապալման ընդհանուր հարցի, ռուս մեծ ժողովրդի ազատագրման հարցի հետ:

Հատուկ ուշադրության է արժանի Նալբանդյանի մոտեցումը ազգային հարցին: «Երկրագործության» հեղինակը ճնշված ազգի ներկայացուցիչ էր, բայց նա հեռու էր այն ժամանակ հայ գրականության մեջ իշխող նեղ ազգայնական նախապաշարմունքներից: Նալբանդյանն անողոք կերպով խարազանում և ծաղրում է ազգայնական ռոմանտիզմը և նշում է ազգի ու ազգային հարցի պատմականությունը՝ «Ազգությունը իբրև պատմական իրողություն, իբրև հավասարի երևույթ, ընդհանուր մարդկության կյանքի մեջ, չէ կարելի մերժել,—գրում է նա.—բայց եթե հավասար իրավունքը այսօր խոստովանվի բոլոր երկրագնդի վերա, եթե ներկա եղած պետական համակարգությունքը այսօր ոչնչանան, վաղը ոչ միայն չէ մնում ազգության խնդիրը, այլ հարկավոր ևս չէ: Բայց այս է բանը, որ դորան հասնելը ժամանակի է կարոտ»:

Նալբանդյանը համոզված էր, որ կգա այդ ժամանակը: Նա դեմ էր դուրս գալիս ազգային ճնշմանը, ազգային բացառիկությանը, ազգային սահմանափակումներին: Նա տեսնում էր, որ այդ բոլոր, նրա խոսքերով ասած, անարդարությունները խրախուսվում են հարուստների և նրանց կառավարությունների կողմից, իսկ ժողովուրդը դրանում շահագրգռված չէ: Նա ավելի առաջ էր գնում և տեսնում էր, որ ճնշված ժողովրդի շահերը համընկնում են ճնշող ազգի ժողովրդի շահերի հետ, քանի որ նրանք երկուսն էլ շահագրգռված են տապալելու աշխատավոր ժողովրդի ճնշման ու շահագործման գոյություն ունեցող պետական սիստեմը: Նալբանդյանը քարոզում էր ժողովուրդների եղբայրություն և անարգանքի սյանն էր գամում բոլոր նրանց, ովքեր թեորիայում և պրակտիկայում հանդես էին գալիս հանուն իրենց ազգի արտոնությունների, իրենց ազգի բացառիկության: Այստեղ նույնպես, ինչպես և այլ ասպարեզներում, Նալբանդյանը հանդես է գալիս որպես ռևոլյուցիոն-դեմոկրատիայի ներկայացուցիչ, որպես այն էպոխայի ամենաառաջավոր գործիչներից մեկը:

Իր գիրքը նվիրելով հայ երիտասարդությանը, առաջաբանում Նալբանդյանը գրում էր՝ «Թողե՛ք մեռելներին թաղել յուրյանց

մեռելները, նոցա արևը մտած է., իսկ դուք կենդանի եք և ապագայի արևը ձեր գլխի վերա է բացվում: Ձեր սակավաթիվ լինելը, համեմատելով պետքերի շատության, թո՛ղ չվհատեցնե ձեզ, այն մարդը, որ զգում է յուր անձը կենդանի, պիտի հարի ձեզ, որովհետև կյանքի հոսանքը միայն մի ընթացք ունի—դեպի հառաջ»:

Նալբանդյանը հավատում էր ժողովրդի գործի վերջնական հաղթանակին:

1862 թվականի մայիսին Նալբանդյանը վերադարձավ Ռուսաստան: Բայց հազիվ էր նա կարողացել կապ հաստատել ռուսական ռևոլյուցիոներների հետ, երբ Նախիջևանում, ուր նա եկել էր իր Հնդկաստան կատարած ուղևորության մասին հաշվետվություն տալու, հունիսի 14-ին նրան ձերբակալեցին, ճանապարհեցին Պետերբուրգ և նստեցրին Պետրոպավլովսկի ամրոցի Ալեքսեևյան մահիկը: Նրան մեղադրեցին լոնդոնյան պրոպագանդիստների հետ «հանցավոր կապերի» մեջ: Այդ նույն գործով ձերբակալվել էին Սեռնո-Սոլովյովիչ եղբայրները, Վետոշնիկովը, Լյալինը, Վորոնովը, Տրավերսը և ուրիշներ՝ ընդամենը 32 հոգի: Սարքվեց «32-ի պրոցեսը»: Չերնիշևսկուն էլ ձերբակալեցին այդ կապակցությամբ, բայց հետո նրա գործը զատեցին որպես հատուկ գործ: Նալբանդյանը Պետրոպավլովսկի ամրոցում նստեց համարյա երեք տարի: Նրան թույլատրված էր գրական աշխատանքով զբաղվել և նա գրում էր համառ ու անդադար: Բանտից գրված նրա նամակներից երևում է, որ նա աշխատում էր փիլիսոփայական, բնագիտական, գեղագիտական, քննադատական, լեզվաբանական, հողագործական և այլ հարցերի մասին: Նա այստեղ գրեց «Կրիտիկա Սոս և Վարդիթեր ազգային վիպասանության պ. Պերճի Պռոշյանց» իր ծավալուն գրական-քննադատական հոդվածը: Այդ հոդվածում նա հանդես է գալիս որպես Բելինսկու, Չերնիշևսկու, Դոբրոլյուբովի գեղագիտական և քննադատական շկոլայի հետևորդ: Դա նոր գրական երևույթի առաջին լուրջ ընդհանրացումն էր: Նալբանդյանը դրանում հիմնավորեց հայ գրականության մեջ քննադատական ռեալիզմի ծնունդի օրինաչափությունը և նշեց նրա հետագա զարգացման ուղիները:

«Արվեստի գեղագիտական վերաբերմունքը իրականության նկատմամբ» իր նշանավոր դիսերտացիայում Չերնիշևսկին գրում

էր՝ «Արվեստը կյանքին վերաբերվում է միանգամայն նույնպես, ինչպես պատմությունը. ըստ բովանդակության տարբերությունը միայն նրանումն է, որ պատմությունը պատմում է մարդկության կյանքի մասին, ամենից ավելի հոգ տանելով փաստական ճշմարտության մասին, արվեստը տալիս է մարդկանց կյանքի մասին պատմվածքներ, որոնցում փաստական ճշմարտությունը փոխարինվում է հավատարմությամբ հոգեբանական և բարոյական ճշմարտության»։ Նալբանդյանն ևս այդպես է մտածում։ «Մեռելահարցուկ» վեպի հերոսի շուրթերով նա ասում է՝ «Մի՛ նայեք այն արտաքին զանազանությանը, պատմության և բանաստեղծության մեջ... խոր քննելով խնդիրը, կը տեսանենք, որ բանաստեղծությունը ևս նույնպես ճշգրիտ հիշատակարան է, ինչպես պատմությունը... Բանաստեղծությունը կատարելագործում է մեր հասկացողությունը ազգի հոգու կամ հոգեղեն կյանքի մասին, որ պակաս էր թողել պատմությունը։

Այն հարցին, թե որտեղի՞ց է վերցվում մարդու, ժողովրդի, ազգի հոգևոր կյանքի բովանդակությունը, Նալբանդյանը պատասխանում է՝ «բնության սրտի զարկը ցոլանում է անմիջապես մարդու սրտում»։ (Բնության տակ հասկացվում է մարդու բնական և հասարակական միջավայրը)։ Իսկ «Քննադատության» նույն այդ առաջին էջում տրվում է իրականության և պոեզիայի կապի ավելի խորը բացատրությունը։ Այստեղ ասված է՝ «օրինավոր բանաստեղծությունը հետևանք է մի օրինավոր կապակից և պատմական կյանքի»։

Գրականության ու արվեստի նպատակը, նրա հասարակական ֆունկցիան—Նալբանդյանի տեսակետից—ժողովրդի լուսավորության ու դաստիարակման գործին ծառայելն է։ Արվեստը, գրականությունը ոչ թե զվարճանք է, այլ լուրջ գործ, որը կոչված է զարգացնելու ժողովրդի ինքնագիտակցությունը և դաստիարակելու նրա մեջ ինքնուրույնությունն ու ձգտումն առաջ, դեպի նոր, միջնադարյան կապանքներից ազատ հասարակական կարգերը։ Նալբանդյանը մատերիալիստ էր և հետևաբար, հասարակական կարգերը վերափոխող ուժերը նա որոնում էր ոչ թե երկնքում, այլ տեսնում էր հասարակության, ժողովրդի մեջ։ Բայց այդ ուժերը դեռ զարգացած չէին և նրանց զարգացումը կապված էր կյանքի հոգևոր և աշխարհիկ տերերի, նրանց տիրապետող ռեակցիոն գաղափարախոսության դեմ մղվող սուր պայքարի հետ։ Դա կենաց և

մահու պայքար էր և գրականությունը Նալբանդյանի համար հանդիսանում էր այդ պայքարի զենքը։ Որպես իսկական մարտիկ և առաջնորդ, նա բացառիկ կրքոտությամբ էր վերաբերվում իր զենքին՝ գրականությանը։ Երբ միջնադարի կողմնակիցները հիստերիկ ճիչեր էին արձակում նոր լեզվի և գրականության թերությունների մասին և մերժում էին նրանց կյանքի իրավունքը հօգուտ եկեղեցու և կրոնի, հօգուտ ամենայն հնի և ռեակցիոնի պահպանման, Նալբանդյանը դա գնահատում էր իր պարտիական դիրքերի տեսակետից։ Նա գրում էր՝ «...Սուտ ազգասերքը տեսանելով, որ բուն ազգային հայրազատ մատենագրությունը հառաջ է շարժվում, տեսանելով, որ նորա անխոնջ գործակատարքը արհամարհելով ամենայն արգելք և խափան, աշխատում են բանալ ազգի աչքը և դորանով հողի հետ հավասարեցնել սուտ ազգասերների և մյուսների անունը և անպարծանք հիշատակը։ Հուսահատությունը կատաղեցնում է ճշմարտության հակառակորդքը, որովհետև ոչինչ արգել չէ ճշմարտությանը խորտակելու գլուխը խավար վիշապի, որ դարերով ծծել է մեր խեղճալի ազգի արյունը...»։

Նոր գրականության և գրական լեզվի հակառակորդները սովորաբար գործի էին դնում նրբազեղության, առհասարակ գեղեցկի վերացական հասկացությունները և ասում էին, որ նոր գրականությունը և լեզուն չեն համապատասխանում այդ նորմերին։ Նրանց դեմ Նալբանդյանը առաջ էր քաշում և զարգացնում Չերնիշևսկու գեղագիտական տեսությունը և փայլուն կերպով պաշտպանում նրա մատերիալիստական ռևոլյուցիոն-դեմոկրատական դիրքերը։ «Կենդանին և ներկան, կենդանի և ներկա ժողովրդի սեփականությունն է, անխզելի սեփականություն... Հնության ավտորիտետը ժամանակի և պետքերի իրավունքը հափշտակելու չափ ուժ չունի։ Գեղեցկության մտավոր սահմանը, բնության մոտ լինելը, կամ բնության նմանելն է։ Այստեղ բնությունը ուրեմն ստացավ դարձյալ չափի պաշտոնը... Լեզվի վերաբերությամբ միտքն է բնությունը. լեզվի ձևի վերաբերությամբ մտքի ձևն է բնությունը... Ինչպես բնությունն է, ինչպես մարդու շրջապատող աշխարհն է, այնպես կլինի և մարդու կյանքը և ինչպես կյանքը, նորան համեմատ կը լինի միտքը»։

Իսկ կյանքը, Նալբանդյանի տեսակետով անընդհատ պայքար է և առաջխաղացում։ Նորի պայքարը հնի դեմ հիմնական և գլխավոր երևույթն է կյանքում և Նալբանդյանը պահանջում է, որ գրո-

ղը անընդհատ հետևի կյանքում նոր, առաջավոր տենդենցներին և արտացոլի այդ իր երկերում: «Քննադատության» մեջ նա ափսոսում է, որ Պռոշյանը բավարար չափով չի հոգացել այդ մասին:

«Արշամի («Սոս ու Վարդիթեր» վեպի հերոսներից մեկի) բերանով խոսում է նոր ժամանակների ոգին,—գրում է Նալբանդյանը.—...Արշամը իր սերունդի երևեցուցիչն է: Ինչպես առաջ էլ ասեցինք, ափսոս, որ շատ քիչ հանդես ունի [Սոս և] Վարդիթերի մեջ այն ուղղությունը, որ երևում է Արշամում, թեև այս չափիցն էլ տեսնում ենք կենարար սկեպտիցիզմի արած ազդեցությունը: Մենք աջողություն և ընթացք ենք մաղթում այդ երկնային դեսպանին: (Սկեպտիցիզմ բառը Նալբանդյանի մոտ նշանակում է գրական ապագայի տեսակետից քննադատական վերաբերմունք դեպի շրջապատող միջավայրը): Այստեղից երևում է, որ Նալբանդյանը պահանջում էր ոչ թե որակի կրավորական-օբեկտիվ արտացոլումն այն ամենի, ինչ կա կյանքում, ընդհակառակը, նա համարում էր, որ արվեստն արտացոլում է կյանքից այն, ինչ հարկավոր է տվյալ էպոխայի մարդուն: Ավելին, Նալբանդյանը կողմնակից էր իսկական տենդենցիոզ արվեստին, բայց նա պահանջում էր, որ տենդենցը բխի իրադրությունից և գործողությունից, որ «հեղինակը իբրև բանաստեղծ իրավունք չունի առաժամ և այն իր բերնից խոսելով մերկացնել ապագայի վարագույրը»: Իսկական գրականությունը Նալբանդյանը հասկանում էր որպես բարձր-գաղափարականության, ճշմարտացիության (ռեալիզմ) և արվեստի (գեղարվեստականության) միասնություն:

Բացառիկ մեծ նշանակություն էր տալիս Նալբանդյանը նաև քննադատությանը: Յուրաքանչյուր ժողովուրդի գրականության մեջ երևում է նրա հոգին, նրա հայացքները, նրա սոցիալական կյանքը, իսկ քննադատության մեջ երևում է այդ ամենի չափը և սահմանը. քննադատությունը պետք է որոշի և գնահատի այդ ամենը:

Եվ ահա հայ ռևոլյուցիոն-դեմոկրատական քննադատության հիմնադիրը ձեռնամուխ եղավ գնահատելու և որոշելու հայ գրականության մեջ առաջին իսկ գրական նոր երևույթները: Առաջ նա ասում էր՝ «մենք գրականություն չունենք», իսկ այժմ, 1863 թվին նա գրում է՝ «Պ. Աբովյանի «Վերք Հայաստանին» և «Սոս ու Վարդիթերը» հիմք դրին արդյան ազգային վիպասանության»: 1863 թվականին հանդես գալով հանում իսկական ժողովրդական գրա-

կանության ստեղծման, նա գրում էր՝ «Մխիթարյանների քարոզած գրականությունը դանակով կտրած ու անջատված է ժողովրդից. նա չի բխում ազգի հոգուց»: Այստեղ, «Քննադատության» մեջ նա գրում է՝ «Համարձակ կարող ենք ասել, որ արդա հեղինակը (Պռոշյան, Գ. Կ.) իր նկարագրած կյանքի վերաբերությամբ, ոչ ավելի և ոչ պակաս, մի անխարդախ հայելի է, ուր ցոլանում են բնության ճառագայթքը»:

Նույն տեղում, նշելով, Գ. Տեր-Հովհաննիսյանի անավարտ վեպը, Նալբանդյանն ասում է՝ «**Եթե երբ և լինի այդ կիսատ մնացած գործը ավարտվի**, միևնույն հոգով և հմտությամբ գործը շարունակելով, այն ժամանակ մեր նոր դպրության մեջ այդ գործն այն տեղը կունենա, ինչ տեղ ռուս դպրության մեջ ստացել է «Մեռած անձինքը»: Թող կանխիկ ընդունի մեր սրտանց շնորհակալությունը հայկական Գոգոլը, որին մաղթում ենք մի փայլուն գալոցք»:

Նալբանդյանը պաշտպանում և պրոպագանդում էր մյուս «գոգոլյան ուղղության» համար հայ գրականության մեջ. վերև մենք ցույց տվինք, որ նա իր պրոզայով նույնպես պրակտիկ կերպով դրա սկիզբը դրեց:

Այսպիսով Նալբանդյանը հաստատ ու վճռականապես, ամբողջ ձայնով հայտարարեց հայ նոր գրականության սկիզբը: Եվ դա մի ուշագրավ սկիզբ էր, որն ունեցավ իր այնքան ուշագրավ շարունակությունը:

Նալբանդյանի թույլ օրգանիզմը չկարողացավ դիմանալ Ալեքսեևյան մահիկի կյանքի ծանր պայմաններին և նա հիվանդացավ: Թոքախտը վերջնականապես քայքայեց նրա առողջությունը: 1865 թվականի ամառը նա դուրս եկավ Պետրոպավլովսկի ամրոցից, իր սեփական խոսքերով ասած՝ «ոչ կենդանի, ոչ մեռած»: 1866 թվականի մարտի 31-ին Նալբանդյանը մեռավ աքսորում, Սարատովի նահանգի Կամիշին քաղաքում:

Նալբանդյանի ազգականներին թույլատրվեց վերցնել նրա դիակը և թաղել Նախիջևան քաղաքում: 1866 թվականի ապրիլի 13-ին ամբողջ քաղաքը դուրս էր եկել Դոնի ափ, դիմավորելու Նալբանդյանի աճյունին: Ականատեսները պատմում են, որ Նալբանդյանի թաղումը վերածվեց ցարիզմի կողմից տանջամահ արված գրող-ռևոլյուցիոների նկատմամբ ժողովրդական մի հսկայական չտեսնված ցույցի:

ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ «ԱՆՈՒՇԸ» ԴԵՐԺԱՎԻՆԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՄԲ

Եթե գործը նրան է հասել, որ հարկ կա ապացուցելու թե թարգմանչի համար անհրաժեշտ ու պարտադիր է այն ժողովրդի լեզվի ու կուլտուրայի ուսումնասիրությունը, որի պոեզիան նա թարգմանում է, ապա դա նշանակում է, որ ինչ-ինչ հանգամանքների շնորհիվ աննորմալը ընկալված է որպես նորմալ: Երբ տարիներ շարունակ պոետը թարգմանում է տողատակ թարգմանության օգնությամբ և իր ընդունակության սահմաններում որոշ հաջողությունների է հասնում, նա, բնականաբար, անձնատուր է լինում ինքնահանգստացման տրամադրության—ինչո՞ւ չի կարելի շարունակել այդպես և հետագայում: Նա ծանոթ չէ բնագրին, չի տեսնում, չի զգում իր, ասենք, թեկուզ հաջողված թարգմանության և բնագրի հսկայական տարբերությունը, իսկ իսկական քննադատության բացակայությունը, որը կոնկրետ կերպով ցույց տար թարգմանությունների իսկական արժանիքներն ու թերությունները (անհաջող թարգմանիչների և թարգմանությունների մասին խոսելն ավելի հեշտ է), կոնկրետ քննադատության փոխարինումը ընդհանուր գովասանական խոսքերով՝ աջակցում են թարգմանչի այդ տրամադրություններին:

Այստեղ ես սահմանափակվում եմ «Հայ պոեզիայի անթոլոգիա»-ում («Антология армянской поэзии»*) Հովհ. Թումանյանի «Անուշ» պոեմի ռուսերեն թարգմանության առանձին՝ շատ ցուցադրական թերությունները նշելով:*

Վ. Դերժավինը տաղանդավոր պոետ-թարգմանիչ է: Նա շատ է թարգմանել հայ պոեզիայից և ընդհանուր առմամբ լավ է թարգմանել: Մինչև այժմ նա թարգմանում է տողատակով: Բայց կկա-

զորանա՞ր արդյոք Դերժավինը այդպես հաջող թարգմանել, ասենք, «Սասունցի Դավթից» առանց հայ ֆիլոլոգների, գրականագետների և բանաստեղծների հսկայական, բազմակողմանի օգնության, որ ցույց տրվեց նրան Մոսկվայում և Հայաստանում: Այնպես որ լեզու չիմանալը այստեղ, ասես թե մի որոշ չափով, փոխհատուցվել է այլ միջոցներով:

Թումանյանի «Անուշը» Վ. Դերժավինի թարգմանությամբ ընդհանուր առմամբ բնագրին ավելի մոտ է, քան Վյաչեսլավ Իվանովի թարգմանությամբ (Վ. Իվանովի թարգմանության մասին Թումանյանըն ասում էր՝ «Իմ Անուշը թարգմանության մեջ խարտյաշ է ստացվել (այսինքն ռուսականացել է): Բայց եթե Դերժավինը հնարավորություն ունենար «Անուշը» հայերեն լեզվով կարդալու, ես չեմ կասկածում, որ նա հիմնովին կվերախմբագրեր իր թարգմանությունը, կարող է պատահել նույնիսկ, որ նորից թարգմաներ: Թումանյանի պոեմը մի բնական հզոր հեղեղ է. նա տրամաբանորեն և պոետականորեն գեղաշար է, ճկուն, առավելագույն չափով հղկված, սեղմ է և բացարձակորեն զերծ ամեն տեսակ ավելորդաբանություններից: Դա բյուրեղականորեն ներդաշնակ մի կառուցվածք է, որի ոչ մի աղյուսը նկատելի չէ, բայց բավական է որևէ բան շարժել տեղից կամ մի ուրիշ բանով փոխարինել, որպեսզի դա անմիջապես աչքի ընկնի:

Երբ, օրինակ «Նախերգանքում» Դերժավինը խախտում է երգի տրամաբանական գիծը նրանով, որ սկսում է երրորդ տնից —փերիները դիմում են Անուշին՝

Кувшином глиняным брала
Ты воду семи ключей и т. д.,

մինչդեռ Թումանյանի մոտ փերիները Անուշի սիրո մասին պատմում են երրորդ դեմքով, այդ, կարծես թե փոքր շեղումը ճեղք է առաջացնում այնքան հրաշալի նախերգանքում, խախտում է երգի ոճը, ցածրացնում է նրա պոետական որակը: Ինչ վերաբերում է նախերգանքի երկրորդ տանը՝

„И зов их звенел из тумана:
„О, сестры! придите вновь,
Оплачем погибшую рано
Влюбленных юных любовь",—

ապա դա ամենևին այն չէ, ինչ բնագրում։ Նախ՝ որտեղի՞ց է այդ՝ „И зов их звенел *из тумана*“, *չէ՞ որ նախերգանքը նախորդ, առաջին գլխում խոսվում էր փերիների հավաքի մասին սարի գլխին,* լուսնյակ գիշերով՝

На крыльях ветра, рея ввысь,
На лунные сев лучи,
Пери легкие собрались
На вершине горы в ночи.

Այնպես որ այստեղ պարզապես տեղ չկա մշուշի („туман“) *համար և ընդհանրապես այդ ամբողջ տողը թարգմանչի միանգամայն ոչ-պիտանի հավելումն է։ Այժմ շարունակենք՝*

О сестры, придите вновь,
Оплачем погибшую рано
Влюбленных юных любовь.

Ինչու՞ «եկեք նորից *ողբանք»* („придите вновь оплачем“։ *Չէ՞ որ դա պոեմի սկիզբն է։* „Вновь“*-ը ավելորդ (խառնաշփոթություն առաջացնող) հավելումն է։ Եվ վերջապես, վերջին դիտողությունը այդ տան վերաբերյալ․* „Оплачем погибшую рано влюбленных юных любовь“ *բնագրում տված է «Ջահել սիրահարի վաղամեռ սերը», այսինքն եզակի թվով, քանի որ խոսքը վերաբերում է Անուշի վաղամեռ սիրուն։*

Փերիների երգը նախերգանքում վերջանում է երգի առաջին երկու տողերի կրկնությամբ, իսկ թարգմանության մեջ նույն տողերը տարբեր են ստացվել։ Սկզբում (երկրորդ տուն)՝

И зов их звенел из тумана:
„О, сестры! Придите вновь...

վերջում (ութերորդ տուն)՝

Придите, сестры грозных скал!
Прелестные духи... Пора...

Այդպիսի «ազատությունը» թարգմանչի կողմից բնագրի ոճական առանձնահատկությունների չըմբռնելու արդյունք է, իսկ „пора“ *(ժամանակն է) խոսքը այստեղ միանգամայն անտեղի է, քանի որ այնուհետև տված է՝*

Так пери скорбный хор звучал
Всю ночь в горах до утра.

Միթե հարկավոր է թարգմանչին հիշեցնել, որ Թումանյանը ի սեր հանգի երբեք չէր զոհում տրամաբանությունը (пора—утра)։

Յոթերորդ տան մասին՝

Вуш-вуш! Ануш, вуш нежный друг,
Любви твоей жалко нам...
Вуш-вуш Саро храбрец-пастух
Вуш—вашим родным горам!..

Բնագրի վերջին տողը բառացիորեն այսպես է՝ «Վուշ քո սիրած սարերին» („Вуш твоим любимым горам").

„Любимым" *բառը այստեղ միանգամայն փոխարինելի է* „родным" *բառով, բայց թե ինչու է պետք եղել* „твоим" *(քո) բառը փոխարինել* „вашим" *(ձեր) բառով, մնում է անհասկանալի։ Դուրս է գալիս, որ լեռնային ծաղիկները Անուշի հետ «դու»-ով են խոսում, իսկ Սարոյի հետ՝ «դուք»-ով։ Բայց այստեղ ավելի կարևոր է մի այլ բան։ Թումանյանը ժողովրդական պոետ է բոլոր տեսակետներից. նրա պոեզիայի, հատկապես «Անուշի» յուրաքանչյուր արտահայտությունը ժողովրդական խոսակցության մեջ դարերով հղկված, լավ յուրացված ժողովրդական նյութից ուշի-ուշով ընտրված արտահայտություն է։*

Այստեղ շատ տեղին կլինեն Մայակովսկու նշանավոր տողերը պոետական խոսքի մասին՝

Պոեզիան
Նույն ռադիումի հանույթն է.
Մի գրամ է հանույթը,
աշխատանքը՝ մի տարի։
Վատնում ես,
ի սեր մի հատիկ բառի,
Հազարավոր տոննա
բառերի հանք։
. . . .

Այս բառերը
　　շարժման մեջ են դնում
Հազարավոր տարիներ
　　միլիոնների սրտերը*:

Հարկավոր է արդյոք ապացուցել, որ պետք է այսպիսի թանկարժեք արտահայտությունների, խոսքերի թարգմանության ժամանակ իր նկատմամբ պետք է շատ խստապահանջ լինել և ի սեր մի հատիկ (բնագրին համարժեք) բառի, արտահայտության, համապատասխանորեն վատնել հազարավոր տոննա բառերի հանք: Հենց նոր բերված տան մեջ, օրինակ, վշտի մասին առավելագույն չափով սեղմ, բացառիկ հուզականությամբ ժողովրդական արտահայտությունները թարգմանության մեջ դառել են գրքային քաղցրավուն բառեր. „Нежный друг! любви твоей жалко нам...“ (տես թե լեռնային ծաղիկները իրենց վիշտը ողբում են այդպիսի արտահայտություններով):

Մինչև հիմա մեր դիտողությունները վերաբերում էին պոեմի նախերգանքի թարգմանությանը: Անցնենք առաջ:

Երգ առաջին, առաջին տուն.

Лори меня вновь неустанно зовет
Старинной печалью неустанно дыша.
И властно расправила крылья, и вот
К забытому дому стремится душа...

---

* Поэзия
　　Та же добыча радия.
В грамм добыча,
　　в год труды.
Изводишь,
　　единого слова ради,
Тысячи тонн
　　словесной руды.
. . . .
Эти слова
　　приводят в движенье
Тысячи лет
　　миллионов сердца.

Ով «հինավուրց թախծով անընդհատ շնչելով» („старинной печалью неустанно дыша")—Լոռին։ Բնագրից դատելով, պոետը այստեղ խոսում է հայրենի երկրի, հայրենի տան նկատմամբ իր թախծի մասին, իր հոգու անդադար ձգտման մասին դեպի հարազատ տները։ Թարգմանությունը տրամաբանորեն կաղում է և խառնաշփոթություն ստեղծում։ Ինչ վերաբերում է «մոռացված տանը» („забытому дому"), ապա դա ավելորդ գույն է, անպտուղ հավելում, որը վկայում է թարգմանչի ոչ բավարար տեղյակությանը իր թարգմանած պոետի բնույթին։ Թումանյանը երբեք չի մեղանչել «հայրենի օջախի» դեմ, որը միշտ եղել է նրա պոետական ոգեշնչման, նրա ստեղծագործության հիմնական աղբյուրը։ Հետևաբար, այդպիսի «խոստովանությունները» Նրա երգ-երգերում հնչում են խիստ չպատճառաբանված, կեղծ։

Այնուհետև՝

А там перед вечерним родным очагом
С тоской и надеждой давно меня ждут,
И слушая бурю зимы за окном,
О древних деяньях беседу ведут.

Այստեղ լոռեցը «ձմռան երկար գիշերը նստած»—ինչպես ասված է բնագրում—փոխարինված է իրիկնային զրույցով, որը միանգամայն սխալ է։ Այսպիսի դեպքերում միշտ պետք է հիշել Վ. Բրյուսովի խոսքերն այն մասին, որ «Թումանյանի պոեզիան իր առավել ուժին է հասնում լիրիկական պոեմներում, որտեղ արտահայտվում է ժողովրդական կյանքի բազմակողմանի ճանաչումը և կենդանի թափանցումը ժողովրդական հոգու խորքը։ Այլ ժողովրդի ընթերցողի համար ծանոթությունը Թումանյանի պոեմների (օրինակ, նրա «Անուշի») հետ տալիս է ավելի շատ իմացություն ժամանակակից Հայաստանի և նրա կյանքի համար, քան կարող են տալ հատուկ ուսումնասիրության ստվար հատորներ» („Поэзия Армении", էջ 78)։ Հետևաբար, եթե Թումանյանը խոսում է լոռեցիների զրույցի մասին ձմռան երկար գիշերը (և ոչ երեկոյան), ապա դա ոչ ի սեր հանգի կամ չափի և ոչ էլ նրա համար, որ դա նրան ավելի է դուր գալիս, այլ նրա համար, որ իրականում դա հենց այդպես էր (որպես ժողովրդական կենցաղի բնորոշ գիծ)։

Նշեմ այդպիսի անզգույշ ազատության մի այլ օրինակ իր տխուր հետևանքներով։ XV գլխում խոսվում է այն մասին, թե ինչպես Մոսին (Անուշի եղբայրը) սպառնում է Անուշին իր դաշույնը նրա սիրտը խրել, եթե Անուշը չի դադարի Սարոյին սիրելուց։ Մոսին պահանջում է, որ Անուշը երդվի Սարոյին մոռանալ։ Թումանյանի մոտ Անուշը խոստանում է Մոսիին կատարել նրա ցանկությունը, մոռանալ Սարոյին, բայց՝ ամեն կերպ խուսափում է երդումից և չի երդվում։ Իսկ թարգմանության մեջ գլխի սկզբում կարդում ենք.

„Ой не убивай меня, брат! Пощади,
Клянусь, что отныне он мною забыт!...“.

Եթե այդպես է, էլ ինչացու են դրան հետևող հաջորդ տողերը.

„Клянись же бесстыдная,—он ей кричал,—
Клянись, что его ты не будешь любить!
Не то—видишь мой обнаженный кинжал?
Легко мне бесчестное сердце пронзить!“

Իսկ Անուշի պատասխանը.

О брат мой! Я пыль под твоею ногой!
Ты клясться рабу заставляешь свою?...

Չէ՞ որ Անուշը արդեն երդվել է և դրանով իսկ գլխի ամբողջ շարունակությունը զուրկ է հետաքրքրությունից և անհրաժեշտությունից։

Թումանյանի մոտ Անուշը չի երդվում, որովհետև նա չի դադարում Սարոյին սիրելուց և հետագայում փախչում է նրա հետ։ Նա չերդվեց և չէր կարող երդվել, որովհետև այն ժամանակվա քրիստոնեական ժողովրդական պատկերացմամբ երդումնավոր խախտման դրժումը բոլոր պարագաներում մահացու մեղք էր—սրբապղծություն։ Թարգմանչի կողմից այդպիսի հանգամանքների անտեսումը հղի է ծանր հետևանքներով։

Անցնենք այլ կարգի «ազատություններին», որոնք նույնպես պարզապես ցածրացնում են թարգմանության որակը.

Эй! сиди в шатре, бессердечный друг!
Только выйдешь ты, *на душе недуг*!

„На душе недуг" *(հոգումս ցավ, հիվանդություն)—միթե սա իր սիրուհուն տեսնող մարդու հոգեվիճակ է։ Այստեղ խոսքը գնում է հաճելի զգացմունքների բուռն հորձանքի մասին, որոնցից գլուխ է պտտվում։ Կարծեք թե սա նույնը չէ, ինչ որ* „на душе недуг"*-ը։*

Մի այլ դիտողություն։ Եթե թարգմանչին հավատալու լինենք, Անուշի և Սարոյի հանդիպումը (գլուխ VII, VIII, IX*) տեղի է ունենում խոր, խավար գիշերով (այն էլ կիրճում).*

—Ануш, эй, Ануш, вернись же домой!..
Старуха кричит над бездной ночной.

(էջ 463)

— Нани, я *ночной* испугалась грозы

(նույն տեղում)

И сходит в ущелье к потоку она (мать)
С кувшином пустым *в глубокую ночь*.

(նույն տեղում)։

Իսկ իրականում հայկական գյուղական կյանքի այն ժամանակվա բարքերում այսպիսի «պրակտիկա» չկար։ Բնագրում Անուշն ու Սարոն հանդիպում են իհարկե ցերեկը։ *Բայց այդ ժամանակ հանկարծ՝*

Ամպերն եկել են, սարերը պատել,
Ձորերը լցվել, իրար փաթաթվել.

տես և ամենը։ Եվ այդքանը բավական էր, որպեսզի Անուշի մայրն անհանգստանար և դուրս գար նրան որոնելու։ Ո՞ւր է այստեղ խուլ գիշերով իրար հետ հանդիպելու համար տեղ։ Այդպիսի հանդիպումը կխայտառակեր և՛ Անուշին, և՛ Սարոյին, և հարազատներին։

«Խոր գիշերը» այստեղ գործին շատ է խանգարում և այլ նկատառումներով։ Այսպես, օրինակ, բնության գեղատեսիլ պատկերի նկարագրությունը Անուշի՝ ձորից դուրս գալու հետ կապված, ընթերցողի պատկերացման մեջ զուգորդվելով խոր գիշերվա հետ, դառնում է անհեթեթ։

Ահա մի հատված IX գլխից՝ Անուշի մասին։

Ու մազերն անկարգ տված թիկունքով,
Ու ցրված շիկնած այտերի վրան,
Դուրս եկավ թեթև ամպերի տակից
Անուշը փախած եղնիկի նման։

Եվ այդ ամենը խորը գիշերով...

Մի շեղումը հինգերորդ գլխում խառնաշփոթություն է մտցնում Անուշի մոր վերաբերմունքի մեջ դեպի չոբան Սարոն Անուշի սերը)․

Ануш, не забудь, ты невеста, мой друг,
Но чем тебя манит какой-то пастух?

(էջ 460)։

Դուրս է գալիս, որ Անուշի մայրը վերևից է նայում Սարոյի վրա, որովհետև նա «ինչ-որ չոբան է» („какой-то пастух") Թումանյանի պոեմում ոչ մի այդպիսի բան չկա։ Վերև բերված տողերի բնագիրը հետևյալն է՝

— Հանգի՛ստ կաց, Անո՛ւշ, դու հասած աղջիկ՝
Ի՞նչ ունես ջահել չոբանների մոտ․

Սա իհարկե, բոլորովին այլ բան է։

Վերև ասված էր գրքային, քաղցրավուն դարձվածքների մասին, որոնք հասարակ գյուղացի մարդկանց շուրթերում հընչում են շատ կեղծ։ Ահա, օրինակ Անուշի խոսքերը․

Тебя мне
Не жаль, *пастух!*
Ты нем и глух. (էջ 462)։

Եվ այս ամենը դարձյալ հանգի համար (пастух—глух)։

Այս դիտողություններով, իհարկե, չեն սպառվում Վ. Դերժավինի թարգմանած «Անուշի» թերությունները և մենք մեր առաջ այդպիսի խնդիր չէինք դրել, մենք աշխատել ենք միայն մի քանի կոնկրետ օրինակներով ցույց տալ այդ թերությունների բնույթն ու պատճառները, որոնց հաղթահարումը կախված է պոետ-թարգմանչի ջանասիրությունից և կապված է հայոց լեզվի ուսումնասիրության հետ։

Մեծ նշանակություն ունի նաև խմբագրի օգնությունը թարգմանչին։ «Անուշի» թարգմանության նշված թերությունների բնույթը ցույց է տալիս, որ մենք այստեղ չենք ունեցել հոգատար ու պահանջկոտ խմբագիր։ «Անուշ» պոեմը բանաստեղծ-ժողովրդի հպարտությունն է։ Այն պետք է բազմամիլիոն ռուս ընթերցողին ներկայացնել բնագրին համազոր, լիարժեք թարգմանությամբ։ Դա պատիվ կբերի թարգմանչին։

«ՊԱՏՎԻ ՀԱՄԱՐ»-Ը Գ. ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԹԱՏՐՈՆՈՒՄ

Քանի տարի էր, Երևանի Սունդուկյանի անվան Պետական թատրոնն իր ռեպերտուարում չուներ հայ հռչակավոր վիպասան և դրամատուրգ Շիրվանզադեի գլուխ-գործոց դրաման՝ «Պատվի համար»-ը: Թատրոնն ու հանդիսականը, կարծես մի տեսակ մոռացության էին տվել մեր դրամատուրգիայի և թատրոնի պատմության մեջ՝ անմահ «Պեպո»-ից հետո՝ երկրորդ տեղը գրավող պիեսը, որ բացառիկ դեր է կատարել հայ ռեալիստական թատրոնն ստեղծելու գործում:

Երբ թերթերում կարդացի «Պատվի համար»-ի նոր բեմադրության մասին, վերհիշեցի անցյալում տեսած ներկայացումները, հիշեցի Էլիզբարով-Աբելյանի մոնումենտալ կերպարը, թվեցի նոր հնարավոր Էլիզբարովներին, վճռեցի՝ երևի ձանձրանամ, եթե դիտելու լինեմ. բայց մի տեսակ անհամբեր սպասում էի ներկայացման օրվան: Գնացի առաջին ներկայացմանը, տպավորությունս սպասածիցս հակառակ դուրս եկավ. ներքուստ կարմրեցի կանխակալ կարծիքիս համար և մեղադրեցի թատրոնի ռեպերտուարը կազմողներին, որ այսքան տարի մոռացության էին տվել «Պատվի համար»-ը:

Թատրոնի հաջողության գաղտնիքն ինարկե նախ և առաջ Շիրվանզադեի դրամայի մեջ է: Արդեն երեսունհինգ տարվա պատմություն ունի այս դրաման: Գրված է 1904 թվին, երբ Շիրվանզադեի տաղանդն իր գագաթնակետին էր հասել: Գրված էր հռչակավոր «Քաոս»-ը, հայ բուրժուազիայի կյանքի որոշ շրջանի այդ բացառիկ գեղարվեստական հանրագիտարանը: «Քաոս»-ից հետո Շիրվանզադեն արդեն դրամատիկ երկի մեջ խտացնում էր

բուրժուական կյանքի ճանաչման իր հարուստ փորձը և գեղարվեստագետի մեծ վարպետությունը: «Պատվի համար»-ը զուտ դրամատիկ ժանրային տեսակետից դարձավ հայ դրամատուրգիայի մինչև այժմ չգերազանցված գագաթ:

Իր բովանդակությամբ «Պատվի համար»-ը բուրժուազիայի գլխավոր սկզբունքի՝ շահի սկզբունքի և դրա հիման վրա ստեղծված հարաբերությունների՝ մասնավորապես ընտանեկան հարաբերությունների, հայ ազգային, ասիական բիրտ կերպարանքի գեղարվեստական հոյակապ արտացոլումն է:

«Մերկ շահի սկզբունքով», «դրամական հաշվի» մոլուցքով բռնված ասիական բռի բուրժուազիան՝ Էլիզբարովը խորտակում է իր աղջկա կյանքը, «այրում է նրա պատիվը» և մղում ինքնասպանության, որպեսզի մեռած ընկերոջ ընտանիքին չվերադարձնի իր հափշտակած հարստությունը:

Շիրվանզադեն ռեալիստ դրամատուրգի մեծ վարպետությամբ բաց է անում բուրժուական ընտանիքի մահացու խոցերը և ընթերցողին, հանդիսատեսին աներկբայելիորեն համոզում, որ բուրժուական սեփականատիրական հիմքի վրա փոխադարձ սիրո և հարգանքի հարաբերություններ չեն կարող ապրել: Ինչ որ թերի է թողնում Շիրվանզադեն, այն լրացնում է խորհրդային հանդիսատեսը: «Կոմունիստական մանիֆեստում» ասված է. «Բուրժուական ընտանիքը բնականաբար պիտի վերանա... կապիտալի անհետացմամբ»:. Այս բանը կատարվում է խորհրդային հանդիսատեսի աչքի առաջ, նրա գործունեությամբ. իր սեփական կենդանի հեղափոխական փորձի հիման վրա խորհրդային հանդիսատեսը նոր հայեցակետից է դիտում խորտակված և հիմնահատակ ոչնչացվող անցյալի գեղարվեստական պատկերը «Պատվի համար»-ի մեջ: Այդ փորձի վրա ավելի լավ է տեսնում դիտողը, սեփականատիրական զազրելիության մնացորդները մեր կյանքում ու հոգեբանության մեջ և ավելի վճռական ու գիտակից է դարձնում իր պայքարը դրանք արմատահանելու և նոր, կոմունիստական հարաբերություններ արմատավորելու համար:

«Պատվի համար»-ն այսօր էլ ճանաչողական և դաստիարակչական շատ մեծ նշանակություն ունի մեզ համար:

«Պատվի համար»-ը բացառիկ դեր է կատարել հայ թատերական կուլտուրայի, առանձնապես ռեալիստական դերակատարման

զարգացման գործում: «Պատվի համար»-ն առհասարակ համարվել է հեշտ բեմադրվող դրամա. այդ ոչ միայն այն պատճառով, որ նեղ իմաստով բեմական բարդ տեխնիկա չի պահանջում, այլև նրա համար, որ պիեսը դրամատիկորեն այնքան լավ է կառուցված, բովանդակությունն այնքան կոնկրետ է, հետաքրքիր և ամբողջական, գործող անձերն այնքան տիպական են, գեղարվեստականորեն այնքան կոնկրետ, որ ոչ միայն ներկայացումը, այլև լավ ընթերցումը կարող է կլանել դիտողին-լսողին:

Հայ թատրոնը նախախորհրդային շրջանում առհասարակ իսկական բեմադրական կուլտուրա չի ունեցել: Պիեսները խաղացվել են միայն լավ թե վատ, բայց բեմադրություն՝ լուրջ իմաստով՝ չկար: «Պատվի համար»-ի ներկայացումները չեն շեղվել ընդհանուր կանոնից, բայց չնայած դրան «Պատվի համար»-ը ռեալիստական դերակատարման խոշոր դպրոց է եղել հայ ազգային ռեպերտուարում: Գաղտնիք չէ, որ թատրոնը կարող է զարգանալ միայն լավ պիեսների բեմադրությամբ: Դերասանը կարող է զարգանալ և դրսևորել իր տաղանդը լավ պիես, հարուստ և գեղարվեստականորեն ամբողջական դերեր խաղալով և ընդհակառակը, սխեմատիկորեն անհաջող պիեսներ, անբովանդակ և թույլ դերեր խաղալը կարող է ետ տանել, փչացնել թատրոնն ու դերասանին: Գաղտնիք չէ նաև, որ ազգային թատրոն, ուրեմն և թատրոնական ազգային կադրեր ստեղծելու գործում վճռական նշանակություն ունի ինքնուրույն ռեպերտուարը: Ուստի ինքնին հասկանալի է, թե հայ ազգային ռեպերտուարի աղքատության պայմաններում, թատրոնի և դերակատարման զարգացման գործում ի՞նչ խոշոր դեր պիտի կատարեր «Պատվի համար»-ի նման դրամատիկական երկը: Եթե օրինակ վերցնենք Աբելյանին. կարելի է առանց երկմտելու ասել, որ նրա հռչակը մեծապես կապված է Շիրվանզադեի դրամաների, մասնավորապես «Պատվի համար»-ի Էլիզբարովի հետ: Իսկ Աբելյանը հայ թատրոնի պատմության մեջ ազգային ռեպերտուարի ռեալիստական կերպարներ կերտելու գործում մինչև հիմա էլ մնում է չգերազանցված:

Բեմադրության և ռեժիսյոր բեմադրող ընկ. Վարդան Աճեմյանի մասին: Ասում են, որ «Պատվի համար»-ն իր երկար կյանքի ընթացքում դեռ արժանի բեմադրություն չէր ունեցել: Այդ ճիշտ

է, և այդ բանը նոր միայն խոր կերպով զգացվեց՝ այս նոր բեմադրությունից հետո։ Դա արդեն նշանակում է, թե Աճեմյանը իր բեմադրությամբ մի շատ կարևոր նորություն է բացել թատրոնի և հանդիսատեսի համար, հարյուրավոր անգամ խաղացված պիեսի մեջ։ «Պատվի համար»-ի նախկին շատ ներկայացումներ (նույնիսկ Աբելյանի ներկայացումները) տեսած մարդիկ՝ ընդմիջումներին և ներկայացման վերջում՝ ընդհանրապես հիացմունքով են խոսում այս ներկայացման մասին և ամենից առաջ նկատում բեմադրության կուլտուրա և ոճական ամբողջականություն։ Ես ծանոթ եմ Աճեմյանի շատ բեմադրություններին, որ ակներև է եղել ռեժիսյորի շնորհքը, տաղանդը, բայց տարբերությունն այն է, որ իր նախկին բեմադրություններում Աճեմյանը, խստորեն ասած, մի տեսակ էկլեկտիկ է, համաչափորեն չի ներթափանցում ներկայացման բոլոր անկյունները։

«Պատվի համար»-ի այս նոր բեմադրության մեջ ահա Աճեմյանը համաչափ և ներդաշնակ կերպով թափանցում է ներկայացման բոլոր անկյունները և տալիս է անհամեմատ ավելի ամբողջական կուռ բեմադրություն, կուլտուրական և ճաշակով ներկայացում։ Նույն ուղղությամբ է ընթացել նաև շնորհալի նկարիչ Զիլինգարյանի աշխատանքը՝ արտաքին ձևավորման մեջ, որ շատ է օգնում գործին։ Աճեմյանը ճիշտ է բռնել դրամայի զարկերակը և համառ կերպով հետևում է նրա կանոնավոր բաբախմանը։ Նա ներկայացման յուրաքանչյուր գործողության ու պատկերին տվել է այնպիսի ռիթմ, որ ընդհանուր առմամբ շատ լավ ներդաշնակում է դրամայի ամբողջ կյանքին և (որոշ բացառություններով) ոչ մի դժվարություն, կաշկանդում չի ստեղծում դերասանի և հանդիսատեսի համար, այլ ընդհակառակը, խթանում է թե յուրաքանչյուր կերպարի, և թե պատկերի, գործողության ու ողջ դրամայի կենդանի, ներդաշնակ ընթացքին։

Իր նախորդ բեմադրություններից էլ Աճեմյանը հայտնի է որպես հմուտ միզանսցեն կառուցող։ Միզանսցենը վճռական ազդակ է բեմական արվեստի մեջ։

Ինչպես խոսքի և խաղի արվեստի մեջ դերասանական արվեստը կատարելագործման սահման չունի, երբ գործ ունենք [illegible] գեղարվեստական կերպարի հետ, այնպես էլ միզանսցենի (և ոչ միայն միզանսցենի) արվեստի կատարելագործման մեջ բե-

մադրողը սահման չունի իր առաջ, եթե գործ ունի իսկական գեղարվեստական երկի բեմադրության հետ։ Աճեմյանի մեր տեսած բեմադրություններից ոչ մեկի մեջ այս բանն այնքան ակնբախ չէ, ինչպես «Պատվի համար»-ում։ Միզանսցենի գաղտնիքը ճշմարտացիության, կոմպոզիցիոն էսթետիկության, բայց և միաժամանակ «աննկատելիության» մեջ է։ Աճեմյանը հասնում է դրան։ Տեղ-տեղ աչքի խփող թերություններ կան, բայց դրանք հեշտ հաղթահարելի են, ինչպես, օրինակ՝ չորրորդ գործողության 6-րդ տեսիլի մեջ, երբ Անդրեասը մեջքը դեպի դուռը կանգնած թիկն է տալիս գրասեղանին, իսկ Մարգարիտը, որին հրել էր Անդրեասը, ետ է դառնում դռան մոտից և գալիս հենվում հոր ուսին ու շարունակում աղերսել։ Ամեն բան տեղն է, բայց «նկատելի» է։ Կամ նույն գործողության 4-րդ տեսիլում Անդրեասն ու Սաղաթելը քայլում են ու խոսում, Անդրեասն առաջից, իսկ Սաղաթելը համաչափ քայլով հետևում է նրան. դարձյալ ինքնին հիանալի է, բայց ցցուն է, «նկատելի»։ Կասկած չկա, որ լավ միզանսցենը կարող է փչանալ դերակատարի խաղից, մանավանդ սխալ ռիթմից, տակտից, չափից և այլն. բայց առհասարակ միզանսցենն ու խաղը իրար հետ կապված, իրար պայմանավորող բաներ են, և այնքան սերտ կապված, որ մեծ մասամբ միզանսցենը մշակելիս նկատի է առնվում դերակատարը։

Աճեմյանը բեմադրության մեջ իբրև խաղարկային պլան, միանգամայն տեղին և ռեալիստորեն օգտագործում է երգն ու նվագը, որոնք օգնում են պերսոնաժների բնավորություններն ու հոգեվիճակը դրսևորելուն։

Աճեմյանի բոլոր ջանքերն իզուր կանցնեին, եթե թատրոնը շատ խելացի կերպով մեր լավագույն դերասաններին չհամախմբեր այս բեմադրության մեջ։ Թատրոնի այս վարմունքը շատ մեծ օգուտ բերեց թե ներկայացմանը, թե իրենց՝ դերասաններին։ Խաղն ամբողջությամբ վերցրած ընթանում է այնքան լավ, որ ոչ միայն ուրիշ դերակատարների, այլև Էլիզբարովի դերակատարման թերությունները չեն փչացնում ամբողջական տպավորությունը։

Անվիճելի է, որ այժմ «Պատվի համար»-ի բեմադրական ամենածանր հարցը Էլիզբարովի դերակատարի խնդիրն է։ Թատրոնն այստեղ կրկնակի դժվարության առաջ էր կանգնած, նախ՝ Աբե-

յանի մոնումենտալ էլիզբարովից հետո, նոր և մեր թատրոնի բարձրության արժանի էլիզբարով ստեղծելը, և երկրորդ՝ Արեյանին չկրկնելը (լավ թե վատ): Այս դժվարին խնդիրը պետք է լուծի ահա ժողովրդական դերասան Հրաչյա Ներսիսյանը: Ես երկու անգամ դիտել եմ ներկայացումը մեկ ամսվա միջնադադարով: Երկրորդ անգամ դիտելով Ներսիսյանի խաղը, ես համոզվեցի նոր էլիզբարովի հաջողությանը: Տաղանդավոր դերասանն անկասկած, որոշակի կերպով շոշափում է էլիզբարովի սեփական կերպար ստեղծելու ուղիները: Բայց դա դեռ երկար ու համառ ջանք է պահանջում: Այժմ դեռ վաղ է մանրամասնությունների մեջ մըտնել, միայն ուզում ենք մատնանշել, որ ինչ էլ լինի, էլիզբարովի մեջ պիտի ընդգծվի ասիական տիպի հայ բուրժուան և երկրորդ՝ ծանրախոհությունը էլիզբարովի բուն բնավորությունն է, ուստի արագախոսությունն ու երբեմնակի արագաշարժությունը, որոնց դիմում է Ներսիսյանը դժվար մոմենտներին, գործին չեն օգնում: Ամբողջական գեղարվեստական կերպարը, ինչպես վերևում ասացինք, միշտ էլ լավ դերասանի համար զարգացման մի նոր կուրս, նոր դպրոց կարող է դառնալ: Այսպես է մոտենում Ներսիսյանն իր դերին և նրա հարուստ արտիստական տվյալների պայմաններում դա հաջողության գրավական է արդեն:

Սաղաթելի նոր բեմական կերպար է ստեղծել ժողովրդական դերասան Ա. Ավետիսյանը: Նա լավ է ըմբռնել Սաղաթելների էությունը, նրանց կյանքի նպատակը, նրանց դերն ու վերաբերմունքը դեպի շրջապատը: Հետևելով Ավետիսյանի խաղին, տեսնում ենք, թե ինչպես նա քայլ առ քայլ վարպետորեն բաց է անում ասիական՝ հայկական Շեյլոկի խնամու խարակտերը և ինքն էլ աճում իբրև արտիստ:

Ավետիսյանի Սաղաթելը մասնավոր սեփականատիրական նողկալիության թանձրացյալ կերպարն է բեմի վրա: Նրա մոտ մարդկային բոլոր հատկությունները ետ են մղված և ծածկված սահման չունեցող էգոիզմով, ստորությամբ, նենգությամբ, ցինիկ խորամանկությամբ. նա անբարոյական է բառիս ամենալայն իմաստով և բոլորովին չի քաշվում իր այս արարքների համար: Ընդհակառակը, լավ ճանաչելով իր շրջապատը, ամուր բռնելով իր դիմացինների թույլ կողմերը, նա եռանդուն ակտիվությամբ վարում է իր գիծը: Արհամարհանքը դեպի մարդն ու մարդկայինը և դե-

ժի շրջապատողներն առհասարակ, նրա համար ընդհանուր սկզբունք է, բնավորություն. այստեղից է բխում Ավետիսյանի յումորը, որով շաղախված է նրա ամբողջ խաղը, և դա հիանալի է։ Բայց ահա տեղ-տեղ, երբ Ավետիսյանը կարծես չբավականանալով խարակտերի էությունից բխող յումորով, այդ ուղղությամբ իր արտիստիկ լայն հնարավորությունները դրսևորելու համար «լրացուցիչ» յումորիստական շտրիխների է դիմում, իսկ դա իսկույն տարբերվում է, նկատվում, ինչպես սևը սպիտակի վրա, և դրանով իսկ խախտվում է խաղի ամբողջական ոճը։ Այս խախտումները խանգարում են ոչ միայն Ավետիսյանի հոյակապ Սաղաթելին, այլև առհասարակ, ներկայացման ոճին։

Սաղաթելի հարուստ դերը, դիմակներ պատող ու ռեալիստական արվեստով գծված այդ գունեղ կերպարը մի կողմից, և հարուստ արտիստիկ տվյալների տեր տաղանդավոր դերասան Ավետիսյանը մյուս կողմից կարծես իրար համար են ստեղծված։ Նշված թերությունները վերացնելուց հետո Ավետիսյանի Սաղաթելը կմտնի հայ թատրոնի կերտած լավագույն բեմական կերպարների շարքը։

Գրեթե անթերի է ժող. դերասան Վ. Վաղարշյանի իսկական արտիստիկ խաղը Սուրենի դերում։ Նրա Սուրենի բեմական կերպարը մի առանձին երանգ է տալիս ամբողջ ներկայացմանը։ Դա այդպես է իհարկե պիեսում, բայց պետք էր այն բաց անել, բեմական կերպարանք տալ դրան։ Սուրենի գլխավոր գիծը անմիջականությունն է, դևիզը՝ կյանքի վայելքը. այդ բանը լավ է ըմբռնել Վաղարշյանը և հետևողականորեն անց է կացնում հոգեբանական բոլոր վիճակների մեջ։ Ինչ վերաբերում է Սուրենի այնպես կատեգորիկ կերպով արտահայտած համոզումներին, մտքերին և զգացմունքներին, որոնց կարող է սխալմամբ լուրջ կարևորություն տալ, հավատալ, իրականում ռեֆլեկտիվ են։ Սուրենը լուրջ, ճըշմարտալի, կայուն սկզբունքներ, մտքեր ու զգացմունքներ չունի։ Նա իր արտահայտածին տվյալ մոմենտում հավատում է իհարկե անկեղծորեն, բայց դա վերաբերում է միմիայն տվյալ մոմենտին, տվյալ սիտուացիային։ Վաղարշյանը շատ խոր է ըմբռնել այս նուրբ գիծը և փայլուն բեմական արտահայտություն է տալիս դրան։ Միայն մի դիտողություն. եթե Սուրենն անպայման պետք է

համբույրի ապախնին, թող համբույրի, բայց ոչ երրորդ գործողության մեջ:

Սուրենի հակապատկերն է ինժեներ Բագրատը, հայ-եվրոպական երիտասարդ բուրժուան: Ժող. դերասան Ջանիբեկյանը ճիշտ է ըմբռնել իր դերը և լավ գծում Բագրատի բեմական կերպարը: Ջանիբեկյանի Բագրատը ժառանգել է հոր դաժանությունը և նրան ավել «եվրոպական կերպարանք»: Նա գործնական և խիստ է, վճռական, կտրուկ, մեծամիտ, արհամարհում է յուր շրջապատը ցինիկ եսամոլությամբ: Երկու նկատելու արժանի թերություն. երրորդ գործողության մեջ, իր ծրագրերի մասին խոսելիս, Բագրատը խիստ հռետորական ոճ է գործածում, որ անտեղի է. նույնը չորրորդ գործողության մեջ՝ Սաղաթելին սպառնալիս, որ «ձեռները մաքուր պահի իր գործերում»: Մյուս թերությունը երբեմնակի արտախոսությունն է, որ խանգարում է խոսքը հանդիսատեսին հասցնելուն:

Վաստակավոր դերասանուհի Ռուզան Վարդանյանը Մարգարիտին ներկայացնում է խոր թախիծով համակված մելամաղձոտ մի ոգի, որ մաքուր է մնացել շրջապատող ճահճի մեջ և տառապում է այդ մթնոլորտում: Վարդանյանը լավ է ըմբռնել Մարգարիտի թե ուժը և թե թուլությունը. Մարգարիտը ազնիվ է, հասուն գաղափարների և զգացմունքների տեր, ճշմարտասեր, իր հայացքների մեջ համառ ու հետևողական, բայց գրեթե միայնակ ու անզոր՝ գարշելի շրջապատի քարացած փորձի դեմ: Այդ պատճառով նա չափազանց փխրուն է ու գիտակցում է այդ թուլությունը. նա գիտե, որ բախվելով քար շրջապատին պիտի փշրվի: Այս ինքնազգացումը, որպես ընդհանուր տրամադրություն, որոշակի երանգ է տալիս Վարդանյանի կերտած բեմական Մարգարիտին: Բայց դրա հետ միասին նա բավականաչափ ջերմ չէ: Այդ պատճառով էլ տեղ-տեղ, ինչպես պետքն է, չի վարակում դիտողին և թուլացնում է կերպարի ուժեղ դրամատիկ բնույթը: Այս թերության հետ կապված է Վարդանյանի բեմական խոսքի որոշ թերություն: Վարդանյանն առհասարակ շատ մեծ ուշադրություն է դարձնում արտասանության արվեստին և դա նրա առավելությունն է: Բայց պետք է համաչափություն լինի արտասանված խոսքի, զգացմունքի խորության և խաղի միջև: Վարդանյանի մոտ խոսքը գերակշռում է, այստեղ որոշ դեր է կատարում նաև

տեքստը, որ տեղ-տեղ բավական գրքային է։ Բայց տեքստի այս թերությունը հաղթահարելի է և պետք է ասել, որ հոմվարի 8-ի ներկայացման ժամանակ Վարդանյանը որոշ չափով արել էր այդ։ Առհասարակ Վարդանյանը հնարավորություն ունի էլ ավելի ջերմ և դրամատիկ բնույթ տալ իր դերին, և նա պետք է անի այդ բանը։

Մինչև այսօր ես լավ Օթարյան չէի տեսել։ Այստեղ արդեն մեղավոր է հեղինակը նույնպես։ Օթարյանը համեմատաբար թույլ գծված կերպար է, բայց չնայած դրան վաստակավոր արտիստ Մալյանն աշխույժ և լավ է խաղում Օթարյանի դերը, կարողանում է ռեալիստական կենդանի գունավորում տալ նրան և ընդհանուր առմամբ ետ չի մնում ներկայացման բարձր մակարդակից։ Պիեսում Օթարյանն իհարկե սանտիմենտալ է, լալկան, ախտորիկ։ Մալյանն աշխատում է աննկատելի դարձնել այդ թերությունները, բայց հետքերը դեռ մնում են, անհրաժեշտ է վերացնել։

Շատ լավ է խաղում վաստ. դերասան Գ. Գաբրիելյանը Վարդանի դերը։ Որքան էլ շատ խտացնի նա կոմիզմը Վարդանի դերում, եթե անտրամաբանականությունն ու ոճական միասնությունը չի խախտվում, ապա այդ չի խանգարում բեմադրությանը։

Լիզիկ Հարությունյանը լավ է խաղում Երանուհու դերը։ Նա շեշտում է մի կարևոր մոմենտ. Երանուհին իրեն խորթ է զգում իր սեփական տանը, այդ պատճառով էլ միշտ մելամաղձոտ է, և դա շատ լավ է։

Լավ է խաղում Կոթիկյանը Կարինյանի փոքրիկ դերը։

Ռոզալիան գուցե ամենադժվար կանացի դերն է «Պատվի համար» դրամայում։ Սեբարի խաղի մեջ առայժմ աչքի ընկնողը դերասանուհու համառ ջանքերն են, որոնք սակայն դեռևս ցանկալի արդյունք չեն տվել։ Սեբարի խաղի մեջ արտաքուստ, կարծես ամեն բան իր տեղումն է, բայց մի տեսակ կապ չի ստեղծվում խաղի և կերպարի ներքին բովանդակության միջև։ Ռոզալիան անշոշափելի է մնում հանդիսատեսի համար։ Սա ներկայացման թույլ տեղն է, որը պետք է վերացնել։

Նկատված թերությունները վերացնելուց հետո «Պատվի համար»-ը կմնա իբրև մեր թատրոնի լավագույն բեմադրություններից մեկը։

ՍՏԵՓԱՆ ԶՈՐՅԱՆ. «ՄԻ ԿՅԱՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»

Հեղինակավորված թարգմանություն հայերենից Մ. Սուքիասյանի. Մ.-Լ. Մանկհրատ, 1941, 175 էջ, գինը 4 ռ. 25 կ. տիրաժ 50.000 օրինակ. Նկարները Ա. Դավիդովայի։

Հայ արձակագիր Ստեփան Զորյանի «Մի կյանքի պատմություն» ինքնակենսագրական վեպի առաջին գիրքը բացվում է հիմնական հերոսի՝ Սուրենի լույս աշխարհ գալու մասին պատմվածքով։ Այնքան լավն է այդ պատմվածքը, որ անհնար է ինքն իրեն զսպել և ամբողջությամբ չբերել այն։

«Մորս պատմելով՝ ես ծնվել եմ գարնան մի առավոտ—վաղ արշալույսին, ու իմ ծնվելուն պես՝ մեր եկեղեցու զանգերն սկսել են ղողանջել.

— Տի՜ն-դի՜ն... տի՜ն-դի՜ն...

Ներկաների կարծիքով շատ հանդիսավոր ու խորհրդավոր է եղել այդ վայրկյանը։ Զանգերը կարծես ավետել են, թե ահա աշխարհ է գալիս մեկը, որ առանձին բան է լինելու—ուշադրությո՛ւն.—«Տի՜ն-դի՜ն... տի՜ն-դի՜ն»... Յոթանասուն հինգ տարեկան տատմերն այն կարծիքն է հայտնել, թե քառասուն տարվա ընթացքում այդպիսի զանգերի ղողանջով ծնունդ չի պատահել իրեն, և այս հանգամանքն առիթ է տվել նրան կարծելու, որ ես կա՛մ շատ «աստղով» ու նշանավոր մարդ պիտի լինեմ, կա՛մ... նշանավոր ավազակ, որի մասին ասված արդեն առաջուց—զանգահարությամբ զգուշացնում է մարդկանց։ Իսկ տատս—նույնպես աստվածավախ մի կին—զանգերի այդ ղողանջից ենթադրել է, որ ես հավանաբար եկեղեցու սպասավոր եմ դառնալու, այլապես իմ ծնունդը չէր զուգադիպի եկեղեցու զանգահարության.. Բայց, փոքր անց, դիմագծերս զննելով, գտել է, որ բերանս նման է

ձկան բերանի, ուտի և մի համարձակ գուշակություն է արել, թե ես, երևի, շատ պիտի ճամփորդեմ, այն էլ, ով գիտի, ծովերով…

— Ծովերո՞վ,— վախեցել է հորաքույրս։— Վո՜ւյ, ամա՛ն, կխեղդվի…

— Ո՞վ պիտի նրան թող տա, որ ճանապարհորդի,— ասել է պապս, տեր ողորմյան քաշելով։

— Հե՛րը,— հեգնել է վաճառական հորեղբայրս, ակնարկելով հորս անփողությունը, որ հողագործ մարդ՝ փող չի գտնի ինձ տալու։

Հայրս լսել է համեստությունից թե ամաչելուց, որ երեխա է ունեցել, կամ մտքում ուրախացել է գուցե, որ ես, իբրև տղա, վար ու ցանքին կարող եմ օգտակար լինել իրեն։

Ինչ վերաբերում է մորս, նա կողքի սենյակում մահճակալին պառկած, լսել է այս բոլորը և զայրացել հորս վրա, որ նա՝ հորեղբորս հեգնանքին չի պատասխանել արժանի խոսքերով, թե՝

—Մի վախի, իմ տղան ճանապարհածախսը քեզանից չի ուզի…

Կամ թե ասեր՝

— Ինքը կաշխատի, ինքը կճանփորդի…

Մինչ այդ՝ տատմերն ինձ փաթաթել է բարուրի մեջ և տարել մուտքի դռան շեմքում կանգնել՝ երեսը դեպի արևելք ու սկսել խաչակնքելով.

Տեր ամենակարող ու լուս արեգակ,
Տվեք երկրիս խաղաղություն,
Թագավորաց հաշտություն,
Յավին բանգություն,
Հացին առատություն,
Էս երեխին էլ՝ երկար արև…

Տատմերն աղոթում է շեմքին, մերոնք վիճում են ներսը, իսկ ես այդ բոլորին անուշադիր՝ ճչում եմ անվերջ, և հանգստանում այն ժամանակ միայն, երբ մայրս ստինքը դնում է բերանս»։

Սա հայկական կյանքի վաղուց անցած օրերի պատկերի կենդանի նկարագրության մի հրաշալի ուրվագիծ է։

Այնուհետև մենք իմանում ենք, որ առաջին գլխի իրադարձությունները վերաբերում են անցյալ հարյուրամյակի վերջին։ Այդ

ժամանակ ծնված սերունդը եղել է պատմական խոշոր տեղաշարժերի—XX դարի ռուսական երեք ռևոլյուցիաների ականատեսն ու հերոսը։ Այդ սերնդի գեղարվեստական պատմությունը բացառիկ հետաքրքրություն է ներկայացնում ինչպես պատմա-իմացական, այնպես էլ գեղարվեստական-դաստիարակչական տեսակետից։

Իր մանկությունը Սուրենը—Ստեփան Զորյանը—հիշում է այն օրից, երբ նա դաժան կերպով ծեծվել է կերած մի կտոր շաքարի պատճառով։ Այդ միջադեպի նկարագրության մեջ երեխայի անձնական վիշտը միաձուլվում է էպոխայի համար բնորոշ սոցիալական ու կենցաղային ողբերգության հետ։ Սուրենին ծեծում է նրա կուլակ վաճառական հորեղբայրը։ Ծնողները բողոքում են հորեղբոր արարքի դեմ.

«— Բա ես աշխատեմ, արուն քրտինք-թափեմ ամեն օր, մի կտոր շաքարն իմ երեխին շատ համարեն»,—ասում է հայրը։ Դրան կուլակ հորեղբայրը ծաղրանքով պատասխանում է՝

«— Մեծ բան ա՝ մի երկու արտ ա վարում»։

Պապը բռնում է հորեղբոր կողմը և վիրավորում է Սուրենի հորը։ Սոցիալական անարդարությունը թափանցում է ընտանիք և խորապես տպավորվում է երեխայի հոգում։

Այդ վեճից հետո տեղի է ունենում բաժանքը—Սուրենի պապը մնում է հարուստ հորեղբոր հետ, որը ստանում է ամբողջ ունեցվածքի առյուծի բաժինը. Սուրենի հորը մնում է մի պատառ խոպան հող և մի լուծ եզ սայլով։ Հոր և հորեղբոր միջև հակամարտությունն ու սկանդալները հետագայում շարունակ ուժեղանում են ուղեկցելով «Մի կյանքի պատմության» հերոսի ամբողջ կյանքին և դառնում են նրա սոցիալական ու անհատական բնավորության հիմնական որոշիչներից մեկը։ «Երբ հիմա,—ասում է հեղինակը—հեռու հեռվից ետ եմ նայում այդ օրերին—բաժանքի կռիվները համարյա սքողում են այն բոլորը, ինչ լավ էր ու գեղեցիկ իմ վաղ մանկության մեջ»։

Բաժանքի պատմությունը, ինչպես և ամբողջ «Մի կյանքի պատմությունը» արվում է առաջին դեմքով—պատանու անունից։ Հեղինակը մնում է փոքրիկ հերոսի զարգացող աշխարհըմբռնողության սահմաններում, ամեն կերպ խուսափելով միջամտությունից։ Եվ չնայած դրան, նրան հաջողվում է հրաշալի ռեալիստական ձևով ցույց տալ իր հերոսին դաստիարակող միջավայրի

տիպական գծերը: Պատմելով բաժանքի առանձին միջադեպերի մասին, այդ իրադարձության մեջ հարևանների և ազգականների խառնվելում, հեղինակը ընթերցողի առաջ բաց է անում հայկական իրականության մեջ ընտանեկան հարաբերությունների ճրշմարտացի պատկերը այն ժամանակաշրջանում, երբ կյանքի նահապետական հիմքերը քանդվել էին զարգացող կապիտալիզմի հարվածների տակ:

Երրորդ գլխից սկսած պատմվածքը դուրս է գալիս ընտանեկան վեպի շրջանակներից: Ընտանիքի սահմաններից դուրս Սուրենն ընդհարվում է կյանքի նոր, ավելի բարդ երևույթների հետ:

Ռուս փոդրաքչին շահագործում և վիրավորում է նրա հորը, նրա երեսին ցեմենտ շպրտում: Հայրը երկարատև հիվանդանում է, քիչ է մնում կուրանա, բայց փոդրաքչիկի հանցագործությունը մնում է անպատիժ: Հոր փոխարեն վրեժխնդիր լինելու համար Սուրենը քարեր է նետում փոդրաքչիկի երեխաներին, և դրա համար փոքրիկ «հանցագործին» տանում են տանուտերի մոտ, որպեսզի պատժեն: Այս անարդարությունների դեմ բողոքող Սուրենի մորը բացատրում են՝ «—կամաց, կամաց, դու չես իմանո՞ւմ, որ փոդրաթչին թագավորական մարդ ա»... «—Բա մենք չո՞ւն ենք,—զայրացած հարցնում է մայրը,—մենք էլ մարդ ենք»...

Տղային զարմացնում և վիրավորում է այս ամենը: «Ինչ բան է «թագավորը» և ինչո՞ւ ռուսներն ունեն, իսկ մենք չունենք»—ահա հարցեր, որոնք խորապես հուզում են փոքրիկ հերոսին: Գրողը իր ընթերցողներին մոտեցնում է ընդհուպ մինչև ցարական կառավարության կողմից դեպի ոչ ռուս ազգությունների նկատմամբ տարվող անարդարացի ազգային քաղաքականության պրոբլեմը և անխուսափելիորեն զարթեցնում է հպարտություն մեր ժողովուրդների ստալինյան բարեկամության համար:

Մի փոքրիկ ռեցենզիայով հնարավոր չէ հետևել Սուրենի կյանքի պատմության ամբողջ ընթացքին և վերլուծել հերոսի բնավորությունը սոցիալապես և հոգեբանորեն ձևավորող ամեն մի իրադարձություն: Կնշեմ լոկ առանձին էտապները:

Մենք գիտենք, որ Սուրենի կյանքի առաջին խոշոր դեպքերը նրա մեջ արթնացրին սոցիալական և ազգային անարդարության գիտակցությունը: Այդ անարդարությունների գիտակցումը և դժգոհության, ատելության ու բողոքի զգացման կուտակումը տպավոր-

վող պատանու հոգում—ահա գրքի լեյտմոտիվը։ Ցարական իշխանությունները փակում են հայկական դպրոցը, որ սովորում էր Սուրենը, ձերբակալում են նրա սիրելի ուսուցիչ Զաքար-վարժապետին։ Պատանին վկա է լինում հարուստների և ռուս չինովնիկների երեխաների արտոնություններին ռուսական դպրոցում, ուր սովորելու է ընկնում վիճակահանությամբ, վկա է լինում Նիկոլայ Պետրովիչի «դաստիարակման» վայրենի մեթոդներին և մինչռևոլյուցիոն, ռուսական հին դպրոցի այլ բացասական կողմերին, մասնավորապես, ազգային գավառներում,—այս ամենը, բնականաբար, զարգացնում են հերոսի բնավորության մեջ հիշյալ գծերը։

Ժողովրդի մեջ լուրեր են տարածվում, թե ռուսական ցարը ուզում է բոլոր հայերին վտարել հեռավոր երկիր՝ Ավղանիստան։ Դա առիթ է տալիս ժողովրդական ցասման յուրահատուկ դրսևորման, որը հատուկ էր 1905 թվականի ռևոլյուցիայի էպոխայի համար՝ կանանց տարերային ցույցի։ Ցույցը գրավում է Սուրենին ու իր ընկերներին և նրանք յուրովի մասնակցում են այդ ցույցին։

Սուրենի կյանքի հետ կապված ռևոլյուցիոն ժամանակաշրջանի մյուս տիպական իրադարձությունը,—դա երկաթուղային գծամասի պետի՝ Կառլ Կառլովիչի սպանությունը և արդեն դպրոցն ավարտած և գծամասի գրասենյակում աշխատող Սուրենի ձերբակալումն է։

Երկաթուղին իր բանվորներով, ծառայողներով ու պետերով, նրանց փոխհարաբերություններով—տասնհինգամյա Սուրենի համար բոլորովին մի նոր աշխարհ է, բայց միաժամանակ դա նույն դաժան և անարդարացի կյանքի շարունակությունն է, որի հետ ընդհարվել է նա դեռ վաղ մանկության օրերին։

Պետք է նշել, որ պատանու պատմվածքի նախկին տոնը ընդհանրապես շատ հաջող տվող հեղինակը միշտ չէ, որ անհրաժեշտ չափով հաղթահարում է այդ նախկինությունը, որ, ի դեպ, անհրաժեշտ է հերոսի գիտակցության տրամաբանական զարգացման հետևանքով։ Եվ այնուհանդերձ, «Տասնուհինգերորդ գծամասի գրասենյակը», «Ահավոր գիշեր և անծանոթ տեղեր» և «Դեպի անհայտ հեռուն» գլուխները հանդիսանում են հազվագյուտ գեղարվեստական էջեր Հայաստանի բանվորների կյանքից ռուսական առաջին ռևոլյուցիայի ժամանակաշրջանում և գրքի լավագույն գլուխներից են։

Առաջին գրքի նշանակալից մասը նվիրված է դպրոցին։ Զորյանը պատմում է Սուրենի դպրոցական գործերի մասին ընդունելության քննություններից սկսած մինչև վերջին քննությունները։ Այդ էջերը, ինչպես և ամբողջ գիրքը ընթերցվում են մեծ հետաքրքրությամբ։ Լավ են պատկերված ուսուցիչների, բարեհոգի և ծույլ տեր Գյուտի կերպարները. բազմաթիվ լավ էջեր կգտնենք այստեղ աշակերտների բարեկամության մասին։ Բայց ահա, հայ երեխաներին ռուսականացնող դպրոցում ուսման ուղղության մասին, դժբախտաբար, ասված է շատ ընդհանուր։ Ոչինչ չի ասվում նաև Սուրենի կարդացած գրքերի բովանդակության մասին, այն մասին, թե ինչն էր հետաքրքրում նրան այդ գրքերում։ Սուրենի սիրած գրքերից հեղինակը անվանում է միայն Գոգոլի երկերը, բայց ոչ մի խոսքով չի հիշատակում, թե ինչով է, որ գրավում էին պատանուն Գոգոլի ստեղծագործությունները։ Իսկ դա ասելը կարևոր է, մենք գործ ունենք ինքնակենսագրական վեպի հետ, չէ՞ որ Սուրենը—դա ինքը՝ գրող Ստեփան Զորյանն է։

«Մի կյանքի պատմություն» գրքի եզրափակիչ գլուխը կոչվում է «Դեպի անհայտ հեռուն»։ Նա այդպես է կոչվում ոչ նրա համար, որ վեպի հերոսը իր մանկությունն ու պատանեկությունն անցկացնելով հայկական Ղարաքիլիսա ավանում, ոչ մի պատկերացում չունի Թիֆլիսի մեծ քաղաքի մասին, դեպի ուր պատրաստվում է ուղևորվել, այլ նրա համար, որ հերոսին միանգամայն անհայտ է, թե ինչպես է դասավորվելու իր կյանքն ապագայում։ «Ապագան» մի նզովյալ հարց էր աշխատավորների ընտանիքից ելած, մինչ ռևոլյուցիան դպրոցն ավարտած բոլոր պատանիների համար։

Սուրենի հրաժեշտի խոսքերը, որոնցով ավարտվում է առաջին գիրքը, հրաշալի կերպով արտահայտում է նրա սերնդի ընդհանուր տրամադրությունը։ «Մնաք բարով և դուք մանկության անհոգ օրեր և պատանեկության ուրախ ժամեր, ես գնում եմ դեպի անծանոթ մի կյանք, որ թվում է ինձ մթին, ահարկու մի անտառ, ուր չգիտեմ, կմոլորվե՞մ արդյոք, թե՞ կգտնեմ մի լուսավոր արահետ...»։

Զորյանը հրաշալի պատմող է։ Նրա պատմվածքը ռեալիստական է, ավարտված, պարզ։ Նուրբ լիրիկականությունն ու հումորը ամբողջացնում են վեպի ներգործությունն ու գրավչությունը։

Այդ հատկությունների հաղորդումը ռուսերեն թարգմանությանը, արդեն խոսում է թարգմանչի հաջողության մասին։

ԳԱՌՆԻԿ ՈՍԿԱՆՅԱՆ





ԳԱՌՆԻԿ ՈՍԿԱՆՅԱՆ

(1912—1943)

Հայրենական Մեծ Պատերազմի ռազմաճակատում հերոսաբար զոհված Գառնիկ Սահակի Ոսկանյանը ծնվել է 1912 թվի մայիսի 15-ին, Ալաշկերտի Ղարաքիլիսա ավանում:

Երբ սկսվեց 1914 թվի համաշխարհային պատերազմը, Սահակ Ոսկանյանը նույնպես իր ընտանիքով գաղթում է Ռուսահայաստան: Յոթ հոգուց բաղկացած ընտանիքը ամբողջ 45 օր գաղթի տառապալից ճանապարհ է անցնում: Նահանջի խուճապում նրանք կորցնում են միմյանց: Դեռ 2 տարին չբոլորած Գառնիկը մնում է մոր՝ Մարիցայի և ավագ եղբոր՝ Հմայակի (Սիրաս) հետ:

Միայն կովով նահանջող ռուս զինվորների աջակցությամբ նրանք ողջ-առողջ հասնում են Երևան, ուր և միմյանց գտնում են ընտանիքի կորած անդամները: Նրանք փոխադրվում են Թբիլիսի: Ընտանիքի մեծը՝ Սահակ Ոսկանյանը, որ գաղթի օրերին զրկանքներից ու մրսելուց հիվանդացել էր, շուտով մեռնում է: Մայրը՝ Մարիցան, բանվորություն է անում ծխախոտի գործարանում՝ իր սիրասուն զավակների գոյությունը պահպանելու համար:

1922 թվին նրանք ընտանիքով նորից վերադառնում են Երևան: Նոր միայն այստեղ, Երևանում, երբ արդեն Գառնիկը 10 տարեկան էր, սկսում է հաճախել դպրոց, ուր նա աչքի է ընկնում իր արտակարգ ընդունակություններով:

Մի առ ժամանակ պատանի Գառնիկը օրական մի քանի ժամ բանվորություն է անում Երևանի մի ձեռնարկությունում՝ մոր և եղբայրների հոգսերը թեթևացնելու նպատակով:

Երևանի Աբովյանի անվան դպրոցը մեծ հաջողությամբ ա-

վարտելուց հետո 1932 թվին Գառնիկը մտնում է Երևանի Պետական Համալսարանի ֆիլոլոգիական ֆակուլտետը, որը 1937—38 թ.թ. ավարտում է նա բոլոր առարկաներից գերազանց գնահատականով։ Համալսարանում սովորելու ընթացքում, 1935—36 թվերին, Պարտիայի Կենտկոմը նրան Մեղրու շրջանն է գործուղում պրոպագանդիստական աշխատանքի։

Համալսարանն ավարտելուց հետո Գ. Ոսկանյանն աշխատում է «Սովետական Հայաստան» թերթի խմբագրությունում որպես պատ. քարտուղար։ Այստեղ նա ցուցաբերում է լրագրական աշխատանքի մեծ ճաշակ ու հմտություն։ Այս շրջանում մեկը մյուսի հետևից լույս են տեսնում նրա հոդվածները, որոնցում ակնհայտ երևում են գրականագետի լուրջ տվյալները,—բարձր ճաշակ, քննարկվող նյութի խորքը թափանցելու, իր խոսքը ծանրակշիռ դարձնելու կարողություն։

Սկսած 1939 թվից, երկու տարի ծառայում է Կարմիր Բանակում։

1940 թվին երբ վերադառնում է Կարմիր Բանակից, Գ. Ոսկանյանը պարտիայի կողմից արժանանում է մեծագույն վստահության, նշանակվելով ՀԿ(բ)Պ Երևանի Կոմիտեի ագիտացիայի և պրոպագանդայի բաժնի վարիչ։ Իսկ մի առ ժամանակ անց նշանակվում է «Գրական թերթ»-ի պատխմբագիր, այդ պաշտոնում մնալով ընդհուպ մինչև Հայրենական Պատերազմը։ Նա միայն երկու համար է հասցնում լույս ընծայել պատերազմի սկզբում։ Եվ բոցաշունչ քննադատ, բոլշևիկ խմբագիրը երկրին վրա հասած մեծագույն փորձության հենց սկզբից կազմակերպում է հայ գրականության ու արվեստի աշխատողների ցասման խոսքը՝ հանուն հաղթանակի։ Թերթի էջերում հնչում, դրոշի պես ծածանվում են Մայակովսկու մարտաշունչ ծանոթ խոսքերը։ Ահա հայ ժողովրդի սրտից բխած կայծակում է Ն. Զարյանի շանթ ու որոտներով լի քնարը։ Այդ ոգով էլ թերթը հետագայում շարունակում է պատերազմական պայմաններում դեղարվեստական գրականության գծով կատարել մասսաների կազմակերպչի իր դերը։

Հայրենասեր երիտասարդ գրականագետ Գ. Ոսկանյանը, որ արդեն կոփված էր զինվորական կյանքում, պարզ է, չէր կարող իրեն հանգիստ զգալ ռազմաճակատից հեռու, ուր և շտապում է մեկնել նա...

***

Իր հայրենիքի վեհ գաղափարներով տոգորված հրամանատար, կապիտան Գ. Ոսկանյանը միշտ ձգտում է դեպի կրակի առաջավոր գիծը, դեպի այնտեղ, ուր վտանգն էր, ուր վճռվում էր հաղթանակը։

Կերչում մղվող մի հերոսամարտում նա փոխարինում է վաշտի զոհված հրամանատարին և կազմակերպում երկարատև դիմադրություն։

1943 թվին Նովոռոսիյսկի գրավումը նախապատրաստելիս Գ. Ոսկանյանը ծառայում է հրետանու դիվիզիոնում։ Ամենաթեժ մարտերում սեփական կյանքը վտանգի ենթարկելով, նա իր օրինակով սխրագործության է մղում նաև իր մարտիկներին, որոնք այնքա՜ն սիրում էին իրենց կապիտանին։

Առաջավոր գծում մարտ վարելիս Գառնիկը մահացու վիրավորվում է արկի պայթյունից։ Դաշտային գոսպիտալում ծանր վիրահատություն է կատարվում, փրկվում է նրա կյանքը։ Սկսվում է ապաքինումը։ Հենց այն է, մի առավոտ նրան տեղափոխելու էին թիկունք, երբ տեղի ունեցավ կատաստրոֆը։ Գերմանական օդանավերը ռմբակոծում են գոսպիտալը։ Ռումբն ուղղակի ընկնում է գոսպիտալի վրա։ Գառնիկը նորից վիրավորվում է և այն էլ գլխից, շատ ծանր...

... Աչքերը հառած ծագող արևին, առհավետ դադարում է բաբախել նրա ազնիվ, բյուրեղյա սիրտը։

Այդ 1943 թվին էր, օգոստոսի 22-ին։

***

Այնքա՜ն հմայիչ էր Գառնիկը թե՛ իր ընտանիքի, թե՛ ընկերների շրջապատում՝ իր վարմունքով, իր բյուրեղյա ազնվությամբ։ Ամենքը միայն հիացմունքի խոսք ունեին նրա մարդկային արժանապատվությունների համար։

Գ. Ոսկանյանն իր գրա-քննադատական կարճատև գործունեության ընթացքում գրեց մի ամբողջ շարք արժեքավոր ուսումնասիրություններ, գրախոսականներ, լրագրական թերթոններ։ Նրա գրչին են պատկանում՝ Չերնիշևսկու, Ռուսթավելու, Գ. Արծրունու,

Խ. Աբովյանի և այլոց մասին ուսումնասիրություններ, որոնք հրապարակվել են մեր թերթերում ու ամսագրերում: Առանձնապես ուշագրավ են Միք. Նալբանդյանի, Շ. Ռուսթավելու, Գ. Արծրունու մասին գրածները: Գրել է նա սովետական գրողների՝ Հովհ. Շիրազի, Լ. Միքայելյանի և ուրիշների մասին:

Հանձինս Գառնիկ Ոսկանյանի, հայ գրականությունը կորցրեց մի տաղանդավոր գրականագետի, որի առաջին քայլերը ցույց են տալիս, թե ինչպիսի՜ խոշոր հեռանկարներ ուներ նա իր առաջ, եթե զազրելի թշնամու գնդակը նրան չխլեր մեր շարքերից:

ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆ

Անցած թատերաշրջանի ռեպերտուարն ուշագրավ էր ինքնուրույն դրամատուրգիայի նոր երկերով, հատկապես պատմա-ռևոլյուցիոն դրամաներով՝ Դ. Դեմիրճյանի «Երկիր հայրենի»-ն, Լ. Միքայելյանի «Վարազդատ»-ը, Ա. Գուլակյանի «Մեծ բարեկամություն»-ը, Ան. Վարդանյանի «Արաքսի ափին» և այլն: Արդեն Դ. Դեմիրճյանի «Երկիր հայրենի» դրամայի առաջին ներկայացումները շատ խորհրդածությունների տեղիք տվին, որոնք շարունակվում են մինչև այսօր: Խորհրդածությունների առանցքը մի քանի հարցեր էին. ա) հայ ժողովրդի պատմական անցյալի գեղարվեստական մեկնաբանությունը, բ) սովետական պատմական դրամայի սկզբունքները, գ) պատմական իրողությունների հարազատությունը: Ահա մոտավորապես հարցերի այն շարանը, որ ի պատիվ մեր դրամատուրգների, հիշված դրամաներում ստացավ ավելի կամ պակաս չափով դրական լուծում:

Ո՞րն է մեր պահանջը սովետական պատմական դրամայից. մեր կարծիքով այն կարելի է հանգեցնել հետևյալ կետերին.

ա) պատմական տրամաբանության, պատմական կոլորիտի ստեղծումը.

բ) պատմական զարգացման օրինաչափության պահպանումը.

գ) գեղարվեստական բարձր կատարումը.

դ) գաղափարական հագեցվածությունը, մեր օրերի հետ համահնչուն լինելը:

Այս տեսանկյունով քննվող «Վարազդատ» դրաման, պետք է ասել ի պատիվ հեղինակի, մեր ինքնուրույն դրամատուրգիայի ամենալուրջ նվաճումներից մեկն է:

Մինչև այժմ մենք լսում էինք Լ. Միքայելյանի «Վարազդատ»

դրամայի լոկ արձագանքները: Երևանում կազմակերպված Լենինականի Թատրոնի դասարլները հնարավորություն տվին ինտելիգենցիայի և աշխատավորության ավելի լայն շերտերին ծանոթանալու այդ գործին:

Հայ ժողովրդի գրի առնված պատմությունը (իսկ գրի առնված պատմությունը, ինչպես Էնգելսն է ասում, դասակարգային պայքարի պատմություն է) լի է պատմական մեծ իրադարձություններով, դրամատիկ շրջաններով, որոնք անսպառ նյութ են ոչ միայն մեր պատմագրության, այլև գրականության համար: Հայ անցյալի կուլտ ստեղծելու մարմաջով տարված բուրժուա-նացիոնալիստական պատմագրության ներկայացուցիչները ձգտում էին գրել մեր պատմությունը որպես սոսկ արտաքին ոսոխների և հայ ժողովրդի միջև տեղի ունեցող անվերջ կռիվների պատմություն: Հայրենի նախարարները, իշխանները, ֆեոդալները բոլորանվեր գնահատվում էին որպես հայ ժողովրդի ազատագրական պայքարի դրոշակակիրներ: Այդ տենդենցի կեղծությունն իսկույն զգացվեց: Այդ տենդենցը մեծ հարված ստացավ նախ և առաջ դրամատուրգիայի մեջ, հատկապես Դ. Դեմիրճյանի «Երկիր հայրենի» պիեսով (հանձին Վեստ-Սարգիսի և նրա համհարզների), այդ հարվածն ամբողջացնում է դրամատուրգ Լ. Միքայելյանը, որ գեղարվեստական համոզկերությամբ իր դրամայում դրսևորում է 4-րդ դարի 2-րդ կեսի գյուղացիական-սոցիալական շարժման մի հրաշալի դրվագ. բայց մի՞թե միայն այդ դրվագն է: Հայ ժողովրդի պատմությունը լի է ոչ միայն օտար նվաճողների դեմ մահու և կյանքի հերոսական սխրագործություններով, այլև հենց հայրենի ֆեոդալների դեմ մղված պայքարի բազմաթիվ փաստերով:

Հայրենի ֆեոդալներն օգտագործելով ժողովրդական լայն մասսաներին, նրանց ցասումը, բազմիցս դուրս են քշել երկրից օտարերկրյա բռնակալներին, բայց հենց որ սկսվել է հայկական պետականության անկախության շրջանը, նոր ուժով բորբոքվել է ներքին դասակարգային պայքարը, ապստամբությունների շարքը՝ ուղղված ֆեոդալների, իշխանների, վաճառականների, հոգևորականների և այլ շահագործողների դեմ:

Լ. Միքայելյանը ելնելով մեթոդոլոգիական ճիշտ դիրքերից և դրամատիկական արվեստի բարձր պահանջներից՝ կերտել է մի դրամա, որտեղ գեղարվեստի ուժեղ ներքնատեսությամբ տվել է խա-

ցակերներ դրամատիկական տիպիկ դրությունների մեջ, գեղարվեստական անկեղծությամբ և հոգեբանական խոր կերպարներով դրսևորել է հայ ժողովրդի հերոսական պատմությունից մի դրվագ. կենդանացրել է մեր ժողովրդի անհաղթահարելի ուժը արտաքին և ներքին թշնամիների նկատմամբ և այդ ֆոնի վրա՝ պալատական ինտրիգներ, դավադրություններ, սպանություններ, ընտանեկան և սիրո դրամայի մի բարդ հյուսվածք:

Լ. Միքայելյանի «Վարազդատ» պիեսի մասին գրավոր և բանավոր քննադատությունը տակավին դուրս չի եկել երիտասարդ գրողների մասին տարածված շաբլոն, «տրադիցիոն» քննադատության սահմաններից: Երկը գնահատվում է ոչ թե փաստից ելնելով, թե ինչ է ներկայացնում ինքնին, այլ այն փաստից, թե հեղինակը քանի տարեկան է (?): Այստեղից առաջանում է այն կասկածամտությունը, որ տարածված է «Վարազդատ»-ի պատմական ճըշտության մասին: Հեղինակը չի կաշկանդել իրեն պատմական մանրամասներով, ընտրելով քաղաքական դեպքերով հարուստ մի էպոխայից (4-րդ դ.) հիմնական սյուժեն, նա այնուհետև այն «լրացրել է» անհրաժեշտ դրամատիկ սիտուացիաներով, «նոր» տիպերով, տիպիկական «նոր» դրություններով, որոնց ի հարկե չի կարելի հանդիպել Փավստոս Բյուզանդի կամ մի այլ պատմիչի պատմության մեջ, սակայն դրանք գծված են ռեալիստական մեթոդով (միանգամայն հարազատ մնալով պատմական օրինաչափությանը), համոզիչ են և միանգամայն համապատասխան այդ էպոխային:

Ո՞րն է «Վարազդատ» դրամայի հիմքում դրված պատմական իրողությունը. դա հենց այդ էպոխայի, 4-րդ դարում շարունակվող պայքարն էր Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև՝ Հայաստանի համար. դա շարունակվող պալատական ինտրիգներն էին գահի շուրջը, որոնք ունեին խոր սոցիալական արմատներ:

Գահաժառանգ Պապի որդին՝ 4 ամսական Վարազդատը հիվանդության հետևանքով խեղդամահ է լինում օրորոցում: Պապի կինը՝ Աստինեն միջոց է փնտրում այդ տխուր պատմությունը ամուսնուց թաքցնելու և գտնում է: Նա ստիպում է դայակին հրաժարվել իր որդուց և նրան տալ խեղդամահ եղած երեխայի փոխարեն: Դիմադրությունն ապարդյուն է անցնում: Ավելի զգուշավորության համար Աստինեն հրամայում է կտրել դայակի՝ երե-

խնձի մոր լեզուն, իսկ հորը՝ պալատի դռնապահին՝ Փառնավազին սպանել:

Հոգեբանական մի անզուգական տեսարան է, երբ Աշխենը (դայակը) նախքան լեզուն կտրելը, աղիողորմ բացականչում է. «զավա՛կս, զավա՛կս, էլ չես լսի մորդ ձայնը, զավա՛կս...»:

Քանի տարի անց տեղի է ունենում Վարազդատի թագադրությունը: Պետական գործունեության առաջին իսկ քայլերից սկսվում են խարդավանքներն ու դավադրությունը: Վարազդատն ստորացուցիչ է համարում հավատարմությամբ այցելության գնալ պարսից Շապուհ արքային. նա խնդրում է իշխաններին իրենց զորագնդերը դնել արքունիքի տրամադրության տակ՝ թշնամու հարձակման դեպքում հայրենիքը պաշտպանելու համար: Սյունյաց իշխան Սյունին (Դ. Դեմիրճյանի «Երկիր հայրենի» դրամայի Վասա-Սարգսի պատմական գեղարվեստական նախատիպերից մեկը) դիմադրում է և սկսում է ծավալել խարդավանքների, դավադրությունների մի ամբողջ շարան:

Դրամայի սյուժետային զարգացման մեջ վճռական դեր է կատարում պալատի խեղկատակ Մուրիկը, որը զավեշտական ձևերով, բայց շատ իմաստուն խրատներով օգնում է պատանի արքային:

Ֆ. Էնգելսը «Ֆեոդալիզմի քայքայման և բուրժուազիայի զարգացման մասին» հոդվածում խոսելով ավելի ուշ շրջանի (9—10 դ. դ.) քաղաքական դեպքերի մասին Արևմտյան Եվրոպայում՝ շատ բարձր է գնահատում թագավորական իշխանության դերը «ընդհանուր խառնաշփոթության», «ընդհանուր անկարգության» և «խառվարար վասալական պետությունների մասնատվելու» պայմաններում:

«... Անհավասիկ դավաճանական ապստամբությունների, թունավորումների, նենգությունների ու ամեն տեսակ ստորությունների այս անվերջանալի, անընդհատ շարունակվող շղթայի պատճառը, որպիսիք միայն կարելի է պատկերացնել, որոնք թաքնվում են ասպետության պոետական անվան տակ և որոնց առկայության դեպքում այնուամենայնիվ համարձակություն են ունենում խոսելու պատվի ու հավատարմության մասին: Որ այս ամբողջ ընդհանրական խառնաշփոթության մեջ թագավորական իշխանությունը (das Königtum) պրոգրեսիվ տարր էր—սա միանգամայն ակներև է:

նա կարգի ներկայացուցիչն էր անկարգության մեջ, կազմվող ազգի ներկայացուցիչն էր ի հակադրություն խռովարար վասալային պետությունների մասնատվելուն»[1]:

Որոշ վերապահությամբ Էնգելսի խոսքերը կարելի է տարածել հայ ժողովրդի պատմության այդ շրջանի վերաբերմամբ: Հակառակ իշխան Սյունիի, Բաղ. Սահառունու, Ջավեն կաթողիկոսի հայրենադավ քաղաքականության՝ Վարազդատը կողմնորոշվում է դեպի պետական անկախություն, երկրի ամբողջականություն:

Այս պայմաններում միանգամայն բնական է դառնում, երբ սոցիալական և իրավական կարգերից զրկված, անտառում ապաստան գտած, ավազակ դարձած ըմբոստ գյուղացիներն իրենց առաջնորդ Փառնավազի (որին հակառակ Սատինեի հրամանի Մուրիկը կենդանի բաց է թողնում) հետ միանում են Վարազդատին և նրա կռիվը Պարսկաստանի դեմ. պսակում հաղթանակով:

Այստեղ իհարկե որոշ դեր կատարում է Փառնավազի ազգակցությունը (հայր ու որդի), Փառնավազի վրեժխնդրության զգացումը և այլն, սակայն դրանք ինքնաբավ, անջատ սիտուացիաներ չեն, այլ լրացնում են դրամատիզմը, ավելի ընդգծում այդ շարժման սոցիալական բովանդակությունը:

Դրամայի ֆինալը նույնքան ուշագրավ է: Հաղթական պատերազմից հենց նոր վերադարձած Վարազդատը, որ ստացած մահացու վերքերի պատճառով հոգևարք է ապրում, բյուզանդական դեսպանի միջոցով ստանում է Թեոդոս կայսեր ստորացուցիչ հրավերը՝ ստրկական հավատարմության երդում տալու համար: Դրամատուրգն այս տեսարանով գեղարվեստական ընդհանրացման է ենթարկել Հայաստանի և հայ ժողովրդի պատմական բախտը. մի պատերազմից, մի որոգայթից վերջին չազատված՝ նրան քաշում են մի նոր պատերազմի և մի նոր որոգայթի մեջ:

Լ. Միքայելյանն իր դրամայում, ինչպես ասացինք «Վարազդատ» չի մնացել պատմական որոշ մանրամասներին և դա եթե չի աղավաղում պատմական էպոխայի ընդհանուր նկարագիրը, պատմական խարակտերները, դեմընթաց չի գնում պատմական զարգացման տենդենցին՝ միանգամայն ընդունելի և խրախուսելի

[1] Ֆ. Էնգելս, «Ֆեոդալիզմի քայքայումն և բուրժուազիայի զարգացման մասին», Երևան, 1937 թ., էջ 10—11։

է։ Այդ առիթով հետաքրքրական է Լեսինգի մի դիտողությունը, որ միանգամայն ուսանելի է մեզ համար։

«Բայց այնուամենայնիվ, իմ կարծիքով, եթե բանաստեղծը վերագրում է գործող անձանց ոչ այն բնավորությունները, որոնցով պատկերել է նրանց պատմությունը, ապա նման սխալը ավելի ներելի է, քան թե հենց նույն բնավորությունների պատկերման մեջ արված մեղանչումը, բնավորություններ, որ նա ընտրել է ազատ կերպով, լինի դա ներքին ճշմարտանմանության կամ ուսանելիության կողմից»։(Г. Лессинг, «Гамб. драм.», էջ 130)։

Լ. Միքայելյանի դրաման անցած թատերաշրջանում ներկայացվեց բացառիկ հաջողությամբ. ըստ մեզ հասած տեղեկությունների՝ չթուլացող հետաքրքրությամբ Բաքվի հասարակությունը դիտում է այդ պիեսը։ Երևանի հասարակությունը նույնպես բացառիկ ուշադրություն դարձրեց այդ գործին։ Ո՞րն է այդ հաջողության գաղտնիքը։ Ոմանք հակամետ են այն բացատրել խեղկատակի գավեշտական արտահայտություններով և չեշտված մելոդրամատիզմով, արտաքին էֆեկտներով և «էլի ինչ-որ բանով»։ Իրականում այս վերջինն է պիեսի բացառիկ հաջողության գաղտնիքը։ Իսկ ի՞նչ բան է դա։ Հեղինակը վարպետությամբ ոչ միայն ստեղծել է դրամատիկ դրություններ, խարակտերներ՝ փոթորկալից տեմպերամենտով, իմաստուն յումորով, նուրբ հոգեբանական նկարագրերով, այլև այն, որ նա անում է գեղարվեստական, դրամատիկական գյուտեր, որոնք այնպես են գերում հանդիսատեսին, որ վերջինս ամբողջովին տարվում է բեմում գործող կենդանի մարդկանց տրագեդիայով, նրանց հույզերով. կապվում է հերոսների հետ, իր սրտում դրական հերոսներին հուշում է զգուշանալ որոգայթներից, անսահմանորեն ատում է բացասական տիպերին և պատրաստ է իր միջամտությամբ հանդես բերել դրամատիկական հանգույցի արագ և դրական լուծման համար։

Ամբողջովին գեղարվեստական-հոգեբանական գյուտ է դայակ Աշխենի կերպարը. մայրական վշտի գեղարվեստական խտացման այդպիսի քիչ օրինակներ կան։ Հենց թեկուզ այս տիպի վերլուծությունը ցույց է տալիս հեղինակի (ինչպես նաև ռեժիսյոր Ջ. Ժամհարյանի և դերակատար Ս. Սանամյանի) տաղանդի ուժը։ Լուռ, պարզ շարժուձևով, նուրբ միմիկայով դրսևորված է մայրական տրագեդիան այնպիսի գույներով, այնպիսի ապրումներով, որ գե-

բաղանցում է ամեն մի հնչունային խոսք. մեր բեմում այդպիսի համր դերի հաջող կատարում քիչ ենք հանդիպում:

Այն մոմենտներին, երբ դավեր են նյութում իր հարազատ որդու ու ամուսնու կյանքի դեմ, նա չի ուշաթափվում, չի լալիս, նա տառապում է (նույնիսկ առանց միմիկայի) և ապրեցնում է ամբողջ դահլիճը: Այն մոմենտին, երբ պատգարակի վրա բերում են վիրավորված որդուն, նա գերմարդկային ուժ է գործ դնում, զսպում մայրական գութը, սերը, հուզմունքը, և լուռ ուղեկցում պատգարակին. նա չի ցանկանում իր անզգույշ շարժմամբ վտանգել որդուն, ի հայտ բերել նրա գեղջկական ծագումը և դրանով իսկ հարուցել Ատոմենի ցասումը, որը դուցե և մահարար կլինի և իր, և՛ որդու համար:

Չափի զգացումը արվեստի ամենակարևոր (եթե ոչ միակ) չափանիշներից մեկն է և այդ չափին լիապես տիրապետում է հեղինակը: Դերասան Ա. Սանամյանն աչքի ընկավ այդ համր դերի բարձրարվեստ կատարումով:

Դրամայի կենտրոնական դեմքը Վարազդատն է. նա հանդես է գալիս սկզբից մինչև վերջը պատանեկական որոշ միամտության և անփորձության մանիերայով, այս կողմը նրան ավելի ճշմարտացի և ռեալիստական է դարձնում: Սակայն պետական աշխատանքում, հայրենիքի վտանգի պահին նա հանդես է բերում իմաստուն և խորամանկ քաղաքականություն (պարսից Շապուհ արքայի դստեր հետ ամուսնանալը, պատերազմի դաշտի մոտերքում գտնվող անասունների հոտերը սարերում թաքցնելը և այլն): Նա կողմնորոշվում է դեպի ժողովուրդը և դա միանգամայն բնական է և ոչ թե պատմական մոդեռնիզացիա, ինչպես ոմանց թվում է, նա կարծես լավ յուրացրել է Դ. Դեմիրճյանի «Երկիր հայրենի» դրամայի սպարապետի հայտնի խոսքերը, թե՝ վրա է հասնում մոմենտ, երբ ժողովուրդն է թելադրում իր կամքը մեզ: Վարազդատն այդ միտքն արտահայտում է այլ խոսքերով. «ժողովուրդը քնած առյուծ է, եթե արթնացավ՝ այլևս չի քնի»: Նա ապրում է խոր տրագեդիա.—«ես իմ կամքը չեմ կարող ուրիշ ընթացքով տանել» և այն պայքարը, որ ծավալվում է պալատի ներսում՝ նրա և դավաճան իշխանների միջև, նրա և Ատոմենի միջև, զարգանում է հենց հեղինակի կողմից գծված խարակտերային այդ գծի հիման վրա. նա ցանկանում է իր կամքը տանել հայրենիքի, երկրի շա-

հերին ներդաշնակ ընթացքով, սակայն նրան խանգարում են…

Լ. Միքայելյանի կերտած կերպարները երբեմն մի աֆորիզմով բնութագրում են ամբողջական հոգեբանական դիմանկարներ. նույն Վարազդատը այս խոսքերով է բնորոշում Ասմիկի մայրական զգացմունքը. «դու գթոտ ես եղել մի մաշադրծի չափ»:

Մյուս տիպերից հետաքրքրական է Սյունին, որն ինչպես ասացինք՝ Վեստ-Սարգսյան տիպ է: Նա քող չի քաշում երեսին (ինչպես այդ վարպետորեն անում էր Վեստ-Սարգիսը), նա հանդուգն է, լկտի, բացահայտորեն արտահայտում է իր թշնամությունը, բայց դավերը նյութում է խորամանկ զգուշավորությամբ՝ պարսից Շապուհ արքայի դստեր՝ Շահանդուխտի միջոցով: Այսպիսով իշխան Սյունիի կերպարը ավելանում է Վեստ-Սարգսյան տիպերի գալերեայում, և դառնում է միանական տիպի, դավաճանի, ստորաքարշի, խարդախի, քծնողի, էգոիստի համայնապարփակ տիպի գեղարվեստական մի հաջող արտահայտություն: Բացասական տիպերի շարքին են պատկանում Բաղ Սահառունին (որ իր զորագունդը, բացի իր կալվածքը պաշտպանելուց, ուրիշ նպատակի չի ցանկանում ծառայեցնել), Զավեն կաթողիկոսը (ընդհարվում է Վարազդատի հետ եկեղեցուն հասանելիք տուրքերը կիսով չափ իջեցնելու պատճառով), Ասմիկեն, որի ազնվական հոգին չի կարողանում հանդուրժել գեղջկական ծագումով թագավորին և ձգտում է սպանել նրան, Շահանդուխտը, որ խանդի ահավոր ուժից կուրացած դավեր է նյութում Վարազդատի դեմ:

Հետաքրքրական կերպար է Փառնավազը: Այդ տիպի մասին այն կարծիքն է եղել, թե մոդեռնացված է. մենք համամիտ չենք այդ կարծիքին: Երբ խոսում ենք պատմական զարգացման օրինաչափության պահպանման մասին, ապա այդ ինքնին ենթադրում է ո՛չ միայն պատմական միջավայրի վերակենդանացումը, այլև պատմական սոցիալական ուժերի ռելեֆացումը: Փառնավազը հայ ժողովրդի պատմության մեջ միանգամայն օրինաչափ երևույթ է, եթե չասենք փաստ: Հայ իրականության մեջ, ավելի քան որևէ մի այլ ժողովրդի պատմության մեջ, պատմական, քաղաքական յուրահատուկ պայմանները պատճառ են դարձել «վաղահաս» սոցիալական ուժեղ պոռթկումների, որովհետև կրկնակի ճնշման ու կեղեքման դարերը ավելի են բացել գյուղացիների և արհեստավորների աչքերը հենց հայրենի շահագործողների, տի-

առաջացող սոցիալական անարդարությունների նկատմամբ, և եթե այդ գյուղացիական շարժումները մեր պատմության մեջ նշանավորված չեն առանձին էֆեկտիվությամբ, ապա դրա պատճառը Հայաստանի յուրահատուկ պատմական կացությունն է եղել, օտարների ձեռքին կալախնձոր լինելու հանգամանքը:

Փառնավազը հոգեբանորեն միանգամայն պատճառաբանված է, երբ ապրելով հարազատ զավակը կորցնելու ծանր տրագեդիան, այնուհետև նրան գտնում է, չի լուծվում հայրական զգացմունքների զեղումների մեջ, մնում է սառը կշռադատող, ըմբոստ գյուղացի, «ավազակապետ», որի համար ամեն բանից թանկ է իր ընկերներին տված հավատարմության ուխտը:

Զարմանալի կերպով իրենց խարակտերային գծերով զուգադիպում են Լ. Միքայելյանի Մուշեղ Մամիկոնյան սպարապետը Դ. Դեմիրճյանի սպարապետ Վահրամ Պահլավունուն: Նրանք երկուսն էլ թագավորների հավատարիմ զինակիցներն են, խոհականության և հաստատակամության նույն գծերով: Լ. Միքայելյանի սպարապետն ավելի սակավախոս է, բայց իմաստուն խորհրդատու, ինչպես Դեմիրճյանինը: Բայց եթե Դեմիրճյանի մոտ պատճառաբանված է Վահրամ Պահլավունու ժողովրդասիրությամբ, ժողովրդի ուժի գիտակցումը և հավատը նրա հաղթանակի նկատմամբ, ապա Լ. Միքայելյանի մոտ այդ բանը չենք տեսնում: Նա երբեմն այնքան չոր է, որ չի մերվում գործողության զարգացման հետ, իսկ երբեմն էլ պարզապես դեկորացիա է լրացնում:

«Վարազդատ» դրաման գրված է ժամանակակից գրական հայերենով և դա ապահովում է, որ հեղինակի յուրաքանչյուր խոսքը, բառը հասնի հանդիսատեսին:

Երիտասարդ տաղանդավոր դրամատուրգը մի ավելորդ անգամ ապացուցում է, որ պատմական կոլորիտ ստեղծելու համար պարտադիր չէ և կարևոր էլ չէ հարություն տալ հնադարի կամ միջնադարի լեզվական հազվագյուտություններին:

Սակայն ամբողջովին հրաժարվել լեզվական կոլորիտից նույնպես սխալ կլիներ. այդ տեսակետից Դեմիրճյանի «Երկիր հայրենի» պիեսը ուսանելի օրինակ է, թեև նրա լեզվական կոլորիտը երբեմն այնպիսի չափազանցությունների է հասնում, որ անհասկանալի է դառնում ժամանակակից հանդիսատեսին:

Լ. Միքայելյանի «Վարազդատ» դրամայում վարպետորեն

միահյուսված է ընտանեկան և քաղաքական դրաման. սակայն տեղ-տեղ հեղինակը միտում է ցույց տալիս ընտանեկան դրամանը գերիշխող դարձնել և թուլացնել երկրորդը: Դրամատիկական դրությունների, կոնֆլիկտների, ինտրիգների, բախումների առատությունը երբեմն հեռացնում են մեր ուշադրությունը սյուժետային գծի զարգացումից: Սակայն այս հանգամանքը հեղինակը հաղթահարել է դրամատիկական հանգույցի կուլմինացիոն կետին նախորդող հաջող դրամատիկական մոմենտներով:

Շատ հաջող է 4-րդ գործողության անտառի տեսարանը, գյուղացիների՝ հանելուկի լուծման մրցությունը, գողթանցի գուսանի պատասխան երգը յոթ բան չգտած մարդու մասին: Այստեղ պատմական կոլորիտն այնքան ուժեղ է, որ հանդիսատեսը մի պահ կարծես վերապրում է այն էպոխան: Կոլորիտային այդ ուժով հեղինակը առաջիկայում պետք է վերամշակի իր գործը:

Հետևելով կլասիկ դրամայի սկզբունքներին և տալով բոլորովին նոր ազգային դրամա՝ հեղինակը այն վերամշակելիս պետք է ուշադրություն դարձնի գաղափարական հագեցվածության, սինթետիկ արվեստի պահանջների և գեղարվեստական խոսքի կատարելության վրա: Այս հանգամանքներով պետք է բացատրել պիեսի մի շարք թերությունները (ձգձգվածությունը, ավելորդ էֆեկտները և այլն), որոնք անկասկած ուղղելի են:

ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԷՍԹԵՏԻԿԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ

Միքայել Նալբանդյանը Հեգելի և Կանտի իդեալիստական փիլիսոփայության քննադատությունից գնաց դեպի ֆոյերբախյան մատերիալիզմի թերությունների հաղթահարումը. այսինքն՝ մոտավորապես այն ճանապարհով, որով անցել են ռուս ռևոլյուցիոն դեմոկրատներ Բելինսկին, Չերնիշևսկին և Դոբրոլյուբովը: Նալբանդյանի արվեստի փիլիսոփայությունը, էսթետիկական, գրական քըննադատության տեսությունն ու պրակտիկան հիմնված էին ֆոյերբախյան մատերիալիզմի վրա: Սակայն Նալբանդյանը չմնաց ֆոյերբախյան հայեցողական մատերիալիզմի սահմաններում: «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» երկասիրության մեջ արդեն նկատելի է նրա մատերիալիստական հայացքների բյուրեղացումը, նրանց կոնկրետ հասարակական բովանդակությունը: Նալբանդյանը կանգնած էր դիալեկտիկական մատերիալիզմը տանող ճիշտ ճանապարհի վրա:

Մինչև մարքսիստական գրական քննադատության հանդես գալը, հայ քննադատական միտքը չի եղել այն իդեական բարձրության վրա, որին հասցրեց Նալբանդյանը՝ անցյալ դարի վաթսունական թվականներին: Նալբանդյանի էսթետիկան Բելինսկու, Չերնիշևսկու և Դոբրոլյուբովի նման ուներ հասարակական խոր բովանդակություն: Այն սոցիալ-քաղաքական պայմանները, որոնք Ռուսաստանում հարկադրում էին հասարակական միտքն ընտրել գեղարվեստական գրականության և քննադատության ասպարեզը, նույն այդ պայմանները մեր իրականության մեջ ստիպում էին Նալբանդյանին՝ իր հրապարակախոսական-փիլիսոփայական աշխատությունը ներմուծել Ռուսաստան, որպես խոհարարության դա-

սատիրը, իսկ գրական-քննադատական և հրապարակախոսական հոդվածներում գործածել «անիծյալ եզոպոսյան լեզուն»:

Նալբանդյանը մեծապես կրելով Բելինսկու և Չերնիշևսկու էսթետիկայի ազդեցությունը, այնուհանդերձ մնաց ինքնուրույն իր հայացքների մեջ՝ գրականության, նրա դերի և կոչման հարցերում:

Բելինսկին և Չերնիշևսկին հակադրվելով արվեստի իդեալիստական ըմբռնումներին «արվեստը արվեստի համար», առաջ քաշեցին արվեստը հասարակության համար սկզբունքը, արվեստի հասարակական բովանդակության պրիմատի դերը: Նալբանդյանը հետևողականորեն գնալով իր ուսուցիչների ճանապարհով՝ մեր իրականության մեջ ծառացավ կղերա-ֆեոդալական կեղծ դասական գրականության դեմ և առաջ քաշեց գրականության ուտիլիտար դերը՝ այդ հասկացողության գրական բովանդակությամբ:

Բելինսկին և Չերնիշևսկին, հակադրվելով իդեալիստական էսթետիկային «արվեստը որպես աբսոլյուտ իդեայի արտահայտություն», տվին նոր ուսմունք գրականության մասին: Նրանք ցույց տվին, որ գրականության առարկան օբեկտիվ իրականությունն է, նրա խնդիրը՝ այդ իրականության արտացոլումը. գրականությունը ճշմարտություն է հայեցողության ձևով, նրա ստեղծագործությունները մարմնավորված գաղափարներ են, տեսանելի, զննական գաղափարներ: Կյանքն իր բազմապիսի արտահայտությունների մեջ—ահա արվեստի օբեկտը: Նալբանդյանը հանդես եկավ իրականությունից, կյանքից կտրված գրականության խիստ քննադատությամբ: Ծառանալով մտահայաց փիլիսոփայության դեմ՝ Նալբանդյանն ասում է. «Մարդն է փիլիսոփայության և՛ հեղինակը, և՛ առարկան»: Հիմնվելով փիլիսոփայական այս սկզբունքի վրա՝ Նալբանդյանը գրականությունից պահանջում էր իրականության արտացոլումը, նրա հարազատ վերարտադրությունն արվեստի գործի մեջ:

Բելինսկին և Չերնիշևսկին իրենց գրականության տեսության և պրակտիկայի մեջ ընդգծում էին արվեստի ուսուցիչ նշանակությունը հասարակական կյանքի վերափոխման գործում, որպես հասարակական կյանքի առաջխաղացման լուրջ ազդակ: Նալբանդյանը ևս գրականության կոչումը հասկանում էր հենց այդ իմաստով:

Բելինսկին և Չերնիշևսկին, ինչպես և Նալբանդյանը, առաջին պլանի վրա քաշելով գեղարվեստական երկի իդեան՝ երբեք չէին ժխտում արվեստի, գրականության սպեցիֆիկումը: «Պոետին պատկանում են պատկերները և ոչ թե իդեան, որը նա պատկերների հետևում չի տեսնում և որը, երբ երկը պատրաստ է, ավելի մատչելի է մտածողին, քան թե իրեն՝ ստեղծագործողին». «պոետական իդեան սիլլոգիզմ չէ, դոգմա, կանոն չէ, այլ կենդանի կիրքն է, այդ պաթոսն է» (Բելինսկի): Չերնիշևսկին նույնպես խստորեն էր վերաբերվում արվեստի սպեցիֆիկումի պահպանմանը. «Պոեզիան պահանջում է իդեաների մարմնացումը՝ դեպքերի, պատկերների բարոյական սիտուացիաների միջոցով», հակառակ դեպքում «իդեան մնում է վերացական միտք, այդ պատճառով մնում է սառը, անորոշ, բանաստեղծական պաթոսից օտար»: Նալբանդյանը ևս, հարազատ մնալով իր ուսուցիչներին, պահանջում է արվեստի սպեցիֆիկումի պահպանումը:

Նալբանդյանը, յուրացնելով ռուս ռևոլյուցիոն դեմոկրատների մատերիալիստական էսթետիկան, մեր գրականության մեջ ստեղծեց և գլխավորեց ռևոլյուցիոն-դեմոկրատական գրական քննադատության առանձին հոսանք: Նրան է պատկանում գրական քննադատությունը մեր գրականության հիմնական ճյուղերից մեկը դարձնելու պատիվը: Գրական քննադատությունը, որպես առանձին բնագավառ հայ գրականության մեջ սկսել է ձևավորվել անցյալ դարի 50—60-ական թվականներին: Նույն այս երկու տասնամյակներում սաղմնավորվել են գրական քննադատական այն հոսանքները, որոնք շարունակվել են մինչև դարեվերջը և 20-րդ դարի առաջին քառորդը:

Ռևոլյուցիոն դեմոկրատական գրական-քննադատական հոսանքի հիմնադիրն էր Նալբանդյանը, որը և՛ որպես մտածող, և՛ որպես գրականության տեսաբան՝ բարձր է կանգնած մյուս երկու հոսանքների «լիբերալ-բուրժուական և պահպանողական» ներկայացուցիչներից:

Երբ մենք խոսում ենք հայ գրականության մեջ գրական-գիտական քննադատության ձևավորման մասին 50—60-ական թվականների շրջանում՝ այդ բնավ չի նշանակում, թե մինչ այդ չի եղել քննադատական միտք: Իրավամբ հայ նորագույն գրականության առաջին քննադատը և քննադատական մտքի հիմնադիրը պետք է

համարել Խաչատուր Աբովյանին: Նրա «Վերք Հայաստանի» վեպի հռչակավոր առաջաբանը մի սպառիչ դատավճիռ է կղերա-ֆեոդալական և վերջին տասնամյակներում գրականության մեջ առաջացած կեղծ դասական ուղղության դեմ: Անգամ եթե Աբովյանը գրած չլիներ այդ առաջաբանը՝ նրա վեպն ինքնին այդպիսի ոչնչացնող քննադատություն էր: Աբովյանի առաջաբանը դեմոկրատական էսթետիկայի մանիֆեստն էր: Նալբանդյանը հավատարիմ մնալով Աբովյանի սկզբունքներին՝ զարգացրեց և ստեղծեց մի ամբողջ հոսանք մեր գրականության պատմության մեջ:

Գրականության և քննադատության դերի ու նշանակության մասին Նալբանդյանն առաջին անգամ հանդես եկավ 1858 թվին մի ընդարձակ հոդվածով՝ տպագրված «Հյուսիսափայլ»-ի անդրանիկ համարում «Կրիտիկա. «Հանդես նոր հայախոսության», գործ Ստեփաննոս վարդապետի Նազարյանցի (Ա. հատ., Մոսկվա, 1857 թ.): Նազարյանցի գիրքը Նալբանդյանի համար միայն առիթ էր՝ արտահայտելու իր հայացքները գրականության և հատկապես քննադատության մասին: Նալբանդյանը քննադատելով կրիտիկայի մասին տարածված սխալ կարծիքը, «Թե նա մարդ է խայտառակում, թե նա հեղինակի պակասությունները երեսին զարկելով ծիծաղում է նրա վրա և ցույց է տալիս հասարակությանը մի այնպիսի հեղինակի ագիտությունը որևիցե բանի մեջ», վեր է հանում քննադատության հսկայական դաստիարակչական նշանակությունը, մատնանշելով հատկապես այն հանգամանքը, որ լուսավոր ազգերի մեջ քննադատությունն արդեն հասել է զարգացման այնպիսի աստիճանի, որ դարձել է գրականության մի մեծ ճյուղ:

«Ինչի՞ է հարկավոր կրիտիկան», հարցնում է Նալբանդյանը և պատասխանում—որ ցույց տա թերությունները և փակի մոլորության ճանապարհը: Քննադատությունը վեր հանելով ընթերցողների ուշադրությունից վրիպած լավագույն գործերը և քննադատելով վնասակար, ապաշնորհ երկերը՝ դրանով իսկ դառնում է «զգուշացուցիչ առաջնորդ» հասարակության համար:

Նալբանդյանի մատերիալիստական էսթետիկան մի ահեղ զենք էր՝ մերկացնելու միջնադարյան և իր ժամանակի կղերական «կորիֆեյ» ճանաչված հեղինակներին և նրանց գաղափարախոսությանը: Նալբանդյանը հիանալիորեն հասկանում էր քննադատության մեծ դերը, որպես «մարդկային օրգանիզմի բարձրագույն»

ռեակցիա» (Լունաչարսկու բնորոշումն է)։ «Այն ազգը, որ չունի կրիտիկա, չունի և մատենագրություն,—գրում է Նալբանդյանը,—պատճառ՝ մատենագրություն առանց կրիտիկայի՝ միևնույն է, ինչպես մարմինն առանց հոգու. իսկ այն ազգը, որ չունի մատենագրություն, ասել է թե չունի և բանականություն, որովհետև մատենագրությունը այլ բան չէ, եթե ոչ բանականության արձանագրություն»։

Նալբանդյանի ժամանակ և նրանից շատ հետո գոյություն ունեին այսպես կոչված բանավոր և նամակային քննադատություն։ Նալբանդյանն իր հոդվածում բերելով այդ տիպի քննադատության օրինակներից մեկը՝ ցույց է տալիս, թե ինչու ժողովուրդը կրիտիկայի մասին ունի բացասական կարծիք, այն համարելով բամբասանք կամ նախատինք։ Այսպիսին էր ահա քննադատության շուրջը ստեղծված այն մթնոլորտը, որի մեջ սկսեց աշխատել Նալբանդյանը։

Ի՞նչ սկզբունքներով էր առաջնորդվում Նալբանդյանը գրականության տեսության ասպարեզում։ Նալբանդյանն սկզբնական շրջանում գերազանցորեն հակված է եղել դեպի նայիվ ռեալիստական գրականությունը։ Նրա վաղ շրջանի էսթետիկական ասույթներն այդ են ապացուցում։ Այստեղ և հետագայում, երբ մենք գործ ենք ածում նայիվ ռեալիզմ արտահայտությունը, միշտ նկատի ունենք կյանքի հարազատ վերարտադրությունը, որը դեռևս չի հասնում իրականության ընդհանրացած վերարտադրությանը։ Նալբանդյանի մոտ նայիվ ռեալիզմի տեսությունը կյանքի կույր նմանողությունը չէր՝ իր նատուրալիստական մանրամասնությունների մեջ։ Նալբանդյանի նայիվ ռեալիզմը մի անցման էտապ էր՝ հասարակական կյանքի ռեալիստական վերարտադրությանը հասնելու համար, որպես իսկական արվեստի բարձրագույն պահանջ։ «Ճշմարիտ և ստույգ մատենագրությունը,—գրում էր Նալբանդյանը 1858 թվին,—մի հայելի է, որի մեջ ցոլանում է ազգի կյանքը։ Եվ որպես հարգի է այն հայելին, որը ճիշտ ցոլացնում էր յուր առջև դրած առարկայի պատկերը, նույն չափով մի մատենագրություն, որի մեջ ստուգապես երևում էր ազգի կյանքը և պատկերը. սորա հակառակ անպիտան է, եթե հայելին ուղիղ չէ, և չէ ցոլացնում ստուգապես այն բանի պատկերը, որ ցույց էին տալ, այս-

պետ է մատենագրությունը» («Հյուսիսափայլ», 1858 թ. № 2, էջ 245):

Մեզանում հաճախ նշվել է Չերնիշևսկու էսթետիկական հայացքների և հատկապես «գրականություն-հայելի» տեսության ազդեցությունը Նալբանդյանի էսթետիկական հայացքների վրա: Այդ անպայման ճիշտ է: Սակայն կանգ առնել հենց այս կետում՝ սխալ կլինի, որովհետև, ինչպես Չերնիշևսկին, այնպես էլ Նալբանդյանը, իրենց ռևոլյուցիոն-դեմոկրատական հայացքների համապատասխան ավելի զարգացնում և խորացնում էին իրենց էսթետիկական հայացքները: «Գրականություն-հայելի» տեսության քարոզից վեց տարի հետո Նալբանդյանն այսպես էր գրում Պռոշյանի «Սոս և Վարդիթեր» վեպի մասին. «Արդեն ասած ենք, որ Սոս և Վարդիթերի տկար կողմերն այն տեղերումն է, ուր հեղինակը դուրս գալով բնական սահմանից, օգնություն է խնդրում երևակայությունից: Սորա մի քանի օրինակը ցույց տվինք, բայց համեմատաբար ավելի թեթև հանգամանաց մեջ: Անցքի կատաստրոֆը, որ ամեն իրավունքով պահանջում է հեղինակից ավելի հմտություն և ճարտարություն, ուր պիտի որ գործի ամբողջ ընթացքի մեջ լարված թելերն ավելի ճարտարությամբ, ավելի հնարագիտությամբ, և որ գլխավորն է՝ ավելի բանականությամբ միանան, հավաքվեն և կենտրոնանան, ինչպես արևի ճառագայթը անցնելով մի ոսպնաձև ապակուց, որ իսկույն կրակեն,—այդ կատաստրոֆը երբ համեմատում ենք գործի ընդհանուր արժանավորության հետ, շատ թույլ է կերպարանագործված, և ոչ միայն այսչափ, այլ և անբնական» (Նալբանդյան. Անտիպ երկեր, էջ 165—166): Այժմ Նալբանդյանը պահանջում է ոչ թե կյանքի սոսկական վերարտադրություն, այլ նրա «բեկբեկումը» գրականության մեջ, ինչպես արևի ճառագայթները ոսպնաձև ապակու մեջ: Սա արդեն նայիվ ռեալիզմի պահանջ չէ: Այստեղ Նալբանդյանը նայիվ ռեալիզմից անցում է կատարում դեպի քննադատական ռեալիզմը, այսինքն իրականության այնպիսի արտացոլումը, որն ընդգծում է նրա այս կամ այն կողմը, խտացնում է այն, դարձնում ավելի ռելեֆ:

Նալբանդյանը Պռոշյանին կշտամբում է նաև նրա համար, որ նա իր վեպում գործող անձնավորություններից Վայկունուն և Արշամին աննշան տեղ է տվել, թույլ չի տվել նրանց ավելի շատ արտահայտվելու: «Արշամի բերանով խոսում է նոր ժամանակների

որդին»—ասում է Նալբանդյանը: Ի՞նչն է գրավել Նալբանդյանին Վայկունու և Արշամի տիպերի մեջ: Վայկունին վիճելով Սոսի մեծ եղբոր՝ Պարետի հետ, բողոքում է տիրող սոցիալական անարդարությունների դեմ: Այդ բողոքն առաջին հերթին ուղղված էր գյուղի իշխանների, հարուստների և պետական պաշտոնյաների դեմ, որոնք աղքատ գյուղացիներից մորթի ուժով խլում են նրանց վերջին ունեցվածքը: Այդ բողոքը նշանակալից է նաև նրանով, որ դրա մեջ արտահայտություն է գտել դասակարգային հակամարտությունը, գույքային անհավասարությունը: Վայկունին բողոքում է կաշառակերության դեմ, որ իշխում է ամենուրեք: Սոսի փոքր եղբայր Արշամը դիմելով Սոսին և Պարետին՝ հաստատում է իր մեռնող Վայկունու խոսքերը. «Վայկու ասիր խոսքերը,—ասում է Արշամը,—ավետարանի կողքին գրված են, ապա ինչի՞ եք երկու երեսանություն անում, կողմնապահ ըլնում. հիմի էս հո մեր պապական հիքն ա, ուղենան կխլեն, կտան ուրիշի (!!!) քանի՞ քանի՞ օրինակներ կան, որ ընչանք քեզնից մի օգուտ չեն ունեցել, բանդ չեն շինել...» (Նալբանդյան. Անտիպ երկեր, էջ 212): Նալբանդյանն այս հատվածը վերցնելով Պռոշյանի վեպից, հետևյալ շատ բնորոշ դիտողությունն է անում. «Արշամի բերնով խոսում է նոր ժամանակների որդին: Պարետը և Սոսը գուցե իրենց սրտում ընդունում են Վայկունի խոսքերի ճշմարտությունը, բայց վախենում են հայտնի դավանել ճշմարտությունը: Արշամը իր սերունդի երևույթն է. նա ոչ միայն ընդունում է այդ դառը խոսքերի ճշմարտությունը, այլ և դատապարտում է իր եղբոր երկու երեսանությունը: Ինչպես առաջ էլ ասացինք, ափսոս որ շատ քիչ հանդես ունի Սոս և Վարդիթերի մեջ այն ուղղությունը, որ երևում է Արշամում, թեև այս չափիցն էլ տեսնում ենք կենարար սկեպտիցիզմի արած ազդեցությունը: Մենք աջողություն և ընթացք ենք մաղթում այդ երկնային դեսպանին» (Նույն տեղ, էջ 212—13): Նոր ժամանակի որդին Արշամն է, նրա մտքի սկեպտիկական ուղղությունը, որ առայժմ մի կայծ է խավարի մեջ, պիտի բոցավառի այդ խավարը: Նալբանդյանի կտրուկ պահանջը՝ մեծ հանդես տալ Արշամին, զուգադիպում է Դոբրոլյուբովի այն պահանջին, որ նա ներկայացնում էր իր ժամանակի ռուս գրականությանը և հատկապես Տուրգենևին: «Դոբրոլյուբովը փնտրում էր այն հերոսին, որ պատերազմ կհայտարարեր ինքնակալությանը» (Վ. Պոլյանսկի):

Այսպիսի հերոսներ Դոբրոլյուբովն առայժմ չէր տեսնում ռուս գրականության մեջ, հերոսները միայն օբլոմովները, մանիլովները և սոբակևիչներն էին կամ «ավելորդ մարդիկ»՝ Օնեգինը, Պեչորինը, Բելտովը։ Դոբրոլյուբովը մատնացույց էր անում Տուրգենևի «Նախօրյակին» վեպի բուլղար ռևոլյուցիոներ Ինսարովին։ Սակայն Դոբրոլյուբովը գտնում էր, որ ռուս հասարակությունն արդեն այնպես է զարգանում, որ հնարավոր են այդպիսի հերոսներ նաև Ռուսաստանում և գեղարվեստական գրականությունը պետք է հրապարակ հանի այդ հերոսին։ Այս տեսակետից միաժամանակ շատ բնորոշ էր Դոբրոլյուբովի չափանիշը գրական երկի գեղարվեստականության մասին։ Վալերյան Պոլյանսկին ամփոփելով Դոբրոլյուբովի էսթետիկական հայացքները՝ գրում է.— ըստ Դոբրոլյուբովի «գեղարվեստագետը մեծ է, նայած, թե ինչի՞ վրա է ուղղված նրա հայացքը, ինչքանո՞վ է ընդգրկում կյանքը, ինչպե՞ս է հասկանում և վճռում սոցիալական պրոբլեմները»։ Գրական երկի գեղարվեստականության նույնպիսի չափանիշ ուներ նաև Նալբանդյանը և կարող էր Բելինսկու նման ասել՝ ամեն մի իսկական գեղարվեստական երկը «աշխարհն է մինյատուրայի մեջ»։ Նալբանդյանը Պռոշյանի վեպում չէր տեսնում սոցիալական պրոբլեմներ, սակայն դա թույլ գործ էր համարում գաղափարական տեսակետից և անկատար՝ գեղարվեստական առումով։ Պռոշյանի վեպում կային միայն այդ պրոբլեմների սաղմերը, Նալբանդյանը կոչ է անում երկի այդ մոմենտները դարձնել առանցքային։

Նալբանդյանի էսթետիկական հայացքների մեջ կարևոր տեղ է գրավում գեղեցիկ իդեայի մեկնաբանության խնդիրը, որ նույնպես կրում է առաջավոր մատերիալիստական փիլիսոփայության ազդեցությունը։ Նալբանդյանն ամենայն իրավամբ իրարից զատում է երկու բան—նյութական պահանջներ և հոգեկան պահանջներ, ըստ որում նրանցից յուրաքանչյուրն, ըստ Նալբանդյանի, ունի բավարարման յուրահատուկ օբեկտ. «Գեղեցիկ պատկերի, գեղեցիկ արձանի վրա նայելով,—գրում է Նալբանդյանը,—կշտանում է մեր հոգու գեղասիրության քաղցը, բայց ոչ պետքերի քաղցը, և ամեն բանից առաջ եթե մենք պետք է քաղցը չկշտացնենք, մեր գոյության հավասարակշիռը կթեքվի և այնուհետև ոչ Ռաֆայելի մադոննան և ոչ Աֆրոդիտեն կարող է փրկել մեր անձը» (Նալբանդյան, Երկեր, հատ. 2. էջ 481)։ Մարքսը 1844 թվին իր

փիլիսոփայական-տնտեսագիտական շարադրությունների մեջ անդրադառնալով գեղեցիկ զգացմունքին և նրա առաջացման ու բավարարման հարցին՝ գրում է. «Կոպիտ գործնական պահանջմունքի գերի զգացումը (Sinn) ունի միայն սահմանափակ իմաստ (Sinn): Քաղցած մարդու համար գոյություն չունի սննդի մարդկային ձև, այլ գոյություն ունի միայն նրա վերացական կեցությունը որպես սննդի, նա կարող էր միևնույն հաջողությամբ ունենալ ամենակոպիտ ձևը, և անհնար է ասել, թե ինչով է զանազանվում սնման այդ գործունեությունն անասնականից: Կարիքավոր, հոգսերով լի մարդու մոտ ամենասքանչելի տեսարանը չի գտնում համապատասխան զգացումներ...» (Մարքսը և Էնգելսը արվեստի մասին, էջ 22):

Այստեղից էլ բխում է հարցի երկրորդ մոմենտը, թե ո՞րն է Նալբանդյանի արտահայտությամբ ասենք՝ «Նախընտիրը», մարդկանց գեղագիտակա՞ն քաղցի, թե՞ պետքերի քաղցի բավարարումը:

Հայտնի է, որ Մարքսը և Էնգելսը բազմիցս կրկնում էին, թե՝ մարդու գոյության գլխավոր և առաջին պայմանն այն է, որ պատմություն անելուց առաջ պետք է հոգան սննդի, բնակարանի, հագուստի, և այլնի մասին: Նալբանդյանի մոտ կարդում ենք. «Բայց մարդը հառաջ, քան թե պիտի գոյանա, հառաջ, քան թե գոյանալուց հետո պիտի ապրի, հառաջ, քան թե պիտի քննե և իմաստասիրե յուր անձը, յուր կյանքը, յուր անցածը, յուր ներկան, և հառաջ, քան թե պիտի մտածե և հոգաբարձու լինի յուր ապագայի մասին, այս բոլորից առաջ մարդը կարոտ է նյութի» («Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ», էջ 79): Նալբանդյանը շարունակելով իր գեղագիտական հայացքների շարադրումը՝ գրում է. «Պարզ է, թե պետքը նախընտիր է, քան թե գեղեցկությունը, որովհետև կյանք չկա, եթե պետքերը չհոգացվին: Ցրտի տակ ընկած մերկ մարդը է՛լ գեղեցկության չի նայիլ, միայն թե մի բան գտնե, որի մեջ պատսպարի իր անձը ու չպաղի սառկած ձուկի պես, քաղցածը էլ համին չի նայիլ, միայն թե ուտելիք գտնե, իսկ երբ մարդը հոգացել էր բոլոր էական պետքերը, երբ այդ բոլորին ասում ենք հոգալով ապահովել էր իր կյանքը, այն ժամանակ միայն զարթնում են նորա մեջ մյուս հոգեկան քաղցերը, կամ ցանկությունքը, որոնցից շատը դեռ անծանոթ են շատ միլիոններին, բայց այդ միլիոնները նույնպես ապրում են, ինչպես ապրում

են շատ նկարիչք, որ քսան երեսուն տարիներով Հռոմ են նստում սիրահարվելով անտիկյան գեղեցկության կամ ճարտարության» (Երկեր, հատ. 2, էջ 481—82)։ Սխալ մեկնաբանելով Նալբանդյանի մատերիալիստական այս դրույթը՝ նրան հռչակել են Պիսարևի հետևորդ։ Ըստ Նալբանդյանի՝ գրական երկի գեղարվեստականությունը որոշելիս էլ պետք է ելնել պետքից, այսինքն՝ բովանդակությունից, բայց այս չի նշանակում, թե Նալբանդյանն ամեն բան գռեհկաբար կապում էր անմիջական նյութականի պահանջի հետ։ Գրական երկի մեջ պետքը հենց նրա հասարակական բովանդակությունն է, որը դրսևորվում է գեղեցիկ ձևի մեջ, ըստ որում ձևի գեղեցկությունը որոշվում է հենց նրանով, թե նա ինչ հաջողությամբ է ներկայացնում հասարակական բովանդակությունը։ Այստեղ առաջին հերթին Նալբանդյանի սլաքներն ուղղված են արվեստը արվեստի համար տեսության և ոչ թե գեղեցկության և գրական երկի սպեցիֆիկումի դեմ։ Նալբանդյանն իր վերոհիշյալ դրույթով Չերնիշևսկու և Դոբրոլյուբովի նման առաջադրվում է արվեստը հասարակության համար սկզբունքով՝ ջախջախելով գեղեցիկի ինքնաբավության տեսությունը։ Նալբանդյանը առաջադրելով արվեստը հասարակության համար սկզբունքը, պահանջելով խորապես հասարակական արվեստ՝ բնավ չի ժխտել ո՛չ գեղեցկի զգացումը, ո՛չ էլ գեղարվեստական երկի յուրահատկությունը։

Գեղեցկի բացարձակության և հարաբերականության, ինչպես նաև հավիտենական չափանիշի հարցերը Նալբանդյանին ևս զբաղեցրել են։ «Գեղեցկությունը իրավունք չէ»—հայտարարում է Նալբանդյանը և ապա շարունակում. «աշխարհիս երեսին ոչ գրական գեղեցիկ կա, ոչ գրական գեղեցկություն, ամեն բան կախված է այն կետից, ինչ կետից նայում ես առարկայի վրա։ Ամեն բան կախված է չափից»։ Այսպես ուրեմն, Նալբանդյանը չի ընդունում բացարձակ գեղեցկի—և հետևապես նաև բացարձակ չափանիշի գաղափարը, քանի որ «բացարձակ չափանիշներ ընդհանրապես գոյություն չունեն» (Լունաչարսկի)։

Նալբանդյանը գեղարվեստական ձևի և բովանդակության միասնությանը մեծ նշանակություն էր տալիս. դա պարզ կերպով երևում է առանձնապես «Ագասի» գրվածքի և Ալիշանի արվեստի մասին արած նրա դիտողությունների մեջ։

Նալբանդյանը հիանալիորեն ըմբռնել էր քննադատության անելիքը: Ինչպես հայտնի է, Պիսարևը գրական քննադատի համար առանձին շնորհք չէր պահանջում. նրա կարծիքով ամեն մի հրապարակախոս էլ կարող է լինել քննադատ, ինչպես ամեն մի գիտնական՝ գրող: Գրականության սպեցիֆիկումի ժխտումից անխուսափելիորեն պիտի առաջանար նաև գրական քննադատության սպեցիֆիկումի ժխտումը: Այդպես չէ Նալբանդյանի մոտ: Պռոշյանի «Սոս և Վարդիթեր» վեպի քննադատության մեջ Նալբանդյանը գրում է. «Համարձակ կարող ենք ասել, որ արդյո հեղինակը իր նկարագրած կյանքի վերաբերությամբ, ոչ ավելի և ոչ պակաս մի անխարդախ հայելի է, ուր ցոլանում են բնության ճառագայթքը: Մենք նայեցանք այդ հայելու մեջ և տեսանք ինչ որ ցույց էր տալիս նա. և ծանոթ լինելով մեզ նորա ցույց տված բնությանը, վկայում ենք հայելու արժանավորությանը: Պ. Պռոշյանցը պրծավ իր պարտքից. այժմ մերն է կարգը նորա համար հայելի դառնալ և ցոլացնել հեղինակին նորա սեփական գործը. այս իր տեսակի «ճառագայթների կրկին բեկբեկումն» է (Անտիպ երկեր, էջ 151): Պարզ է ինքնին, որ գրական երկը ճիշտ հասկանալու համար անհրաժեշտ է ունենալ գեղարվեստական հայտնի պատրաստություն, թերևս ավելին, քան որևէ հեղինակ: Քննադատի կոչման այս ըմբռնումը միանգամայն ուսանելի է մեզ համար, եթե ավելացնենք նաև այն, որ Նալբանդյանն իր հոդվածում զարգացնում է ոչ այնքան քննադատ-հայելու տեսությունը, որքան այն, որ քննադատը պետք է ցույց տա գեղարվեստական երկի դրական և բացասական կողմերը, նրա վրիպումները, անբնականությունը, նրա զարգացման ուղիները, այսինքն այն, ինչ գեղարվեստագետն իր երկում դրսևորում է տարերայնորեն, մեծ մասամբ անգիտակից, նրա լավագույն կողմերը դարձնել հեղինակի կողմից գիտակցված: Այդպես էլ վարվում էր Նալբանդյանն իր քննադատական պրակտիկայում:

Նալբանդյանը մեր գրականության մեջ եղել է նրա լավագույն մենտորը, նա իր քննադատությամբ ավելի առաջ էր, քան իր ժամանակի հայ գրականությունը և այս է հենց Նալբանդյանի մեծությունը՝ որպես հրապարակախոս, և այդ է նրա արժանիքը՝ որպես հայ անդրանիկ գրական քննադատ:

Նալբանդյանը հաճախ կրկնում էր այս խոսքերը—«Կյանքի

համանքը միայն մի ընթացք ունի—դեպի առաջ»: Նա չէր կարողանում հանդուրժել հայ իրականության և գրականության ճահճացած դրությունը: Նալբանդյանը Լերմոնտովի նման բարձրաձայն հայտարարում է. «Խորհրդավոր ժամանակում ենք ապրում մենք, և մեծ պարտականություն կա մեր վրա՝ գրգռել, այդ (ընդգծ. Գ. Ռ.) թերերի գործունեությունը, առողջ օդ ներս շնչելով. հերիք է, որքան թմրեցուցիչ թույն մտել է նորա մեջ, մեզ մնում է այժմ դեղաթափներ գործ դնել» (Անտիպ երկեր, էջ 170): Հարկավոր էին «դառը դեղեր» և «կծու ճշմարտություններ»:

Դիտելի է այն երևույթը, որ հայ գրականության պատմության մեջ գրական քննադատությունը միշտ գնացել է վերջից, նա արձանագրել է միայն կատարված փաստը: Դրա պատճառն այն էր, որ, ինչպես Լեոն է ասում, «հրապարակախոսությունն էր հող պատրաստում գեղարվեստական երկի համար»: Մեր գրականության պատմության մեջ քննադատությանը մեծ մասամբ փոխարինել է հրապարակախոսությունը և վերջինս էլ կատարել է մենտորի դերը:

Գեղարվեստական արձակի ստեղծման գործում Նալբանդյանը մեծ տեղ է տալիս Գաբրիել Տեր-Հովհաննիսյանին, որին համարում է հայկական Գոգոլ, իսկ նրա «Տեր Սարգիս» անավարտ վեպը Նալբանդյանն արժեքավորում է նույն սկզբունքով, ինչ որ «Վերք Հայաստանի»-ն և «Սոս և Վարդիթեր»-ը: Ի՞նչն է այդ անավարտ վեպի արժանիքը, որ եթե ավարտվեր, ըստ Նալբանդյանի, կհավասարվեր Գոգոլի «Մեռած հոգիներ» հանճարեղ երկասիրությանը: Վեպում պատկերված են հոգևորականության բարքերը. ռեալիստական պատկերներով տրված է նրանց անբարոյական, հղփացած կյանքը, կաշառակերությունը, տգիտությունը: Տեր-Հովհաննիսյանն իր վեպում ստեղծել էր բացասական տիպերի մի գալերեա, որ հիշեցնում էր Գոգոլի «Մեռած հոգիներ»-ի առաջին մասը:

Նալբանդյանը նոր աշխարհիկ գրականության՝ «ազգային վիպասանության» հիմնադիրներ համարում էր Աբովյանին և Պռոշյանին: Առարկելով Ստեփան Ոսկանին՝ Նալբանդյանը ցույց էր տալիս, որ «Վերք Հայաստանի»-ի առավելությունը հենց այն է, որ գրված է ռամիկների համար և ռամիկի ոճով, հարյուր հազարավորներին հասկանալի լեզվով:

Նալբանդյանն առանձին հոգատարությամբ էր վերաբերվում

արևմտահայ գրականությունը։ Նա ուշադրությամբ կարդում և գրախոսություններ էր անում արևմտահայ հեղինակների գործերի վրա։ Նա ամեն կերպ քաջալերում էր այն պայքարը, որ ծավալվել էր աշխարհաբարի և գրաբարի շուրջը։ Նա նույնիսկ իր պաշտպանության տակ է առնում Կարապետյան-Կլիկյանի պայքարի մեջ ճանիկ Արամյանին։

Նալբանդյանն արևմտահայ գրականության վրա ուներ նաև մեծ բարոյական ազդեցություն։ Դրա ապացույցը կարող է լինել այն, որ 1859 թ. արտասահմանյան ուղևորության ժամանակ հանդիպելով արևմտահայ հեղինակներին՝ հորդորում էր նրանց թողնել գրաբարը և գրել աշխարհաբար։ Նալբանդյանի այդ հորդորանքը տվել է իր արդյունքը։

Նալբանդյանը թեև աշխարհաբար գրված մի շարք գործեր գովաբանում էր, բայց և այնպես, հրապարակի վրա գտնվող ոչ մի երկ գեղարվեստական տեսակետից կատարյալ չէր համարում։ Նրա համար գեղարվեստական երկի չափանիշն այն էր, որ բնականությունը, այսինքն օբյեկտիվ իրականության արտացոլման հարազատությունը և արվեստն իրար զուգակցվեն, լծորդվեն այն երկում, ուր չկա այդ զուգակցումը, չկա և գեղարվեստական տեսակետից կատարյալ գործ։ Նալբանդյանի քննությանը դիմանում է միայն մի անհայտ հեղինակի «Ագապի» անունով գրվածքը, որը լույս է տեսել 1851 թ. Կ. Պոլսում։ Նալբանդյանի խոսքերից երևում է, որ այդ երկը գեղարվեստական տեսակետից ավելի կատարյալ է եղել, քան «Վերք Հայաստանի»-ն և «Սոս և Վարդիթեր»-ը։ «Բնականությունը և արվեստը,—գրում է Նալբանդյանը,—իրար հետ լծորդված են այդ գործի մեջ... Վերք Հայաստանին չունի այնքան արվեստ. Սոս և Վարդիթերն Վերք Հայաստանուցն էլ քիչ ունի, թեև ունին բնականություն։ Ագապին արվեստի կողմից կարող է դիմանալ խիստ քննության։ Բնականության կողմից և հոգեբանական հարազատության մասին շատ բարձր է եվրոպական ամենավոր վիպասանություններից» (Անտիպ երկեր, էջ 150)։ Նալբանդյանը, որ լավ ծանոթ էր ռուս և եվրոպական կլասիկներին՝ չէր կարող այդպես շռայլ լինել «Ագապի»-ի նկատմամբ։ Այստեղ հավանորեն, ինչպես Նալբանդյանն է ասում, եղել է հոգեբանական հարազատություն, բնականության և արվեստի լծորդություն։

Նալբանդյանի քննադատությունը գերազանցապես հրապարակախոսական բնույթ ուներ, բայց դա ոչ նրա մեղքն էր, ոչ էլ նրա

ժնությունը: Գրական քննադատության հրապարակախոսական բնույթը բխում էր ռևոլյուցիոն լուսավորականությունից: Պլեխանովը կշտամբում էր Դոբրոլյուբովին այն բանի համար, որ նրա գրական գործունեության ընթացքում «Հրապարակախոսը միշտ դերակշռում էր գրական քննադատին», մինչդեռ մեզ համար Դոբրոլյուբովի քննադատության հրապարակախոսական բնույթը, նրա քաղաքական նպատակասլացությունը այդ քննադատության մեծագույն արժանիքն է: Այս իմաստով էլ ներկայումս մեզ համար Նալբանդյանի գրական քննադատության, սուր ձևով արտահայտված, հրապարակախոսական-քաղաքական բնույթն ամենևին չի նսեմացնում նրա արժեքը: Այդպիսի քննադատությունը բխում էր պատմական արենայի վրա բարձրացած հասարակական նոր խավերի գաղափարախոսության օրգանական պահանջից: Հենց այդ պատճառով էլ Նալբանդյանի քննադատության այդ կողմը միանգամայն տրամաբանական է և հասկանալի:

Սակայն ինչպես Չերնիշևսկին և Դոբրոլյուբովը, այնպես էլ Նալբանդյանը, լինելով հրապարակախոս քննադատներ, չեն հետևում սուբյեկտիվիստների սոցիոլոգիական դպրոցին:

Գեղարվեստական գրականության մեջ, ինչպես Դոբրոլյուբովը, այնպես էլ Նալբանդյանը, առաջնակարգ տեղ էր տալիս տիպականացմանը, հասարակական որոշ խավերի համար բնորոշ գծերը միանավորության մի անձնավորության մեջ կենտրոնացնելուն. կոնկրետ ասած՝ Նալբանդյանը կցանկանար, որ Պռոշյանի «Սոս և Վարդիթեր» վեպի մեջ Վայկունին և Արշամը միացված լինեին մի անձնավորության մեջ և նրանց երկուսի գծերը, այսինքն սկեպտիկական բնավորությունը և բողոքող ոգին անձնավորված լինեին այդ մեկի մեջ: Այստեղ Նալբանդյանը հանդուրժելի էր համարում նաև որոշ իդեալականացում՝ տիպը հասարակայնորեն ավելի համայնապարփակ և ազդու դարձնելու համար:

Հայ քննադատական մտքի պատմության մեջ Միքայել Նալբանդյանի թողած ժառանգությունը շատ արժեքավոր և ուսանելի բան ունի հենց մեր ժամանակի տեսակետից: Նալբանդյանը շեշտը դնում էր ազգային ինքնուրույն դեմոկրատական գրականության վրա, որը պիտի ռևոլյուցիոն նշանակություն ունենար ցարական ինքնակալության դեմ մղվող պայքարում: Ազգային դեմոկրատական գրականության պահանջը Նալբանդյանի մոտ սերտորեն

ձուլվում էր ժողովրդական բանահյուսության՝ գրականության զարգացման և հարստացման այդ անսպառ պաշարի օգտագործման հետ, որը շատ խորթ է եղել հայ լիբերալ բուրժուական գրականագետների համար։ Այդ ժառանգության մեջ նշանակալից է նաև այն, որ նա առաջինն էր, որ հարց դրեց իրականության ճշմարտացի արտացոլման մասին, այս կողմը կարմիր թելի պես անցնում է նրա գրական-քննադատական բոլոր հոդվածների միջով։ Միքայել Նալբանդյանը հեռու մնաց լիբերալ բուրժուական սոցիոլոգիզմից։ Նրա կարծիքով գեղարվեստական երկի իդեաները կարող են լայն մասսաներին հասնել և հասկանալի դառնալ միայն այն ժամանակ, երբ տրված են բարձր արվեստով։

Միքայել Նալբանդյանի, որպես գրական քննադատի, առանձնահատկություններից մեկն էլ այն էր, որ նա հսկայական կենսափորձ ուներ, լավ ծանոթ էր կյանքին, հասարակական տարբեր շերտերի հոգեբանությանը։ Այս կենսափորձը Նալբանդյանին մեծ չափով օգնել է իր գրական-քննադատական հայացքների մեջ ռեալիզմի տեսությունը զարգացնելու գործում։

Նալբանդյանի էսթետիկական հայացքները խորապես ռևոլյուցիոն էին։ Մարտնչող հրապարակախոսը մարտնչող էր նաև գրականության մեջ, նա պայքարում էր «իսկական օրվա» համար։ Այդ նպատակին հասնելու համար նա գծում էր ռևոլյուցիոն միջոցներ, որոնք հատուկ էին գյուղացիական ռևոլյուցիային։ Նալբանդյանը ինքնակալության դեմ պայքարելու համար հերոսներ էր փնտրում գեղարվեստական գրականության մեջ, ցանկանում էր տեսնել այդ հերոսին։ Նալբանդյանի, ինչպես նաև 50—60-ական թվականների ռուս ռևոլյուցիոն դեմոկրատների, ամբողջ դժբախտությունն այն է, որ չէր տեսնում սաղմնավորվող պրոլետարիատին, որ պիտի դառնար ցարիզմի դեմ մղվող պայքարի ավանգարդը։

Նալբանդյանը պայքարեց և զոհվեց առանց սպառած լինելու իր ուժերը։ Ցարիզմին հաջողվեց ֆիզիկապես հյուծել նրան, բայց հոգեպես՝ ոչ։ Այդտեղ ցարիզմը, ինչպես միշտ, սնանկ դուրս եկավ։

ՄՈՒՇԵՂ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

ՄՈՒՇԵՂ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

(1914—1943)

Երիտասարդ գրականագետ Մուշեղ Արզումանի Բալասանյանը ծնվել է 1914 թվականին Ստեփանակերտում, բանվորի ընտանիքում։

1932 թվին նա ավարտում է Շուշի քաղաքի մանկավարժական տեխնիկումը և երկու տարի ուսուցչություն անում գյուղում։ Այնուհետև մինչև Երևան գալը, մի առժամանակ աշխատում է «Խորհրդային Ղարաբաղ» թերթի խմբագրությունում։ Երևանում ավարտելով Պետական Համալսարանը, զբաղվում է քննադատությամբ։ Դպրոցում սովորելիս, գյուղում աշխատելիս, թե ուսանողական տարիներին,—ուր և որտեղ էլ լինում է նա,—կոմերիտական, գրասեր Բալասանյանը մեծ ակտիվություն և անսպառ եռանդ է ցույց տալիս հասարակական բոլոր աշխատանքներում...

Երիտասարդ քննադատ Մուշեղ Բալասանյանի հոդվածներում աչքի են ընկնում անկեղծությունն ու անաչառությունը, սուր դիտողականությունը, քննարկվող նյութի վերաբերյալ հեղինակի լավատեղյակությունը։

Նա ունի գրական բազմազան հետաքրքրություններ. նրան զբաղեցրել են հայ կլասիկ հեղինակները, ֆոլկլորը, էպոսի մշակման խնդիրները, սովետահայ գրականության խնդիրները, թատրոնը։ Առանձնապես զբաղվել է երիտասարդ գրողների ստեղծագործություններով։ Իր ելույթներում և հոդվածներում քննության է առնում նորաճ գրողների գործերը, ցույց տալիս նրանցում եղած թերությունները, վեր հանում առողջն ու արժեքավորը, նշում սկսնակ հեղինակների զարգացման հեռանկարները։

Երբ մեր հայրենիքի վրա կենաց ու մահվան վտանգ է կախ-

վում, Բալասանյանը թողնում է Պետական Համալսարանի ասպիրանտուրան և գրչի փոխարեն զենք առնելով, ռազմաճակատ մեկնում որպես շարքային՝ կրծքով պաշտպանելու հայրենիքի ազատությունը, մեր երջանիկ աշխարհի բարիքները:

Այդ վեհ ու սրբազան ուխտի ճանապարհին էլ, ռազմի դաշտում 1943 թվին, կտրվում է ոգեշնչումներով ու երազներով լի նրա կյանքի թելը և կիսատ են մնում նրա հայրենասեր, ազնիվ հոգու թռիչքները...

Բալասանյանի կյանքն ու գրական շատ կարճատև, բայց բեղմնավոր գործունեությունը վառ ապացույց են այն բանի, թե սովետական կարգերում յուրաքանչյուր երիտասարդ ինչպիսի՜ փայլուն հեռանկարներ ունի զարգացման ու առաջադիմության:

Երիտասարդ քննադատը մի առանձին սեր է տածում դեպի բեմը, դեպի թատրոնական աշխարհը: Դրա լավագույն ապացույցն է «Սեր և խարդավանք», «Կապուտան» և մի քանի այլ պիեսների ու ներկայացումների մասին գրած հոդվածները: Դերասանների խաղի քննադատության մեջ նա բավական համարձակ է, բայց և միաժամանակ անչափ հոգատար և ուշադիր:

Մեր պարբերականներում տպագրված հոդվածներից արժե հիշատակել՝ «Մեր գրականության Հոկտեմբերյան սերունդը» («Սով. գրականություն», 1940 թ., № 10), «Սասունցի Դավթի գրական մշակումները» («Սով. գրականություն», 1939 թ., № 8—9), «Հր. Քոչարի վեպը» («Գր. թերթ», 1938 թ., 18 ապրիլի), թատրոնական ռեցենզիաներից՝ «Խարդավանք և սեր» («Գր. թերթ», 1938 թիվ, 7 մայիսի) և այլն:

„ԽԱՐԴԱՎԱՆՔ ԵՎ ՍԵՐ„

Այս թատերկում Շիլլերը ներկայացրել է երկու հակոտնյա աշխարհ—ազնվական գծուծ, ճահճային աշխարհը և վեր ելնող բյուրգերական աշխարհը։ Այստեղ նրա հերոսների ձայնը, անհատների ձայն չէ, այլ ամբողջ սերունդների, նրանց հասարակական մտորումների արձագանքը։ Էնգելսը «Խարդավանք և սեր» պիեսի ամենագլխավոր արժանիքն այն է համարում, որ նա «գերմանական առաջին քաղաքական տենդենցիոզ դրաման է» *(Միննա Կաուցկուն գրած նամակից)։*

Ինքնին հասկանալի է, որ Շիլլերի «Խարդավանք և սեր» պիեսի բեմադրումը առաջին Պետթատրոնի կողմից (բեմադրությամբ վաստ. դերասան Վ. Վաղարշյանի) միանգամայն ողջունելի և խրախուսելի քայլ է։

Բեմադրողն իրեն նպատակ է դրել ցույց տալ սոցիալական այն աստառը, որ ունի Շիլլերի այդ տրագեդիան, ցայտուն գույներով դրսևորել այն սոցիալական անդունդը, որ կա ազնվականության և նոր ելնող դասակարգի միջև։ Իր հիմնական նպատակին հասնելու համար վաստակավոր դերասան Վաղարշյանը բնավ չի դիմել բեմադրական տրյուկների, այլ գործողությունները, ինտրիգները, գործող մարդկանց դրել է ռեալիստական ճիշտ հողի վրա, ռեալիստական մեկնաբանություն է տվել։ Նա առանձնապես շեշտված ձևով է հանդես բերել 3-րդ գործողությունը (4-րդ տեսարան, Վուրմ և Լուիզա), ուր երևան է գալիս երկու աշխարհի մեծ կոլլիզիան և մանավանդ վերջին գործողությունը։ Մեր հարգելի բեմադրողը Ֆաբուլայի վախճանը, պիեսի ֆինալը, շիլլերյան մտահղացումով չի տվել։ Եվ նա ճիշտ է վարվել։ Հեղինակի մոտ Ֆերդինանդն իր վերջին շնչում ներում է հորը, իսկ Վաղարշյանը, ավե-

լորդ համարելով այդ՝ գործողությունն ավարտում է Լուիզայի ու Ֆերդինանդի թունավորման տեսարանով: Բեմադրության ժամանակ նվազ գունեղությամբ չեն շեշտված նաև 2-րդ գործողության 2-րդ և 3-րդ տեսարանները, որտեղ մի կողմից ընդգծվում է բռնակալների անսահմանափակ իշխանությունն իրենց հպատակների կյանքի վրա (հանդես է բերված հասարակական դրամատիզմ—երկրի զինվորների վաճառումը օտարերկրացիներին, որ պատմում է ավագ սենեկապետը), իսկ մյուս կողմից՝ պալատականների զեղխ կյանքի մերկացումը (Ֆերդինանդի և լեդի Միլֆորդի խոսակցությունը):

Սակայն ընկ. Վաղարշյանը որոշ դեպքերում ճիշտ մեկնաբանություն չի տվել պիեսի մի քանի էական կողմերին: Նախ՝ նա հապավումներ անելիս դուրս է թողել այնպիսի կտորներ, խոսակցություններ, որոնք չափից դուրս անհրաժեշտ և կարևոր են թե գործողությունների—տեսարանների ընթացքը պարզաբանելու և թե տիպերի բնութագրման տեսակետից: Վերցնենք թեկուզ Լուիզայի հետևյալ խոսակցությունը՝ «այն ժամանակ, մայրիկ, երբ կջնջվի մարդկանց շերտավորման սահմանագիծը, և ճոխ տիտղոսներն ու զարդերը կէժանանան, իսկ սրտերի գինը կբարձրանա, ես այն ժամանակ հարուստ կլինեմ» (1-ին գործ. 3-րդ տես.):

Բեմադրողը ճիշտ չի մեկնաբանել Հոֆմարշալ Կալբի տիպը: Վերջինս դուքս Կառլ Եվգենիի արքունիքի, ժամանակի բարքերի մարմնացած մի կոնկրետ կարգի ներկայացուցիչն է, «անցյալի տարազը», որի մեջ Շիլլերը դրել է քծնող, ճարպիկ և թեթևամիտ պալատականի գծեր: Ներկայացման ժամանակ նա իր ծամածռություններով շարունակ էժան ծիծաղ էր առաջ բերում: Բեմադրության արժեքը որոշ տեղեր նսեմանում է պիեսի վատ թարգմանության պատճառով: Թարգմանության մեջ նկատվում են լեզվական անհարթություններ, ոճական անճշտություններ, օրինակ՝ «Ես կանգնած եմ քո և ճակատագրի մեջ»: (Ֆերդինանդ, առաջին գործողություն և այլն):

Դառնանք դերասանական խաղին:

Դերասանը պիեսի հեղինակի առաջին քննադատն է. նրա խաղից շատ բան է կախված իր տիպի—օբրազի ձգտումներն ու գաղափարները հանդիսատեսին հաղորդակից անելու գործում: Դերասանի նպատակն է հարազատորեն մեկնաբանել իր տիպը, դերը:

Դերաբաժանման ժամանակ, մենք կարծում ենք, վաստ. դերասան Հրաչյա Ներսիսյանին Ֆերդինանդի դերը չպետք է հանձնվեր: Նրան չհաջողվեց ընդգծել ինտրիգների դեմ մաքառման ուժը՝ այդ հերոսի մեջ. նրա խաղն ավելի հանդիսավոր էր, մեծաբարո, քան դյուրաբորբոք ջերմ սիրող երիտասարդի ներքին բարդ ապրումների ռեալ պատկերում. շարժումների մեջ ժլատ էր, իսկ ձայնը՝ չուներ երիտասարդի զրնգուն-առույգ ձայնի ճկունություն:

Սքանչելի էր վաստ. դերասանուհի Ռուզաննա Վարդանյանի խաղը՝ Լուիզայի դերում: Լուիզայի լիրիկական քնքշությունը, համեստ խառնվածքն ու անմիջականությունը ուղղակի կենդանացրին նաև Գործողության ամենատպավորազդեցիկ մոմենտներին, մանավանդ նամակ գրելու տեսարանում, և վերջին գործողությունում նրա տված խաղը անմոռանալի է: Բնորոշ է Վարդանյանի միմիկան. արտաքին անհանգստության տակ նա կարողացավ վարպետորեն արտահայտել ներքին խճճված, խառնաշփոթ հոգեվիճակը:

Նույնպես հաջողությամբ Լուիզայի դերը կատարեց վաստ. դերասանուհի Ս. Գարագաշը:

Լեդի Միլֆորդը պիեսի կենտրոնական տիպերից չէ, բայց նրա դերի կատարումը ժող. դերասանուհի Արուս Ոսկանյանի կողմից՝ ողջ հանդիսականների լարված ուշադրությանը գրավեց: Տաղանդավոր դերասանուհին կերտեց—ստեղծագործեց գոնե մինչև օրս Երևանի թատերասեր հասարակության համար Լեդիի միանգամայն նոր տիպ: Հայնեն՝ Էդմոնդ Քինի խաղի մասին գրում է—«Շեքսպիրյան պիեսների քանի՜-քանի՜ մութ տեղեր է նա բացատրել ինձ իր խաղով»: Չենք սխալվի, եթե ասենք, որ Արուս Ոսկանյանն իր խաղով Լեդի Միլֆորդի տիպին միանգամայն նոր մեկնաբանություն տվեց: Լեդի Միլֆորդը հեղինակի կողմից լոկ դուքսի սիրուհին, տարփածուհին չի ցուցաբերված, այլ նաև բողոքող, դժգոհող, ժամանակի բարքերը քննադատող, ինքնամերկացմամբ զբաղվող: Ահա այդ գծերն են, որ ավելի շեշտված ու նշմարելի գույներով է հանդես բերում Ոսկանյանն իր անզուգական խաղով: Այդ դերում ընդհանրապես հաջող խաղ տվեցին Վ. Մելքումյանը, Ա. Մկրտումյանը, Ժ. Սեբարը: Բայց նրանք դեռ պետք է աշխատեն իրենց դերերի վրա՝ ավելի կատարյալ դառնալու:

Շնորհունակ դերասան Մսրլյանը, երաժիշտ Միլլերի դերում ստեղծում է մի գեղեցիկ տիպ, նրբազգաց է և զգայուն, որպես երաժիշտ, հոգատար, ջերմ սիրող, փայփայող ու պատվախնդիր՝ որպես հայր։

Պրեզիդենտ Ֆոն-Վալտերի դերը կատարում են Վ. Վարդանյանը և Դ. Մալյանը։ Երկու դերակատարներին էլ հաջողվեց տալ դաժան, փառամոլ, հայրական բութ զգացմունքների տեր հոր պատկերը։ Սակայն անհրաժեշտ ենք համարում նշել, որ Դ. Մալյանի խաղն ունի մի առավելություն, որից որոշ չափով զուրկ է Վարդանյանի խաղը։ Դա Մալյանի դերի մեջ եղած ինքնավստահության շեշտումն է։

Հաջող է Հ. Բեյլերյանի և Օ. Բունիաթյանի կատարումը՝ Վուրմի դերում։

Նաև հաջող էին խաղում Գ. Աֆրիկյանը, Վ. Մարգունին (Հոֆմարշալ Ֆոն-Կալբը)։ Սակայն եթե առաջինը զուսպ չէ իր շարժումների շռայլության մեջ, երկրորդը՝ Մարգունին շատ էր ժլատ։

Եթե հուզիչ էր վաստ. դերասան Տ. Այվազյանի կատարումը՝ Կամերդիների դերում, ապա նույնը չի կարելի ասել՝ Վ. Դանիելյանի խաղի մասին։

Ընդհանրապես հաջող էին խաղում Վ. Ստեփանյանը և Է. Հարությունյանը տիկ. Միլլերի դերում։

Երիտասարդ դերասան Գ. Խաժակյանը (Ֆերդինանդ), Մ. Պարոնիկյանը (Լուիզա) դեռ պետք է շատ աշխատեն իրենց դերերը յուրացնելու, մեկնաբանելու համար։ Ամենից առաջ նրանց մոտ բացակայում է ինքնավստահությունը, համարձակությունը, հաճախ շփոթվում են, կաշկանդվում և ընկնում անհարմար վիճակի մեջ։

Պետք է հիշատակել, որ Խաժակյանը, չնայած նրա դերակատարման թերություններին, ցույց տվեց լուրջ ընդունակություններ՝ Ֆերդինանդի դերում։

Սոֆիի դերում աչքի էին ընկնում երիտասարդ դերակատարներ՝ Գ. Մարտիրոսյանը, Ժ. Մկրտչյանը և Թ. Դեմուրյանը։

Բնորոշ, հաճելի և տպավորիչ է ներկայացման արտաքին ձևավորումը (նկ. Ա. Չիլինգարյան), և երաժշտությունը (եր. Ա. Սաթյան)։ Չիլինգարյանը հաջող գույներով է տվել Միլլերի համեստ տան պարզ կահավորությամբ և ճոխ պճնանքով աչքի ընկ-

նող պալատի պատկերը։ Մաթյանը առանձնապես հուզիչ է տվել 4-րդ և վերջին գործողության մելոդիկ երաժշտությունը։

Եզրակացություն։ «Խարդավանք և սեր»-ի բեմադրությունը, ընդհանրապես հաջող համարելով, կարելի է նշել, որ դերասանական խաղի կատարումը չի բավարարում կլասիկների բեմադրության պահանջները և չի բարձրանում այդ պահանջների մակարդակին։ Թատրոնի ղեկավարությունը պետք է մտածի այդ մասին։

ՀՐԱՉՅԱ ՔՈՉԱՐԻ ՎԵՊԸ

Վերջին տարում ստեղծագործական աշխուժություն է սկսվել մեր գրականության բնագավառում։ Նացիոնալիստների-տրոցկիստների ջախջախումից հետո մեր գրականության կենսունակ հիմնական կադրերն ապրում են ստեղծագործական վերելք։ Ահա այդ վերելքն ապրող գրողների շարքին է պատկանում Հրաչյա Քոչարը։

«Օգսեն Վասպուրի ճանապարհորդությունը»—այս վերնագիրն է կրում երիտասարդ արձակագիր Հրաչյա Քոչարի վերջերս լույս տեսած վեպը։ Դա մի գրվածք է՝ հյուսված ոչ նվազ եռանդով ու աշխույժ տրամադրությամբ։ Քոչարի վեպը, որ ամենից առաջ նշանակալից է հենց իր՝ երիտասարդ հեղինակի զարգացման ուղին բնութագրելու տեսակետից, վերածնված մարդու տիպ կերտելու մի համարձակ փորձ է մեր գրականության մեջ։ Իր ընտրած թեմայի ակտուալությունը և ձեռք բերած մի շարք հաջողությունները վկայում են, որ Քոչարը տիրապետում է պրոզայի տեխնիկային։

Վեպի հիմնական առանցքը գրող Օգսենի կյանքի էվոլուցիայի ուղին է, ավելի ճիշտ նրա, Օգսենի վերածնունդը, կյանքի շրջադարձը։

Օգսեն Վասպուրը եկել է հին աշխարհից, իր հետ բերելով հին աշխարհի ստեղծած հոգեբանության շատ ու շատ բնորոշ գծեր—թույլ կամք, մասսայից կտրվածություն, հուսալքվող սկեպտիցիզմ—«ահա ինչով է վարակված նա մինչև արյան վերջին կաթիլը»։ Եվ ամենևին օտարոտի չպիտի թվա այն, որ նա մանր բուրժուական մտավորականին հատուկ մեկնակետով է շարունակ արձագանքում խուլական թախիծով ընթացող սովետական ներկային։

Նա երևույթները դիտում է դրսից, ծռմռված պրիզմայի միջով, հեռու է կյանքից, կտրված ժողովրդից, այլ կերպ ասած՝ ապրում էր կյանքում առանց կյանքի: Եվ զուր չէ, որ ամեն անգամ, երբ նա որևէ գործ է ներկայացնում տպագրության, միշտ պատասխան է ստանում՝ «կյանք չկա գործերիդ մեջ, կյանք» (էջ 8): Միայն «այն մտավախությունը, թե իրար հետևից գլորվող տարիների ամլությունը կարող է ընդմիշտ հեռացնել գրական աշխարհից, սարսափեցնում է նրան և միաժամանակ հարկադրում է մտածել սեփական ստեղծագործական հոգու փրկության մասին: Ժամերով նստում է նա ու մտածում, թե ինչպես գտնի փրկության ելքը» (էջ 8): Եվ ահա նա գտնում է փրկության ելքը. Օգսենը որոշում է «շրջագայություն անել», որպեսզի «բանաստեղծությունների ու ակնարկների շարք» գրի: Գյուղ գնալու համար նա նստում է «Լեռ» արտելի ապրանքատար ավտոն. Ճանապարհին աֆերիստ շոֆեր Սերգոն կատարում է մի շարք հակահասարակական քայլեր, խարդախություններ: Օգսենը, որ սկզբում զսպված զայրույթով էր լցվում, հետագայում ոչ միայն չի բողոքում դրա դեմ, այլև մի երկու դեպքում էլ ակամայից ուղղակի կերպով մասնակից է դառնում Սերգոյի արարքները ծածկելու գործում: Հասնում են շրջանի կենտրոնը: Սերգոն ու Օգսենը մի քրեական հանցագործի հետ ողջ գիշերը խմում-հարբում են գարեջրատանը. սանձարձակությունները այստեղ ավելի բացահայտ են դառնում: Այդ ամենի մասին հրապարակվում է հանրապետական մի թերթում. միլպետը կատարում է քննություն և գործը հանձնում դատարանին: Կատարված դեպքերի պատճառով Օգսեն Վասպուրի ընտանիքում առաջանում է ընտանեկան կոնֆլիկտ: Ահա այս առիթն է հանդիսանում այն բեկման կետը, որտեղից սկսում է Օգսենի կյանքի շրջադարձը, վերածնունդը.

Նախքան բնութագրելը, թե Քոչարին որքան է հաջողվել իր հերոսի հոգեբանական փոխանցումների ճիշտ պատկերացումները, մի քանի տողով նշենք հեղինակի այն նշանակալից նվաճումները, որ ձեռք է բերել նա իր այս վեպում: Քոչարը հաջողություններ է ձեռք բերել լեզվի բնագավառում: Նրա լեզվի մեջ կա հուզականություն: Ճիշտ է, երբեմն հեղինակը սայթաքումներ կատարում է, սակայն ընդհանուր առմամբ նրա լեզուն պարզ է, պատկերավոր, անկաշկանդ: Զգացվում է, որ Քոչարը սովորում է մեր

նշանավոր վիպասան Նար-Դոսից. իսկ այդ՝ դրական մի քայլ է ուրույն լեզու ստեղծելու համար: Հատկանշական է նաև այն, որ Քաջարի հերոսների (Օգսեն, Սերգո) լեզուն տիպականացված է, խոսում են յուրահատուկ առոգանությամբ, արտահայտչական տարբեր կարողություններով:

Քաջարն իր վեպում գործադրել է առողջ, աշխույժ և նպատակային երգիծանք: Նա դիմել է և՛ հումորի, և՛ սարկազմի: Սուր երգիծանքով է տվել Օգսենի մասին եղած անեկդոտները (12, 13 էջեր), ընտանեկան կոնֆլիկտը (24-րդ գլուխ), և շատ տեղեր երբեմն հասնում է սարկազմի սաստկության: Ընդհակառակը՝ նուրբ յումորով է նկարագրել Վասպուրի տվայտանքի հասնող չարչարանքները, որ նա կրում է «Լեո» ապրանքատար ավտոմեքենայում: Նաև մեղմ յումորով է պատկերված Օգսենի մի քանի սովորությունները. «Գիշերները, կամ հետճաշյա հանգստի ժամին, երբ քնում է նա, ժամացույցը դնում է մահճակալի կողքին, փոքրիկ սեղանի վրա, որ քնած ժամանակ էլ լսի նրա ձայնը: Եվ երբ հանկարծ ժամացույցի չխչխոցը չի լսվում, քնած տեղից վեր է թռչում նա (ինչպես ջրաղացպանն է խորը քնից վեր թռչում, երբ քարերը կանգ են առնում) ու բարկանում է սեղանի մոտից փախչող չարաճճիի վրա, որը ժամացույցը նրա մոտից հեռացնելով, փորձում է նոր խաղական սովորություն» (էջ 7): Նրա յումորի մեջ խոսում է ոչ թե չարախնդությունը, որ նա տածում է դեպի իր հերոսը, ցանկանալով իհարկե նրան ճիշտ ուղու վրա բերելու, այլ բարեհոգի ծիծաղը:

Ընդհանուր առմամբ հաջողված է և այն թունոտ երգիծանքը, որ հեղինակը ցուցաբերել է «Լեո» արտելի կայանի պետ, ժողովրդի քողարկված թշնամի, նացիոնալիստ Մկրտիչ Հյուսյանի նկատմամբ:

Առանձնապես լարված հետաքրքրությամբ են կարդացվում մի շարք տեղեր, գլուխներ, օրինակ հնձվորի արած պատմությունը՝ ծեր հնձվորի մասին (21-րդ գլուխ): Բնորոշ է՝ 27-րդ գլուխը, բժիշկ Հենրիկի արած կողմնակի պատմությունները հոլանդ. կնոջ (28-րդ գլուխ) և հեռագրատան աղջկա մասին:

«Օգսեն Վասպուրի ճանապարհորդությունը» զերծ չէ առանձին թերություններից ու պակասություններից, որոնց մատնանշումն ամենից առաջ շահեկան կլինի հենց իրեն՝ հեղինակի համար:

Նախապես նշեցինք, որ Քոչարին հաջողվել է ճիշտ ըմբռնել իր հերոսի սոցիալական հոգեբանությունը. բայց, դժբախտաբար նույնը չենք կարող ասել Վասպուրի շրջադարձի, բեկման վճռական մոմենտների համոզիչ լինելու մասին: Օգսենն իր յոթնօրյա ճանապարհորդության ընթացքում հանգել է «այն հասարակ համոզմունքին», որի ինքը «կյանքեն մերժված մարդ է», «կյանքեն ուշացած», «չոր ծառ է»... իսկ որոշ ժամանակ հետո օրագրում նշում է՝ «Համոզվեցի և ամրացավ հավատս առ ժողովուրդն: Մեծ մայր է նա, գթառատ, գթասիրտ, հոգատար, դաժան է, անառակ, անազնիվ որդիների հանդեպ: Նրան որդի կոչվելու իրավունք էլ չունեն: Ժողովուրդը չի ծնել նրանց, հարությունս առա և վերադարձա կյանքի մեջ» (էջ 248): Ինչպես տեսնում եք շատ գեղեցիկ միտք և նույնքան գեղեցիկ համոզմունք, բայց բնականորեն համոզիչ կերպո՞վ է տված մի համոզմունքից մյուսին անցնելը: Ոչ. այդ բեկումը նա ցանկացել է թեթև պրիոմներով ցույց տալ, մի հանգամանք, որ նրան զրկել է հերոսի էության մեջ խորանալու հնարավորությունից: Հոգեբանական նման տեսողություն է Քոչարը ցուցաբերել իր հերոսի ներքնաշխարհի ողջ ծալքերը, հոգու ոլորտները թափանցելու գործում: Ընթերցողը շատ քիչ է ապրում Օգսեն Վասպուրի հոգեկան ավերածություններով... ապրումներով: Զգում ես, որ հեղինակը մի տեսակ ֆիզիկական ուժով մեխանիկորեն է հրում իր հերոսին դեպի իրադրությունները, շարժառիթը, հյուսվող ցանցը: Բոլոր դեպքերում էլ Օգսենն անուղղակիորեն, իր կամքին հակառակ է գործակցում «ճիվաղ, անպատկառ, անամոթ» Սերգոյին, չէ որ սկզբից Օգսենը խորշում է նրանից, իսկ նա էլ՝ Օգսենին «համբալ» է անվանում և շարունակ «անպատկառ տոնով» խոսում նրա հետ, դրանից մի քանի էջ հետո Քոչարը տալիս է թե ինչպես նույն Օգսենը քաջալերում է շոֆեր Սերգոյին՝ նրա գործած մի հակահասարակական քայլի համար (13-րդ գլուխ): Ավելին՝ այդ դեպքից անմիջապես հետո (հաջորդ գլխի հենց առաջին էջը) Օգսենն ուրախությամբ ընդունում է գարեջրատուն գնալու հրավերը՝ շոֆեր Սերգոյի կողմից: Այդ առիթը (առհասարակ շոֆերի հետ մտերմանալը և գարեջրատանը հարբելը) Քոչարի ուշադրության կենտրոնում լինելով, նրա համար պրիզմա հանդիսանալով, արհեստական, անհամոզիչ է դարձնում Օգսենի շրջադարձի հիմնական մոմենտները: Օգսեն Վասպուրն իր վրա կրում է որոշ

չափով սխեմատիզմի կնիքը, իսկ նրա շրջապատողները—Հենրիկը, տիկին Միրանուշը, Հյուսյանը սխեմատիկ են, անարյուն։ Սերգոյին նկատի չունենք, որովհետև հեղինակն այդ տիպը լիարյուն է տվել։ Հենրիկը թեպետ որոշիչ դեր է կատարում Օգսենին կրիտիկական վիճակից հանելու գործում, սակայն ինքը՝ Հենրիկը գծված է գունատ, նա ավելի շատ տիպական ֆիգուրա է, քան ակտիվ ներգործող, կենդանի տիպ։ Եվ մի քանի շեշտված հանգամանքներ (նրա արած գեղեցիկ պատմությունները) բնավ չեն փրկում նրա տիպի աղոտությունը, անարյուն լինելը։

Հյուսյանը նույնպես անարյուն է։ Նրա մեջ չեն դրսևորված ժողովրդի թշնամու խտացրած գծերը։ Դատարանում հայտարարվում է, որ Սեդրոն և Հյուսյանը գործակից են, մինչդեռ նրանց գործակցությունը վեպի և ոչ մի գլխում չի պատկերված, ընդհակառակը՝ մի երկու տեղ (9—10 գլուխներ) Սեդրոն ատելությամբ է խոսում Հյուսյանի մասին Օգսենի հետ և այդ, կարծես մի այնպիսի սրտաբացությամբ ու մտերմությամբ, որի մեջ երկակի մտքերի ամենափոքր ստվեր անգամ չէր կարելի նշմարել։ Այս պայմանով էլ արհեստական է դառնում Հյուսյանի միջնորդությունը, որով նա ցանկանում է Օգսենին համոզել Սեդրոյին ազատելու համար սուտ վկայություն տալ դատարանին։

Վեպի կոմպոզիցիան, մասերի ներդաշնակությունը խախտված է մի քանի ավելորդություններով։ Ամենից աչքի ընկնող ավելորդությունը դա «Միջանկյալ գլուխ, կամ մի սցենա դատական դահլիճում» գլուխն է։ Սա ավելորդ է, որովհետև ոչ միայն վեպի լեզվական-ոճական կողմն է խախտում, այլև թուլացնում է վեպի կոմպոզիցիայի դինամիկան։ Այդ գլուխը ոչնչով չի օժանդակում ինչպես նախընթաց, այնպես էլ հետագա դեպքերի ու դեմքերի զարգացման գործին։ Ուստի նրա բացակայությունը վեպի շահեկան կողմերից մեկը կլիներ։ Ավելորդ է նաև «փափախ» բառի նշանակության բացատրությունը շոֆերների «լեկսիկոնում», որին հեղինակը էջեր է նվիրել։ Պարզունակ է նկարագրված 12-րդ գլուխը։ «Բաներ կան,—ասում է Գյոթեն,—որ բանաստեղծն ավելի լավ կանի, եթե ծածկի, քան բաց անի»։ Վեպում երբեմն տեղ չպիտի գտնեին առանձին էժան սրախոսությունները, անեկդոտային բնույթի պատմությունները։ Քոչարը պետք է քաջ գիտենար, որ ստեղծագործության մեջ մտնելիք յուրաքանչյուր նյութ, միտք

ենթարկվում է խիստ ընտրության, զտման: Քոչարը եթե լուրջ մտածեր սրանց մասին, բնավ նրա վեպում տեղ չէին գտնի արտահայտություններ, որոնք գռեհիկ են հնչում (էջ 56):

Նկատելի է փքուն ոճի ազդեցությունը; որ երբեմն հանդես են գալիս ինչպես Քոչարի, այնպես էլ մեր շատ ու շատ գրողների մոտ, պետք է հաղթահարվեն: Հայտնի է, որ սոցիալիստական ռեալիզմի ոճը պահանջում է հետևողական պարզություն ու հստակություն:

Կան նաև այլ բնույթի սխալներ. օրինակ՝ ակնարկի և պատմվածքի մեջ Քոչարը ոչ մի ժանրային տարբերություն չի դնում. միևնույն գրվածքին նա մերթ պատմվածք է անվանում և մերթ էլ՝ օչերկ (էջ 253):

Վերջացնենք: Քոչարն աճում է: Նա ընդունակ գրող է: Քոչարն ունի ռեալ արժանիքներ, գրելու նրա անվիճելի շնորհքը՝ վկայում է, որ մազաչափի անգամ կասկածի տակ չէ նրա հետագա աճումը:

Սպասում ենք Քոչարի հաջորդ գրքին:

ՄԵՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՍԵՐՈՒՆԴԸ

Պատմական ոչ մի դարաշրջան, ոչ մի հասարակարգ այնպիսի հնարավորություն չի տվել աշխատավոր մարդկության ծոցից ելած երիտասարդության զարգացման և փարթամորեն ծաղկման համար, ինչպես մեր հասարակարգը, խորհրդային պայծառ իրականությունը։ Խորհրդային երիտասարդությունը տիրապետելով բոլշևիզմին, կրթվելով ու դաստիարակվելով Լենինի—Ստալինի տրադիցիաներով, կոմունիզմի ոգով մարսում ու յուրացնում է դարերի ընթացքում մարդկային հասարակությունների ստեղծած հարուստ կուլտուրան, սովորում է մարդկային մտքի տիտաններից։ Մեր երիտասարդությունն իր դաստիարակության հիմքում ընդունում է պայքարը.—պայքարով է նա սովորում սոցիալիստական տնտեսություն կառուցելը, պայքարով է նա ձգտում հասնել գիտությունների, արվեստների գագաթներին, մի ձգտում, որ շատ բնական ու հատկանշական է կոմունիզմ կառուցող սերնդի համար միայն։ Երիտասարդությունը, սակայն, մեզ մոտ ոչ միայն գիտությունների, արվեստների անմիջական սպառողի դերում է հանդես գալիս, այլև՝ արտադրողի, ստեղծողի։ Նա հանդես է գալիս մարդկության կուլտուրայի զինարանը հարստացնողի ու զարգացնողի դերում, մասսաների մտքի ու հոգեբանության կազմակերպման ու դաստիարակման բնագավառում։ Անկարելի է պատկերացնել գիտության, տեխնիկայի, արվեստի առաջխաղացում, մի նոր նվաճում՝ առանց երիտասարդության, սոցիալիստական կուլտուրայի վերելքը, առաջընթացը՝ առանց երիտասարդության։

Այլ կերպ լինել չի կարող։

Ինչպես եղբայրական հանրապետություններում, այնպես էլ մեզ մոտ, Խորհրդային Հայաստանում, թե գիտության և թե գրա-

կան նոր կադրերը դուրգուրվում ու աճեցվում են այնպիսի հոգատարությամբ, ինչպես պարտիզպանն է խնամում իր պարտեզի ծաղիկները։ Տարեց տարի մեր գրական աշխարհում բացվում են բազմաթիվ ծաղկաթաքույց կոկոններ, մեր երիտասարդական ստեղծագործ բանակը խտանում է նորանոր կենսունակ ուժերով։ Հաճախ մեր պարբերականներում, առանձին ժողովածուներում ու ալմանախներում հանդիպում ենք ընդունակ, շնորհալի սկսնակ բանաստեղծների և արձակագիրների անունների, որոնք առաջին անգամ են տպագրվում և որոնք իրենց ստեղծագործական ունակություններով բանաստեղծական տրամադրություններ են հաղորդում ընթերցողին։

ԵՐԻՏԳՐՈՂՆԵՐԸ ԵՎ ԹԵՄԱՏԻԿԱՆ

Որոշ նկատառումներով մեր, խորհրդային Հայաստանի գրողների ընտանիքը, որ հանդիսանում է ԽՍՀՄ-ի գեղեցիկ խասքի, մարդկային հոգու ճարտարապետների մեծ ցեղի մի անքակտելի ու անխզելի ընտանիքը, անտրոհելի օղակը, կարող ենք բաժանել երեք հիմնական սերնդի։ Ավ. Իսահակյան, Դեր. Դեմիրճյան, Ստ. Զորյան, Արազի, Սիրաս, Զարյան, Ան. Վարդանյան, Մ. Մանվելյան, Հ. Մելիքյան, Արաքս, Գ. Սարյան, Վեսպեր, Հռ. Պողոսյան, Սարմեն, Վ. Վաղարշյան, Ս. Տարոնցի,—ահա մեր գրականության ավագ սերնդի ներկայացուցիչները։ Սրանց հաջորդների շարքում դասվում են մեր այն երիտասարդ գրողները, բանաստեղծները, որոնք ունեն ստեղծագործական ոչ պակաս քան՝ մեկ տասնամյա հասակ և որոնցից մի քանիսը ոտք են դնում ավելի հասունացած, գրական բավականաչափ կուլտուրա ունեցող գրողների ճանապարհը։ Այս սերնդի ներկայացուցիչներն են՝ Գ. Հովհանը, Վ. Գրիգորյանը, Ս. Վահունին, Հր. Քոչարը, Աղավնին, Շահրազը, Շայբոնը, Գ. Բեսը, Պայազատը և ուրիշները։ Երիտասարդ գրողների այս պլեադային հաջորդում է մի ավելի կենսունակ սերունդ, մի սերունդ, որ աճում ու ծաղկում է ավելի արագորեն։ Նրանց մի մասը ծնվել է հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխությունից 1—4 տարի առաջ, մի մասն էլ հեղափոխության օրերին ու հետ-հեղափոխության օրերին, խորհրդային արևի տակ, և ունեն ստեղծագործական 1—7 տարվա հասակ։ Սրանցից

շատ-շատերն այդ կարճ ժամանակամիջոցում արդեն դրսևորել են առանձին ընդունակություններ, գեղարվեստական խոսքի բավականաչափ հուսատու տվյալներ, մի հանգամանք, որը վկայում է նրանց խոստումնալից ապագայի մասին: Այս պլեադայի ստեղծագործությունները տարբերվում են նախորդ պլեադային պատկանող երիտասարդ բանաստեղծների-արձակագիրների առաջին շրջանի երկերից: Տարբերվում են ամենից առաջ նրանով, որ սրանց առաջին գործերը, գրական թոթովանքները միանգամայն այլ մոմենտների—գրական միջավայրի, հասարակական-քաղաքական պայմանների պատմական տարբեր ժամանակաշրջանի արդյունք են հանդիսանում, ապա՝ տարբերվում են թեմատիկայով, ստեղծագործական բովանդակության բնույթով, լեզվով, ոճով, հանգամանքներ, որոնցով մինչև անգամ այս կամ այն չափով արտահայտվում են խորհրդային գրականության զարգացման ընդհանուր տենդենցներն ու տրամադրությունները: Այս սերնդին պատկանող երիտասարդ ստեղծագործողները, պարզ է, միահավասար չեն աճում, համարժեք գործեր չեն արտադրում, սակայն նրանց ընդհանուր զարգացումը, առաջխաղացումն ակնբախ է: Էպոխայի, ժամանակի հրամայական պահանջով մեր երիտասարդ բանաստեղծներն ու արձակագիրներն իրենց ստեղծագործությունների համար ընտրում են ակտուալ ու հրատապ թեմաներ: Նրանք սրտաբուխ երգում են ժողովուրդների առաջնորդներին, բանվոր դասակարգի պայքարի, քաղաքացիական կռիվների, երկրի պաշտպանության, Իսպանիայի ժողովրդի հերոսական պայքարի, սոցիալիստական բազմաբովանդակ շինարարության, ստախանովյան ծավալուն շարժման, մեր երկրի խիզախ բազեների, մտքի տիտանների, գրականության ու արվեստի վարպետների մասին, երգում են մեր բերկրալից կյանքը, նոր կենցաղը:

Այժմ տեսնենք ովքեր են մտնում այս սերնդի մեջ:

ՇԻՐԱԶ ՀՈՎՀԱՆՆԵՍ—նա գալիս է ժողովրդի ընդերքից, բարձրացել է կյանքի «հատակից»: Այս մասին շատ հստակորեն երգում է հենց ինքը՝ երիտասար հեղինակը.—

«Տխուր-տրտում այն փողոցից, մրոտ խցից ես ո՛ւր հասա,
Իմ մանկության բեռը բողած,—այս մեծ գետին փրփուր հասա:

Հոնքերիս տակն արևն առած, մթին հովտից ես սարն հասա։
Կայծակներով զինավառված լույս աշխարհի կատարն հասա»։

Ընդհանրապես իր տարերային հուզականությամբ, ստեղծագործական հախուռն պաթոսով, պատկերների ինքնատիպությամբ ու ճոխությամբ, խիզախ համեմատություններով ու թեմատիկայի համարձակ ընտրությամբ Շիրազը մեր արդի պոեզիայի մեջ առանձնահատուկ տեղ է գրավում։ Նա բավականին արագ է գրում և մեզ մոտ ամենաշատ տպագրվող երիտասարդ հեղինակ է։ Նրա առաջին երկերը, գրեթե բոլորն էլ, քնարերգական վարակիչ շունչ ունեն։ Շիրազն այստեղ երգում է սոցիալիստական գյուղը, նորը, մեր հրճվալից, բերկրալից կյանքը, բեղուն ամառը, բերքառատությունը, գեղեցիկ բնությունը, նոր սերը, նոր մարդու զգացմունքները։

Ժողովրդական վիպերգության մշակման առաջին փորձը մեր երիտասարդական գրականության մեջ Հով. Շիրազի «Սիամանթո և Խճեզարե» վեպ-սիրերգությունն է։ Ժողովրդական ստեղծագործության օգտագործումը Շիրազի համար դարձել է կենսապահանջ, այն կաթնաղբյուրը, որով միայն կարող են գործուն լինել երիտասարդ գրողի ստեղծագործական նյարդերը։ Շատ իրավացի է Շիրազը երբ ասում է՝ «Ժողովրդի զուլալ սրտից պաղ ջուր առա ջե՛րմ սիրով»։ Նա իր այս վիպերգության նյութը վերցրել է հնագույն բանահավաք Սրվանձտյանի գրի առած «Սարե-Սիփանե» հայ-քրդական վիպերգությունից։ Ձևի-չափական արվեստի տեսակետից հեղինակը շատ է հեռացել ժողովրդական պատումից։ Նա արել է մի շարք նորամուծություններ՝ հետապնդելով մի նպատակի՝ ժամանակակից գունավորում տալու։ Բայց այդ հավելումների որոշ մոմենտները սյուժեի ծանրաբեռնվածություն են դարձել և չեն մերվում պոեմի ընդհանուր շաղախի հետ։ Սերը այս պոեմի վճռական օղակն է կազմում։ Սերը դասակարգային կատեգորիա է, նա մի զգացում է, որ չի ճանաչում լեզվի և մաշկի գույնի տարբերություններ, բայց ճանաչում է հարուստի և աղքատի անհավասարությունը... և ահա այդ տարբերության արդյունք է հայ երիտասարդ Սիամանթոյի և քրդուհի Խճեզարեի տրագիկ մահը։ Շիրազի նպատակն իր պոեմում հենց այս հանգամանքը ցույց տալն է եղել, որ հաջողվել է նրան գեղարվեստական պատկերներով վերարտա-

գրել հարազատ գույներով՝ հիմնականում պահպանելով ժողովրդական ստեղծագործության շունչն ու ոգին։

Ի դեպ, թե՛ «Սիամանթո և Խաջեզարե» պոեմի և թե՛ Շիրազի բոլոր գործերի վրա զգալի է մեր քնարերգության եռաստղի (Ն. Քուչակ, Հ. Թումանյան, Ավ. Իսահակյան) ազդեցությունը։

«Սիամանթո և Խաջեզարե» գողտրիկ պոեման, իր մի շարք պակասություններով հանդերձ, պատկերների ճոխությամբ, գունեղությամբ հանդիսանում է Շիրազի, և առհասարակ մեր արդի պոեզիայի լավագույն երկերից մեկը։

Շիրազի երրորդ գրվածքը, որ լույս է տեսել առանձին գրքով, **«Արևի երկիր»** պոեման է (1938 թ.)։ Ծավալով դա հեղինակի ամենաընդարձակ գործն է, որի սյուժեն, սակայն չունի հետևողական զարգացում, չկա մասերի-գլուխների միասնություն, ամբողջություն։ Պոեմի առաջին մասն ընդգրկում է Հայաստանի խորհրդայնացման պատմական ժամանակաշրջանը։ Հեղինակը դեռևս լավ չի հասկացել Հայաստանի խորհրդայնացման առանձնահատկությունները։ Ժողովրդին՝ «ծով կյանքին մահ չկա»,—գրում է նա, և այս անժխտելի է. բայց նա գեղարվեստական խոսքի միջոցով կարողացե՞լ է ցույց տալ այդ հավերժական ծովի ուժը՝ մրրիկներով բռնկված պահերին։ Նրա պոեմում հրապարակների ժամանակ ակտիվորեն երևա՞ն են գալիս մասսաները։ Ամենևի՛ն։ Կարծես պոեմում (առաջին մաս) նկարագրված գյուղի սոցիալական միջավայրը, եթե հաշվի չառնենք մի երկու մոմենտ, ոչ թե 1920—1921 թ.թ., այլ 80—90-ական թվականների գյուղն է, Վ. Փափազյանի, Աղայանի և մեր մյուս գրողների նկարագրած գյուղի սոցիալական միջավայրը։ Պոեմում հեղափոխական հերոս Ենոքը սպանում է Հայլու աղային, և ի՞նչ, թվում է, թե մի ինչ որ արտակարգ բան է տեղի ունեցել՝ **«վարդավառի տոն էր ասես»** և ժողովրդի դերն էլ միայն ու միայն այդ դեպքի համար **«խնդություն»** սարքելն է։ Ամբողջ 1-ին մասում մի մասսայական ցույցի նկարագրություն չկա։ Առավել ևս փխրուն է պոեմի երկրորդ մասը, որտեղ մինչև անգամ չկա հիմնական հանգույց, դեպքերի լարվածություն։ Շիրազը պոեմը վերնագրել է **«Արևի երկիր»**, հատկապես նկատի ունենալով այս մասը։ Ամբողջ դժբախտությունն այն է, որ նա այստեղ իրեն նույնպես չի կարողացել արդարացնել՝ **արևի ջեր-**

մությունն ընթերցողին հաղորդակից անել: *Այստեղ չկա կոլտնտեսության հարուստ, բազմաբովանդակ առօրյան, նրա եռն ու զեռը, անտեսական-քաղաքական կամպանիաների, ժամանակի հրատապ հարցերի արձագանքումը: Գյուղում տարվող դասակարգային սուր պայքարի մոտով երիտասարդ պոետն անցել է շատ հարևանցիորեն, առանց այդ պայքարի էտապների առանձնահատկությունների մասին ընդհանրացումներ կատարելու: Այլ կերպ ասած՝ երգված է գյուղը՝ առանց գյուղի: Իսկ պոեմի հերոսները, գործող անձերը չունեն միս ու արյուն, կարծես պատկերավոր-շարժական բնույթի հայտարարություններ լինեն: Տիրազն առաջ քաշելով Սարուխի և Ենոքի տիպերը նպատակ է ունեցել նաև կամուրջ ստեղծել քաղաքի (պրոլետարիատի ու գյուղի աշխատավոր զանգվածների) միջև: Այդ նրա մոտ մնացել է լոկ ցանկություն, նա չի կարողացել իր գլխավոր հերոսների մեջ գեղարվեստականորեն մարմնացնել ժամանակի ոգին, հեղափոխական հերոսների մարտունակությունը, ժողովուրդներին առաջնորդելու կարողությունը, նրանց ներաշխարհը կենդանագրել: Եվ այս այն պատճառով, որ հեղինակը լավ չգիտե իր նկարագրած միջավայրը, որ նրան պակասում է մարդու ներքինը ճանաչելու կարողությունը, բանաստեղծի համար անհրաժեշտ այդ գեղեցիկ հատկությունը: Ստեղծագործող տաղանդի զորությունը հենց նրա մեջ է, որ նա ունի մարդու ամենաբարդ ապրումներն ամենապարզ բառերով, մտքերով արտահայտելու, հոգեբանական նրբությունը նկարագրելու կարողություն: Տիրազը պետք է ձգտի ձեռք բերել բանաստեղծի այս անհրաժեշտ հատկությունը:*

Թեև «Արևի երկիրը» իբրև ամբողջական գործ Տիրազի ամենաթույլ պոեմն է, բայց այս բնավ մեզ իրավունք չի տալիս ուրանալու նրա մի շարք անվիճելի հաջող կողմերը: Որոշ գլուխներ, առանձին կտորներ, սիրերգերը կարդացվում են լարում հետաքրքրությամբ, հուզում են ներքին պոռթկումներ առաջ բերելու աստիճան: Լիրիքական գեղուն կտորներ կան, որոնք մեր արդի պոեզիայի լիրիքական երգերի մեջ փայլուն տեղ կարող են գրավել:

Երիտասարդ պոետը հաճախ է հափշտակվում բնության գեղեցկությամբ՝ տալով սքանչելի նկարագրություններ: Բերենք միայն մի օրինակ.—

«Հագած մշուշե թիկնոցը կապույտ՝
Երեկոն իջավ անշշուկ, հանդարտ,
Մվարեց հովտում թավիշը կիսամութ,
Կորան թիկունքում լեռները հպարտ»:

Նա այնքան է տարվում բնության հրաշալիքներով, որ երբեմն իդեալականացնում է այն, նույնիսկ շատ դեպքերում իրադրությունները, մոմենտները բնության երևույթներով է պատկերացնում:

Առանձին գրքույկով լույս է տեսել նաև «Բևեռի առումը» պոեմը: Մեր պարբերականներում, գրական ալմանախներում լույս տեսած բազմաթիվ ոտանավորների, լիրիքական ներբողների հետ տպագրվել են և առանձին ուշադրության արժանի են նրա «Լենին դյուցազն»—«Թամար թագուհին և ռուսթավելցու սերը», «Արյունոտ շարերը», «Մոկաց Միրզան» պոեմները և մի քանի ամիս առաջ «Գր. թերթ»-ում տպագրված, բուռն ու անկեղծ զգացմունքների արտահայտություն հանդիսացող «Նամակ Ստալինին» ընդարձակ բանաստեղծությունը:

Մի երկու խոսք էլ Շիրազի լեզվի, ոճի, գրական ուղղության մասին ասենք և անցնենք առաջ: Շիրազը որևէ երկ գրելիս գերազանցապես փերվում և մտածում է պատկերներով ու համեմատություններով: Նրա մոտ պատկերները ոչ թե բխում են մեղմորեն, այլ կարծես ժայթքում են մի անասելի ուժով, ասես, լեռան ճեղքվածքից գահավիժող գետ: Նրա կառուցած պատկերները, թեև ոչ բոլոր դեպքերում, օրիգինալ են, անմիջական, թարմ ու ինքնատիպ.

—«Ես սիրում եմ շոգը: Հակինթացած խաղող—
Դու՝ ամառվա շոգի հմայքն ես ամբարել,
Ծծել ես դու նրա բատինքը լուսաշող,
Ողողել շաքարով ու մեղրդ վարարել»...

Երիտասարդ պոետի պատկերավոր մտածելու մասին խոսելիս չի կարելի աչքաթող անել այն, որ նրա մոտ երբեմն այդ փոխվում է պատկերամոլության և նա ընկնում է ինքնանպատակ ու անիմաստ պատկերներ սարքելու հետևից: Երբեմն նրա օրիգինալ պատ-

կերների շարքում հանդիպում ենք այնպիսի անհաջող պատկերների, որոնք աղճատում են երկի-քաղյակի միտքը:—

«Սիամանթոն այցի եկավ, Խնեզարեն՝ երկուսով
Հովերի հետ կուրծքս մտան իմ աչքերի դարպասով»:

Ի՞նչ է ուզում սրանով հեղինակն ասել. դեռ ավելին՝ «Գյուղերն ամեն ծխի ամպով, ձիու թամբով հանդը ելան», «Ժայռերի մեջ մասրենիներն հագան ծիլեր՝ տերևի»: Կարծում ենք, որ առանձին մեկնաբանման կարիք չկա: Շիրազի լեզուն ունի գարնանային հեղեղող գետի պղտորությունը: Նրա մոտ շատ են էպիտետների միօրինակությունը. քերականական տարրական կանոնների խախտումները, բառերի, ածականների սխալ գործածությունները բազմաթիվ են.—«չար զառներ» (երևի ցանկացել է ասել՝ ուլեր, որովհետև սովորաբար զառը հեզության սիմվոլ է համարվում), «զընգում է հարսանքին ինչպես դաֆ». Նախ՝ դաֆը չի զնգում, ապա՝ հարսանիքն ավելի լայն հասկացողություն է, որի մեջ առնվում, հասկացվում է նաև նրա կազմած պատկերի օբեկտը: «Խնոցիներն օրորվեցին և արծաթյա կարից պաղ... ծնվեց ոսկի կարագ»:

Էպիտետների և պատկերների սխալ գործածությունը որոշ դեպքերում մեր պոետին կանգնեցնում է մտքի, գաղափարական սխալի առաջ.—«ջուր էր դառել բեկի ոսկու ձայնը մտքի երաշտում». ո՞մ՝ մտքի, խոսքը հասարակական մտքի թմրածությա՞ն մասին է. եթե այո՛, ինչո՞ւ ասել «բեկի... ջուր»: Կամ՝ «Բեկը... նարգիլե էր քաշում հեզ», մի այլ երկում («Ա. եր.») թշնամու նկատմամբ ասում է՝ «ժպիտով մի հեզ», իսկ նա նրա ձիուն՝ «լույս-նժույգ»: Սրանք բոլորն էլ «մանրուքներ» են, «նրբություններ», սակայն դրանք ապացույց են այն բանի, որ «գրական ստեղծագործական ասպարիզում լեզվական կիսագրագիտությունը միշտ հանդիսանում է ցածր կուլտուրայի նշան, և միշտ զուգակցվում է իդեոլոգիական կիսագրագիտության հետ, ժամանակն է վերջապես հասկանալու այդ» (Մ. Գորկի—«Մենք պետք է հիշենք, թե ինչպես էր վերաբերվում լեզվին Լենինը»):

Ի միջի այլոց Շիրազը հստակ պատկերացում չունի մինչև անգամ գրական ուղղությունների և ժանրային առանձնահատկությունների մասին: Նա դեռ ևս չի տիրապետում սոցիալիստական

ռեալիզմի սկզբունքներին։ Նա առաջադիր սկզբունք է ընդունում հեղափոխական ռոմանտիզմը, բայց հաճախ է մնում ռոմանտիզմի հին տրադիցիաների շրջանակներում.—

«Լալիս էին ծաղիկները՝ ցողով թրջում ոտք ու ձեռ,
Թփերն էին ճեծում կարծես, գետն էր վշտից բարձրանում»։
(«Ա. Ե.» էջ 158)։

Բոլոր երևույթները կապել տեղի ունեցող դեպքերի, իրադրությունների հետ, «լացացնել» բնությանը՝ նրա մեջ կատարած դեպքերը նկարագրելիս, հատուկ է ռոմանտիզմի, սանտիմենտալիզմի հին, սոցիալիստական ռեալիզմի կողմից սրությամբ մերժվող, տրադիցիաներին։ Հետո՝ նա իր մի բանաստեղծությունը վերնագրել է «Պեյզաժ», իսկ երգում նկարագրում է միանգամայն այլ բան, բայց ոչ բնության տեսարան, բնանկար։ Իր «Արևի երկիր» պոեմը նա անվանել է «Վեպ-բանաստեղծությամբ» (մի այլ տեղ էլ՝ «պոեմ-վեպ»), անշուշտ նա դրանով նկատի է առել «Եվգենի Օնեգինը» («Роман в стихах»)․ մոռանալով, որ «Ե. Օ.»-ը մի ամբողջ հանրագիտարան է... Մի՞թե ամեն գործ, որն ունի վիպական որոշ տարր, հեղինակը կարող է նրան վեպ անունով մկրտել։

Շիրազը, անկասկած, տաղանդավոր երիտասարդ է, ունի բնատուր շնորհք, ստեղծագործում է շատ արագ, ինքնաբուխ և այս բոլորը պարտադրում են Շիրազին ավելի ջանադիր վերաբերվել դեպի իր ոճը, իր պատկերները, նորանոր ստեղծագործությունների համար։

ԲՈՐՅԱՆ ԴՈՒՐԳԵՆ.—Նա մեր երիտասարդ բանաստեղծների մեջ իրեն դրսևորել է որպես շնորհալի ստեղծագործող։ Նրա բանաստեղծական ձայնը ներդաշնակվում է մեր երիտասարդության ապրումներին ու հույզերին։ Այլ կերպ ասած՝ Բորյանն ստեղծագործելիս իր միտքը հանում է իրենից դուրս, նրա ներաշխարհը ներգրվում է մեր կյանքի հուզական աշխարհի մեջ, միավում է մեր թեժ առօրյայի հետ, և նա երգում ու շնչում է այդ առօրյայով։ Այս են վկայում նրա «Բանաստեղծություններ» ժողովածուի մեջ (1937 թ., Հայպետհրատ) ամփոփված երգերը։ «Կոմերիտմիությանը» վերտառությունն ունեցող փոքրիկ բանաստեղծությունը, որ

գրված է ներքին թափով, աշխույժ էներգիայով, երիտասարդ բանաստեղծի ներքին ձայնն է.—

«Ուր էլ հասնեմ, ես քոնն եմ,
Քո զավակը, անտրտում,
Նոր աշխարհի երգողն եմ,
Քո վառ սերը իմ սրտում:
Քո վառ սերը թանկագին
Փարոսի պես բոցավառ,
Նորափթիթ իմ երգին
Լույս է տալիս անդադար»:

Այս պարզ, անպաճույճ կտորով, շատ հասկանալի բառերով երիտասարդ պոետն իրեն դիրքորոշում է թե ո՞ւմ հետ է, ո՞ւմն է պատկանում ինքը, ի՞նչ է երգում և վերջապես, որ իր երգը տակավին «նորափթիթ» է, որի թերթերը կբացվեն միայն այն ջերմության տակ, որի մեջ աճում ու բարձրանում է ինքը՝ պոետը: Բորյանի այս գրքույկի բոլոր բանաստեղծությունները թափանցված են մեր հաղթանակի հավատքով ու կենսախնդությամբ:

Գ. Բորյանը փորձում է նաև խոհական երգեր տալու. այս տեսակետից նրա «Խոհ երկնքի մասին» երկը պետք է ողջունելի և խրախուսանքի արժանի գործ համարել:

Բորյանը մեր այն երիտասարդներից է, որ զբաղվում է իրենով, աշխատում է իր վրա, կարդում է կլասիկներին:

Բորյանը մեր արագ աճող գրողներից է: Ժողովածուից հետո պարբերականներում տպագրված բանաստեղծությունները լավագույն ապացույց են այդ բանի: Նախ՝ իր հետագա բանաստեղծություններում թեմատիկայի ընտրության բնագավառում ավելի կոնկրետ ու ինքնատիպ է: Երկրորդ առավելությունն այն է, որ այդ գործերն աչքի են ընկնում իրենց սահունությամբ ու անմիջականությամբ: Մի առավելություն ևս,—դա այն է, որ դրանցով հեղինակն անհամեմատ ավելի է լայնացրել իր աշխարհըմբռնումը, պոետական վերաբերմունքը դեպի իրականությունը.—

Ասա դու ինձ, ժամանակի
Ճամփով անցած անդուլ զինվոր,

Տեսե՞լ ես դու կյանք մի ուրիշ
Այսքան ազատ ու բախտավոր:
Եվ ասա ինձ, որ քո երգով
Պիտի դիմես դեռ ապագան,
Ե՞րբ են եղել ժամն ու ռոպեն
Այսքան վեհ ու նվիրական,
ինչպես մեր նոր լույս աշխարհում,
Ուր ամեն սերն կյանք է առնում»:

Ներքին անզուսպորեն պոռթկացող հուզականությամբ տոգորված բառերով հեղինակը պատմում է «դարե-դար զարկերակի անդուլ երգով» ժամանակը չափող ժամացույցին, որ պատմի «գալիք մարդուն ջահել... թե ինչպես ենք մենք բախտ կ՛ռել ազատատենչ մարդու համար»։ Նմանօրինակ տրամադրությունները արդյունք են խորհրդային պոեզիայի բովանդակության, արտահայտման եղանակները, հասկանալու ձգտման։ Եվ այս է Բորյանի համար բնութագրականը։

Այս առումով նրա խոշոր նվաճումը պետք է համարել հատկապես «Երգ՝ գրված Գորի քաղաքում», *տպված «Գրական Թերթ»-ի ընթացիկ տարվա № 25-ում, և* «Մեր աստղը»*—«Խոր. գրականություն» հանդեսում, որոնք նուրբ մշակում են ցույց տալիս։*

Այցելելով մեծ առաջնորդի ծննդավայրը, գեղատեսիլ Գորին, երիտասարդ պոետն ազատություն է տալիս իր անկեղծ զգացմունքներին, նրա սիրտը ողողվում է երջանկության աղբյուրներով և նա սքանչացած երգում է.—

«Այստեղ եմ ես... քո քաղաքում, ով Առաջնորդ արևածին,
Երջանկության հազար աղբյուր սիրտս ու հոգիս ողողեցին,
Ջահել հոգուս հույզով անմար, վառ կարոտով, սիրով անհագ,
Գոչում եմ ես՝ «Քեզ բյուր ողջույն, պայծառանուն Գորի քաղաք»...

Ապա պոետը նկարագրում է ընկ. Ստալինի հայրենական տնակը, որ «տեսքով հասարակ» է, սակայն որը, «Առաջնորդի էպոպեի դուռն է բացում».—լուսապայծառ օրրանը, որին «թեքված սիրով» մայրը երգում է «Իավ-Նանա[1]», իսկ այդ երգին ունկնդրում են հայրենի «լեռները խոր գիշերով».—

[1] *Օրորոցի երգ։*

«Քնիր, բալիկ, իմ լավ Սոսո, մատաղ լինեմ ծով աչերիդ,
Չէ, չի մնա աշխարհն էսպես՝ հավետ գերի հարուստներին»...

Ու այդ տնակից Սոսոն «մի պատանի մաքուր պայծառ, կամքով հզոր, հոգով արի» առավ «ամուր հզոր թևեր», ելավ աշխարհ ժողովրդի սերը սրտում արևակեզ», որպեսզի «պայքարի ուղիներում միլիոններին լույս» պարգևի, որպեսզի լինի «մարտիկ և քաջ զինվոր՝ ժողովրդի գործի համար»։ Եվ նա հասավ իր նպատակին, փոքրիկ Սոսոն դարձավ Մեծ Ստալին, քանդեց ժողովուրդների դարավոր կապանքները, դարձավ «մարդկության լույս տենչերի անձեռագործ ջահը»։

Երիտասարդ պոետը հրճվագին բառերով իր երգն ավարտում է հետևյալ սիրալիր տողերով.—

«Եվ ես առած հազար թևեր ձա՜յն եմ տալիս սիրով անհագ՝
Քեզ բյուր ողջույն Առաջնորդի հայրենական Գորի քաղաք.
Իսկ հայացքս հառած հեռո՜ւն՝ պայծառ Կրեմլի լույս աստղերին,
Գոչում եմ ես՝ «իմ սերը քեզ, իմ կյանքը քե՜զ Մե՛ծ Ստալին»...

Բորյանի հրճվանքը, «գոչում»-ը բնավ արհեստական չէ, ներքուստ է, դա նրա էությունն է։ Թե այս բանաստեղծությունը և թե «Մեր Աստղը» համակված են ուրախությամբ, ամեն մի տողի մեջ երիտասարդական զվարթ զգացմունքի, վառ հույսերի, քաղցր ներկայի և ստույգ ապագայի նորափթիթ պոետն է երևում։ Այս երկու բանաստեղծություններում ամենից առաջ ակնհայտ է պոետի անկեղծությունն ու պարզությունը, այսինքն այն, ինչ կազմում է գրելու առաջին նախապայմանը։

ԹԱՓԱԼՑՅԱՆ ՔՐԻՍՏԱՓՈՐ.—Ընդհանուր առմամբ մեր արդի գրականության, մասնավորապես երիտասարդական գրականության մեջ պրոզայի զարգացումը երկերի որակով ու քանակական աճով պոեզիայի համեմատությամբ անհավասարակշիռ է, աղքատ։ Միայն վերջին երկու տարում է այս բնագավառում լուրջ քայլեր արվում։ Այդ տեսակետից առաջին հերթին հիշատակման արժանի է գեղարվեստական աճող եռանդով ու ձիրքով աչքի ընկնող երիտասարդ արձակագիր Քրիստափոր Թափալցյանի անունը։ Նրա «Վիկ-

տորիա» վեպը, իր մի շարք թերություններով հանդերձ, մի ուրախալի երևույթ է խորհրդային պրոզայի համար ընդհանրապես և երիտասարդական պրոզայի համար՝ մասնավորապես։ «Վիկտորիայի» գործողության հիմնական վայրը սոցիալիստական գյուղն է, կուլտուրական ֆրոնտը, գործողները՝ նոր մարդիկ են ու մեկ էլ՝ վերածնվող ու վերացվող մարդիկ, իսկ վեպի լեյտ-մոտիվը Վիկտորիայի սոցիալիստական վերադաստիարակման պրոբլեմն է, չափից դուրս հետաքրքրական և կարևոր մի պրոբլեմ։ Առևտրական Վասիլի 18-ամյա դուստր Վիկտորիան թեթևամիտ, ինքնահավան, կամակոր ու քաղքենուն հատուկ տրամադրությունների ու ձգտումների տեր մի աղջիկ է։ Ավարտելով քաղաքային միջնակարգ դպրոցը, նա գործուղվում է գյուղ՝ մանկավարժական ասպարեզում աշխատելու։ Վիկտորիան չի կարողանում համակերպվել գյուղական «անցանկալի» միջավայրին, պայմանների հետ, մանավանդ երբ հիշում է քաղաքը, իր Ժորժիկին (սիրածին)։ Դպրոցի վարիչ Ապարյանը Տեր-Թոդիկի կրկնակն է՝ տգետ, բիրտ բնավորության տեր, խաբեբա, խորհրդային մանկավարժության հետ ոչ մի առնչություն չունեցող, կտրված կյանքից, առօրյայից։ Չնայած այդ բոլորին Ապարյանը Վիկտորիայի վրա մեծ տպավորություն է թողնում։ Շուտով շրջլուսբաժինը գործից հեռացնում է Ապարյանին, դպրոցի նոր վարիչ նշանակելով եռանդուն ու նվիրված կոմերիտուհի Լենային։ Փոխվում է դպրոցի պատկերը, փոխվում է նաև Վիկտորիան։ Նա Լենայի ջանքերի շնորհիվ ներգրավվում է հասարակական աշխատանքների մեջ, շփվում է մարդկանց հետ։ Թեև Վիկտորիան դարձել է ակտիվ, բարեխիղճ ու գործունյա ուսուցչուհի, նույնիսկ պատրաստվում է կոմերիտմիության շարքերն անցնելու, բայց նա ապրում է մի ներքին տրագեդիա, օրըստօրե ավելի է փոթորկվում նրա հոգեկան աշխարհը... Ժորժիկի հետ ունեցած ինտիմ հարաբերություններն առանց հետևանքի չեն մնացել և Վիկտորիան գնալով ավելի է սարսափում հետևանքից։ Դիմում է բժշկի՝ աբորտ անելու համար, արդեն ուշ է, փորձում է գյուղական «տատմերների» միջոցով վիժեցում կատարել։ Դարձյալ նրան չի հաջողվում։ Նա վառվում է ամոթի կրակից։ Վերջապես հասնում է ծննդյան օրը և Վիկտորիան ծնում է մեռած երեխա։ Ավելի է ծանրանում նրա վիշտը.—«ես անպետք եմ, ես կորած եմ... թո՜ւյն... թո՜ւյն...»։ Նրան՝ Վիկտորիային, հուսահատության

այդ պահերին շրջապատում են Լենան, Արփիկը։ Նրանց խնամքի շնորհիվ Վիկտորիան կարճ ժամանակամիջոցում կազդուրվում, առողջանում և եռանդով նվիրվում է գործին։

Ինչպի՞սի լուսաբանում է գտել հոգեբանական այս բարդ ու կնճռոտ հարցի լուծումը երիտասարդ վիպասանի գրչի տակ։ Նրան հաջողվել է տալ վերածնվող մարդու հոգեկան աշխարհը իր խճճված ոլորտներով։ Նախ՝ Թափալցյանը գիտե հետաքրքիր պատմել, գրավիչ գույներով նկարագրել։ Նա գիտե գյուղը, խորհրդային դպրոցը, ուսուցչական աշխարհի բոլոր կողմերը։ Բայց նա դեռ լավ ծանոթ չէ մարդու ներաշխարհի մի շարք նրբին ծալքերին։ Եվ այս հանգամանքը նրան զրկել է վեպի առանցքային հերոսուհու պատկերը հիմնավորված մոտիվիրովկայով գծել։ Վիկտորիայի հղիացման համար ունեցած ինքնախարազանման ապրումները, աբորտի, վիժեցման և նրա հետևանքների մասին ինքնահաշվետվման մոմենտները, նրա ամոթխածությունը երիտասարդ վիպասանը նկարագրել է բավականին հաջող գույներով (որ մասամբ հիշեցնում է Մուրացանի «Հարուստները զվարճանում են» բուռն կրքոտությամբ գրված. երկի թափը)։ Սակայն դրա հետ միասին նրան չի հաջողվել Վիկտորիայի ներքին բեկման դարձակետը գեղարվեստորեն հիմնավորել, նկատելի դարձնել, նրա ապրած հոգեկան սիտուացիաները օրգանապես միաձույլ ցուցաբերել, նախապատրաստել կատաստրոֆները։ Հարց է ծագում, ինչո՞ւ Վիկտորիայի շրջադարձի սկիզբը գյուղում է դրվում. չէ որ նա քաղաքում սովորել է խորհրդային դպրոցում, կրթվել ու դաստիարակվել է մեր նոր սերնդի միջավայրում, ուր կան պիոներական և կոմերիտական կազմակերպություններ, որոնց ղեկավարում են դարձյալ բոլորանվեր Լենաներն ու Արփիկները։ Վերջ ի վերջո մի՞թե դպրոցը աշխատանքի պրոցես չէ։

Վիկտորիայի բնութագրի մեջ կան հակասություններ։ Վիկտորիան մինչև ուղն ու ծուծը մոլորված է իր ներաշխարհի ոլորտներում, հեղինակը նրա մոտ սկզբից չի դրել որևէ լուսատու կետ, որով նա կարողանար առաջ նայել։ Վիկտորիան թեթևամիտ է, բայց հիմար չէ և սրանից ստեղծվում է մի հակասություն։ Ո՞րն է այդ։—Թեթևամտություն է, երբ նա առանց հոգեկան գալարումների, մոռանում է իր հին սիրածին, բայց հիմարություն է, երբ նա վիժեցում կատարելու ահավոր սարսափի տակ նոր սիրած է

փնտրում: Սերոժի հետևից է քարշ գալիս, ուզում է կոկորդով թույն ընդունել, մինչդեռ զգացմունքներով՝ նոր սիրած է փնտրում: Կան նաև չպատճառաբանված այլ փաստեր.—Վիկտորիայի հայրը՝ Վասիլը գյուղ է գալիս թե չէ, անմիջապես գործակցում է գյուղի կուլակներին, իսկ գյուղական կազմակերպությունները էլ դրան անտեղյակ են մնում: Պարզ է, ձայնազուրկ Վասիլի սրտակիցը գյուղում կուլակը կամ առևտրականն է, բայց նրանց կապը, բնավ, ինչպես ասում են, ձեռաց չի տեղի ունենում: Վեպի-տիպերից մի քանիսը խիստ անգույն ու սխեմատիկ են: Ո՞վ է Սերոժը և ի՞նչու հեղինակը նրան առաջ է քաշել, այդ մինչև վերջը մնում է որպես խորհրդավորագույն, չպատճառաբանված գաղտնիք: Այնուամենայնիվ մի բան պարզ է. դա այն է, որ Սերոժի տիպը որոշ դեպքերում ուշադրության կենտրոնում լինելով, նրա համար պրիզմա հանդիսանալով, հեղինակը ցանկացել է բեկել վեպի մի քանի հիմնական մոմենտները, բայց, դժբախտաբար, դարձել է նրա՝ վեպի թուլացման և կառուցվածքի խախտման մի գլխավոր աղբյուրը: Ք. Թափալցյանի վեպն ունի շատ ու շատ արժանիքներ, հաջող կողմեր: Նրանց մեջ երիտասարդ հեղինակը ցուցաբերել է երգիծելու ընդունակություններ: Ապարյանի նկատմամբ Թափալցյանը գործադրել է սարկազմի հասնող յումոր, նրա դեմ ուղղված ամեն մի բառը ասեղնահարող է: Այս տիպը, մեր կարծիքով հեղինակի ամենահաջողված և ամբողջական գծված տիպն է: Նույնպես հաջող է Մարմանդի տիպը—քծնողի, շաղակրատի, կարերիստի, վնասակար մարդու տիպը. նրա նկատմամբ ևս գործադրված է սուր երգիծանք, որ մեզ հիշեցնում է Մուրացանի երգիծելու կրքոտությունը (հիշենք «Լուսավորության կենտրոն»-ում Տաշյանի և Մոմճյանի դեմ գործադրված ծաղրը): Ի հակակշիռ այս երկու տիպերի Թափալցյանը կերտել է խորհրդային ազնիվ ու ջանադիր մանկավարժների կերպարներ՝ հանձինս Լենայի և նրա հոր՝ Սարյանի: Վերջինս հին ուսուցիչ է, բայց իրեն ամբողջապես նվիրել է մատաղ սերնդի դաստիարակման գործին. նա ներկայացված է իր կոնկրետ աշխատանքով, աշխատանքի բեղմնավոր արդյունքով, պտուղներով: Եվ սա է այդ տիպի գլխավոր արժանիքը:

Տպագրվում է և շուտով մեր ընթերցող հասարակության կհանձնվի Թափալցյանի 2-րդ վեպը՝ «Կյանքի արշալույսը»: Վեպի գործողության օբեկտը սոցիալիստական գյուղն է: Այստեղ

արդեն գործում են նոր մարդիկ, նոր պայմաններում։ Դատելով մամուլում տպագրված հատվածներից, կարող ենք ասել, որ այդ վեպը խոսում է Թափալցյանի ստեղծագործական աճի օգտին։ Լեզուն սղորկ է, նկարագրություններով ու պատկերավորությամբ հարուստ.—«սվսվալով փչում էր հովը։ Ծառերը հեզանազ օրորվում են։ Շատրվանի ձայնը բարձրացել էր և իր ջրերի շառաչը խառնում էր ծառերի ու ծաղիկների շշնջյունին։ Լուսինն իջել էր ավազանի մեջ և էլեկտրական բազմաթիվ լամպերի հորդաբուխ լույսի տակ դժգույն ցոլքեր է արձակում։ Ասես ամոթահար եղած՝ ուզում էր սուզվել պղպջուն ջրերի մեջ և թաքնվել լուսացայտ լամպերից։ Իսկ աստղերն անհուն կապույտում տխուր ու համր նայում էին երկրի աստղերին, և, կարծես... ճառագայթներ էին հայցում նրանից։ Նոր գյուղը լույսի պուրակի էր նման։ Տեսնողը կկարծեր, թե այն երկնքի կապույտի մի հսկայական պատառ պոկել է և իր աստղերով իջել հարթության վրա» («Գ. Թերթ», 1937 թ. № 29)։

Թափալցյանը մի ինքնատիպ հեղինակ է մեր երիտասարդական գրականության մեջ, խոստումնալից ապագայի տեր։

***

Ճշմարտությունը, սակայն, թելադրում է արձանագրել, որ մեր որոշ երիտասարդ ու սկսնակ գրողներ, շրմբռնելով իրենց նկատմամբ ցուցաբերվող խորը հոգատարության էությունը հաճախ են ցուցաբերում և՛ մեծամտություն, և՛ անտեղի հավակնություն, և՛ շտապողություն։ Հաճախ այն տրամադրություններն են ստեղծում իրենց շուրջը, թե իրենք արդեն տիրապետել են արվեստի սպեցիֆիկ կողմերին և արտադրել են բավականին լուրջ արժեք ունեցող գործեր, որ արդեն իրենք անմահացել են և այլն և այլն։ Նման հավակնությունը երիտասարդ գրողին զրկում է մեր էպոխայի մարդու այն գեղեցիկ հատկությունից, որը կոչվում է բոլշևիկյան համեստություն։ Մինչդեռ իրականում այդպես ենթադրողներից շատ շատերը գրում են այնպիսի երկեր, որոնք մինչև անգամ չեն բավարարում արվեստի համեստ պահանջները։ Մենք ունենք երիտասարդ ստեղծագործողների մի խումբ, որոնց մեջ կա մի զարմանալի նմանություն. դա նյութի ընտրության և միևնույն նյութը

միևնույն դիտակետից նայելն ու արտահայտելն է։ Նրանց մոտ զգալի է պատկերների միօրինակությունը, վերացականությունը, մակերեսայնությունը, նրանք իրար կրկնում են անվերջ և նոր բան ասելու խնդրով չեն զբաղվում։ Եվ այդ մասամբ այն բանին պետք է վերագրել, որ գրելիս շատ են շտապում, ցանկանում շատ տպագրվել, չեն աշխատում իրենց ձեռագրի վրա։ Տոլստոյը իր «Կյանքի ուղին» երկի առաջաբանը գրել-արտագրել է հարյուր անգամ, և նա իր արտասովոր, հարուստ կենսափորձից ելնելով է, երբ ասում է՝ «պետք է շատ գրել, բայց քիչ տպագրվել։ Պարզ ջուր ստանալու համար պետք է թույլ տալ, որ ողջ խառնուրդը նստի», այլապես՝ բարձր որակի մասին խոսք լինել չի կարող։ Եվ այդ պետք է քաջ գիտենա ամեն մի տպագրող հեղինակ։

Ցածր է երիտասարդ ստեղծագործողների որոշ մասի քաղաքական պատրաստականության մակարդակը, թույլ է նրանց կյանքի ճանաչողությունը, կարծես հաճախ կյանքը դիտում են նեղբերաց գնացքի լուսամուտից, փաստերը տալիս են լուսանկարչորեն, առանց թափանցելու նրանց խորքը, առանց ընդհանրացումներ կատարելու։

Ճիշտ է, մեր բոլոր երիտասարդ ստեղծագործողները երգում են նոր կյանքը և գերազանցապես մեր իրականության մասին են գրում, սակայն երիտասարդ գրողների գործերում տակավին չկա մի այնպիսի երկ, որի մեջ գեղարվեստական խոսքի ուժով գունանկարված լինի մեր էպոխայի երիտասարդ մարդու լրիվ պատկերը, որի մեջ հնչի մեր ժամանակի մարդու լիաշունչ ձայնը։ Լենինյան կոմերիտմիության պայքարի ու գործունեության տարբեր էտապների արտացոլումը գեղարվեստական գրականության մեջ դեռ իր արտացոլումը չի գտել։ Երիտասարդության կյանքի բնորոշ մոմենտները գեղարվեստական լեզվի չի վերածվել ոչ միայն երիտասարդ ստեղծագործողների, այլև մեր գրականության ավագ սերնդի կողմից։ Սա մեր ժամանակակից գրականության ամենացավոտ կողմերից մեկն է։

Եթե թեմատիկան որոշակի է դարձնում երկի իդեան, գաղափարական կողմը, ապա այն իր հերթին պայմանավորվում է ստեղծագործական ոճով, ստեղծագործական մեթոդով, իսկ մեր ներկա կյանքը տալու իր ամբողջության մեջ երևույթներն ընդգրկելու, պատկերելու համար առաջավոր մեթոդը, որպես կյան-

քի դիտման ճանաչողության ամենալավագույն միջոց, սոցիալիստական ռեալիզմն է։ Դա այն միակ ուղղությունն է, որն առնականորեն հնչեցնում է մեր էպոխայի մեծ ու հստակաձայն սիմֆոնիան, ժողովրդի հույզերի լարերը, նրա հերոսականությունը, մտորումներն ու սրտի բաբախը: Մեր երիտասարդ ստեղծագործողներից շատերի մոտ կյանքի վատ ճանաչողության հենց առաջին պատճառը սոցիալիստական ռեալիզմի սկզբունքներին չտիրապետելն է: Շատ հաճախ դժվար է որոշել, թե որոշ երիտասարդ գրողների այս կամ այն երկերի մեջ գերակշռողը ռեալիզմի՞, թե՞ ռոմանտիզմի տարրն է։ Երիտասարդ ստեղծագործողների ճնշող մեծամասնությունն զբաղվում է պոեզիայով, այն էլ մեծ մասամբ գրում են լիրիկական ներբողներ, խուսափելով կոնկրետ սյուժե ունեցող գործեր տալուց։ Դրանով իսկ վանվում են գրական մի շարք ժանրեր—նովելլա, արձակ բանաստեղծություն, բալլադա, հեքիաթ, առակ և այլն։

Բայց դեռ կա ավելի ևս անհանդուրժելի, առավել ցավալի մի հանգամանք։ Այդ այն է, որ մեր երիտասարդ գրողների-բանաստեղծների մի որոշ մասը՝ վատ է տիրապետում գրական լեզվին, հաճախ գրում, գործածում են չմտածված բառեր, էպիտետներ և դրանով իսկ ստեղծում բառական խոտան։ Որքա՞ն հանդուրժելի է, երբ երիտասարդ ստեղծագործողը գրում է «բեկը... հեղ»... և կամ իր գրական հերոսի նկատմամբ ասում «դիվային ժպիտով», իսկ բացասականին՝ «անմեղորեն ժպտելով»... այստեղ անհրաժեշտ է մեր երիտասարդ ստեղծագործողներին հիշեցնել պրոլետարական գրականության պիոներ հանճարեղ Մաքսիմ Գորկու թևավոր կոչը՝ գրական լեզվին տիրապետելու և գրականությունը բառական խոտանից մաքրազարդելու առթիվ՝ «Մենք պետք է վերհիշենք, թե ինչպես էր վերաբերվում լեզվին Վլադիմիր Լենինը: Անհրաժեշտ է անողոքաբար պայքար մղել գրականությունը բառական խլամից մաքրելու համար, պայքար մղել մեր լեզվի պարզության ու հասկանալիության համար, ազնիվ տեխնիկայի համար, առանց որի հնարավոր չէ հստակ իդեոլոգիան: Անհրաժեշտ է ամենակատաղի պայքար մղել գրականության որակն իջեցնելու բոլոր փորձերի դեմ, որին և կոչ եմ անում, ձեզ, բոլորիդ, ով հասկանում է գրականության, որպես սոցիալիստական կուլտուրայի հզոր գործիքի իսկական նշանակությունը»:

Ահա թե ինչո՞ւ գրական լեզվին տիրապետելը՝ ամեն մի երիտասարդ գրող պետք է իր առաջնահերթ խնդիրը դարձնի։

Մեր յուրաքանչյուր երիտասարդ գրողից պահանջվում է ուսումնասիրել, զինվել բոլշևիզմի մեծ ուսմունքով, մարքս-լենինյան թեորիայով, տիրապետել ռուս մեծ ժողովրդի լեզվին և Լենինի—Ստալինի երկերը կարդալ բնագրով։

Պահանջվում է բացառիկ պահանջկոտություն դեպի սեփական աշխատանքի որակը, պահանջվում է խնամքոտ, համառ ու տևական աշխատասիրություն, աշխատասիրություն ու դարձյալ աշխատասիրություն։ Միայն այդ դեպքում հնարավոր կլինի ծառայել սոցիալիզմի արվեստին, աշխարհը վերափոխող արվեստին, միայն այն դեպքում կարելի կլինի վերարտադրել գեղարվեստական խոսքի լայն կտավներ, վրձինադրել էպոխայի պատկերը։

1938 թվ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Էջ

Զոհվածների խոսքը 3

ԹԱԹՈՒԼ ՀՈՒՐՅԱՆ 9

Աստղը 13

Սևաստապոլ 16

Երկու մանուկ 18

Մեկենզիյան լեռներում 20

Վերադարձ 22

Գորիում 24

«Վերք Հայաստանի» 26

Մայր Արաքսի ափերին 28

ԴԵՐԵՆԻԿ ՉԱՐԽՉՅԱՆ 33

Թե մարտում ընկնեմ 35

Հայրենական պատերազմի հերոսներին 36

Հրաժեշտի երգ 38

Թողի մենակ 39

Գնում եմ կռվի 40

Հայրենական պատերազմ 42

Բաժանման ժամին 43

Ախալցիխե 44

Կարոտ 46

Օդաչուի երգը 47

Բալլադա պարտիզանի և նրա կնոջ մասին 48

Գալիքի բարեկամիս 50

Անմահություն 51

Երանի նրան 52

Իմ Երևան 53

*** 54

Ես ման եկա 55

*** 56

*** 57

*** 58

էջ

Կոմերիտ սահմանապահը 59
Սահմանի մոտ 60

ԱՐՏԱՇԵՍ ԲՈՐԵՆՑ 63

Հայրենի խրճիթ 65
* * * 66
Արյան հետքը 67
Թամանի աղջիկ 69
Թե... 71
* * * 72
Պրոլոգ 73
Արիություն 74
Տրտունջ 75
Մոսկվա 76
Անմահություն 78
Գազել հաղթանակի 80
Գարնան երգեր 81
Սամուր Դիվլիչի 83
Ապրիլյան ծաղիկներ 84

ՀՄԱՅԱԿ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ 89

Հանդես 92
Մայրական 93
Տվեք ինձ սուր, աշխատ մի ձի... 95
Հաղթանակով դառնաս տո՛ւն 97
Կապիտան Գաստելո 99
Խոսք ցասման ու վրեժի 105
Ռազմի երգ 107
Երդում 109
* * * 110
Դաշտային փոստ 111
Կարոտ 113

ԱՐՍԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ 117

Ներբող մեր կանանց 120
Զարկ, հայրենիք 121
Կուբանին 123
Հրաչանի երգ 124
Հերոսական 125
Ռոստովին 126
Տարեկիցներ 127
Մի սրտի պես անբաժան 128
Մնաք բարև 129
Սանիտարուհուն 130
Քո լուսանկարը 131
Դու ինձ հետ ես 132

էջ

ԳՐԻԳՈՐ ԱՐՏՈՒՆԻ 135
Մեր խրամը 137
Հայրենիք իմ լուսերես 139
Սիրում եմ քեզ 140
Հերոսը 142
*** 144
Իմ սիրեկան 145
Երգ մարտի ու սիրո 147
Բալլադա մի ընկերոջ մասին 149
Օրորոցի երգը 151
Այս տղան 154
*** 155
Մենք քեզ հետ 156
Երկու արև 157
Սիրած քաղաք բոլորի 158

ՄԵՍՐՈՊ ՄԵՐՈՒԺԱՆ 163
Շնորհավոր քո նոր տարին, Առաջնորդ 165
Երջանկության առավոտ 167
Դեպուտատները 168
Շոթա Ռուսթավելին 170
Աբխազիա 172
Տ. Շևչենկոյի հիշատակին 174
Դավիթ Սասունցին 175

ԵՓՐԵՄ ԼՈՌԵՆՑ 179
Մոր նամակը 181
Կարոտ 183
Երբ պատերազմ լինի 184
Երգ Լենինի մասին 186
Գարնանամուտ 189

ԳՐԻԳՈՐ ԳԱՐՈՒՆՑ 193
Հայրենիք 194
Երջանկության արծիվը 195
Հաղթանակի աշուն 203
Բոցաշունչ տրխունը 204
Հասկերը 206
Երգ կեսօրի 207

ԹԵՎԱՆ ԽԱՉՅԱՆ 211
Ղուկաս Ղուկասյանին 213
Մարտական ընկերուհին 214
Մարտիկի օրագրից 216
Երգում 217
Մոսկվա 218
Սահմանի վրա 219

էջ

Նիկոլայ Օստրովսկուն 223
Հովհաննես Թումանյանին 224

ԱՎԵՏԻՍ ԴԵՐԲԵՆՑ 227
Երկրի գույները 229

ՋԱՎԵՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ 243
Կախվածը 247
Հատուցում 249
Վրեժ 253
Քաղղեկլի ձին 256

ԳՐԻԳՈՐ ԿՈՒԼՕՂԼՅԱՆ 261
Միքայել Նալբանդյան 264
Հովհ. Թումանյանի «Անուշը» Դերժավինի թարգմանությամբ . . . 288
«Պատվի համար»-ը Գ. Սունդուկյանի անվան Պետական թատրոնում . 298
Ստեփան Զորյանի «Մի կյանքի պատմության» մասին 307

ԳԱՌՆԻԿ ՈՍԿԱՆՅԱՆ 315
Ստեղծագործական հաջողություն 319
Միքայել Նալբանդյանի էսթետիկական հայացքները 329

ՄՈՒՇԵՂ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ 347
«Խարդավանք և սեր» 349
Հրաչյա Քոչարի վեպը 354
Մեր գրականության հոկտեմբերյան սերունդը 360

Տեխ. խմբագիր Ի. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Նկարիչ Ս. ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՎՖ 02213։ Պատվեր 409։ Տիրաժ 3000։ Տպ. 24 մամ.։
Հանձնված է արտադրության 14/VIII 1947 թ.։
Ստորագրված է տպագրության 20/XII 1947 թ.։

ՀՍՍՌ Մինիստրների Սովետին կից Պոլիգրաֆ. և Հրատ. Վարչության
№ 3 տպարան, Երևան 1947 թ.

ՆԿԱՏՎԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ

Էջ	Տող	Տպված է	Պետք է լինի
2	1 վ.	Արամ Թամազյան	Արմ. Թամազյան
85	1 վ.	Բուրանավետ	բուրումնավետ
97	1 ն.	Արա	Ապա
211	2 վ.	(1911–1945)	(1911–1944)
235	14 ն.	տեսա է	տեսակ է

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220030880

Ĭ
30880